

ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ
ԱՌՆԶՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՄԱՏԶԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԸՍՏ ՑԿԱՆԵԻ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ



Սույն զեկույցը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» գլոբալ կազմակերպության պաշտպանության և անվտանգության ծրագրի աջակցությամբ:

Նյութի բովանդակության պատասխանատուն Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն է, և պարտադիր չէ, որ այն արտահայտի շնորհատու կազմակերպության տեսակետները:

Փորձագետ՝ Միհրան Բուլղադարյան
Գրախոս՝ Աննա Կոռյան
Պատասխանատու խմբագիր՝ Սոնա Այվազյան

ՅՏԴ 351.86:342.7
ԳՄԴ 67.401.132
Ա 231

Ազգային անվտանգությանն առնչվող տեղեկատվության մատչելիությունը
Ա 231 Հայաստանում՝ ըստ Ցվանեի սկզբունքների.- Եր.: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2026.- 157 էջ:

Հետազոտության նպատակն է գնահատել Հայաստանի Հանրապետությունում անվտանգությանն առնչվող տեղեկատվության ազատության խնդիրները՝ միջազգային ստանդարտների, մասնավորապես՝ «Ազգային անվտանգության և տեղեկատվության ազատության մասին սկզբունքների» (Ցվանեի սկզբունքներ) համադրությամբ՝ աջակցելու ժողովրդավարական կառավարմանը, թափանցիկության և հանրային վերահսկողության երաշխիքների ամրապնդմանը:

ՅՏԴ 351.86:342.7
ԳՄԴ 67.401.132

ISBN 978-9939-1-2295-3

© «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ

www.transparency.am

Երևան 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ	5
ՆԱԽԱԲԱՆ	6
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	9
ՀՀ ՕՐԵՆՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑՎԱՆԵԻ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԻՆ	11
I. Ընդհանուր սկզբունքներ	11
Սկզբունք 1. Տեղեկություն ստանալու իրավունք	11
Սկզբունք 2. Սկզբունքների կիրարկումը	14
Սկզբունք 3. Տեղեկություն ստանալու իրավունքը ազգային անվտանգության հիմքով սահմանափակելու պահանջները	16
Սկզբունք 4. Հանրային մարմինների կողմից՝ տեղեկատվության ցանկացած սահմանափակման օրինաչափությունը ապահովելու բեռը	20
Սկզբունք 5. Որևէ հանրային մարմին ազատված չէ տեղեկություն տրամադրելու պահանջից	21
Սկզբունք 6. Տեղեկատվության մատչելիությունը վերահսկող մարմինների համար	22
Սկզբունք 7. Ռեսուրսներ	25
Սկզբունք 8. Արտակարգ իրավիճակներ	27
II. Ազգային անվտանգության հիմքով չբացահայտվող տեղեկություն և հրապարակման ենթակա տեղեկություն	31
Սկզբունք 9. Տեղեկություն, որի չհրապարակելն օրինաչափ է	31
Սկզբունք 10. Տեղեկությունների կատեգորիաներ, որոնց բացահայտումը բխում է դրա օգտին գերակշռող կանխավարկածից կամ գերակա հանրային շահից	39
III-Ա. Տեղեկության գաղտնագրման և գաղտնազերծման կանոններ	51
Սկզբունք 11. Տեղեկությունը գաղտնագրելու պատճառները նշելու պարտականություն	51
Սկզբունք 12. Տեղեկության գաղտնագրման կանոնների մատչելիությունը հանրությանը	53
Սկզբունք 13. Տեղեկությունը գաղտնագրելու լիազորությունը	55
Սկզբունք 14. Տեղեկատվության առջև ծառայած ներքին մարտահրավերների մեղմացում	58
Սկզբունք 15. Ազգային անվտանգությանն առնչվող տեղեկությունը պահելու, տնօրինելու և պահպանելու պարտականություն	59
Սկզբունք 16. Տեղեկության գաղտնիության ժամկետները	62
Սկզբունք 17. Գաղտնազերծման ընթացակարգերը	64

III-Բ. Տեղեկատվության հարցումները քննելու կանոններ	69
Սկզբունք 18. Անգամ գաղտնագրված տեղեկության հարցումները քննելու պարտականություն	69
Սկզբունք 19. Տեղեկության առկայությունը հաստատելու կամ հերքելու պարտականություն	71
Սկզբունք 20. Մերժման պատճառները գրավոր ներկայացնելու պարտականություն ..	72
Սկզբունք 21. Պակասող տեղեկությունը վերականգնելու կամ վերստեղծելու պարտավորություն	75
Սկզբունք 22. Փաստաթղթերից հատվածներ հրապարակելու պարտականություն.....	78
Սկզբունք 23. Չտրամադրվող տեղեկությունը նկարագրելու պարտականություն.....	79
Սկզբունք 24. Տեղեկությունը առկա ձևաչափերով տրամադրելու պարտականություն	79
Սկզբունք 25. Տեղեկատվության հարցումներին պատասխանելու ժամկետները	81
Սկզբունք 26. Տեղեկությունը չտրամադրելու մասին որոշումը վերանայելու իրավունք	83
IV. Ազգային անվտանգության և տեղեկատվության ազատության դատավարական հարցերը.....	87
Սկզբունք 27. Ընդհանուր դատական վերահսկողության սկզբունք	87
Սկզբունք 28. Դատաքննության հանրամատչելիությունը	89
Սկզբունք 29. Տեղեկատվության հասանելիությունը քրեական դատավարության կողմերի համար.....	91
Սկզբունք 30. Տեղեկատվության հասանելիությունը քաղաքացիական դատավարության կողմերի համար.....	93
V. Անվտանգության ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններ.	95
Սկզբունք 31. Անկախ վերահսկող մարմինների հիմնում.....	95
Սկզբունք 32. Լիարժեք հասանելիություն լիազորություններն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությանը	97
Սկզբունք 33. Տեղեկությունների հասանելիությունն ապահովելու համար անհրաժեշտ լիազորություններ, ռեսուրսներ և ընթացակարգեր	100
Սկզբունք 34. Անկախ վերահսկող մարմինների գործունեության թափանցիկությունը	105
Սկզբունք 35. Անվտանգության ոլորտը վերահսկող մարմինների կողմից տնօրինվող տեղեկությունը պաշտպանելու միջոցներ	107
Սկզբունք 36. Օրենսդիր մարմնի՝ տեղեկությունները հրապարակելու իրավազորությունը	109
VI. Հանրային մարմինների աշխատակիցների կողմից հանրային շահ ներկայացնող տեղեկությունների բացահայտումը	112
Սկզբունք 37. Իրավախախտումների կատեգորիաները	112
Սկզբունք 38. Իրավախախտումների մասին տեղեկության բացահայտումների հիմքերը, դրդապատճառները և ապացույցները	115

Սկզբունք 39. Ներքին կամ վերահսկող մարմիններին «պաշտպանվող բացահայտում» անելու և դրանց արձագանքելու ընթացակարգերը.....	118
Սկզբունք 40. Հրապարակային բացահայտում անող անձանց պաշտպանությունը	121
Սկզբունք 41. Իրավախախտման մասին տեղեկությունը բացահայտելու համար հաշվեհարդարից պաշտպանված լինելը.....	125
Սկզբունք 42. «Պաշտպանվող բացահայտումների» խրախուսումը և օժանդակումը .	129
Սկզբունք 43. Հանրային շահի պաշտպանության հիմքով հանրային մարմինների աշխատակիցների պաշտպանությունը	130
VII. Տեղեկության բացահայտումը պատժելու կամ զսպելու միջոցների սահմանափակումներ.....	133
Սկզբունք 44. Տեղեկատվության գծով պատասխանատուների կողմից տեղեկությունը բարեխղճորեն և ողջամտորեն բացահայտելու համար պատժամիջոցների կիրառումից պաշտպանությունը.....	133
Սկզբունք 45. Տեղեկությունը ոչնչացնելու կամ տեղեկության տրամադրումը մերժելու համար նախատեսված պատժամիջոցներ	134
Սկզբունք 46. Հանրային մարմինների աշխատակիցների կողմից տեղեկություն բացահայտելու համար կիրառվող քրեական պատժամիջոցների սահմանափակումները	135
Սկզբունք 47. Հանրային մարմինների աշխատակից չհանդիսացող անձանց պաշտպանությունը գաղտնի տեղեկություն տնօրինելու և տարածելու համար նախատեսված պատժամիջոցներից.....	137
Սկզբունք 48. Աղբյուրների պաշտպանությունը	138
Սկզբունք 49. Տեղեկության հրապարակման նախնական արգելք	139
VIII. Եզրափակիչ սկզբունք	141
Սկզբունք 50. Այս սկզբունքների և այլ ստանդարտների հարաբերությունը	141
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	142
ՀԱՎԵԼՎԱԾ. ՀՀ օրենսդրության Ցվանեի սկզբունքներին համապատասխանության աղյուսակ	154
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	156

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ժողովրդավարության, օրենքի գերակայության և հաշվետու կառավարման համար կարևոր է հանրային նշանակության տեղեկությունների մատչելիությունը, ինչը խթանում է մասնակցային հասարակության ձևավորումը և երաշխավորում է քաղաքացիների վերահսկողությունը պետական կառավարման ու քաղաքականությունների նկատմամբ: Միաժամանակ, ժողովրդավարական պետություններում պետական հաստատությունները հաճախ կանգնում են երկրնտրանքի առաջ, երբ ինդիքը վերաբերում է ազգային անվտանգությանն առնչվող զգայուն տեղեկությունների տրամադրմանը:

Թեև անվտանգությանն առնչվող տեղեկատվության բացահայտման հարցերով միջազգային պայմանագրեր ու հստակ կարգավորումներ առկա չեն, տարիների ընթացքում միջազգային ակադեմիական և քաղաքացիական հասարակության կառույցների համատեղ ջանքերով ձևակերպվել և զարգացվել են մի շարք սկզբունքներ:

Այս հետազոտության նպատակն է գնահատել Հայաստանում անվտանգության հարցերին առնչվող տեղեկատվության մատչելիության կարգավորումները միջազգային առավել ընդգրկուն ստանդարտների՝ Հարավային Աֆրիկայի Ցվանե քաղաքում ընդունված «Ազգային անվտանգության և տեղեկատվության ազատության մասին սկզբունքների» (Ցվանեի սկզբունքներ) համադրությամբ՝ աջակցելու ժողովրդավարական կառավարմանը, թափանցիկության և հանրային վերահսկողության երաշխիքների ամրապնդմանը:

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ ժողովրդավարական կառավարման տեսանկյունից ՀՀ օրենսդրական կարգավորումներում առկա են եական բացեր: Այսպես, Ցվանեի սկզբունքներից միայն 7-ն են լիովին բավարարվում, 3-ը բոլորովին չեն ապահովվում, իսկ մնացածը համապատասխանում են միայն մասնակիորեն:

Հետազոտության հիման վրա ներկայացվել են առաջարկներ, որոնք միտված են կատարելագործել անվտանգությանն առնչվող տեղեկության մատչելիության ընդհանուր կարգավորումները, հստակեցնել ազգային անվտանգության հիմքով չբացահայտվող տեղեկությունների և հրապարակման ենթակա տեղեկությունների շրջանակը, տեղեկությունների գաղտնագրման և գաղտնազերծման կանոնները, տեղեկություն ստանալու հարցումները քննելու կանոնները և դատավարական հարցերը, ընդլայնել վերահսկողություն իրականացնող մարմինների իրավասությունները, ապահովել հանրային մարմինների աշխատակիցների կողմից հանրային շահ ներկայացնող տեղեկությունների բացահայտման դեպքերում նրանց պաշտպանությունը և այլն:

Ընդհանուր առմամբ, առաջարկությունների փաթեթը միտված է ձևավորելու այնպիսի համակարգ, որտեղ ազգային անվտանգության շահերը և տեղեկատվության ազատության իրավունքը հավասարակշռված կլինեն, պետական մարմինների գործունեությունը՝ առավել հաշվետու և վերահսկելի, իսկ հանրությունը՝ ավելի իրազեկ և պաշտպանված:

ՆԱԽԱԲԱՆ

Ժողովրդավարության, օրենքի գերակայության և հաշվետու կառավարման ապահովման համար առանցքային նշանակություն ունի հանրային նշանակության տեղեկությունների մատչելիությունը, ինչը խթանում է մասնակցային հասարակության ձևավորումը և երաշխավորում է քաղաքացիների վերահսկողությունը պետական կառավարման ու քաղաքականությունների նկատմամբ: Միաժամանակ, տեղեկատվության ազատության իրավունքի և ազգային անվտանգության շահի բախման դեպքերում ժողովրդավարական պետությունները հաճախ կանգնում են բարդ ընտրության առաջ: Անվտանգության ապահովման պատճառաբանությամբ տեղեկության տրամադրման սահմանափակումները երբեմն վերածվում են թափանցիկության խաթարման գործիքի և հանգեցնում իրավունքների խախտումների: Տեղեկատվության թվայնացման ժամանակակից միտումներն իրենց հերթին ձևավորում են նոր մարտահրավերներ՝ ի լրումն բազմաթիվ հնարավորությունների: Անվտանգությանն առնչվող տեղեկատվության միջազգային ստանդարտների ուսումնասիրությունն ու հայաստանյան իրականության մեջ դրանց կիրառելիությունը հասկանալը և գնահատելը խիստ կարևոր են այդ հարցերին առնչվող հանրային քաղաքականությունները բարելավելու համար:

Այս հետազոտության նպատակն է գնահատել Հայաստանի Հանրապետությունում անվտանգությանն առնչվող տեղեկատվության ազատության խնդիրները՝ միջազգային ստանդարտների, մասնավորապես՝ «Ազգային անվտանգության և տեղեկատվության ազատության մասին սկզբունքների» (Ցվանեի սկզբունքներ) համադրությամբ՝ աջակցելու ժողովրդավարական կառավարմանը, թափանցիկության և հանրային վերահսկողության երաշխիքների ամրապնդմանը:

Ակնկալվում է, որ հետազոտության արդյունքում ներկայացված քաղաքականության հասցեատերերը, մասնավորապես՝ ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ կառավարությունը, պատշաճ ընթացք կտան վերհանված խնդիրներին ու առաջարկներին՝ խթանելու անվտանգությանն առնչվող տեղեկատվության մատչելիությունը, ինչն առանցքային դեր ունի նաև կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար տանելու համար:

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Տեղեկության մատչելիությունը համարվում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը և անմիջականորեն կապված է արտահայտման ազատության այլ տեսակների ու դրսևորումների՝ տեղեկություն փնտրելու ու ստանալու, մամուլի ու այլ տեղեկատվական միջոցների ազատության հետ: Ժողովրդավարության համար այն անկյունաքարային երաշխիք է, որն ապահովում է հանրային մարմինների գործունեության թափանցիկությունը, պաշտպանում է մասնակցային կառավարման սկզբունքները և ուժեղացնում քաղաքացիների վերահսկողությունը և վստահությունը հանրային ինստիտուտների նկատմամբ:

Տեղեկատվության ազատությունը համընդհանուր ճանաչում է ստացել՝ ամրագրվելով մի շարք միջազգային փաստաթղթերում, որոնք պետությունների համար ձևավորում են պարտադիր կամ ուղենիշային իրավական և գործառնական շրջանակներ: Ի սկզբանե դիտարկվելով որպես արտահայտման ազատության բաղադրիչ՝ այն աստիճանաբար վերածվել է ինքնուրույն, բովանդակությամբ հագեցած իրավական կատեգորիայի, որը կենսական նշանակություն ունի ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանության, այլև կոռուպցիայի դեմ պայքարի, հանրային հաշվետվողականության և ազգային անվտանգության ժողովրդավարական վերահսկման ապահովման համար:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի¹ (1948 թ.) 19-րդ հոդվածում նշված է. *«Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ իրազեկում և գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»*: Այս ձևակերպմամբ տեղեկություն ստանալու և տարածելու ազատությունը կապվում է նաև ազատ մամուլի և խոսքի ազատության իրավունքների հետ:

ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի² (1966 թ.) 19-րդ հոդվածում ևս ամրագրված է արտահայտման ազատությունն ու տեղեկատվության մատչելիության իրավունքը: Այս հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»*: Այս դրույթը պարտավորեցնում է պետություններին պաշտպանել և երաշխավորել տեղեկատվության ազատության իրականացումը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այդ *«իրավունքներից օգտվելը դնում է հատուկ պարտականություններ և հատուկ պատասխանատվություն: Յետևաբար, այն կապված է որոշ սահմանափակումների հետ, սակայն, պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ. ա/ այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար. բ/ պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար»*:

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայի³ (1950 թ.) 10-րդ հոդվածով կարգավորվում է արտահայտման ազատության հարցը, որը ներառում է տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքները: Ըստ հոդվածի ձևակերպման՝ *«Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում»*:

¹ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, <https://www.arlis.am/hy/acts/1896/latest>

² ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, <https://www.arlis.am/hy/acts/18500>

³ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, <https://www.arlis.am/hy/acts/192808>

Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասը նշում է. «Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»: Տվյալ կարգավորումը շեշտում է, որ այդ սահմանափակումները պետք է լինեն անհրաժեշտ և համաչափ՝ ժողովրդավարական հասարակության մեջ, և որ ցանկացած սահմանափակում ենթակա է դատական վերահսկողության:

Անվտանգությանն առնչվող տեղեկատվության ազատության առումով միջազգային պայմանագրեր առկա չեն, ուստի այդ բացը փորձել են լրացնել քաղաքացիական հասարակության և ակադեմիական հանրույթի փորձագետները՝ համատեղ քննարկելով ու մշակելով ընդունելի չափանիշներ: Այսպես, 1984 թվականի օգոստոսին Միջազգային իրավունքի ասոցիացիայի 61-րդ համաժողովն ընդունել է Արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների նորմերի փարիզյան նվազագույն ստանդարտները (Փարիզի սկզբունքներ):⁴ 1985 ապրիլին Իրավաբանների միջազգային հանձնախմբի ամերիկյան միավորումն ընդունել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի սահմանափակման և շեղման սկզբունքները (Սիրակուզի սկզբունքներ):⁵ 1995 թվականի հոկտեմբերին «Յոթված 19» կազմակերպության նախաձեռնած Ազատ արտահայտման գլոբալ քարոզարշավի շրջանակում ընդունվել են «Ազգային անվտանգության, արտահայտման ազատության և տեղեկատվության մատչելիության մասին սկզբունքները» (Յոհաննեսբուրգի սկզբունքներ):⁶ Տասնութ տարի անց վերջինին փոխարինելու են եկել «Ազգային անվտանգության և տեղեկատվության ազատության մասին սկզբունքները» (Ցվանեի սկզբունքներ):⁷ Վերջին փաստաթուղթը մշակվել է աշխարհի մոտ 70 երկրների ավելի քան 500 փորձագետների, ինչպես նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով զեկուցողների մասնակցությամբ իրականացված բազմաթիվ խորհրդակցական հանդիպումների արդյունքում և ընդունվել 2013 թվականի հունիսի 12-ին Հարավային Աֆրիկայի Ցվանե քաղաքում անցկացված 22 կազմակերպությունների և գիտահետազոտական կենտրոնների համաժողովի ընթացքում:

⁴ Richard B. Lillich, The American Journal of International Law, The Paris Minimum Standards of Human Rights Norms in a State of Emergency, Paris, 1984, <https://www.jstor.org/stable/2201848> (դիտված՝ 20.04.2026):

⁵ American Association for the International Commission of Jurists, The Siracusa Principles on the Limitation and Derogation Provisions in the International Covenant on Civil and Political Rights, Siracusa, 1985, <https://www.icj.org/wp-content/uploads/1984/07/Siracusa-principles-ICCPR-legal-submission-1985-eng.pdf> (դիտված՝ 20.04.2026):

⁶ Article 19, The Johannesburg Principles on National Security, Freedom of Expression and Access to Information, Johannesburg, 2018, <https://www.article19.org/wp-content/uploads/2018/02/joburg-principles.pdf> (դիտված՝ 20.04.2026):

⁷ Open Society Justice Initiative, The Global Principles on National Security and the Right to Information (Tshwane Principles), Tshwane, 2013, <https://whistleblowingnetwork.org/WIN/media/pdfs/National-security-INT-2013-global-principles-national-security.pdf> (դիտված՝ 20.04.2026):

Հայաստանի Հանրապետությունում անվտանգային հարցերին առնչվող տեղեկատվության մատչելիությունը երաշխավորվում է ՀՀ սահմանադրությամբ, կարգավորվում է երկու հիմնական իրավական ակտերով՝ «Տեղեկատվության ազատության մասին»⁸ (2003) և «Պետական գաղտնիքի մասին»⁹ (2024) օրենքներով, ինչպես նաև այլ օրենքներով ու ենթաօրենսդրական ակտերով:

Առկա իրավական ակտերը հիմնականում համարվում են համահունչ պետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի դրույթներին: Մինևս այն ժամանակ, որոշ տեղական և միջազգային հետազոտություններ մատնանշել են Հայաստանում տեղեկատվության մատչելիությանն առնչվող մի շարք չհիմնավորված սահմանափակումներ: Մասնավորապես, Իրավունքի պաշտպանության և զարգացման հիմնադրամն իր 2020 թվականի ծավալուն հետազոտությամբ¹⁰ ուսումնասիրել և վեր է հանել տեղեկատվության ազատության ոլորտում առկա օրենսդրական ու գործնական խնդիրները և առաջարկել համապարփակ լուծումներ: Ընդ որում, հարկ է նշել, որ վերհանված բազմաթիվ խնդիրներ առ այսօր լուծված չեն: Բացի այդ՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլի «Պաշտպանություն և անվտանգություն» ծրագրի «Բացելով տեղեկությունը. հավասարակշռելով ազգային անվտանգությունն ու թափանցիկությունը պաշտպանության ոլորտում»¹¹ 2024 թվականի զեկույցն, ի թիվս այլ երկրների, անդրադառնալով հայաստանյան օրենսդրությանը, ևս արձանագրել է մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են անվտանգությանն առնչվող տեղեկատվության մատչելիությանը:

Սույն հետազոտությունը հերթական ջանքն է վերոնշյալների շարքում, որի խնդիրն է գնահատել ՀՀ օրենսդրության համապատասխանությունը միջազգային ստանդարտներին, մասնավորապես՝ Ցվանեի սկզբունքներին, վերհանել օրենսդրական բացերն ու ներկայացնել առաջարկություններ անվտանգային հարցերով հանրային նշանակության տեղեկություններն առավել մատչելի դարձնելու ուղղությամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունն իրականացվել է իրավական համադրական վերլուծության և բովանդակային գնահատման մեթոդների կիրառմամբ:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են Ցվանեի սկզբունքների պաշտոնական փաստաթուղթը (բառացի թարգմանությամբ) և Հայաստանի Հանրապետությանը վերաբերելի իրավական ակտերը՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի գործող խմբագրությամբ:

⁸ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, 23.09.2003, <https://www.arlis.am/hy/acts/218688/latest>

⁹ «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, 01.03.2023, <https://www.arlis.am/hy/acts/218692/latest>

¹⁰ Իրավունքի պաշտպանության և զարգացման հիմնադրամ, «Տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրները Հայաստանի Հանրապետությունում», 2020, <https://dpf.am/uploads/files/c6e6d078c1c6e6d948c317374cdade30.pdf> (դիտված՝ 20.04.2026):

¹¹ Transparency International Defence and Security, Unlocking Access: Balancing National Security and Transparency in Defence, London, 2024, <https://transparency.am/hy/publication/pdf/380/11581> (դիտված՝ 20.04.2026):

Ցվանեի 50 սկզբունքները բաժանվում են ութ մասի, որոնք ներառում են՝

I. Սկզբունքներ 1-8. Ընդհանուր սկզբունքները

II. Սկզբունքներ 9-10. Ազգային անվտանգության հիմքով չբացահայտվող տեղեկություն և հրապարակման ենթակա տեղեկություն

III-Ա. Սկզբունքներ 11-17. Տեղեկության գաղտնագրման և գաղտնազերծման կանոնները

III-Բ. Սկզբունքներ 18-26. Տեղեկատվության հարցումները քննելու կանոնները

IV. Սկզբունքներ 27-30. Ազգային անվտանգության և տեղեկատվության ազատության դատավարական հարցերը

V. Սկզբունքներ 31-36. Անվտանգության ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները

VI. Սկզբունքներ 37-43. Հանրային մարմինների աշխատակիցների կողմից հանրային շահ ներկայացնող տեղեկությունների բացահայտումը

VII. Սկզբունքներ 44-49. Տեղեկության բացահայտումը պատժելու կամ զսպելու միջոցների սահմանափակումներ

VIII. Սկզբունք 50. Եզրափակիչ սկզբունք

Ցվանեի 50 սկզբունքներից յուրաքանչյուրի համատեքստում գնահատվել է այն, թե որքանով է հայաստանյան օրենսդրությունը համապատասխանում հիմնական միջազգային ստանդարտներին և որոնք են օրենսդրական բացերը կամ հակասությունները այդ առնչությամբ: Վերլուծության արդյունքում ՀՀ օրենսդրության համապատասխանությունը ներկայացվել է նաև քանակական արտահայտությամբ՝ սանդղակով, որտեղ համապատասխանությունը գնահատվել է 1 (ամբողջությամբ համապատասխան), 0.5 (մասնակի համապատասխան), 0 (անհամապատասխան) միավորներով, ինչը թույլ է տալիս առավել տեսանելի դարձնել տեղեկությունների մատչելիության ընդհանուր մակարդակը և բարեփոխումների համար առաջնահերթ ուղղությունները:

Իրականացվել է նաև բովանդակային վերլուծություն՝ նպատակ ունենալով հասկանալ օրենքների ներքին տրամաբանությունը, սահմանափակումների ձևակերպման հստակությունը, սահմանազատման գործիքակազմի առկայությունը և իրավակիրառ պրակտիկայի հնարավորությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել այն սկզբունքներին, որոնք առնչվում են իրավախախտումների բացահայտմանը, ազդարարների պաշտպանությանը, նախնական արգելքի բացառմանը, և քրեական հետապնդման և պատժամիջոցների սահմանափակմանը, քանի որ դրանք գտնվում են իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության առողջացման առանցքում: Վերհանված ինդիկները և առաջարկները քննարկվել են ոլորտին առնչվող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

ՀՀ ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑՎԱՆԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԻՆ

Ստորև ներկայացվում են Ցվանեի սկզբունքները՝ ըստ խմբերի, ՀՀ օրենսդրության համապատասխանության վերլուծությունը, գնահատականները և առաջարկությունները օրենսդրության բարելավման ուղղությամբ:

I. Ընդհանուր սկզբունքներ

Սկզբունք 1. Տեղեկություն ստանալու իրավունք

ա) Յուրաքանչյուր ոք իրավունք ունի որոնելու, ստանալու, օգտագործելու և տարածելու հանրային մարմինների կողմից կամ անուանից տնօրինվող տեղեկությունը կամ այն տեղեկությունը, որն օրենքով հասանելի է հանրային մարմիններին:

բ) Միջազգային սկզբունքներով ճանաչվում է նաև այն դրույթը, որ ազգային անվտանգության հատվածում գործող գործարար ձեռնարկությունները, այդ թվում՝ մասնավոր ռազմական և անվտանգության՝ պահնորդ ծառայություններ տրամադրող ընկերությունները պարտավոր են տեղեկություն տրամադրել այնպիսի իրավիճակների, գործունեության կամ վարքագծի մասին, որոնք ողջամիտ հիմքերով կարող են վնասակար համարվել մարդու իրավունքների իրացման համար:

գ) Առաջին սկզբունքի ա) և բ) կետերին համապատասխան տեղեկություն տրամադրելու պարտավորություն ունեցող անձինք համապատասխան հարցում ստանալուց հետո պետք է հասանելի դարձնեն տեղեկությունը՝ բացառությամբ միայն փոքրաթիվ դեպքերի, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են օրինաչափ շահերը պաշտպանելու, այդ թվում՝ ազգային անվտանգությանը սպառնացող կոնկրետ ճանաչելի վնասը կանխելու համար:

դ) Ազգային անվտանգությունը՝ որպես տեղեկություն չտրամադրելու հիմք, կարող են նշել միայն այն հանրային մարմինները, ում հատուկ պարտավորությունները ներառում են ազգային անվտանգության պահպանումը:

ե) Մասնավոր ձեռնարկության կողմից տեղեկատվություն չտրամադրելը ազգային անվտանգության հիմքով արդարացնելու որևէ պնդում պետք է հստակորեն թուլատրված կամ հաստատված լինի ազգային անվտանգությունը պաշտպանելու լիազորություն ունեցող պետական մարմնի կողմից:

Նշում. Կառավարությունը և միմիայն կառավարությունն է կրում վերջնական պատասխանատվությունը ազգային անվտանգությունը պահպանելու համար, ուստի և՛ միայն կառավարությունը կարող է պնդել, որ տեղեկությունը չպետք է մատչելի դառնա, եթե դա կարող է վտանգել ազգային անվտանգությանը:

Հանրային մարմինները նաև ունեն դրական պարտավորություն նախաձեռնողական (պրոակտիվ) կերպով հրապարակելու հասարակության համար հետաքրքրություն ներկայացնող որոշակի տեղեկություններ:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է. *«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը»*: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օտարերկրյա անձինք այդ իրավունքներից և ազատություններից կարող են օգտվել միայն օրենքով և (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում: Նշված օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, որ օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա:

Սկզբունք 1-ի բ) կետի պահանջը ՀՀ օրենսդրության մեջ արտացոլված չէ: Թերևս, մասնավոր անվտանգության/պահնորդական ընկերությունները կարելի կլիներ դիտարկել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում նշված «հանրային նշանակության կազմակերպության» ընդհանուր կատեգորիայի ներքո, սակայն «հանրային նշանակության կազմակերպություն» եզրույթը նույն հոդվածում հստակ սահմանված է և ներառում է *«ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները»*: Վերոգրյալի հաշվառմամբ կարող ենք եզրակացնել, որ թեև ազգային օրենսդրությամբ սահմանվել են անձի՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության/իրավունքի իրացման մի շարք իրավական մեխանիզմներ, սակայն մասնավոր ընկերությունների կողմից ռիսկային միջամտությունների (օրինակ՝ հանրային նշանակության օբյեկտների կամ պետական կառույցների պահպանություն, մեծ միջոցառումների ենթակառուցվածքային պաշտպանություն) դեպքում հաշվետվողականության նորմատիվ բաղադրիչները չեն բավարարում միջազգային լավագույն գործելակերպի ստանդարտին:

«Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է սահմանափակումների նեղ շրջանակ երկակի մեխանիզմով. նախ 8-րդ հոդվածով այն սահմանում է չորս բնագավառում (ռազմական բնագավառ, արտաքին հարաբերությունների բնագավառ, տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառ, հետախուզական, արտաքին հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառ) գաղտնագրվող տեղեկությունների ոլորտային հստակ ցանկ՝ 27 կետով, ապա 9-րդ հոդվածով սահմանում է գաղտնագրման ոչ ենթակա հանրային-կենսական տեղեկությունների շրջանակը՝ 4 կետով. *«1. մարդկանց անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները, 2. տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, մշակույթի, առևտրի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները, 3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, հանցագործությունների վիճակագրության մասին տեղեկությունները, 4) պետության կողմից*

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, պաշտոնատար անձանց, կազմակերպություններին տրամադրվող արտոնությունների և սոցիալական երաշխիքների մասին տեղեկությունները»։ Այս երկակի մեխանիզմը համահունչ է Ցվանեի տրամաբանությանը, այն է՝ բացառությունները պետք է մնան իրականում «սակավաթիվ» և կանխատեսելի։

Տեղեկություն ստանալու մասին կարգավորումներ առկա են նաև 2025 թվականի դեկտեմբերին ընդունված «Հանրային տեղեկությունների մասին» ՀՀ օրենքով¹² Նշված օրենքն առաջին հերթին իր 3-րդ հոդվածով սահմանում է «հանրային տեղեկությունը»՝ որպես «պետական տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարաններում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից օրենքով նախատեսված գործառույթների իրականացման նպատակով և ընթացքում օրենքով սահմանված չափով և կարգով ձեռք բերված, գրանցված կամ ցանկացած եղանակով մշակված տվյալների ամբողջություն՝ անկախ նյութական կրիչից»։ Նույն հոդվածը տալիս է նաև «հանրային տեղեկության բազմակի օգտագործում» հասկացությունը, ըստ որի՝ «բազմակի օգտագործում է համարվում պետական գործառույթների իրականացման նպատակով և ընթացքում ձեռք բերված ու մշակված տեղեկությունների ստացումը ու օգտագործումը իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից՝ օրենքով չարգելված ցանկացած նպատակի համար»։ Միաժամանակ, նույն օրենքի 5-րդ հոդվածը նշում է, որ «բազմակի օգտագործման կարող է տրվել միայն այն հանրային տեղեկությունը, որը օրենքով պաշտպանվող տեղեկություն չէ։ Եթե օրենքով պաշտպանված է հանրային տեղեկության մի մասը, ապա բազմակի օգտագործման կարող է տրամադրվել տեղեկության այն մասը, որը չի հանդիսանում օրենքով պաշտպանված տեղեկություն, կամ հանրային տեղեկության բազմակի օգտագործումը հնարավոր է, եթե այն չի պարունակում օրենքով պաշտպանված տեղեկության բացահայտման վտանգ»։ Այսինքն՝ այս հոդվածում խոսվում է նաև ոչ միայն տեղեկություն ստանալու իրավունքի, այլ նաև տեղեկությունը մասնակի տրամադրելու պարտականության մասին։

«Հանրային տեղեկությունների մասին» ՀՀ օրենքը որոշակի առումով բավարարում է Սկզբունք 1-ում սահմանվող հասարակության համար հետաքրքրություն ներկայացնող տեղեկությունների նախաձեռնողական (պրոակտիվ) հրապարակման պահանջը։ Ըստ դրա՝ նշված օրենքով սահմանված դեպքերում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է ապահովել հանրային տեղեկությունների մատչելիությունը թվային ձևաչափով (հոդված 6)։ Միաժամանակ, նույն օրենքը սահմանում է, որ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի և վարչապետի աշխատակազմերը, պետական կառավարման համակարգի մարմինները, անկախ պետական և ինքնավար մարմինները, տարածքային կառավարման մարմինները, օրենքով սահմանված կարգով խոշորացված համայնքները, Երևան և Գյումրի համայնքները պարտավոր են իրենց գործունեության լուսաբանման և հանրային տեղեկությունների բացահայտման համար ունենալ և սպասարկել պաշտոնական կայքէջեր, ապահովել դրանց անվտանգությունը (հոդված 8)։

Սկզբունք 1-ի դ) կետը սահմանում է, որ «ազգային անվտանգությունը»՝ որպես տեղեկություն չտրամադրելու հիմք, կարող են նշել միայն այն հանրային մարմինները, որոնց հատուկ

¹² «Հանրային տեղեկությունների մասին» ՀՀ օրենքը, 04.12.2025, <https://www.arlis.am/hy/acts/218678/latest>

պարտավորությունները ներառում են ազգային անվտանգության պահպանումը: Գործնականում, սակայն, կարևոր է, որ այս սահմանափակումը կիրառվի ողջամիտ և ստուգելի չափանիշներով, որպեսզի «ազգային անվտանգության» հղումը չդառնա ձևական պատճառաբանություն և չտարածվի այն մարմինների վրա, որոնց գործառնություններն առնչվում են անվտանգության հետ միայն միջնորդ ձևով: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ մերժման հիմքը կապվի մարմնի իրավական մանդատի կոնկրետ նորմերի հետ և պատշաճ կերպով պատճառաբանվի՝ ցույց տալով, թե տվյալ տեղեկության տրամադրումն ինչ կերպ է առնչվում հենց այդ մարմնի անվտանգության պարտավորությունների իրականացմանը:

Ինչ վերաբերում է Սկզբունքի ե) կետին՝ ապա կիրառելիության տեսանկյունից կարգավորումը նպատակահարմար է հասցեագրել այն մարմնին, որն իր իրավասության շրջանակում տալիս է համապատասխան գործունեության թույլտվությունը կամ լիազորությունը (օրինակ՝ լիցենզավորում, գրանցում, թույլտվություն կամ պայմանագրային լիազորում): Այդ մարմինը կարող է նույն իրավական հարաբերության շրջանակում սահմանել նաև թափանցիկության նվազագույն պահանջները, հրապարակման շրջանակը և հաշվետվողականության ձևաչափը՝ որպես թույլտվության պայման: Այս մոտեցումը, միաժամանակ, ապահովում է վերահսկողության գործնական մեխանիզմ և նվազեցնում է կանոնների շրջանցման ռիսկը, քանի որ պահանջների կատարումը կապվում է նույն «լիազորող» կենտրոնի հետ:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 2. Սկզբունքների կիրարկումը

ա) Այս սկզբունքները վերաբերում են Սկզբունք 1-ում ներկայացված տեղեկատվության հասանելիության իրավունքի իրացմանը այն դեպքերում, երբ հանրային մարմինները հաստատում կամ հավաստում են, որ նման տեղեկատվության տրամադրումը կարող է վնաս հասցնել ազգային անվտանգությանը:

բ) Հաշվի առնելով, որ ազգային անվտանգությունը տեղեկատվության մատչելիությունը սահմանափակելու համար հանրությանը ներկայացվող առավել ծանրակշիռ հիմքերից է, այն դեպքերում, երբ տեղեկատվության մատչելիությունը սահմանափակելու համար հանրային մարմինները վկայակոչում են հանրության համար նշանակալի այլ հիմքեր, այդ թվում՝ միջազգային հարաբերությունները, հասարակական կարգը, հանրային առողջապահությունը և անվտանգությունը, օրենքի կատարման ապահովումը, հետազայում ազատ և բաց խորհրդատվության ապահովումը, արդյունավետ քաղաքականության մշակումը և պետության տնտեսական շահերը, այդ հիմքերը պետք է առնվազն համապատասխանեն այս Սկզբունքներում նախատեսված՝ տեղեկատվության հասանելիության իրավունքի սահմանափակման չափանիշներին:

գ) Լավ գործելակերպ է համարվում, եթե տեղեկություն ստանալու իրավունքը ազգային անվտանգության հիմքով սահմանափակելու դեպքում ազգային անվտանգությունը հստակ սահմանված է տվյալ երկրի օրենսդրությամբ՝ ժողովրդավարական պետությանը համահունչ ձևով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում»: Նույն օրենքի 8-րդ հոդվածն իր հերթին ամրագրում է տեղեկատվության ազատության սահմանափակումները: Այս հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրանց թվում են պետական գաղտնիքը և սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունները: Միաժամանակ, նույն հոդվածի 3-րդ մասում հստակեցված է. «Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝ 1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին. 2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը. 3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա...»:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքի 8-րդ հոդվածը գաղտնագրվող տեղեկատվության համար սահմանում է այդպիսի տեղեկություններ պարունակող կոնկրետ բնագավառները՝ ռազմական, արտաքին հարաբերություններ, տնտեսություն, գիտություն և տեխնիկա, հետախուզական, արտաքին հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեություն: Միաժամանակ, տվյալ օրենքի 9-րդ հոդվածով արգելվում է պետական գաղտնիքի շարքին դասել «1) մարդկանց անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաև տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետևանքների մասին տեղեկությունները, 2) տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, մշակույթի, առևտրի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները, 3) ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, հանցագործությունների վիճակագրության մասին տեղեկությունները»:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրության մեջ պահպանված է նաև Սկզբունքում սահմանված լավ գործելակերպի տրամաբանությունը, այն է՝ սահմանված է «ազգային անվտանգություն» հասկացությունը: Մասնավորապես, «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացությունն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների,

քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:¹³ Այսինքն՝ մյուս պետական մարմինների համար նույնպես ազգային անվտանգության հիմքով տեղեկատվությունը տրամադրելու կամ չտրամադրելու համար որպես ուղենիշ պետք է պրակտիկայում ընտրվի այս հասկացությունը:

Այս կարգավորումներն իրենց տրամաբանությամբ համապատասխանում են Ցվանեի Սկզբունք 2-ին, քանի որ հստակ սահմանում են ոլորտները, որոնք ենթակա են գաղտնագրման և որոնք ենթակա չեն տրամադրման այլ անձանց: Այդուհանդերձ, որոշ դեպքերում (օրինակ ոլորտների, գաղտնագրվող տվյալների ցանկի, անկախ վերահսկող մարմինների և այլն) առկա են մասնակի կամ ամբողջական անհամապատասխանություններ, որոնց մասին կիսովի համապատասխան կետերում: Ուստի, այս սկզբունքը, դիտարկելով մյուս սկզբունքների հետ մեկ ամբողջության մեջ, նույնպես մասնակի է համապատասխանում ԶԶ օրենսդրությանը:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 3. Տեղեկություն ստանալու իրավունքը ազգային անվտանգության հիմքով սահմանափակելու պահանջները

Տեղեկություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել ազգային անվտանգության հիմքով միայն այն դեպքում, եթե կառավարությունը կարողանա ապացուցել, որ՝ 1) սահմանափակումը՝ ա) նախատեսված է օրենքով, և բ) անհրաժեշտ է ժողովրդավարական պետությունում, գ) ազգային անվտանգության օրինաչափ շահերը պաշտպանելու համար, և 2) օրենքով սահմանված են պատշաճ երաշխիքներ չարաշահումների դեմ, այդ թվում՝ սահմանափակման հիմնավորվածության անհապաղ, լիարժեք, հասանելի և արդյունավետ ուսումնասիրություն անկախ վերահսկող մարմնի կողմից և լիարժեք վերանայում դատարանների կողմից:

ա) «Նախատեսված է օրենքով»։ Օրենքը պետք է լինի մատչելի միանշանակ, ձևակերպված նեղ և ճշգրիտ, որպեսզի յուրաքանչյուրը կարողանա հասկանալ, թե որ տեղեկությունը կարող է չտրամադրվել, որը պետք է բացահայտվի, և տեղեկատվության տրամադրման հետ կապված որ գործողություններն են ենթակա պատժամիջոցների:

բ) «Անհրաժեշտ է ժողովրդավարական պետությունում».

- i) Տեղեկատվության բացահայտումը պետք է պարունակի ազգային անվտանգության օրինաչափ շահերին զգալի վնաս հասցնելու իրական և ճանաչելի ռիսկ:
- ii) Տեղեկատվության տրամադրման հետևանքով պատճառվելիք վնասի ռիսկը պետք է գերակայի տեղեկատվության բացահայտման ընդհանուր հանրային շահի նկատմամբ:

¹³ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ԶԶ օրենքը, 28.12.2001, <https://www.arlis.am/hy/acts/219172/latest>

iii) Սահմանափակումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին և պետք է լինի վնասից պաշտպանվելու համար նախատեսված հասանելի նվազագույն սահմանափակող միջոցը:

iv) Սահմանափակման կիրառումը չպետք է խախտի տեղեկություն ստանալու իրավունքի բուն էությունը:

զ) Ազգային անվտանգության օրինաչափ շահի պաշտպանություն. ազգային անվտանգության հիմքով հրապարակման համար արգելման ենթակա տեղեկատվության նեղ կատեգորիաները պետք է հստակորեն սահմանվեն օրենքով:

Նշում. «Ազգային անվտանգության օրինաչափ շահ» հասկացության սահմանումը տե՛ս վերը «Սահմանումներ» բաժնում:¹⁴ Սկզբունք 3-ի բ) կետն է՛լ առավել կարևոր է, եթե «ազգային անվտանգություն» հասկացությունը հստակ սահմանված չէ օրենքով, ինչպես խորհուրդ է տրվում Սկզբունք 2-ով:

«Հանրային շահ» հասկացությունը այս Սկզբունքներով չի սահմանվում: Սկզբունք 10-ում ներկայացված է հանրության համար հատկապես մեծ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության կատեգորիաների ցանկը, որը պետք է հրապարակվի նախաձեռնողական (պրոակտիվ) կերպով և ոչ մի դեպքում չարգելվի: Սկզբունք 37-ում ներկայացված է այն իրավախախտումների ցանկը, որոնք շատ մեծ հետաքրքրություն են ներկայացնում հանրության համար, և որոնք պետական ծառայողները պետք է և կարող են հայտնել առանց պատժի ենթարկվելու մտավախության:

Տեղեկության հրապարակման հարցում վնասի ռիսկը և հանրային շահը համեմատելիս հարկ է հաշվի առնել տեղեկությունը հրապարակելու հետևանքով ցանկացած հնարավոր վնասը նվազեցնելու հնարավորությունը, այդ թվում՝ գումարների ողջամիտ ծախս պահանջող միջոցներով: Ստորև ներկայացված է այն գործոնների բացատրական ցանկը, որոնք պետք է հաշվի առնել որոշելիս, թե արդյոք տեղեկության հրապարակման հանրային շահը գերակայում է վնաս պատճառելու ռիսկի նկատմամբ, թե՛ ոչ:

- Գործոններ՝ հոգուտ տեղեկության հրապարակման. կարելի է ողջամտորեն ակնկալել, որ տեղեկության հրապարակումը. ա) կնպաստի հանրային խնդիրների հրապարակավ քննարկմանը, բ) կբարձրացնի կառավարության հաշվետվողականության մակարդակը, գ) կնպաստի կարևոր հարցերի կամ մեծ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների շուրջ դրական և ստացված տեղեկությունների վրա հիմնված քննարկումներին, դ) կնպաստի պետական միջոցների ծախսերի նկատմամբ արդյունավետ վերահսկողությանը, ե) կբացահայտի կառավարության որոշումների հիմքում ընկած պատճառները, զ) կնպաստի շրջակա միջավայրի պահպանությանը, է) կբացահայտի հանրային առողջապահության կամ անվտանգության առջև ծառայած սպառնալիքները կամ ը) կբացահայտի կամ կօգնի սահմանել մարդու իրավունքների կամ միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների համար պատասխանատվությունը:
- Գործոններ՝ հոգուտ տեղեկության չիրապարակման. տեղեկատվության բացահայտումը, ամենայն հավանականությամբ, պարունակում է ազգային անվտանգության օրինաչափ շահին իրական և ճանաչելի վնասի պատճառման ռիսկ:
- Չհիմնավորված գործոններ. կարելի է ողջամտորեն ակնկալել, որ տեղեկության հրապարակումը. ա) անհարմարություն կպատճառի կառավարությանը կամ որևէ պաշտոնյայի կամ կհանգեցնի նրանց նկատմամբ վստահության կորստի, կամ բ) կթուլացնի քաղաքական կուսակցությունը կամ գաղափարախոսությունը:

Փաստը, որ տեղեկության հրապարակումը կարող է վնաս հասցնել երկրի տնտեսությանը, կարող է օգտագործվել այն դեպքում, եթե պետք է որոշվի, որ տեղեկության տրամադրումը պետք է սահմանափակվել այդ հիմքով, այլ ոչ թե ազգային անվտանգության:

¹⁴ «Ազգային անվտանգության օրինաչափ շահ» նշանակում է այնպիսի շահ, որի իրական նպատակը և հիմնական ազդեցությունը ազգային անվտանգության պաշտպանությունն է՝ համաձայն միջազգային և ազգային իրավունքի (Տեղեկատվության այն կատեգորիաները, որոնց չիրապարակումը կարող է անհրաժեշտ լինել՝ Ազգային անվտանգության

ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Սկզբունք 3-ով «նախատեսված է օրենքով» պահանջը հիմնականում արտացոլված է «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում, որտեղ գաղտնագրվող տեղեկությունների ոլորտները հստակ թվարկված են 8-րդ հոդվածում, իսկ գաղտնագրման ընթացակարգային հիմքերն ամրագրված են 10-րդ և 12-րդ հոդվածներում: Այս մոտեցումը նպաստում է նրան, որ տեղեկատվության մատչելիության սահմանափակումների թույլատրելի սահմանները ձևակերպվեն նախօրոք և լինեն կանխատեսելի:

Սկզբունքի «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» պահանջը ենթադրում է, որ սահմանափակումը չի կարող հիմնվել միայն ընդհանուր հղումների վրա: Անհրաժեշտ է ցույց տալ, որ տվյալ տեղեկության հրապարակումը կարող է ստեղծել իրական և ճանաչելի վտանգ ազգային անվտանգության օրինաչափ շահերի համար, և որ այդ վտանգը բավարար է տեղեկության տրամադրումը սահմանափակելու համար: Միաժամանակ, սահմանափակումը պետք է համապատասխանի համաչափության պահանջին. ընտրված միջոցը պետք է լինի այնպիսին, որը նվազագույն չափով սահմանափակի իրավունքը և անհրաժեշտ լինի վնասը կանխելու համար: Սահմանափակումը նաև չպետք է հանգեցնի նրան, որ տեղեկությունն ստանալու իրավունքը գործնականում կորցնի իր նշանակությունը:

ՀՀ օրենսդրությունում այս տրամաբանությունը առավել հստակ արտացոլվում է «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասում, որտեղ ուղղակիորեն նշվում է. «Գաղտնագրման համաչափությունը տեղեկություններին տրված գաղտնիության աստիճանի համապատասխանությունն է դրանց տարածման հետևանքով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին պատճառվող հնարավոր վնասի ծանրության աստիճանին»: Նաև նույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումներով նախատեսվում է. «Ստացված (մշակված) տեղեկությունները գործող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկում ընդգրկված չլինելու դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, իրավաբանական անձանց պաշտոնատար անձինք իրենց իրավասությունների սահմաններում պարտավոր են ապահովել այդ տեղեկությունների նախնական գաղտնագրումը ենթադրվող գաղտնիության աստիճանին համապատասխան և 10 աշխատանքային օրվա ընթացքում գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկում լրացում (փոփոխություն) կատարելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնել նշված ցանկը հաստատող պաշտոնատար անձին»: Այս

օրինաչափ շահը պաշտպանելու համար, սահմանված են 9-րդ սկզբունքում:) Ազգային անվտանգության շահը չի համարվում իրավաչափ, եթե դրա իրական նպատակը կամ հիմնական ազդեցությունը կապ չունի ազգային անվտանգության հետ, օրինակ՝ կառավարության կամ պաշտոնյաների պաշտպանությունը ամոթանքից կամ իրավախախտումների բացահայտումից, մարդու իրավունքների խախտումների, ցանկացած այլ իրավախախտման կամ հանրային հաստատությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը, որն է քաղաքական շահի, կուսակցության կամ գաղափարախոսության ուժեղացումը կամ պահպանությունը, կամ օրինական բողոքների ճշումը:

կարգավորումները նպաստում են, որ գաղտնագրման կիրառումը չդառնա ինքնանպատակ և ենթարկվի վերահսկելի չափորոշիչների:

Սկզբունք 3-ով նախատեսված «ազգային անվտանգության օրինաչափ շահի պաշտպանության» հիմքով սահմանափակումն իրավաչափ է միայն այն դեպքում, երբ օրենքը հստակ սահմանում է, թե ինչ շրջանակի տեղեկություններն կարող են դիտարկվել որպես նման պաշտպանություն պահանջող: Այստեղ կարևոր է, որ «ազգային անվտանգության» հղումը չվերածվի անորոշ ընդհանուր հիմնավորման: ՀՀ օրենսդրությունում այս պահանջը որոշ չափով ապահովվում է նրանով, որ օրենքը, մի կողմից՝ սահմանում է գաղտնագրման ենթակա տեղեկությունների շրջանակը, մյուս կողմից՝ մի շարք հանրային-կենսական տեղեկությունների համար (արտակարգ դեպքեր, տնտեսության ընդհանուր վիճակ, իրավունքների սահմանափակման փաստեր և այլն) ուղղակիորեն արգելում է գաղտնագրումը:

Չնայած կան տեղեկությունների այնպիսի խմբեր, որոնց վերաբերյալ սահմանվում է տրամադրումը չմերժելու կամ չգաղտնագրելու պարտադիր կանոն («Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդված, «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 9-րդ հոդված), այնուամենայնիվ օրենսդրությունը չի ձևակերպում ընդհանուր կանոն, ըստ որի՝ հանրային շահը որոշ դեպքերում պետք է պարտադիր գերակայի գաղտնագրման կամ տեղեկության չտրամադրման հիմնավորումների նկատմամբ:

Վերը նշվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ ՀՀ օրենսդրական կարգավորումները Սկզբունք 3-ին համապատասխանում են մասնակի. սահմանափակման օրինականության, համաչափության, ազգային անվտանգության սահմանման և որոշ ընթացակարգային երաշխիքների տարրեր առկա են, սակայն հանրային շահի գերակայության ընդհանուր կանոնի բացակայությունը թույլ չի տալիս խոսել լիարժեք համապատասխանության մասին: Սրա հետևանքով առանձին իրավիճակներում, երբ անհրաժեշտ է դրսևորել ճկունություն, հանրային մարմինները գրկված են դրանից օրենսդրական մակարդակով և հնարավոր է, որ բավարար չափով չգնահատվի հրապարակման ակնհայտ հանրային նշանակությունը, երբ հենց հրապարակումն է ծառայում հանրային վերահսկողության, հաշվետվողականության և իրավունքների պաշտպանության նպատակներին:

Սկզբունք 3-ը նաև պահանջում է, որ սահմանափակման հիմնավորվածությունը կարողանա ստուգվել ոչ միայն նույն մարմնի ներսում, այլ նաև անկախ վերահսկող մարմինների ու դատարանների միջոցով: ՀՀ օրենսդրությունում վերահսկողության ու վերանայման շղթան մասամբ նախատեսված է «Պետական գաղտնիքի մասին» օրենքով միջգերատեսչական և գերատեսչական վերահսկողության (24-րդ հոդված) և որոշ որոշումների վիճարկման (13-րդ և 22-րդ հոդվածներ), ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի համաձայն տեղեկատվության տրամադրման մերժման դեպքում դատարան բողոքարկելու հնարավորությամբ (11-րդ հոդված):

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 4. Հանրային մարմինների կողմից՝ տեղեկատվության ցանկացած սահմանափակման օրինաչափությունը ապահովելու բեռը

ա) Տեղեկության հրապարակման ցանկացած սահմանափակման օրինաչափությունն ապացուցելու բեռը դրված է այն հանրային մարմնի վրա, որը ձգտում է արգելել տեղեկության հրապարակումը:

բ) Տեղեկություն ստանալու իրավունքը պետք է մեկնաբանվի և կիրառվի լայն իմաստով, իսկ ցանկացած սահմանափակում պետք է մեկնաբանվի նեղ իմաստով:

գ) Այս պարտավորությունը կատարելու համար բավարար չէ, որպեսզի հանրային մարմինը պարզապես պնդի, որ առկա է վնասի ռիսկ. հանրային մարմինը պարտավոր է իր պնդումները հաստատել հստակ և հիմնավոր պատճառներով:

Նշում. Տեղեկություն հայցող ցանկացած անձ պետք է պատշաճ հնարավորություն ունենա Սկզբունքներ 26 և 27-ին համապատասխան, ինչպես վարչական մարմիններում, այնպես էլ դատական կարգով վիճարկելու ռիսկի գնահատման համար ներկայացված հիմքերը:

դ) Փաստերով չհիմնավորված պնդումը, օրինակ՝ նախարարի կամ այլ պաշտոնատար անձի կողմից տրամադրված տեղեկանքը այն մասին, որ տեղեկության հրապարակումը վնաս կհասցնի ազգային անվտանգությանը, ոչ մի դեպքում չի կարող, այս առումով, սպառնիչ հիմք համարվել:

ՀՀ օրենսդրությամբ այս սկզբունքը մասամբ ապահովվում է ընթացակարգային պահանջներով, սակայն նյութական չափորոշիչների մասով կան թերություններ, որոնք կարող են թուլացնել տեղեկությունը չտրամադրելու հիմնավորվածության ապացուցման բեռը:

Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածը նախատեսում է, որ տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում մարմինը պարտավոր է նշել մերժման հիմքը՝ օրենքի համապատասխան նորմի հղումով, և բողոքարկման կարգը: Այս պահանջը գործնականում նշանակում է, որ հանրային մարմինը չի կարող սահմանափակվել ընդհանուր ձևակերպումներով կամ բանավոր մերժումով. այն պետք է ցույց տա, թե որ իրավական հիմքով է կիրառել սահմանափակումը, և ինչպես կարող է այդ որոշումը վերահսկվել ու վիճարկվել: Այսինքն՝ տեղեկությունը չտրամադրելու փաստի հիմնավորվածության ապացուցման բեռն ընկնում է տեղեկատվությունը տնօրինող վարչական մարմնի վրա, քանի որ հենց նա է ներկայացնում սահմանափակման օրինական հիմքը և դրա կիրառման պատճառաբանությունը: Մինևույն ժամանակ, միայն իրավական հիմքին հղումը դեռ բավարար չէ, որպեսզի տեղեկությունների տրամադրումը մերժելու հիմնավորումը դառնա լիարժեք և կանխատեսելի չափորոշիչներով ղեկավարվող: Այդ նպատակով նպատակահարմար է, որ օրենսդրությունը ավելի հստակ ամրագրի տեղեկության տրամադրման դեպքում վրա հասնող վնասի գնահատման չափանիշը (օրինակ՝ վնասի վտանգը պետք է լինի իրական և ճանաչելի, ոչ թե ենթադրական): Այսպիսի հստակեցումը կուժեղացնի այն մոտեցումը, որ հանրային մարմինը պարտավոր է ոչ միայն օրենքին հղում անել, այլ նաև ցույց տալ՝ ինչու է տվյալ դեպքում սահմանափակումը անհրաժեշտ և ինչու այլ՝ ավելի մեղմ միջոց հնարավոր չէր կիրառել: Երբ վնասի գնահատման չափանիշն ու համաչափության մոտեցումը օրենքով հստակ ձևակերպված չեն, դատարանի համար դժվարանում է սահմանափակման հիմնավորվածության քննությունը հատկապես

այն հարցում, թե արդյոք մարմինը բավարար փաստարկներով հիմնավորել է վնասի վտանգը: Եթե այդ չափորոշիչները հստակեցվեն, ապա դատական վերահսկողությունը կդառնա ավելի կանխատեսելի և միատեսակ, իսկ հանրային մարմինների վրա դրված ապացուցման բեռը՝ ավելի իրական և կիրառելի:

Վերը նշվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ ՀՀ օրենսդրական կարգավորումները Սկզբունք 4-ին համապատասխանում են մասամբ: Մերժման գրավոր ձևը, իրավական հիմքի մատնանշումը և բողոքարկման կարգի նշումը կարևոր երաշխիքներ են, սակայն վնասի գնահատման հստակ չափանիշների և նվազագույն սահմանափակման պարտադիր մոտեցման բացակայությունը կարող են թույլ տալ, որ ապացուցման բեռը գործնականում մնա ձևական՝ առանց բավարար փաստական հիմնավորման պարտադրանքի:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 5. Որևէ հանրային մարմին ազատված չէ տեղեկություն տրամադրելու պահանջից

ա) Ոչ մի հանրային մարմին, այդ թվում՝ դատական մարմինները, օրենսդիր մարմինը, վերահսկիչ հաստատությունները, հետախուզական մարմինները, զինված ուժերը, ոստիկանությունը, այլ անվտանգության գործակալությունները, պետության և կառավարության ղեկավարի պաշտոնը զբաղեցնող անձինք և նրանց աշխատակազմերի որևէ պաշտոնյա չեն կարող ազատված լինել տեղեկություն տրամադրելու պահանջից:

բ) Տեղեկության հրապարակումը չի կարող արգելվել ազգային անվտանգության հիմքով միայն այն պատճառով, որ այն ստեղծվել կամ փոխանակվել է օտարերկրյա պետության կամ միջկառավարական մարմնի հետ համատեղ կամ որոշակի հանրային մարմնի կողմից կամ դրան առընթեր գործող ստորաբաժանման կողմից:

Նշում. Օտարերկրյա պետության կամ միջկառավարական մարմնի կողմից ստեղծված տեղեկատվության վերաբերյալ տե՛ս Սկզբունք 9-ի ա) կետի v) ենթակետը:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «*օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա*»: Այս ձևակերպումը ընդհանուր է և իր բովանդակությամբ ներառում է պետական իշխանության տարբեր ճյուղերին պատկանող մարմինները և որոշ դեպքերում նաև մասնավոր կազմակերպությունները, որոնց գործունեությունը կրում է հանրային բնույթ:

Եւրոյն օրէնքի 3-րդ հոդվածում «տեղեկատվություն տնօրինող»-ը սահմանվում է որպէս «տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջէներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպէս նաև հանրային նշանակության կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք»: Այս սահմանումն ընդգծում է, որ պարտավորության հասցեատերը ոչ միայն մարմինն է, այլ նաև դրա պաշտոնատար անձը, այսինքն՝ պարտականությունը չի կարող «կորչել» ներհամակարգային բաշխման մեջ:

«Տեղեկատվության ազատության մասին» օրէնքը տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը կապում է ոչ թէ տեղեկություն տնօրինողի կամ այլ մարմնի կարգավիճակի, այլ տեղեկության բնույթի հետ. օրէնքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղեկություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթէ այն, օրինակ, պարունակում է պետական, բանկային, առևտրային գաղտնիք կամ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն, ինչպէս նաև բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք): Այս մոտեցումը համահունչ է այն սկզբունքին, ըստ որի տեղեկության հասանելիության սահմանափակումը բացառություն է՝ պայմանավորված դրա բովանդակությամբ, այլ ոչ թէ որպէս որոշակի մարմինների՝ տեղեկություն տրամադրելու պարտականությունից «ընդհանուր ազատման» միջոց: Հետևաբար, ՀՀ օրենսդրության մեջ ուղղակի դրույթի բացակայության պայմաններում տեղեկության ստեղծված կամ փոխանակված լինելը օտարերկրյա պետության կամ միջկառավարական մարմնի հետ համատեղ ինքնին չի կարող դիտվել որպէս մերժման հիմք, քանի որ օրէնքով սահմանափակումները կապվում են միայն հստակ և արտահայտված հիմքերի հետ (օրինակ՝ «պետական գաղտնիք»): Իսկ հատուկ կանոն, որը թույլ կտար մերժել տեղեկության տրամադրումը միայն այն պատճառով, որ այն ստեղծվել կամ փոխանակվել է օտարերկրյա պետության կամ միջկառավարական մարմնի, որոշակի հանրային մարմնի կամ դրան առընթեր գործող ստորաբաժանման հետ, օրէնքում նախատեսված չէ:

Ցվանեի այս սկզբունքի տեսանկյունից կարևոր է, որ հնարավոր սահմանափակումները չվերածվեն մարմինների համար տեղեկություն տրամադրելու պարտականությունից ինքնին ազատման միջոցի, այլ հիմնավորվեն տեղեկության բովանդակությամբ պայմանավորված պատճառներով:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ ամբողջությամբ:

Սկզբունք 6. Տեղեկատվության մատչելիությունը վերահսկող մարմինների համար

Վերահսկողություն իրականացնող բոլոր հանրային մարմինները, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հաստատությունները և բողոքարկման մարմինները, ներառյալ՝ դատարաններն ու տրիբունալները, իրենց պարտականությունները կատարելու կարողության նկատառումով պետք է ունենան հասանելիություն ողջ, այդ թվում՝ ազգային անվտանգության վերաբերյալ տեղեկությունը՝ անկախ դրա գաղտնիության աստիճանից:

Նշում. Այս սկզբունքն ընդլայնված կերպով ներկայացված է Սկզբունք 32-ում: Դա չի նշանակում, որ վերահսկողությունն իրականացնող մարմինները պետք է հրապարակեն տեղեկությունը: Սկզբունք 35-ի համաձայն՝ վերահսկողությունն իրականացնող մարմինները պետք է գաղտնի պահեն այս սկզբունքներին համապատասխան օրինական կարգով գաղտնագրված բոլոր տեղեկությունները:

Սկզբունք 6-ի քննարկման համար նախ կարևոր է քարտեզագրել, թե ՅՅ-ում որ մարմիններն են առնչվում գաղտնիության ռեժիմին, ինչպես նաև՝ որ մարմիններն են վերահսկում դրա պահպանումը և ինչ ձևով կարող են մուտք ունենալ գաղտնի տվյալների: Ընդ որում, ազգային օրենսդրությամբ ակնհայտորեն չի նախատեսվում տեղեկատվության «մատչելիություն ապահովող» անկախ առանձին մարմին, որը համակարգված կերպով կաշխատի տեղեկատվության հասանելիության ընդլայնման և մերժումների վերանայման ուղղությամբ: Գործնականում առկա է գաղտնիության ռեժիմը պահպանող և վերահսկող հիմնական մարմինը՝ ԱԿԾ-ն, որպես պետական գաղտնիքի ոլորտում լիազորված մարմին, և կան մի շարք այլ ինստիտուտներ, որոնց վերահսկողական կամ աուդիտորական լիազորությունները ենթադրում են որոշակի տեղեկություններին (այդ թվում՝ սահմանափակ կամ գաղտնի) առնչվելու հնարավորություն՝ իրենց մանդատի իրականացման շրջանակում:

Այս համատեքստում կարելի է առանձնացնել նաև հետևյալ դերակատարներին՝ Մարդու իրավունքների պաշտպան, Հաշվեքննիչ պալատ, Պետական վերահսկողական ծառայություն, ինչպես նաև Ազգային ժողովի ոլորտային մշտական հանձնաժողովին (և որոշ ձևաչափերով՝ ժամանակավոր/քննիչ մարմիններ): Նրանցից յուրաքանչյուրի դեպքում գաղտնի կամ սահմանափակ տեղեկություններին հասանելիությունը սովորաբար պայմանավորված է «օրենքով սահմանված կարգով» ձևակերպմամբ և գործառնության անհրաժեշտությամբ, ինչը մի կողմից՝ ստեղծում է վերահսկողական հասանելիության իրավական հիմք, մյուս կողմից՝ համակարգը դարձնում է զգայուն կիրառվող հատուկ ընթացակարգերի կանխատեսելիության և միասնականության տեսանկյունից:

«Պետական գաղտնիքի մասին» ՅՅ օրենքը նախատեսում է վերահսկողության մեխանիզմ, որը կարող է ներառել նաև գաղտնի նյութերի ուսումնասիրություն:

Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Գաղտնիության ռեժիմի ապահովման նպատակով սահմանվում է միջգերատեսչական և գերատեսչական վերահսկողություն*»: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ «*Գաղտնիության ռեժիմի ապահովման փաստացի վիճակի ուսումնասիրման ու գնահատման, թերությունների և խախտումների հայտնաբերման, պատճառների ճշտման և դրանց վերացման ու կանխման նպատակով միջգերատեսչական վերահսկողությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում, իրավաբանական անձանց մոտ իրականացնում է լիազոր մարմինը՝ ստուգումների միջոցով*»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Գաղտնիության ռեժիմի ապահովման ստուգումներն իրականացնում են լիազոր մարմնի ղեկավարի ստեղծած հանձնախմբերը*»:

Սկզբունք 6-ի տեսանկյունից առանցքայինն այն է, որ ստուգում իրականացնողները իրավասու են ծանոթանալու անհրաժեշտ նյութերին: Դրան համահունչ «Պետական

գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ հանձնախմբի անդամներն իրավունք ունեն ծանոթանալու ստուգվող հարցերի հետ կապված բոլոր փաստաթղթերին, հաշվառման մատյաններին և այլ նյութերին: Այս դրույթը փաստացի ապահովում է, որ վերահսկողության գործառույթ իրականացնող լիազոր մարմնի հանձնախումբը չի սահմանափակվում միայն ընդհանուր տեղեկություններով, այլ կարող է ուսումնասիրել «բոլոր փաստաթղթերը», եթե դրանք վերաբերում են ստուգվող հարցին: Դա համապատասխանում է սկզբունքի հիմնական տրամաբանությանը. վերահսկողությունը պետք է հիմնված լինի ամբողջական տեղեկատվության վրա:

Վերահսկողության արդյունավետության համար կարևոր է նաև, որ ստուգումն ունենա ֆորմալ ընթացակարգ և արդյունքների արձանագրում: Օրենքը նախատեսում է, որ ստուգումների արդյունքների վերաբերյալ կազմվում է եզրակացություն, որում ի թիվս այլնի՝ արտացոլվում են հայտնաբերված թերություններն ու խախտումները, ինչպես նաև դրանք վերացնելու առաջարկությունները, իսկ եզրակացությունն ուղարկվում է ղեկավարին: Սա վերահսկողությանը տալիս է փաստաթղթավորված բնույթ, ինչը նվազեցնում է ձևական մոտեցման ռիսկը և ստեղծում է պատասխանատվության նվազագույն շրջանակ:

Սկզբունք 6-ի տրամաբանության մեջ դատական պաշտպանության ճանապարհը դիտվում է որպես լրացուցիչ երաշխիք սահմանափակումների օրինաչափությունը ստուգելու համար: Դրան համապատասխան՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը նշում է, որ տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմնի կամ դատարան: Դատական բողոքարկման երաշխիքներ առկա են նաև «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով: Այն նախատեսում է, որ որոշ դեպքերում անձը կարող է վիճարկել որոշումները. օրինակ՝ «Տեղեկության սեփականատերն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բողոքարկելու պաշտոնատար անձի գործողությունները» (հոդված 13, մաս 3) և «...իրավունք ունի բողոքարկելու այդ որոշումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով» (հոդված 22, մաս 4): Այս նորմերը ցույց են տալիս, որ համակարգում առկա է վերահսկողության և վերանայման ուղի:

Վերահսկողության վերաբերյալ ներկայացված նորմերը հիմնականում կառուցվում են լիազոր մարմնի միջգերատեսչական ստուգումների վրա: Սա որոշ իմաստով ապահովում է վերահսկողության մասնագիտական և կազմակերպչական կենտրոնացում, բայց Սկզբունք 6-ը պահանջում է ավելի լայն պատկեր. մուտք պետք է ունենան վերահսկողություն իրականացնող *բոլոր* մարմինները, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հաստատությունները և բողոքարկման մարմինները՝ իրենց գործառույթների շրջանակում:

Քննարկված կարգավորումներում նման ընդհանուր և ուղղակի ձևակերպում չկա, որը միանշանակ ամրագրի, որ, օրինակ, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հաստատությունները պարտադիր կերպով ունեն հասանելիություն ազգային անվտանգության վերաբերյալ բոլոր նյութերին՝ գաղտնիության աստիճանից անկախ: Այս տեսանկյունից «անկախ վերահսկողի» ինստիտուցիոնալ բացակայությունը հանդիսանում է համակարգային բաց՝ ոչ թե վերահսկողության բացակայության, այլ վերահսկողության տեսակների բազմազանության և ինստիտուցիոնալ հավասարակշռության տեսանկյունից:

Այսպիսով՝ միջգերատեսչական վերահսկողության ընթացքում լիազոր մարմնի հանձնախումբը ունի լայն իրավասություններ: Մինևույն ժամանակ, ներկայացված նորմերի շրջանակում բացակայում է ընդհանուր և պարզ ամրագրում այն մասին, որ վերահսկողություն իրականացնող և բողոքարկման բոլոր մարմինները (ներառյալ՝ դատարանները) իրենց գործառույթների իրականացման համար ունեն ամբողջ տեղեկատվության հասանելիություն՝ անկախ դրա գաղտնիության աստիճանից: Այս բացը թույլ է տալիս պահպանել «համապատասխանության մասնակի» գնահատականը:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 7. Ռեսուրսներ

Պետությունները պետք է համապատասխան ռեսուրսներ հատկացնեն և ձեռնամուխ լինեն այլ անհրաժեշտ քայլերի, օրինակ՝ կարգավորումների սահմանման և արխիվների պատշաճ կառավարման, գործնականում այս Սկզբունքների կատարումն ապահովելու համար:

Սկզբունք 7-ը պահանջում է, որ տեղեկատվության մատչելիության իրավունքը չմնա միայն թղթի վրա, այլ պետությունը տրամադրի բավարար միջոցներ ու իրականացնի կազմակերպչական քայլեր, որպեսզի Սկզբունքները կիրառվեն գործնականում: Սա վերաբերում է առնվազն կանոնների և ներքին կարգերի սահմանմանը, փաստաթղթերի ու արխիվների պատշաճ կառավարմանը, մարդկային և նյութական միջոցների (այդ թվում՝ ֆինանսավորման և տեխնիկական ապահովման) հատկացմանը:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը պարտադրում է, որ տեղեկատվություն տնօրինողը ոչ միայն արձագանքի հարցումներին, այլ նաև կազմակերպչական մակարդակով ապահովի մատչելիությունը: Մասնավորապես, տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն ամրագրված են տվյալ օրենքի 4-րդ հոդվածում: Դրանք են՝

1. *«տեղեկությունները գրանցելու, դասակարգելու և պահպանելու միասնական կարգի սահմանումը...»*,
3. *տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը*,
4. *հրապարակայնությունը»:*

Այս դրույթն, ըստ ելության, պահանջում է համակարգային մոտեցում՝ գրանցման, դասակարգման և պահպանման կանոնների մակարդակով, ինչն էլ հենց Սկզբունք 7-ի հիմքն է:

Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1. ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը,
2. իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը,
3. տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն...
5. նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին»:

Այստեղ հատկապես կարևոր է, որ օրենքը սահմանում է նաև կազմակերպչական պարտականություն՝ պատասխանատու անձ նշանակելու միջոցով:

Բացի այդ՝ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝

2. տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը...
3. մշակում է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները»:

Սա ցույց է տալիս, որ օրենքը նախատեսում է որոշակի մարդկային ռեսուրս՝ ոչ միայն տեղեկություն փնտրողին տեղեկություն տրամադրելու, այլ նաև ընթացակարգային աջակցություն և հաշվետվողական տվյալների մշակում ապահովելու համար:

Սկզբունք 7-ի կարևոր խնդիրներից մեկը գործնականում խոչընդոտների նվազեցումն է: ՀՀ օրենսդրությունը օրենքը որոշ դեպքերում սահմանում է տեղեկատվության անվճար տրամադրում՝ նվազեցնելով դիմողի բեռը:

Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում ...

2. մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս.
3. տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս...
6. տեղեկության տրամադրումը մերժելիս»:

Այս դրույթը մասամբ նպաստում է մատչելիության ապահովմանը, թեև չի լուծում համակարգային ռեսուրսների (արխիվ, թվայնացում, որոնելիություն) հարցերը:

«Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում Ցվանեի Սկզբունք 7-ի մոտեցումներն արտահայտված են ֆինանսավորման վերաբերյալ առանձին նորմով, որը վերաբերում է գաղտնի տեղեկությունների պահպանության միջոցառումներին: Այսպես, օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանությանն ուղղված միջոցառումների ֆինանսավորումն իրականացնում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց բյուջետային միջոցների հաշվին, իսկ ... պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարող ոչ պետական կազմակերպությունները, իրավաբանական անձինք՝ իրենց միջոցների հաշվին»: Այս նորմը ցույց է տալիս, որ գաղտնիության ռեժիմի

ապահովման համար օրենքը նախատեսում է ֆինանսական բեռի բաշխում՝ հանրային մարմինների և որոշ դեպքերում նաև ոչ հանրային կազմակերպությունների միջև:

Թեև քննարկված նորմերում առկա են պարտականություններ գրանցման, պահպանման և մատչելիության ապահովման վերաբերյալ, սակայն չկա այնպիսի հստակ և միասնական կարգավորում, որը կպարտադրեր օրինակ՝

- արխիվների միասնական թվայնացված կառավարում,
- հանրության համար որոնելի տեղեկությունների ցուցակներ,
- պահման ժամկետների միատեսակ մոտեցում (մատչելիության մասով),
- և գործնական չափորոշիչներ, թե ինչպես պետք է իրականացվի տեղեկությունների պարբերական հրապարակայնացումը որոնելի ձևաչափով:

Այսպիսով՝ կարելի է եզրահանգել, որ ՀՀ օրենսդրությունը Սկզբունք 7-ին համապատասխանում է մասնակի: Մի կողմից՝ այն ամրագրում է տեղեկության գրանցման, պահպանման և մատչելիության ապահովման սկզբունքներ ու պարտականություններ, ինչպես նաև պատասխանատու անձի ինստիտուտը, մյուս կողմից՝ ներկայացված նորմերի մակարդակում բավարար չափով հստակեցված չեն ռեսուրսների և հատկապես արխիվների ժամանակակից կառավարման գործնական չափորոշիչները:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 8. Արտակարգ իրավիճակներ

Բնակչության կյանքին սպառնացող արտակարգ իրավիճակներում, որոնք պաշտոնապես և իրավական առումով հայտարարվում են և՛ ազգային, և՛ միջազգային իրավունքին համապատասխան, պետությունը կարող է շեղվել տեղեկություն որոնելու, ստանալու և տարածելու իրավունքին առնչվող իր պարտավորություններից միայն այն չափով, որքանով խստիվ պահանջվում է տվյալ իրավիճակի հանգամանքներում: Այդ շեղումը թույլատրելի է միայն այն դեպքում և այնքան ժամանակով, որքանով այն համահունչ է միջազգային իրավունքի շրջանակում ստանձնած այլ պարտավորություններին և չի ենթադրում որևէ տեսակի խտրականություն:

Նշում. Տեղեկություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքի որոշ ասպեկտներ այնքան հիմնարար նշանակություն ունեն անվերապահելի իրավունքների իրացման համար, որ դրանք պետք է միշտ լիարժեքորեն հարգվեն անգամ արտակարգ իրավիճակներում: Որպես ոչ սպառնիչ օրինակ՝ Սկզբունք 10-ում ներկայացված կատեգորիաների մի մասի կամ բոլոր կատեգորիաների տեղեկությունն այդպիսի բնույթի ունի:

Ակզբունք 8-ի կարևոր բաղադրիչն այն է, որ որոշ տեղեկություններ նույնիսկ արտակարգ իրավիճակներում չպետք է լինեն անհասանելի:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքում ամրագրված են մերժման ոչ ենթակա տեղեկությունների մի շարք խմբեր: Մասնավորապես, 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

1. վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին.
2. ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը...»:

Այս դրույթը գործնականում ձևավորում է այն «բազային» տեղեկությունների շրջանակը, որի նկատմամբ պետությունը, նույնիսկ արտակարգ պայմաններում, պարտավոր է պահպանել տրամադրման իր պարտականությունը:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 8-րդ մասը նշում է. «Ռազմական դրության ժամանակ, մարտական գործողություններից բխող անհրաժեշտությամբ պայմանավորված, պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվության ձևակերպման գործընթացն իրականացվում է Կառավարության սահմանած կարգով»: Այս նորմը ցույց է տալիս, որ արտակարգ իրավիճակներում թույլատրելի է ընթացակարգի կազմակերպչական վերաձևավորում, բայց այն չի վերացնում օրենքով սահմանված ընդհանուր պահանջները:

Նույն օրենքում նաև առկա են նորմեր, որոնք նախատեսում են արտակարգ ռեժիմներում հատուկ գործողություններ և կարգեր այն դեպքում, երբ առկա է գաղտնի տեղեկությունների կորստի կամ հրապարակման վտանգ: Այսպես, օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասը նշում է. «Ռազմական դրության իրավական ռեժիմի ժամանակ ռազմական գործողություններով կամ արտակարգ դրության իրավական ռեժիմի ժամանակ իրավիճակով պայմանավորված, ինչպես նաև զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության պայմաններում, երբ հնարավոր չէ իրականացնել պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների անհրաժեշտ պաշտպանությունը, և առկա է դրա փաստացի կորստի կամ հրապարակման վտանգ, ապա համապատասխան իրավասու (պատասխանատու) անձանց որոշմամբ դրանք ոչնչացվում են»: Այս դրույթը ցույց է տալիս, որ արտակարգ պայմաններում օրենքը թույլ է տալիս կիրառել չափազանց խիստ միջոց՝ ոչնչացում, բայց այն կապում է կոնկրետ նախադրյալների հետ, այն է՝ պաշտպանությունը հնարավոր չէ, և կա փաստացի կորստի կամ հրապարակման վտանգ:

Այսպիսով՝ արտակարգ իրավիճակներում «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը նախատեսում է մերժման ոչ ենթակա տեղեկությունների շրջանակ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է մարդկանց անվտանգությանը, առողջությանը, աղետներին և տնտեսության ու հասարակական կարևոր ոլորտների իրական վիճակին, իսկ «Պետական

գաղտնիքի մասին» օրենքը նախատեսում է գաղտնի տեղեկությունների պաշտպանության համար հատուկ քայլեր, իսկ որոշակի վտանգների դեպքում՝ նույնիսկ ոչնչացման հնարավորություն:

Այս համադրությունը մոտ է Սկզբունք 8-ի տրամաբանությանը, որովհետև թույլ է տալիս արտակարգ իրավիճակներում պաշտպանել գաղտնի տեղեկությունը, բայց, միաժամանակ, պահպանել այն տեղեկությունների մատչելիությունը, որոնք հանրային պաշտպանության և հիմնարար իրավունքների համար կենսական են: Սակայն, այս նորմերում չկա ամբողջական, պարզ ու միասնական նկարագրություն այն մասին, թե ինչպիսին է արտակարգ դրության ընթացքում տեղեկության հրապարակման և սահմանափակման ընդհանուր ընթացակարգը, հատկապես՝ ինչ ժամկետներում և ինչ ձևով պետք է հրապարակվեն հանրության համար կենսական տեղեկությունները, ինչպես պետք է կիրառվի խիստ անհրաժեշտության սահմանը գործնականում, և ինչպես պետք է բացառվի խտրականությունը տեղեկատվական սահմանափակումների կիրառման ընթացքում: Այս պատճառով նպատակահարմար է քննարկել արտակարգ դրության տեղեկատվական ռեժիմի ընթացակարգային հստակեցման հարցը՝ ավելի հստակ հրապարակման պարտադրանքով (առավել սեղմ ժամկետով) և խտրականության արգելքի ուղղակի ձևակերպմամբ:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Առաջարկություններ

- Օրենսդրորեն հստակեցնել, որ մասնավոր անվտանգության/ պահնորդական կազմակերպությունները (հատկապես՝ հանրային նշանակության օբյեկտների պահպանում, պետական միջոցառումների անվտանգություն, ենթակառուցվածքների պաշտպանություն իրականացնողները) հանդիսանում են տեղեկություն տրամադրելու պարտավորություն ունեցող սուբյեկտներ՝ ոչ միայն «հանրային նշանակության կազմակերպության» ընդհանուր կատեգորիայով, այլ ուղղակի նորմով: Այսպիսի կազմակերպությունների համար սահմանել նվազագույն հրապարակման/հաշվետվության պարտադիր փաթեթ մարդու իրավունքների վրա հնարավոր ազդեցություն ունեցող գործունեության մասով (օրինակ՝ ուժի կիրառման քաղաքականություն, բողոքների վարույթ, միջադեպերի ընդհանուր վիճակագրություն)՝ գաղտնիության օրինական սահմանները պահպանելով:
- «Ազգային անվտանգության» հիմքով սահմանափակումների կիրառման համար մշակել չափորոշիչներ, որոնք կապահովեն, որ ազգային անվտանգության հիմքով մերժումները չլինեն չարդարացված կերպով լայն և անորոշ հիմնավորումներ պարունակող:
- «Պետական գաղտնիքի մասին» օրենքի սկզբունքների (օրինականություն, հիմնավորվածություն, արդիականություն, համաչափություն) կիրառումը ուժեղացնելու համար ներդնել պարտադիր հիմնավորման/փաստարկման ստանդարտ՝ մերժման/գաղտնագրման ակտում պահանջելով կոնկրետացնել, թե որ «օրինաչափ շահն» է պաշտպանվում և ինչու է տվյալ տեղեկության տրամադրումը վնասաբեր, այլ ոչ թե սահմանափակվել՝ միայն ընդհանուր ոլորտներին հղում անելով:

- «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում ամրագրել ընդհանուր կանոն՝ ազգային անվտանգության հիմքով մերժման դեպքում պարտադիր կիրառելու «իրական և ճանաչելի վնասի ռիսկ» չափանիշը և հանրային շահի կշռման/գերակայության պահանջը (ոչ միայն ոլորտային արգելքները), որպեսզի դատարանների վերահսկողությունը լինի միատեսակ և բովանդակային:
- Մշակել մեթոդաբանություն հանրային մարմինների համար՝ վնասի գնահատման, համաչափության, և «նվազագույն սահմանափակման միջոցի» ընտրության վերաբերյալ:
- Տեղեկությունների մերժման գրավոր ակտում սահմանել նվազագույն հիմնավորման պահանջ, թե ինչու չի կիրառվում այլ՝ ավելի մեղմ սահմանափակում:
- Ներդնել պահանջ, որ «ազգային անվտանգության» հիմքով մերժման դեպքում մարմինը պարտադիր նշի՝ որ փաստերով է հիմնավորում վնասի ռիսկը (սույնիսկ եթե որոշ փաստեր չիրապարակվեն դատական/վերահսկողական մարմինն ներկայացնելու համար):
- Օրենսդրորեն հստակ ամրագրել, որ վերահսկողություն իրականացնող բոլոր հանրային մարմինները, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հաստատությունները և բողոքարկման մարմինները (ներառյալ՝ դատարանները) իրենց գործառույթների իրականացման համար ունեն ազգային անվտանգության վերաբերյալ ամբողջական տեղեկությանը հասանելիություն՝ անկախ դրա գաղտնիության աստիճանից՝ միաժամանակ, պահպանելով օրինական կարգով գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության ապահովման պարտականությունը:
- Սահմանել տեղեկատվության կառավարման միասնական գործնական չափորոշիչներ և նվազագույն պարտադիր պահանջներ (գրանցում, դասակարգում, պահպանում, թվայնացում, որոնելի ցուցակների վարում, պարբերական հրապարակման ձևաչափեր)՝ դրանք ուղեկցելով համապատասխան ֆինանսական, տեխնիկական և մարդկային ռեսուրսների պարտադիր ապահովմամբ:
- Արտակարգ դրության և ռազմական դրության պայմաններում տեղեկատվական ռեժիմի վերաբերյալ նախատեսել առավել հստակ և միասնական ընթացակարգային կարգավորում, որը կսահմանի հանրության համար կենսական տեղեկությունների պարտադիր հրապարակման նվազագույն շրջանակն ու ժամկետները, տեղեկատվական սահմանափակումների կիրառման «խիստ անհրաժեշտության» չափանիշները, ինչպես նաև խտրականության արգելքի ուղիղ և հստակ կիրառելիությունը:
- Օրենսդրական մակարդակում ամրագրել «հանրային շահի գերակայության» ընդհանուր կանոնը՝ սահմանելով, որ որոշակի կատեգորիաների դեպքում (օրինակ՝ մարդու իրավունքների խախտումներ, կոռուպցիա, հանրային առողջության/շրջակա միջավայրի ռիսկեր) տեղեկության չտրամադրումը կամ գաղտնագրումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ հիմնավորվում է կոնկրետ և իրական վնասի բարձր հավանականությունը:

- Ներդնել պարտադիր կիրառվող «վնաս-հանրային շահ» համեմատական թեստ և սահմանել դրա ընթացակարգային պահանջները (պատճառաբանության նվազագույն բովանդակություն, մասնակի տրամադրման առաջնայնություն, վերանայման ժամկետներ), որպեսզի հանրային մարմինների հայեցողությունը չդառնա չիրապարակման կանխադրված մոտեցում և յուրաքանչյուր դեպքով ապահովվի հրապարակման հանրային նշանակության պատշաճ գնահատում:

II. Ազգային անվտանգության հիմքով չբացահայտվող տեղեկություն և հրապարակման ենթակա տեղեկություն

Սկզբունք 9. Տեղեկություն, որի չիրապարակելն օրինաչափ է

ա) Հանրային մարմինները կարող են ազգային անվտանգության հիմնավորմամբ սահմանափակել հանրության՝ տեղեկության մատչելիության իրավունքը, սակայն միայն այն դեպքում, երբ այդպիսի սահմանափակումը համապատասխանում է այս Սկզբունքների բոլոր մյուս դրույթներին, տեղեկությունը տնօրինում է հանրային մարմինը, և այն դասվում է հետևյալ կատեգորիաներից որևէ մեկին՝

i) Տեղեկություն՝ ընթացիկ պաշտպանության ծրագրերի, գործողությունների և կարողությունների մասին այն ժամանակահատվածի կտրվածքով, որի ընթացքում տվյալ տեղեկությունն ունի գործառնական նշանակություն:

Նշում. «Այն ժամանակահատվածի կտրվածքով, որի ընթացքում տվյալ տեղեկությունն ունի գործառնական նշանակություն» արտահայտությունը նշանակում է, որ նման տեղեկությունը պետք է հրապարակվի այն ժամանակ, երբ դրանում հայտնվող տվյալներն այլևս չեն կարող օգտագործվել թշնամու կողմից տվյալ պետության պատրաստությունը, կարողությունները կամ ծրագրերը հասկանալու համար:

ii) Տեղեկություն՝ արտադրության, կարողությունների կամ սպառազինության համակարգերի և այլ ռազմական համակարգերի, այդ թվում՝ կապի համակարգերի օգտագործման մասին:

Նշում. Նման տեղեկությունը ներառում է տեխնոլոգիական տվյալները և գյուտերին վերաբերող տեղեկությունները, ինչպես նաև արտադրության, կարողությունների կամ դրանց գործածման մասին տեղեկությունները: Չենքի և այլ ռազմական համակարգերի վերաբերյալ բյուջեի տողերի մասին տեղեկությունը պետք է հասանելի լինի հանրությանը: Տե՛ս Սկզբունք 10-ի Գ. կետի 3-րդ ենթակետը և Սկզբունք 10-ի Զ. կետը: Պետությունների համար լավ գործելակերպ է համարվում զենքերի վերահսկման ցուցակ կազմել և հրապարակելը՝ զենքի սովորական տեսակների մասով, ինչպես խրախուսվում է Չենքի առևտրի պայմանագրով [իտեղիակ՝ 33-ն չի հանդիսանում տվյալ պայմանագրի կողմ]: Լավ գործելակերպ է համարվում նաև զենքի, սարքավորումների և զորքերի թվաքանակի մասին տեղեկությունների հրապարակումը:

iii) Տեղեկություն՝ պետության տարածքը, կարևորագույն ենթակառուցվածքը կամ կարևորագույն ազգային հաստատությունները (եական հաստատություններ) սպառնալիքներից, ուժի գործադրումից կամ չարամիտ գործողություններից պաշտպանելու համար ձեռնարկվող հատուկ միջոցառումների մասին, որոնց արդյունավետությունը կախված է գաղտնիությունից:

Նշում. «Կարևորագույն ենթակառուցվածք» հասկացությունը նշանակում է՝ ռազմավարական ռեսուրսներ, միջոցներ և համակարգեր՝ ֆիզիկական կամ վիրտուալ, որոնք այնպիսի կարևոր կենսական նշանակություն ունեն պետության համար, որ դրանց ոչնչացումը կամ անսարքությունը քայքայիչ ազդեցություն կգործի ազգային անվտանգության վրա:

iv) Հետախուզական ծառայությունների գործողություններին, աղբյուրներին և մեթոդներին վերաբերող կամ դրանցից բխող տեղեկություն, եթե դրանք վերաբերում են ազգային անվտանգության հետ կապված հարցերին, և

v) ազգային անվտանգության հարցերին վերաբերող տեղեկություն, որը տրամադրել է օտարերկրյա պետությունը կամ միջկառավարական մարմինը գաղտնիության պահպանման հստակ ակնկալիքով, և այլ դիվանագիտական հաղորդումներ, եթե դրանք վերաբերում են ազգային անվտանգության հարցերին:

Նշում. Լավ գործելակերպ է համարվում, եթե նման ակնկալիքներն արձանագրված են գրավոր տեսքով:

Նշում. Եթե նշված կատեգորիաներից որևէ մեկը ներառում է ահաբեկչության և հակաահաբեկչական միջոցառումների մասին որոշակի տեղեկություն, հանրության՝ նման տեղեկության մատչելիության իրավունքը կարող է ենթակա լինել սահմանափակումների ազգային անվտանգության հիմքով՝ Սկզբունքների այս և այլ դրույթներին համապատասխան: Միևնույն ժամանակ, ահաբեկչության կամ հակաահաբեկչական միջոցառումների մասին որոշ տեղեկություններ կարող են առաջացնել հատկապես մեծ հանրային հետաքրքրություն. տե՛ս, օրինակ՝ Սկզբունք 10-ի «Ա» և «Բ» կետեր, «Ը» կետի 1-ին ենթակետ:

բ) Լավ գործելակերպ է համարվում, եթե ազգային օրենսդրությամբ սահմանված է տեղեկությունների այնպիսի կատեգորիաների բացառիկ ցանկ, որոնք առնվազն նույնքան նեղ են, որքան վերոնշյալ կատեգորիաները:

գ) Պետությունը կարող է տեղեկությունների վերոնշյալ կատեգորիաների ցանկում ավելացնել այլ կատեգորիա, բայց միայն պայմանով, որ այդ կատեգորիան լինի հստակ ճանաչելի և նեղ սահմանված, և որ տեղեկության գաղտնիության պահպանումն անհրաժեշտ լինի օրենքով սահմանված ազգային անվտանգության օրինաչափ շահը պաշտպանելու համար՝ Սկզբունք 2-ի գ) կետին համապատասխան: Նոր կատեգորիա առաջադրելու դեպքում պետությունը պետք է պարզաբանի, թե ինչպես է տվյալ կատեգորիայի տեղեկության հրապարակումը կարող վնասել ազգային անվտանգությանը:

Սկզբունք 9-ը պահանջում է, որ ազգային անվտանգության հիմքով տեղեկատվության մատչելիության սահմանափակումը լինի հստակ սահմանված, կանխատեսելի և նպատակային: Այսինքն՝ «ազգային անվտանգություն» հիմքը չի կարող գործել որպես ընդհանուր արտահայտություն. պետք է նախապես պարզ լինի, թե ինչ տեսակի տեղեկությունների մասին է խոսքը, և պետք է գործեն ընդհանուր արգելքներ ու ստուգելի չափանիշներ, որպեսզի սահմանափակումը չդառնա ինքնանպատակ:

Այս մոտեցումը սովորաբար իրականացվում է 3 հիմնական միջոցով՝

1. թվարկվում են թույլատրելի գաղտնագրվող տեղեկատվության հստակ տեսակները,
2. թվարկվում են տեղեկության այն տեսակները, որոնք չեն կարող գաղտնագրվել,
3. սահմանվում են այն սկզբունքները, որոնցով պետք է հիմնավորվեն գաղտնագրումները:

Ինչպես արդեն նշվել է, «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է պետական գաղտնիքի շարքին դասվող կոնկրետ տեղեկությունների ցանկ: Այն ներառում է՝

« 1) ռազմական բնագավառում՝

- ա. զինված ուժերի և այլ զորքերի ռազմավարական, օպերատիվ և մարտավարական բնույթի պլանների և ծրագրերի, ըստ ռազմական գործողությունների ձևերի զորքերի, ներառյալ աշխարհագրորի և տարածքային պաշտպանության, Հայաստանի Հանրապետության տարածքի օպերատիվ սարքավորման (կահավորման), գործողությունների նախապատրաստման և վարման, զորքերի ծավալման (այդ թվում՝ զորահավաքային), նրանց մարտունակության, մարտական հերթապահության կրման ձևերի ու եղանակների, դեկավարման համակարգի փոխդասավորության, գործունեության հաջորդականության, համակարգի հասանելիության, ամբողջականության, համակողմանի ապահովման վերաբերյալ տեղեկությունը և գաղտնիության դեմ ուղղված սպառնալիքները չեզոքացնելու միջոցառումները,*
- բ. ռազմարդյունաբերական համալիրի ծրագրերի, դրանց անվանումների, բովանդակության և կատարման արդյունքների, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացման ուղղությունների, դրանց մարտավարատեխնիկական բնութագրերի ու մարտական կիրառության հնարավորությունների մասին,*
- գ. հատուկ պահպանվող և մուտքի ու ելքի հատուկ կարգ ունեցող օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանվածության ու պատրաստականության աստիճանի, դրանց նախագծման և շինարարության, ինչպես նաև այդ օբյեկտների համար տարածքներ հատկացնելու մասին,*
- դ. Հայաստանի Հանրապետության տարածքում դաշնակից պետությունների և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, պաշտպանության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կազմակերպչական կառուցվածքի, զինվածության և թվաքանակի մասին,*
- ե. ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանվածության աստիճանի մասին,*
- զ. զինված ուժերի կարիքների համար իրականացված գնումների մասին տեղեկությունը, որի ցանկը հաստատում է Կառավարությունը.*

2) արտաքին հարաբերությունների բնագավառում՝

- ա. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական, արտաքին տնտեսական (առևտրային, վարկային և արժույթային) գործունեության մասին, որոնց վաղաժամ տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին,*

բ. ռազմական, գիտատեխնիկական և այլ բնույթի համագործակցության մասին տեղեկություններ, որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին.

3) տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառում՝

ա. Հայաստանի Հանրապետությունը հնարավոր զինված հարձակումներից պաշտպանելու վերաբերյալ նախապատրաստական ծրագրերի բովանդակության, ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի արտադրության, նորոգման գծով արդյունաբերական մոբիլիզացիոն կարողությունների, ռազմական հովմբի ու նյութերի պահեստավորման և մատակարարումների ծավալի, նյութական՝ պետական, զորահավաքային և ռազմավարական պահուստների կառուցվածքի, փաստացի չափի և դրանց տեղաբաշխման մասին,

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման նպատակով ենթակառուցվածքների օգտագործման մասին,

գ. պետական պաշտպանական պատվերների ծավալների, ծրագրերի, սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության, նորոգման, մատակարարումների, դրանց արտադրական կարողությունների առկայության և զարգացման մասին, այդ նպատակով կազմակերպությունների միջև ստեղծված փոխհամագործակցության կապերի, նշված սպառազինությունները և ռազմական տեխնիկա արտադրողների կամ տեխնիկական և գիտական մշակումներ կատարողների մասին,

դ. պաշտպանական կամ տնտեսական կարևոր նշանակություն ունեցող գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների մասին,

ե. քաղաքացիական պաշտպանության ուժերի ու միջոցների, վարչական շենքերի պաշտպանվածության ու բնակչության անվտանգության ապահովվածության աստիճանի մասին,

զ. քաղաքացիական պաշտպանության պլանների մասին,

է. Հայաստանի Հանրապետության պետական, զորահավաքային, ռազմավարական պաշարների պահուստի, դրա ֆինանսների և բյուջետային քաղաքականության (բացի տնտեսության և ֆինանսների ընդհանուր վիճակը բնութագրող ամփոփ ցուցանիշներից) մասին,

ը. տնտեսության զորահավաքային ծրագրերի և պլանների մասին.

4) հետախուզական, արտաքին հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառում՝

ա. հետախուզական, արտաքին հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության ուժերի, միջոցների, աղբյուրների, մեթոդների, պլանների և արդյունքների, ինչպես նաև այդ գործունեության ֆինանսավորման մասին տվյալները, եթե դրանք բացահայտում են թվարկված տեղեկությունները,

բ. հետախուզական, արտաքին հետախուզական, հակահետախուզական և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձանց մասին,

- գ. հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց պաշտպանության ուժերի, միջոցների, աղբյուրների, մեթոդների, պլանների և արդյունքների, ինչպես նաև այդ գործունեության ֆինանսավորման մասին տվյալները, եթե դրանք բացահայտում են թվարկված տեղեկությունները,
- դ. կառավարական և այլ տեսակի հատուկ կապի համակարգի, ծածկագրերի մշակման, դրանց պատրաստման և ապահովման, ծածկագրային և հատուկ պաշտպանության միջոցների վերլուծության մեթոդների, հատուկ նշանակության տեղեկատվական վերլուծական համակարգերի, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի հարձակումներից պաշտպանվածության մասին,
- ե. պետական գաղտնիքի պահպանման և պաշտպանության կազմակերպման և դրա փաստացի վիճակի մասին,
- զ. ահաբեկչության հակազդման և որոշակի անձանց նկատմամբ պետական պաշտպանության միջոցներ կիրառելու մեթոդների, եղանակների մասին,
- է. ահաբեկչության հետ հնարավոր առնչություն ունեցող անձանց և կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական մոնիտորինգի արդյունքների մասին,
- ը. պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանության մեթոդների ու միջոցների մասին,
- թ. պետական պահպանության ենթակա կառույցների անվտանգության ապահովման ուժերի, միջոցների, մեթոդների, ինչպես նաև դրանց գործունեության ֆինանսավորման մասին տվյալները, եթե դրանք կարող են բացահայտել թվարկված տեղեկությունները,
- ժ. Հայաստանի Հանրապետության պետական սահմանի պահպանության և պաշտպանության մասին,
- ժա. կադրերի պատրաստման մասին տվյալները, եթե դրանք կարող են բացահայտել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման ուղղված միջոցառումները»:

Այս կառուցվածքը մոտ է Սկզբունք 9-ի պահանջին, քանի որ սահմանափակումը ծագում է տեսակների թվարկումից, այլ ոչ թե ընդհանուր ձևակերպումներից:

Սկզբունք 9-ը ենթադրում է, որ «գաղտնագրելը» պետք է համապատասխանի որոշ չափանիշների: «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «Տեղեկությունները գաղտնագրվում են օրինականության, հիմնավորվածության, արդիականության և համաչափության սկզբունքներին համապատասխան»: Նույն հոդվածը մանրամասնում է նաև, որ «Գաղտնագրման հիմնավորվածությունը յուրաքանչյուր տեղեկության համապատասխանությունն է ... ցանկին...», «Գաղտնագրման համաչափությունը ... գաղտնիության աստիճանի համապատասխանությունն է ... հնարավոր վնասի ծանրության աստիճանին»: Այս դրույթների առկայությունը ՀՀ օրենսդրությունը մոտեցնում է Սկզբունք 9-ի տրամաբանությանը այն իմաստով, որ գաղտնագրումը պետք է լինի իրավաչափ, հիմնավորված, ժամանակին և չափի մեջ: Սկզբունքի «Ժամանակային» կարգավորումը ՀՀ օրենքում ամրագրված է գաղտնիության ժամկետների և վերանայման մեխանիզմով, որն ամրագրված է նշված օրենքի 14-րդ հոդվածում:

Արա հետ միաժամանակ, ֆինանսների կառավարման նկատմամբ հանրային վերահսկողության իրականացման նվազագույն հիմքերը «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում ամրագրված են 7-րդ հոդվածի 3-րդ մասում, ըստ որի՝ *«տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է ...2) բյուջեն»*: Այս համադրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ օրենսդրության մեջ ընդունված է այն մոտեցումը, որ տեխնիկական մանրամասները կարող են փակ լինել, իսկ ընդհանուր ֆինանսական պատկերը՝ բաց: Սակայն սա գործնականում պահանջում է հստակ տարբերակում, որպեսզի «բոլոր ծախսերը» ինքնաբերաբար չդառնան փակ:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ռազմական գնումները, անկախ նրանից թե ինչ է գնվում, որպես կանոն, լինում են փակ: Որևէ կերպ հիմնավորված չէ, թե ինչու են գաղտնի ընթացակարգով կատարվում, օրինակ, սննդի կամ առօրյա օգտագործման այլ պարագաների գնումները ՀՀ զինված ուժերում: Կարծում ենք այս մասով պետք է օրենսդրական մակարդակում հստակեցնել, թե ռազմական բյուջեի և գնումների որ դեպքերն ու մասերը պետք է լինեն գաղտնի:

Օրենքը 8-րդ հոդվածում թույլ է տալիս գաղտնագրել նաև հատուկ պահպանվող օբյեկտների տեղաբաշխման և պաշտպանվածության տվյալներ. *«հատուկ պահպանվող և մուտքի ու ելքի հատուկ կարգ ունեցող օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանվածության ... մասին»*: Սա համապատասխանում է Սկզբունք 9 ա) iii)-ին, քանի որ նման տեղեկությունների արդյունավետությունը հաճախ կախված է գաղտնիությունից:

Օրենքը նույն հոդվածով առանձնացնում է նաև հետախուզական և նման գործունեության տվյալներ. *«հետախուզական ... գործունեության ուժերի, միջոցների, աղբյուրների, մեթոդների, պլանների և արդյունքների ... մասին տվյալները»*, *«...հետախուզական ... մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող ... անձանց մասին»*: Սա Սկզբունք 9-ի թվարկած տեղեկատվության այն տեսակներից մեկն է, որտեղ գաղտնիության հիմնավորումը սովորաբար առավել ուժեղ է:

Օրենքի 6-րդ հոդվածը օտար պետությունից կամ միջկառավարական մարմնից ստացված տեղեկության, դիվանագիտական հաղորդակցության գաղտնիությունը պայմանավորում է այդ հարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրով. *«...պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների փոխանցման ... հարաբերությունները կարգավորվում են ... ինչպես նաև ... միջազգային պայմանագրերով»*:

8-րդ հոդվածում առկա ցանկի մեջ ներառվում է նաև տեղեկատվության տեսակ՝ *«Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական, արտաքին տնտեսական ... գործունեության մասին, որոնց վաղաժամ տարածումը կարող է վնաս հասցնել ...»*: Սա ընդհանուր գծերով համընկնում է Սկզբունք 9 ա) v)-ի մտքին:

Սկզբունք 9-ի մասով ուսումնասիրության ընթացքում արձանագրված խնդիրներից մեկը վերաբերում է «Գնումների մասին» օրենքին:¹⁵ Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով «Պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում ներառվում են ազգային անվտանգության ապահովման, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց [այն է՝ Հանրապետության նախագահ, վարչապետ, ԱԺ նախագահ] արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, կապի ծառայությունների, անվտանգության սարքերի և սարքավորումների, ներառյալ դրանց սպասարկման, ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմավթերթի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները»: Այսպիսի տեղեկությունները իրենց բնույթով միշտ չէ, որ ենթադրում են գաղտնիության օբյեկտիվ անհրաժեշտություն և դրանց դասակարգումը որպես պետական գաղտնիք և իրականացվող գնումների գործընթացների փակ, ոչ հրապարակային ռեժիմն էականորեն հակասում է Սկզբունք 9-ի սահմանած չափանիշներին: Այսպիսի մոտեցման արդյունքում պետական պաշտոնյաների սովորական կարիքների համար կատարվող գնումները դուրս են մնում վերահսկողությունից, ինչն ավելացնում է շահերի բախման և կոռուպցիոն ռիսկերը: Երբ հրապարակային հաշվետվությունն ու մրցակցային ճնշումը փոխարինվում են փակ ընթացակարգով, օրինականության և արդյունավետության գնահատումը փաստացի տեղափոխվում է այնպիսի դաշտ, որտեղ արտաքին վերահսկողությունը նվազագույն մակարդակի վրա է: Պետք է նշել, որ այս դեպքում խնդրահարույց է ոչ թե գաղտնի գնումների գոյությունը, այլ դրանց կիրառության չափազանց ընդարձակ շրջանակը և հանրային վերահսկողության համար նվազագույն բացահայտումների բացակայությունը հատկապես այն դեպքերում, երբ հնարավոր է հրապարակել գոնե ընդհանրացված կամ մասնակի տվյալներ՝ չվնասելով ազգային անվտանգությանը:

Սկզբունք 9-ը կարևորում է, որ գաղտնագրվող տեղեկության տեսակների ցանկերը լինեն հստակ, և, հնարավորության դեպքում, հայտնի հանրությանը: Այս մոտեցումն ամրագրված է Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասում, ըստ որի՝ գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը չեն գաղտնագրվում և ենթակա են հրապարակման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերտառությունը կարող է լինել պետական գաղտնիք: Սա կարևոր զսպիչ մեխանիզմ է կանխելու համար չափազանց լայն կամ անորոշ կիրառությունը:

Հարկ է նշել, որ այս առնչությամբ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի որոշում, որը վերաբերում է մինչև 2024 թվականին «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի ընդունումը 1996 թվականից գործող «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին: Մասնավորապես, վերջինիս 12-րդ հոդվածի 7-րդ մասն ամրագրում էր, որ «գերատեսչական ցանկերում նշվում են նաև ներգրավված տեղեկություններից յուրաքանչյուրի գաղտնիության աստիճանը: Այդ ցանկերը և դրանցում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են հանրային մարմինների

¹⁵ «Գնումների մասին» ՀՀ օրենք, 16.12.2016, <https://www.arlis.am/hy/acts/216336/latest>

համապատասխան ղեկավարների կողմից: Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն»: Սահմանադրական դատարանը 2012 թ. մարտի 6-ի թիվ ՍԴՌ-1010 որոշմամբ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը, որքանով այն չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկությանը, ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր: Սահմանադրական դատարանը գտել է, որ գերատեսչական ցանկերի գաղտնագրումը դուրս է տեղեկությունների գաղտնագրման՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորման ընդհանուր տրամաբանության շրջանակից, և դրանց ոչ հրապարակային բնույթը, որքանով այն չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, չի հետապնդում պետական անվտանգության շահերի պաշտպանության իրավաչափ նպատակ և խնդիրներ է հարուցում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: Սահմանադրական դատարանի դիրքորոշումից ակնհայտ բխում է, որ իրավաչափ կարող է համարվել ցանկում ներառված կոնկրետ տեղեկության, սակայն ոչ ամբողջ ցանկի իմպերատիվ գաղտնագրումը:¹⁶

ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշման կայացումից հետո ընդունվել է նոր՝ «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը, սակայն դրա 10-րդ հոդվածի 4-րդ մասը կրկին պահել է իրավանախորդ ակտի տրամաբանությունը՝ նշելով, որ «գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը չեն գաղտնագրվում և ենթակա են հրապարակման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերատառությունը (անվանումը) ինքնին ամրագրման փաստի ուժով կարող է լինել պետական գաղտնիք: Այսինքն՝ նշված ձևակերպումից բխում է, որ ցանկի մի մասի գաղտնի լինելն ինքնին հանգեցնում է ամբողջ ցանկի գաղտնագրման: Այս հարցի լուծում կարող է հանդիսանալ ոլորտային մարմինների կողմից ցանկերի այնպիսի անվանումների օգտագործումը, որոնց դեպքում դրանք կլինեն հնարավորինս ընդհանրական և իրենք իրենցով չեն պարունակի գաղտնի տվյալներ, ինչը թույլ կտա պահպանել գործունեության թափանցիկության սկզբունքը:

Թեև ընդհանուր առմամբ օրենսդրությունը համապատասխանում է Սկզբունք 9-ի պահանջներին, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, ինչպես նաև «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի գերատեսչական ցանկերում առկա տեղեկության վերատառության (անվանման) վերաբերյալ գործող կարգավորումները ստեղծում են հակասություն Սկզբունքի հետ:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

¹⁶ Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, Տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, <https://ddf.am/uploads/files/c6e6d078c1c6e6d948c317374cdade30.pdf>

Սկզբունք 10. Տեղեկությունների կատեգորիաներ, որոնց բացահայտումը բխում է դրա օգտին գերակշռող կանխավարկածից կամ գերակա հանրային շահից

Տեղեկությունների որոշ կատեգորիաներ, այդ թվում՝ ստորև ներկայացվածները, հատկապես մեծ հանրային շահ են ներկայացնում՝ հաշվի առնելով ժողովրդավարական վերահսկողության գործընթացում և օրենքի գերակայության առումով դրանց հատուկ նշանակությունը: Հետևաբար, գերակշռում է կանխավարկած, իսկ որոշ դեպքերում՝ գերակա հրամայական է, որ նման տեղեկությունը մատչելի լինի հանրության համար և հրապարակվի նախաձեռնողական կերպով:

Հետևյալ կատեգորիաների տեղեկությունների համար պետք է գերակշռի դրանք հրապարակելու կանխավարկածը, իսկ տեղեկության տրամադրումը ազգային անվտանգության հիմքով կարող է մերժվել միայն խիստ բացառիկ հանգամանքներում և այլ սկզբունքներին համապատասխան կարգով, միայն խիստ սահմանափակ ժամանակահատվածում, միայն օրենքով նախատեսված կարգով և միայն այն դեպքում, երբ չկա խելամիտ միջոց, որով կարելի է նվազեցնել տեղեկության հրապարակման հետ կապված վնասը: Ստորև ներկայացված՝ իրենց բնույթով հանրային գերակա շահի առարկա հանդիսացող որոշ ենթակատեգորիաների տեղեկությունների տրամադրումը չի կարող մերժվել ազգային անվտանգության հիմքով, և դա ոչ մի դեպքում չի կարող արդարացվել:

Ա. Մարդու իրավունքների միջազգային իրավունքի և մարդասիրական իրավունքի խախտումներ

1) Մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումների կամ միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների, այդ թվում՝ միջազգային իրավունքով ճանաչված հանցագործությունների, և անձի ազատության և անվտանգության իրավունքների համակարգային կամ համատարած խախտումների մասին տեղեկությունների հրապարակման նկատմամբ առկա է գերակա հանրային շահ: Նման տեղեկության տրամադրումը ոչ մի դեպքում չի կարող մերժվել ազգային անվտանգության հիմքով:

2) Մարդու իրավունքների կամ մարդասիրական իրավունքի այլ խախտումների վերաբերյալ տեղեկությունների համար գերակշռում է հրապարակման կանխավարկածը և որևէ դեպքում նման տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել ազգային անվտանգության հիմքով այնպիսի եղանակով, որը հնարավորություն կտա կանխել խախտումների համար համապատասխան անձանց պատասխանատվության ենթարկելը, կամ տուժողին զրկել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից օգտվելու հնարավորությունից:

3) Այն դեպքերում, երբ պետությունում ընթանում է անցումային արդարադատության գործընթաց, երբ հատկապես անհրաժեշտ է ապահովել ճշմարտության, արդարության, վնասի փոխհատուցման և հետագայում նոր խախտումներ չթույլատրելու երաշխիքները, գերակա հանրային շահը ենթադրում է, որ ամբողջ հասարակության համար պետք է բացահայտվի նախորդ վարչակարգի օրոք մարդու իրավունքների խախտումների մասին տեղեկությունը: Նոր կառավարությունը պետք է անմիջապես պաշտպանի և պահպանի նման տեղեկությունների ամբողջականությունը և անհապաղ հրապարակի նախորդ կառավարության կողմից թաքցված նման տեղեկություններ պարունակող գրառումները:

Նշում. Տե՛ս Սկզբունք 2 1-ի գ) կետը՝ մարդու իրավունքների խախտումների մասին տեղեկություններ որոնելու կամ վերականգնելու պարտականության վերաբերյալ:

4) Այն դեպքերում, երբ խախտումների փաստը դեռևս չի հաստատվել և վիճարկվում է կամ կասկածի տակ է առնվում, այս Սկզբունքը վերաբերում է այն տեղեկատվությանը, որն առանձին վերցված կամ այլ տեղեկությունների հետ համատեղ, կարող է լույս սփռել ենթադրյալ խախտումների մասին ճշմարտության վրա:

5) Այս Սկզբունքը վերաբերում է նախկինում կամ ներկայումս կատարված խախտումներին և կիրառելի է անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ խախտումները կատարվել են տեղեկությունը տնօրինող պետության, թե այլոց կողմից:

6) Այս Սկզբունքով նախատեսված խախտումների վերաբերյալ տեղեկությունը վերաբերում է հետևյալին՝ առանց սահմանափակումների.

ա) խախտումների մաս կազմող գործողությունների կամ բացթողումների ամբողջական նկարագրությունը կամ դրանք ներկայացնող բոլոր գրառումները, ինչպես նաև դրանց ամսաթվերը և հանգամանքները և անհրաժեշտության դեպքում՝ անհայտ կորածների կամ մահացածների աճյունների գտնվելու վայրը,

բ) բոլոր տուժողների ինքնությունը՝ պայմանով, որ նրանց ինքնության բացահայտմամբ չեն խախտվի տուժողների, նրանց հարազատների և վկաների մասնավոր կյանքի անձեռնմխելիության և այլ իրավունքները, և նրանց թվի և առանձնահատկությունների վերաբերյալ ընդհանուր և այլ հանգամանքներում անանուն տվյալները, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու գործում,

Նշում. Տուժողների, նրանց հարազատների և վկաների անունների և այլ անձնական տվյալների հրապարակումը հասարակության լայն շրջանակների համար կարող է արգելվել, անհրաժեշտության դեպքում, հետագայում նրանց լրացուցիչ վնասի պատճառումը կանխելու համար, եթե տվյալ անձինք կամ մահացած անձանց դեպքում՝ նրանց ընտանիքի անդամները հստակ և կամավոր պահանջում են չհայտնել նման տեղեկություններ, կամ եթե նման տեղեկություններ չհայտնելը ակնհայտորեն համահունչ է տվյալ անձի ցանկություններին կամ խոցելի խմբերի առանձնահատուկ կարիքներին: Ինչ վերաբերում է սեռական բռնությունից տուժողներին, ապա նրանց անունը և այլ անհատական տվյալները կարող են հրապարակվել նրանց հստակ համաձայնությամբ: Տուժող երեխաների (18 տարին չլրացած) անձնական տվյալները չպետք է հրապարակվեն հանրության լայն շրջանակների համար: Այնուհանդերձ, այս սկզբունքը մեկնաբանելիս հարկ է հաշվի առնել այն փաստը, որ տարբեր ժամանակներում տարբեր կառավարություններ, վկայակոչելով մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, մարդու իրավունքների խախտումները թաքցրել են հանրության տեսադաշտից, այդ թվում՝ հենց այն անհատներից, ում իրավունքները կոպտորեն խախտվում են կամ խախտվել են նախկինում՝ անտեսելով տուժողների իրական ցանկությունները: Այնուհանդերձ, այս վերապահումները չպետք է խոչընդոտեն ընդհանուր կամ անանուն տվյալների հրապարակմանը:

գ) իրավախախտումները գործած կամ դրանց համար որևէ այլ կերպ մեղավոր կամ դրանց մեջ որևէ այլ կերպ ներգրավված հաստատությունների և անհատների անվանումներն ու անունները, և ավելի ընդհանուր՝ այդ ժամանակահատվածում անվտանգության ոլորտում գործող հաստատությունների անվանումները, ինչպես նաև՝ դրանց վերադաս պաշտոնյաների և հրամանատարների անունները և տեղեկություններ վերահսկողության շրջանակի մասին,

դ) տեղեկություններ՝ խախտումների պատճառների և դրանք չկանխարգելելու մասին:

Բ. Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի կանխարգելման և կյանքի իրավունքի երաշխիքներ

Այս սկզբունքում ներկայացված տեղեկությունը վերաբերում է հետևյալին՝

1) օրենքներ և կանոնակարգեր, որոնցով թույլատրվում է պետության կողմից անձին կյանքից զրկելը, ինչպես նաև ազատազրկմանը վերաբերող օրենքներ և կանոնակարգեր, այդ թվում՝ օրենքներ և կանոնակարգեր, որոնք վերաբերում են իրավունքի խախտումից տուժած անձանց ձերբակալման հիմքերին, ընթացակարգերին, տեղափոխմանը, բուժմանը կամ պահման

պայմաններին, այդ թվում՝ հարցաքննության մեթոդներին: Նման օրենքների և կանոնակարգերի հրապարակումը ներկայացնում է գերակա հանրային շահ:

Նշում. Սկզբունք 10-ում հաճախ հանդիպող «Օրենքներ և կանոնակարգեր» արտահայտությունը ներառում է բոլոր առաջնային կամ պատվիրակված օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, կանոնակարգերը և հրամանագրերը, ինչպես նաև նախագահի, վարչապետի, նախարարների կամ այլ պետական պաշտոնյաների կողմից ընդունված որոշումները կամ գործադիր հրամանները և օրենքի ուժ ունեցող դատական հրամանները: «Օրենքներ և կանոնակարգեր» արտահայտությունը ներառում է նաև բոլոր այն կանոնները և օրենքի մեկնաբանությունները, որոնք գործադիր պաշտոնյաների կողմից համարվում են հեղինակավոր (հիմնավորված): «Ազատագրվում» արտահայտությունը ենթադրում է ձերբակալության, կալանավորման, բանտարկության կամ ներկայման բոլոր դրսևորումները:

2) Բոլոր շինությունների գտնվելու վայրը, որտեղ պահում են ազատագրված անձանց, և որոնք գործարկվում են պետության կողմից կամ պետության անունից, ինչպես նաև բոլոր ազատագրված անձանց, այդ թվում՝ զինված հակամարտությունների ժամանակ ազատագրված անձանց անունները, նրանց առաջադրված մեղադրանքները կամ նրանց կալանավորման պատճառները:

3) Տեղեկություններ՝ անազատության մեջ մահացած բոլոր անձանց մահվան հանգամանքների մասին և տեղեկություններ պետության մեղքով մարդկանց կյանքից զրկելու ցանկացած այլ դեպքերի մասին, այդ թվում՝ սպանված անձի կամ անձանց անունները, նրանց մահվան հանգամանքները և նրանց աճյունների գտնվելու վայրը:

Նշում. Տեղեկության հրապարակումը ոչ մի դեպքում չի կարելի արգելել ազգային անվտանգության հիմքով, եթե նման արգելքը կարող է հանգեցնել որևէ մեկի գաղտնի կալանավորմանը կամ գաղտնի կալանավայրերի ստեղծմանը և գործարկմանը կամ գաղտնի մահապատիժների իրագործմանը: Բացի այդ՝ որևէ հանգամանքներում չի կարելի ազատագրված անձի ընտանիքի անդամներից կամ նրա բարեկեցության նկատմամբ օրինական շահագրգռվածություն ունեցող այլ անձանցից թաքցնել կամ այլ կերպ չտրամադրել տեղեկություններ նրա ճակատագրի կամ գտնվելու վայրի մասին, եթե տվյալ անձն ազատագրվել է պետության կողմից կամ պետության թույլտվությամբ, աջակցությամբ կամ լուռ համաձայնությամբ: Ազատագրված անձանց, անազատության մեջ մահացած կամ պետական պաշտոնյաների պատճառով մահացած անձանց անունների և այլ անհատական տվյալների հրապարակումը կարող է արգելվել այն ծավալով, որն անհրաժեշտ է նրանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը պաշտպանելու համար, եթե տվյալ անձինք կամ մահացած լինելու դեպքում՝ նրանց ընտանիքի անդամները հստակ և կամավոր պահանջում են չհայտնել նման տեղեկությունները, և եթե նման տեղեկություններ չհայտնելը որևէ այլ հիմքով համապատասխանում է մարդու իրավունքների պաշտպանության պահանջին: Ազատագրված երեխաների անունները չպետք է հրապարակվեն հանրության լայն շրջանակների համար: Այնուհանդերձ, այս վերապահումները չպետք է խոչընդոտեն ընդհանուր կամ անանուն տվյալների հրապարակմանը:

Գ. Հանրային մարմինների կառուցվածք և լիազորություններ

Այս սկզբունքում ներկայացված տեղեկությունն առանց սահմանափակումների վերաբերում է հետևյալին՝

1) զինված ուժերի, ոստիկանության, անվտանգության և հետախուզական բոլոր մարմինների և ստորաբաժանումների գոյությունը,

2) այդ մարմիններին, դրանց նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին և ներքին հաշվետվողականության կառուցակարգերին (մեխանիզմ) վերաբերող օրենքները և կանոնակարգերը, ինչպես նաև այդ մարմինների ղեկավար պաշտոնյաների անունները,

3) հանրային միջոցների ծախսերը գնահատելու և վերահսկելու համար անհրաժեշտ տեղեկությունը, այդ թվում՝ համախառն ընդհանուր բյուջեները, բյուջեի հիմնական տողերը և նշված հանրային մարմինների համար նախատեսված հիմնական ծախսերի մասին տեղեկությունը,

4) երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի ստորագրումը և դրանց պայմանները, ինչպես նաև ազգային անվտանգության ոլորտում պետության կողմից ստանձնած այլ հիմնական միջազգային պարտավորությունները:

Դ. Ռազմական ուժ կիրառելու կամ զանգվածային ոչնչացման զենք ձեռքբերելու մասին որոշումներ

1) Այս սկզբունքը վերաբերում է այնպիսի տեղեկություններին, որոնք վերաբերում են զորքը մարտական պատրաստության վիճակի բերելու կամ այլ ռազմական գործողություն ձեռնարկելու մասին որոշումներին, այդ թվում՝ նման գործողություն ձեռնարկելու փաստի հաստատմանը, դրա ընդհանուր ծավալին ու շրջանակին և դրա հիմնավորմանը, ինչպես նաև ցանկացած տեղեկության, որը ցույց է տալիս, որ հանրությանը ներկայացված հիմնավորման շրջանակներում բերվել է սխալ փաստ:

Նշում. Գործողության «ընդհանուր» ծավալի և շրջանակի մասին նշումով արձանագրվում է այն հանգամանքը, որ, ընդհանուր առմամբ, պետք է հնարավոր լինի բավարարել զորքը մարտական պատրաստության վիճակի բերելու մասին որոշմանն առնչվող տեղեկատվության հասանելիության նկատմամբ հանրության մեծ հետաքրքրությունը՝ առանց բացահայտելու տվյալ ռազմական գործողության օպերատիվ կողմերի բոլոր մանրամասները (տե՛ս Սկզբունք 9-ը):

2) Միջուկային զենք կամ զանգվածային ոչնչացման այլ զենք ունենալը կամ ձեռքբերելը պետության կողմից, թեպետև առանց այդ զենքի արտադրության կամ օպերատիվ հզորության մասին մանրամասների, հանդիսանում է գերակա հանրային շահի հարց, և այդ տեղեկությունը չպետք է գաղտնի պահվի:

Նշում. Այս ենթասկզբունքը ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվի որպես նման զենք ձեռքբերելու հավանություն:

Ե. Դիտում (surveillance)

1) Հանրությանը պետք է հասանելի լինի դիտման բոլոր տեսակները կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև դիտում իրականացնելու համար թույլտվություն ստանալու, դիտման թիրախ ընտրելու և դիտման արդյունքում ստացված նյութն օգտագործելու, տարածելու, պահելու և ոչնչացնելու հետ կապված ընթացակարգերը:

Նշում. Այս տեղեկատվությունը ներառում է հետևյալը՝ ա) օրենքներ, որոնք կարգավորում են ինչպես գաղտնի, այնպես էլ բացահայտ դիտման բոլոր ձևերը, այդ թվում՝ անուղղակի դիտումը, ինչպես օրինակ՝ տվյալների հավաքագրումը (profiling and data-mining), և դիտման թույլատրելի միջոցների տեսակները, բ) դիտման թույլատրելի նպատակները, գ) դիտում նախաձեռնելու կամ այն շարունակելու համար անհրաժեշտ կասկածի շեմը, դ) դիտման միջոցների տևողության սահմանափակումները, ե) նման միջոցների գործածումը թույլատրելու և վերանայելու կարգը, զ) անհատական տվյալների տեսակները, որոնք կարելի է հավաքագրել և (կամ) մշակել ազգային անվտանգության նկատառումներով, և է) այդ տվյալներն օգտագործելու, պահպանելու, ջնջելու և փոխանցելու համար կիրառվող չափանիշները:

2) Հանրությանը պետք է հասանելի լինեն նաև դիտում իրականացնելու լիազորություն ունեցող մարմինների մասին տեղեկությունները և դիտում իրականացնելու դեպքերի վիճակագրությունը:

Նշում. Այս տեղեկությունների շարքին են դասվում՝ բոլոր պետական հաստատությունների անվանումները, որոնք ամեն տարի ստանում են որոշակի տեսակի դիտում իրականացնելու հատուկ թույլտվություն, յուրաքանչյուր նման հաստատության ամեն տարի տրամադրվող դիտում իրականացնելու թույլտվությունների թիվը, տարեկան կտրվածքով առկա ստույգ տեղեկություն դիտման ենթակա անձանց թվի և հաղորդումների թվաքանակի մասին, և այն մասին, թե արդյոք արձանագրվել է առանց հատուկ թույլտվության դիտում իրականացնելու որևէ դեպք, և եթե նման դեպք արձանագրվել է, ապա որ հանրային մարմինն է իրականացրել նման դիտում:

Հանրության տեղեկացված լինելու իրավունքը պարտադիր չէ, որ ենթադրի օրենքին և մարդու իրավունքների պաշտպանության մասով ստանձնած պարտավորություններին համապատասխան իրականացված դիտման որևէ առանձին փաստի կամ օպերատիվ մանրամասների հրապարակում: Նման տեղեկությունը կարող է գաղտնի պահվել հանրությունից և դիտման ենթակա անձանցից առնվազն մինչև դիտման ժամանակահատվածի ավարտը:

3) Բացի այդ՝ հանրությունը պետք է լիարժեք տեղեկացված լինի ապօրինի դիտման փաստի մասին: Նման դեպքերի մասին տեղեկությունը պետք է հրապարակվի հնարավորինս առավելագույն ծավալով, որը չի հանգեցնի դիտման ենթարկված անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման:

4) Այս Սկզբունքներով նախատեսվում է պաշտպանել տեղեկություն ստանալու հանրության իրավունքը և որևէ կերպ չեն նվազեցվում դիտման ենթարկված անձանց կամ իրենց անձնական համոզմամբ դիտման ենթարկված անձանց լրացուցիչ նյութական և դատավարական իրավունքները:

Նշում. Լավ գործելակերպ է համարվում, եթե հանրային մարմիններից պահանջվում է գաղտնի դիտման ենթարկված անձանց հայտնել նրանց նկատմամբ իրականացված դիտման մասին (առնվազն տեղեկացնել նրանց նկատմամբ իրականացված դիտման տեսակի, դիտումն իրականացնելու ամսաթվերի և դիտումն իրականացնելու թույլտվություն տրամադրելու համար պատասխանատու մարմնի մասին) այն ծավալով, որքանով նման տեղեկությունը չի վտանգի ընթացիկ օպերատիվ գործողությունները կամ աղբյուրները և միջոցները:

5) Այս Սկզբունքում ներկայացված տեղեկության հրապարակման օգտին գերակշռող կանխավարկածը չի տարածվում միայն օտարերկրյա հանրային մարմինների գործունեության դիտմանը վերաբերող տեղեկատվության վրա:

Նշում. Գաղտնի դիտման միջոցով ստացված տեղեկությունները, այդ թվում՝ օտարերկրյա հանրային մարմինների գործունեությանը վերաբերող տեղեկությունները պետք է ենթակա լինեն հրապարակման Սկզբունք 10-ի Ա. կետով նախատեսված հանգամանքներում:

2. Ֆինանսական տեղեկություն

Այս Սկզբունքում ներկայացված տեղեկությունը վերաբերում է այնպիսի տեղեկությունների, որոնց միջոցով հանրությունը կարող է հասկանալ անվտանգության ոլորտի ֆինանսավորման կարգը, ինչպես նաև՝ անվտանգության ոլորտին հատկացվող ֆինանսավորումը կարգավորող կանոնները: Նման տեղեկությունը պետք է, ի թիվս այլոց, ներառի հետևյալ տեղեկությունները՝ 1) ստորաբաժանումների և ենթակա գործակալությունների բյուջեները՝ հիմնական տողերով, 2) տարեվերջյան ֆինանսական հաշվետվությունները՝ հիմնական տողերով, 3) ֆինանսական կառավարման կանոնները և հսկողական մեխանիզմները, 4) գնումների կանոնները և 5) ֆինանսական վերահսկողության (հաշվեքննիչ) գերագույն ատյանների և անվտանգության ոլորտի ֆինանսական կողմերը վերանայելու համար պատասխանատու այլ մարմինների կողմից պատրաստված հաշվետվությունները, այդ թվում՝ այդ հաշվետվությունների բոլոր գաղտնագրված հատվածների ամփոփագրերը:

Է. Հաշվետվողականություն սահմանադրությամբ և օրենսդրությամբ ամրագրված իրավունքների խախտումների և իշխանության չարաշահման այլ դրսևորումների մասով

Այս սկզբունքում ներկայացված տեղեկությունը վերաբերում է սահմանադրությամբ և օրենքով ամրագրված իրավունքների խախտումների առկայությանը, բնույթին ու ծավալին և հանրային մարմինների կամ առանձին պաշտոնյաների կողմից գործած չարաշահումների այլ դրսևորումներին:

Ը. Հանրային առողջություն, հանրային անվտանգություն կամ շրջակա միջավայր

Այս սկզբունքում ներկայացված տեղեկությունը վերաբերում է հետևյալին՝

1) հանրային առողջությանը, հանրային անվտանգությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող անմիջական կամ փաստացի վտանգի պարագայում բոլոր այն տեղեկությունները, որոնք կարող են օգնել հանրությանը հասկանալ կամ միջոցներ ձեռնարկել այդ վտանգի հետևանքով վնասի պատճառումը կանխելու կամ նվազեցնելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք վտանգը ծագել է բնական պատճառներով, թե մարդկային գործունեության, այդ թվում՝ պետության կամ մասնավոր ընկերությունների գործողությունների արդյունքում:

2) բնական ռեսուրսների շահագործման, աղտոտման և արտանետումների հաշվառումների, նախատեսվող կամ գործող խոշոր հանրային աշխատանքների կամ ռեսուրսների արդյունահանման հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցության և հատկապես վնասակար գործունեության տեսակներին առնչվող ռիսկերի գնահատման ու կառավարման պլանների մասին պարբերաբար թարմացվող այլ տեղեկություններին:

Սկզբունք 10-ը նկարագրում է տեղեկատվության այն խմբերը, որոնց վերաբերյալ ժողովրդավարական վերահսկողության և օրենքի գերակայության տեսանկյունից առկա է գերակշռող կանխավարկած՝ հրապարակման օգտին: Այստեղ տրամաբանությունը հետևյալն է. անվտանգության հիմքով սահմանափակումը կարող է գործել միայն բացառիկ դեպքերում, կարճ ժամանակով և միայն այն ժամանակ, երբ վնասը հնարավոր չէ նվազեցնել այլ միջոցներով: Մի շարք ենթախմբերի դեպքում սկզբունքը նաև հստակ սահմանում է, որ ազգային անվտանգության հիմնավորմամբ արգելքը ընդհանրապես չի կարող արդարացվել:

ՀՀ իրավակարգում այս գաղափարն արտահայտված է որոշ տեղեկությունների գաղտնագրման կամ դրանց տրամադրումը մերժելու արգելքով, ինչպես նաև նախաձեռնողական (պրոակտիվ) հրապարակման պարտականությամբ, որի մասին կխոսվի համապատասխան սկզբունքի ներքո:

Այդուհանդերձ, ՀՀ օրենսդրությունում «հանրային գերակա շահի» բացարձակ կանոն (երբ հրապարակումը գերակա է նույնիսկ անվտանգության հիմքին հղման նկատմամբ) ուղիղ ձևով ամրագրված չէ բոլոր ենթախմբերի համար, և այդ իսկ պատճառով Սկզբունքին համապատասխանությունը գնահատելի է որպես մասնակի:

Ա. Մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի խախտումներ

Սկզբունք 10-ով նախատեսված տեղեկությունների այս կատեգորիայի հիմնական պահանջն այն է, որ մարդու իրավունքների ծանր խախտումների վերաբերյալ տեղեկությունը չպետք է գաղտնագրվեն ազգային անվտանգության հիմնավորմամբ:

«Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում առկա է նմանատիպ դրույթ, որով սահմանվում է գաղտնագրման արգելք. *«Արգելվում է պետական գաղտնիքի շարքին դասել՝ ...3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ... իրավունքների և ազատությունների սահմանափակման փաստերի, հանցագործությունների վիճակագրության մասին տեղեկությունները»:* (9-րդ հոդված, 1-ին մաս, կետ 3): Սա կարևոր դրույթ է, բայց այն ձևակերպված է «իրավունքների սահմանափակման փաստերի» և «հանցագործությունների վիճակագրության» շրջանակում և չի տալիս նույնքան լայն պատասխան, որքան Սկզբունք 10-ի «կոպիտ խախտումների ամբողջական նկարագրության» պահանջը: Այդ բացը մասամբ լրացվում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի չմերժվող տեղեկատվության ցանկով: Ըստ դրա՝ *«Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝ ...2) ներկայացնում է ... առողջապահության, կրթության ... բնագավառում տիրող իրական վիճակը...»:* (հոդված 8, մաս 3): Այս դրույթը չի պարունակում ուղղակի հղում մարդու իրավունքներին, բայց «իրական վիճակ» հասկացության ներքո կարող է ընդգրկել նաև համակարգային խնդիրների փաստական նկարագրությունը, եթե դրանք վերաբերում են հանրային ոլորտների իրական վիճակին:

Սակայն գործնականում «չգաղտնագրվող» տեղեկությունների այս շրջանակը միշտ չէ, որ ապահովում է հրապարակման կանխավարկածը: Օրինակ՝ 2020 թվականի 44-օրյա պատերազմի գոհերի թվի և հատկապես անվանական ցանկի հրապարակման հարցում պետական մարմինները տարիներ շարունակ խուսափել են ամբողջական տեղեկություն տրամադրելուց՝ տարբեր փուլերում հարցումները փոխանցելով միմյանց, իսկ վերջնարդյունքում հղում անելով «գաղտնիք պարունակելու» հանգամանքին: Սա խնդիր է Սկզբունք 10-ի տրամաբանության տեսանկյունից, քանի որ զանգվածային մահերի և անհետ կորածների մասին տվյալները հանրային հաշվետվողականության նվազագույն հիմք են, և դժվար է դրանք տեղավորել «իրավունքների սահմանափակման փաստերի» նեղ ձևակերպման մեջ՝ այն աստիճան, որ թույլատրելի լինի տեղեկության ամբողջական չտրամադրումը: Ավելին, նույն հարցի շուրջ տարբեր մարմինների և տարբեր աղբյուրների միջև տարբեր թվերի շրջանառությունը ցույց է տալիս, որ գաղտնիության վկայակոչումը կարող է գործել ոչ թե կոնկրետ ու ճանաչելի վնասը կանխելու համար, այլ հանրային վերահսկողությունից խուսափելու նպատակով: Այս համատեքստում առավել տրամաբանական է դիտարկել, որ անգամ եթե որոշ տվյալներ կարող են պահանջել պաշտպանական առանձնահատկություններ (օրինակ՝ օպերատիվ տվյալների մասով), ապա գոհերի և անհետ կորածների վերաբերյալ ստուգելի, միասնական և նվազագույն տեղեկությունը պետք է ընկալվի որպես հրապարակման ենթակա «իրական վիճակ» կամ առնվազն՝ մասնակի տրամադրման ռեժիմով ապահովվող տեղեկություն:¹⁷

¹⁷ Ֆակտոր, Չոհերի թիվը՝ այլուս միևնուսով. պատերազմից 5 տարի անց գոհված անձանց ցանկը հրապարակված չէ, 07.11.2025թ., <https://factor.am/949884.html>

Բ. Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի կանխարգելման և կյանքի իրավունքի երաշխիքներ

Սկզբունք 10-ը պահանջում է, որ հրապարակային լինեն առնվազն այն նորմերը և հիմնական կանոնները, որոնցով կարգավորվում է ազատագրվում և պետության կողմից ուժի գործադրումը: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածում նախաձեռնողական հրապարակման պարտավորությունը ներառում է հանրային մարմնի գործունեությանը վերաբերող հիմնական տեղեկատվություն, այդ թվում՝ գործառույթներ և կարգեր. «...տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները ...

1. հանրության համար իրականացվող ... աշխատանքները և ծառայությունները.
2. բյուջեն...
3. տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը...»:

Սա ապահովում է ընդհանուր թափանցիկություն, սակայն ազատագրվման վայրերի, ազատագրված անձանց ցուցակների կամ անազատության մեջ մահվան հանգամանքների հրապարակման վերաբերյալ ուղիղ նորմ այս կարգավորումներում առկա չէ: Միակ հստակ «չմերժվող» ամրագրումը վերաբերում է արտակարգ դեպքերին և հանրային անվտանգությանը: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի համաձայն՝ «Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝ 1. վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին...» (հոդված 8, մաս 3, կետ 1):

Այսինքն՝ Սկզբունք 10-ի Բ. բաժնի պահանջների զգալի մասը ԶԶ օրենսդրության վերոնշյալ նորմերով ուղղակիորեն չի կարգավորվում:

Գ. Զանրային մարմինների կառուցվածք և լիազորություններ

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է, որ տեղեկությունը տնօրինողը «...տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է ...4) հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները... պաշտոնը...11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները...»: Նման շարադրանքը համընկնում է Սկզբունք 10-ի այն պահանջին, որ հանրությանը պետք է հասանելի լինի կառույցների գոյությունը, դեկավարների տվյալները, ֆինանսական հիմնական պատկերը և հաշվետվողականության տվյալները: Միաժամանակ, «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը թույլ չի տալիս գաղտնագրել տնտեսության և հանրային ոլորտների ընդհանուր վիճակը. «Արգելվում է պետական գաղտնիքի շարքին դասել՝ ...2) տնտեսության ընդհանուր վիճակը...» (հոդված 9, մաս 1, կետ 2):

Ուստի, այս մասով առկա է համապատասխանություն Սկզբունքին:

Դ. Ռազմական ուժ կիրառելու կամ զանգվածային ոչնչացման զենք ձեռքբերելու մասին որոշումներ

«Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը պետական գաղտնիքի շրջանակում ներառում է ռազմական ոլորտի պլանավորման և գործողությունների լայն շերտ՝ ռազմավարական, օպերատիվ և մարտավարական պլաններ, դրանց նախապատրաստման և վարման վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև (ընդհանուր տրամաբանությամբ) այնպիսի տեղեկություն, որի հրապարակումը կարող է բացահայտել կարողություններ, մտադրություններ, տեղաշարժեր կամ գործողությունների տրամաբանություն: Այս մոտեցումը հասկանալի է գործողությունների անվտանգության տեսանկյունից, որովհետև նման տեղեկությունների հրապարակումը կարող է վնասել պաշտպանունակությանը կամ նպաստել հակառակորդի տեղեկացվածությանը:

Սակայն Ցվանեի Սկզբունք 10-ի տրամաբանությունը տարբերակում է երկու շերտ. 1) կոնկրետ օպերատիվ տվյալներ, որոնք կարող են օրինաչափորեն փակ մնալ, և 2) որոշման «բաղաբական-իրավական» կամ «հանրային հաշվետվողականության» շերտը, որը պետք է հասանելի լինի: Այստեղ խոսքը ոչ թե մարտական պլանների կամ տեխնիկական մանրամասների հրապարակման, այլ՝ որոշման գոյության, դրա իրավական հիմքերի, նպատակների, սահմանների և վերահսկողության մեխանիզմների մասին նվազագույն տեղեկատվության հասանելիության մասին է: Օրինակ՝ ռազմական ուժ կիրառելու որոշման դեպքում հանրային վերահսկողության համար կարևոր է առնվազն իմանալ՝ ով է ընդունել որոշումը, ինչ իրավական հիմքով, ինչ նպատակով, ինչ ընդհանուր շրջանակում և ինչ սահմանափակումներով, ինչպես նաև ինչ ձևով է ապահովվում հետադարձ հաշվետվողականությունը (օրինակ՝ խորհրդարանական վերահսկողություն, հաշվետվություն սահմանված ժամկետում, ընդհանուր վնասների/հետևանքների գնահատում):

ՀՀ օրենսդրությունում այս «նվազագույն բացահայտման» պահանջը ռազմական ուժի կիրառման կամ նման բնույթի ռազմավարական որոշումների մասով ուղիղ ձևակերպված չէ հենց պետական գաղտնիքի ռեժիմի ներսում: Արդյունքում, Նույն Նորմը (8-րդ հոդվածի լայն շրջանակը) գործնականում կարող է կիրառվել ոչ միայն օպերատիվ տվյալների, այլ նաև որոշման հիմնավորման և շրջանակի մասին տեղեկությունների նկատմամբ՝ ստեղծելով «ամեն ինչ փակ է» մոտեցման ռիսկ: Սա է պատճառը, որ տվյալ բաղադրիչը գնահատվում է որպես «մասնակի համապատասխանություն»: Գաղտնիության ռեժիմը ուժեղ է և մանրամասները փակելու հնարավորություն տալիս է, բայց չի ապահովում այնպիսի պարտադիր հակակշիռ, որը կհաստատի՝ որոշման ընդհանուր շրջանակը և հիմնավորումը պետք է հասանելի լինեն հանրությանը՝ առանց վնասակար մանրամասների:

Ե. Դիտում (Surveillance)¹⁸

Ինչպես «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը, այնպես էլ «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 8-րդ հոդվածը ձևավորում են պաշտպանված

¹⁸ Պետք է նկատի ունենալ, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության» մասին օրենքով դիտումը մեկն է օպերատիվ-հետախուզական գործողություններից, իսկ սկզբունքներում սա ունի ավելի լայն նշանակություն:

իրավական դաշտ, հատկապես՝ օպերատիվ աղբյուրների, գործիքների/մեթոդների, ինչպես նաև հատուկ կապի համակարգերի վերաբերյալ տեղեկությունների համար: Այսինքն՝ օրենսդիրը հստակ առաջնահերթություն է տալիս այնպիսի տվյալների գաղտնագրմանը, որոնց բացահայտումը կարող է վնասել ազգային անվտանգությանը, օպերատիվ աշխատանքի արդյունավետությանը կամ համապատասխան մարմինների պաշտպանական կարողություններին: Սակայն, միևնույն ժամանակ, այս կարգավորումներում ուղղակիորեն ամրագրված չէ Սկզբունք 10-ից բխող այն պահանջը, ըստ որի պետք է պարտադիր հրապարակվեն առնվազն ընդհանուր բնույթի կանոնները, ընթացակարգային շրջանակը և վիճակագրական տվյալները (այն չափով, որը չի բացահայտում պաշտպանվող աղբյուրներ և մեթոդներ): Արդյունքում, օրենքները բավական հստակ պաշտպանում են «ինչը չպետք է բացահայտվի», բայց նույն հստակությամբ չեն սահմանում «ինչը պարտադիր պետք է հրապարակվի» հանրային հաշվետվողականությունն ապահովելու համար:

2. Ֆինանսական տեղեկություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը պարտադրում է իրավասու մարմիններին բյուջեի հրապարակում. *«...տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է ...2) բյուջեն»*: Սակայն նույն հոդվածը նաև սահմանում է, որ հանրային նշանակության կազմակերպությունները կարող են չհրապարակել որոշ կետեր. *«Հանրային նշանակության ... կազմակերպությունները կարող են չհրապարակել ... 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերում սահմանված տեղեկությունները...»*: Կարծում ենք, որ այս բացառությունը ավելի շատ վերաբերում է կազմակերպություններին, ոչ թե հանրային մարմիններին, և վերջիններս պետք է ունենան հնարավորինս թափանցիկ ֆինանսական տեղեկատվություն:

Ը. Հանրային առողջապահություն, հանրային անվտանգություն, շրջակա միջավայր

Այս հատվածը թերևս ՀՀ օրենսդրության առավել ուժեղ պաշտպանություն ունեցող կանոններից է և առավել մոտ է Սկզբունք 10-ի «գերակա հանրային շահի» դրսևորումներին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը նշում է, որ *«Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝*

- 1. վերաբերում է ... արտակարգ դեպքերին ... աղետներին ... դրանց հետևանքներին.*
- 2. ներկայացնում է ... բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, քաղաքացիների անվտանգության, առողջապահության ... բնագավառում տիրող իրական վիճակը...»:*

Եվ «Պետական գաղտնիքի մասին» օրենքը նույն տրամաբանությունը կրկնում է՝ գաղտնագրման արգելքով. *«Արգելվում է պետական գաղտնիքի շարքին դասել՝*

- 1. ... աղետների ... դրանց հետևանքների մասին տեղեկությունները,*
- 2. տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև ... շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության ... իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները»:* (հոդված 9)

Այս մասով հիմնական խնդիրը թերևս վերաբերում է հանքարդյունաբերող ընկերություններին և նրանց գործունեության հետևանքներին: Մասնավորապես, թեև դրանք օրենսդրությամբ չեն դիտարկվում որպես հանրային նշանակության կազմակերպություններ և չեն համարվում նաև պաշտպանության կամ անվտանգության ոլորտին առնչվող, սակայն պետք է փաստել, որ ինչպես սկզբունքներում, այնպես էլ օրենսդրությամբ շրջակա միջավայրի պահպանությունը դիտվում է որպես ազգային անվտանգության տարր, ուստի և այսպիսի կազմակերպությունների զգալի մասը իրենց նշանակությամբ որևէ կերպ չեն զիջում այն մարմիններին, որոնք որևէ ազդեցություն ունեն ազգային անվտանգության վրա: Ընդ որում, պրակտիկայում քիչ չեն դեպքերը, երբ դրանք իրենց գործունեության վերաբերյալ այս կամ այն տվյալը չեն տրամադրում հասարակության շահագրգիռ կողմերին՝ հղում անելով մասնավոր շահերին: Սակայն այս դեպքում կոնկրետ կազմակերպության մասնավոր շահը ստորադաս է հանրային շահի նկատմամբ, քանի որ դրանց գործունեությունն ուղղակիորեն ազդում է հանրային առողջության, շրջակա միջավայրի և անվտանգության վրա:

Այսպիսով՝ Սկզբունք 10-ի պահանջներին ՀՀ օրենսդրության համապատասխանությունը մասնակի է. առանձին ոլորտներում (հանրային անվտանգություն, առողջապահություն, շրջակա միջավայր, տնտեսության ընդհանուր վիճակ, պետական մարմինների կառուցվածքային և բյուջետային որոշ տվյալներ) կան բավական ուժեղ հրապարակայնության երաշխիքներ և գաղտնագրման արգելքներ: Սակայն սկզբունքի պահանջած լայն և համակարգային մոտեցումը, հատկապես՝ մարդու իրավունքների խախտումների ամբողջական փաստական բացահայտման, ազատագրկման/կյանքի իրավունքի երաշխիքների, դիտման կանոնների ու վիճակագրության, ինչպես նաև ռազմական որոշումների ընդհանուր հիմնավորման հրապարակման մասով, օրենքներում ամբողջությամբ և ուղիղ ամրագրված չէ: Բացի այդ՝ թեև շրջակա միջավայրի և հանրային առողջության վերաբերյալ տեղեկությունների բացահայտման հիմքերը ուժեղ են, գործնականում բարձր հանրային ազդեցություն ունեցող որոշ մասնավոր սուբյեկտների (օրինակ՝ հանքարդյունաբերության ոլորտում) նկատմամբ նույն մակարդակի հրապարակայնության պարտականությունը հստակ ամրագրված չէ, ինչը նույնպես պահպանում է «մասնակի համապատասխանության» գնահատականը:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Առաջարկություններ

- Օրենսդրորեն ամրագրել «գերակա հանրային շահի» ընդհանուր կանոն ազգային անվտանգությանը հղումով մերժումների համար՝ հատուկ շեշտադրելով, որ տեղեկության որոշ ենթախմբերի դեպքում արգելքը չի կարող հիմնավոր լինել (օրինակ՝ մարդու իրավունքների խախտումների փաստական տվյալներ, խոշտանգումների/կյանքից զրկման դեպքերի փաստական հանգամանքներ՝ նվազագույն անհրաժեշտությամբ ապանձնավորման ռեժիմով):

- Տեղեկությունների կոնկրետ ենթախմբերի համար, հատկապես՝ անվտանգության ոլորտին առնչվող, ներդնել տեղեկությունների նախաձեռնողական հրապարակման պարտադիր ցուցակ՝
 - բյուջեի հիմնական տողեր/գլխավոր ծախսային ուղղություններ,
 - ներքին հաշվետվողականության/վերահսկողության կառուցակարգեր,
 - օպերատիվ հետախուզական գործողությունների թույլտվությունների տարեկան վիճակագրություն (թույլտվությունների թիվ, տեսակներ, մերժումներ/խախտումներ՝ առանց օպերատիվ մանրամասների),
 - ազատագրված վայրերի մասին նվազագույն տեղեկություն և անազատության մեջ մահվան դեպքերի վերաբերյալ հանրային հաշվետվության նվազագույն ստանդարտ:
- Սահմանել «մասնակի տրամադրման/խմբագրման» պարտադիր մեխանիզմ, այդ թվում՝ ցանկերի մասնակի հրապարակում, երբ տվյալ փաստաթղթում կան թե՛ գերակշռող կանխավարկածով կամ գերակա շահով պայմանավորված հրապարակելի, թե՛ օպերատիվ-զգայուն, օրինաչափորեն գաղտնագրման ենթակա մասեր:
- Հանքարդյունաբերող, բնական ռեսուրսներ օգտագործող և շրջակա միջավայրին վնաս հասցնող այլ կազմակերպությունների համար օրենքով ընդլայնել «հանրային նշանակության կազմակերպության» շրջանակը կամ ստեղծել առանձին կատեգորիա՝ «շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունեցող սուբյեկտներ», որպեսզի շրջակա միջավայրի, հանրային առողջության և անվտանգության ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը կախված չլինի միայն մասնավոր շահերին կատարվող հղումներից, այլ ունենա հստակ հանրային գերակայություն:
- «Գնումների մասին» օրենքում վերանայել պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում ներառվող ապրանքների/ծառայությունների շրջանակը, որպեսզի գաղտնի ռեժիմը կիրառվի միայն այն դեպքերում, երբ հրապարակումը իրապես կարող է վնասել ազգային անվտանգությանը:
- Օրենսդրությամբ սահմանել չափանիշներ, թե ռազմական/անվտանգային գնումների որ տվյալներն են գաղտնի, և որոնք՝ ոչ:
- Նախատեսել երաշխիքներ, որ սովորական կենցաղային/սպասարկման բնույթի գնումները (օրինակ՝ սնունդ, առօրյա պարագաներ, ընդհանուր տեխնիկական սպասարկման ոչ զգայուն մաս) ավտոմատ կերպով չներառվեն գաղտնի գնումների ռեժիմում միայն այն պատճառով, որ դրանք կապված են անվտանգության մարմնի կամ հատուկ պահպանության ենթակա անձանց սպասարկման հետ:
- Նույնիսկ գաղտնի գնումների համար սահմանել պարտադիր նվազագույն բացահայտման փաթեթ, օրինակ՝ տարեկան ընդհանուր ծավալը, ծախսերի հիմնական կատեգորիաները, գաղտնի գնման դեպքերի քանակը, պայմանագրերի կատարման/ավարտման ընդհանուր վիճակագրությունը:

III-Ա. Տեղեկության գաղտնագրման և գաղտնազերծման կանոններ

Սկզբունք 11. Տեղեկությունը գաղտնագրելու պատճառները նշելու պարտականություն

ա) Անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ պետությունում գործում է տեղեկության գաղտնագրման ֆորմալ գործընթաց, թե՛ ոչ, հանրային մարմինները պարտավոր են նշել տեղեկությունը գաղտնագրելու պատճառ հանդիսացող հիմքերը:

Նշում. «Տեղեկության գաղտնագրումը» այն գործընթացն է, որի միջոցով զգայուն տեղեկություններ պարունակող գրառումները վերանայվում են, ինչի արդյունքում կատարվում է նշում, թե ում համար դրանք կարող են հասանելի լինել, և ինչպես է պետք օգտվել դրանցից: Լավ գործելակերպ է համարվում, եթե սահմանվում է տեղեկության գաղտնագրման ֆորմալ համակարգ, ինչը կնպաստի կամայականության և տեղեկությունները գաղտնի պահելու չափից շատ դեպքերի թվի նվազեցմանը:

բ) Տեղեկությունը գաղտնագրելու հիմք հանդիսացող պատճառների շարքում պետք է նշվի Սկզբունք 9-ում թվարկված կատեգորիաներին համապատասխան այն նեղ կատեգորիան, որին դասվում է տվյալ տեղեկությունը, և ներկայացվի դրա հրապարակման հետևանքով հնարավոր վնասը, այդ թվում՝ դրա լրջության մակարդակը և հավանականության աստիճանը:

գ) Գաղտնագրման մակարդակները, կիրառվելու դեպքում, պետք է համապատասխանեն հիմնավորման մեջ նշված վնասի չափին և հավանականությանը:

դ) Տեղեկությունը գաղտնագրելու դեպքում՝ i) գրառմանը պետք է ավելացվի պաշտպանիչ նշում, որը պետք է նշի գաղտնագրման մակարդակը, եթե այդպիսին առկա է, և տեղեկությունը գաղտնի պահելու ժամկետի առավելագույն տևողությունը, և ii) գրառումը պետք է ներառի հիմնավորում՝ տվյալ մակարդակով և տվյալ ժամանակահատվածում տեղեկությունը գաղտնագրելու մասին:

Նշում. Խրախուսվում է ներկայացնել տեղեկությունը գաղտնագրելու մասին յուրաքանչյուր որոշումը հիմնավորող նշում, քանի որ դրա շնորհիվ պաշտոնյաներն ուշադրություն են դարձնում տեղեկության հրապարակման հետևանքով որոշակի վնասի առաջացման հնարավորությանը, և բացի այդ՝ նման հիմնավորման առկայությունը դյուրացնում է տեղեկության գաղտնազերծման և հրապարակման գործընթացը: Պարբերություն առ պարբերություն նշումն էլ ավելի է նպաստում փաստաթղթերի չգաղտնագրված հատվածների հրապարակման հետևողականությանը:

Սկզբունք 11-ը պահանջում է, որ գաղտնագրումը չլինի ձևական գործողություն: Ամեն անգամ, երբ պետությունը որոշում է տեղեկությունը փակ պահել, պետք է հնարավոր լինի ստուգել՝ ինչ հիմքով, ինչ վնաս կանխելու նպատակով, ինչ մակարդակով և ինչքան ժամանակով է դա արվում: Այս պահանջը, միաժամանակ, ծառայում է երկու նպատակների՝ նվազեցնել կամայականությունը և հեշտացնել հետագա գաղտնազերծումն ու մասնակի հրապարակումը:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքի 3-րդ հոդվածը նախ սահմանում է գաղտնագրման ընդհանուր հասկացությունը՝ «գաղտնագրում՝ ... պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների տարածման նկատմամբ սահմանափակումների կիրառում»: Նույն օրենքի 11-րդ հոդվածն իր հերթին սահմանում է և գաղտնագրման համակարգային չափանիշները՝ «Տեղեկությունները գաղտնագրվում են օրինականության, հիմնավորվածության, արդիականության և համաչափության սկզբունքներին համապատասխան»:

Սա Ցվանեի Սկզբունք 11-ին համահունչ հիմք է, քանի որ օրենքը պահանջում է ոչ միայն «գաղտնագրել», այլ նաև դա անել որոշակի սկզբունքներով և հատկապես՝ հիմնավորված: Սակայն այստեղ դեռևս ուղիղ չի ասվում, որ յուրաքանչյուր առանձին փաստաթղթի համար պարտադիր պետք է լինի գրավոր հիմնավորում:

Սկզբունք 11-ի առանցքն այն է, որ պետք է նշվի՝ տվյալ տեղեկությունը որ «տեսակին» է պատկանում, և ինչ վնաս է կանխվում: Գաղտնի տեղեկությունների տեսակներ թվարկված են «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում: Սա թույլ է տալիս գաղտնագրման հիմքը կապել կոնկրետ ոլորտի հետ, բայց օրենքի նշված հատվածներում չկա պարտադիր պահանջ, որ յուրաքանչյուր որոշման մեջ հղում արվի 8-րդ հոդվածի կոնկրետ ենթակետին: Վնասի գնահատման մասով օրենքի 4-րդ հոդվածը տալիս է ընդհանուր տրամաբանություն՝ գաղտնիության երեք աստիճանների միջոցով և նկարագրում է վնասի ծանրության տարբեր մակարդակներ՝ «... որոնց տարածումը կարող է առանձնապես ծանր վնաս հասցնել ...», «... կարող է ծանր վնաս հասցնել ...» (հոդ. 4 (3)) «... կարող է էական վնաս հասցնել...»: Սա Սկզբունք 11-ի վնասի «լրջության» բաղադրիչի դրսևորումն է, բայց «հավանականության» չափը (որքանով է վնասը իրական, որքանով՝ հավանական) օրենքի դրույթներում հստակ ձևակերպված չէ որպես պարտադիր չափորոշիչ: Հետևաբար՝ պահանջը կատարվում է մասնակի:

Սկզբունք 11-ը պահանջում է, որ գաղտնիության մակարդակը համաչափ լինի վնասին: ՀՀ օրենքում դա ուղիղ ձևով ամրագրված է «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասում. «Գաղտնագրման համաչափությունը տեղեկություններին տրված գաղտնիության աստիճանի համապատասխանությունն է ... հնարավոր վնասի ծանրության աստիճանին»: Այս դրույթը կարևոր է, որովհետև պարտադրում է ընտրել ոչ թե առավել խիստ աստիճանը, այլ այն, որը համարժեք է կանխվող վնասին: Սակայն կրկին օրենքում չկա պարտադիր պահանջ, որ փաստաթղթում գրավոր արձանագրվի՝ ինչու է հենց այդ աստիճանն ընտրվել տվյալ դեպքի համար:

Սկզբունք 11-ը պահանջում է նաև, որ փաստաթղթին կցվի նշում՝ մակարդակ և առավելագույն ժամկետ: «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գաղտնիության աստիճանը նշվում է որոշմագրով՝ «Գաղտնիության աստիճաններին համապատասխան՝ ... տրվում են «Հատուկ կարևորության», «Հույժ գաղտնի» և «Գաղտնի» դրոշմագրեր» (4-րդ հոդված, 5-րդ մաս):

Պահպանման առավելագույն ժամկետների տրամաբանությունը նույնպես սահմանված է նույն օրենքի 14-րդ հոդվածով. Ամրագրված են ժամկետները՝ «... որպես գաղտնիք պահպանվում են՝ ... 40 տարի ... 30 տարի ... 20 տարի» և պարբերական վերանայման պահանջը՝ «... պարտավոր են ոչ ուշ, քան հինգ տարին մեկ անգամ վերանայել ... ընդգրկված տեղեկությունների հիմնավորվածությունը»:

Այս դրույթները բավարարում են Սկզբունք 11-ի «ժամանակայնության» տրամաբանությունը: Մինևնույն ժամանակ, Սկզբունք 11-ը պահանջում է նաև, որ փաստաթղթում ներառվի նաև հիմնավորում՝ «ինչու այս մակարդակով և այս ժամանակով»: ՀՀ օրենսդրության վերաբերելի նորմերի վերլուծությամբ նման պարտադիր պահանջ հստակ չի երևում:

Սկզբունք 11-ի տեսանկյունից առավել խնդրահարույց է թերևս «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված «սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն» հասկացությունը, որը «*Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց, պաշտոնատար անձանց գործունեությանն առնչվող, ... օրենքի համաձայն, պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների շարքին չդասվող տեղեկություններն են, արտադրանքը կամ նյութերը, որոնք պարունակում են պետական գաղտնիքի տարրեր, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը, և որոնց տարածումը կարող է բացասաբար անդրադառնալ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, ազգային անվտանգությանը, արտաքին հարաբերություններին, քաղաքական և տնտեսական շահերին, իրավակարգի պահպանությանը*»։ Ավելին, դրանում ներառված «քաղաքական և տնտեսական շահեր» հիմքը այնքան լայն է, որ թույլ է տալիս սահմանափակումը հիմնավորել ոչ թե կոնկրետ, չափելի վնասով, այլ քաղաքական/վարչական հարմարությամբ։ Ցվանեի սկզբունքների տրամաբանությամբ միայն այս ձևակերպումները, հատկապես՝ քաղաքական շահերի մասով, չեն կարող դիտվել լեգիտիմ հիմք տեղեկությունը չիրապարակելու համար։ Այսպիսի ընդհանրական ձևակերպումները պրակտիկայում վերածվում են լրացուցիչ սահմանափակման գործիքի, հատկապես՝ հանրային հետաքրքրություն ունեցող փաստերի նկատմամբ։

Այսպիսով՝ թեև ՀՀ «Պետական գաղտնիքի մասին» օրենքը սահմանում է գաղտնագրման ձևական և նյութական հիմքերը, սակայն վերլուծված նորմերում բացակայում է այնպիսի ուղիղ պահանջ, որ յուրաքանչյուր գաղտնագրման որոշման մեջ պարտադիր կերպով արձանագրվեն՝

- կոնկրետ կատեգորիայի պատկանելությունը (օրինակ՝ 8-րդ հոդվածի կոնկրետ ենթակետ),
- վնասի գնահատման ամբողջական նկարագրությունը (ոչ միայն ծանրություն, այլ նաև հավանականություն),
- և կոնկրետ հիմնավորում՝ ինչու հենց այդ մակարդակով և այդ ժամանակով։

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 12. Տեղեկության գաղտնագրման կանոնների մատչելիությունը հանրությանը

ա) Նախքան տեղեկության գաղտնագրման ընթացակարգերի և չափանիշների կիրարկումը հանրությունը պետք է դրանց վերաբերյալ դիտարկումներ անելու հնարավորություն ունենա:

բ) Հանրությանը պետք է հասանելի լինեն տեղեկության գաղտնագրման գրավոր ընթացակարգերը և չափանիշները:

Սկզբունք 12-ը վերաբերում է ոչ թե կոնկրետ տեղեկության գաղտնագրմանը, այլ այն կանոններին, որոնցով ընդհանրապես որոշվում է՝ ինչն է գաղտնագրվում և ինչպես: Տրամաբանությունն այն է, որ եթե գաղտնագրման չափանիշներն ու ընթացակարգերը հանրությանը հասանելի չեն, ապա քաղաքացին չի կարող կանխատեսել իր իրավունքների սահմանները, իսկ վերահսկողությունը դառնում է թույլ:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքը տալիս է գաղտնագրվող տեղեկությունների նյութական շրջանակը և, միաժամանակ, սահմանում է այն տեղեկությունները, որոնք չի կարելի գաղտնագրել: Այս կառուցվածքը սկզբունքորեն բարձրացնում է կանխատեսելիությունը, քանի որ առնվազն ընդհանուր մակարդակով հայտնի է՝ որ ոլորտներում է գաղտնագրումը թույլատրելի և որ ոլորտներում՝ արգելված: Բացի այդ՝ գաղտնագրման համար կիրառվող չափանիշների ընդհանուր «թեստը» նույնպես սահմանված է օրենքով. «Տեղեկությունները գաղտնագրվում են օրինականության, հիմնավորվածության, արդիականության և համաչափության սկզբունքներին համապատասխան» (հոդված 11):

Սկզբունք 12 (բ)-ը պահանջում է, որ հանրությանը հասանելի լինեն ոչ միայն ընդհանուր սահմանումները, այլ նաև գրավոր ընթացակարգերը: «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 7-րդ հոդվածում տեսանելի է, որ գործնական կարգավորումների մի մասի ընդունումը վերապահված է Կառավարությանը: Այսպես, «Կառավարությունը՝...

1. *հաստատում է պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը՝ ըստ գերատեսչական պատկանելության, ...*
7. *սահմանում է ... գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը մշակելու և հաստատելու կարգը»:*

Սա նշանակում է, որ գաղտնագրման համակարգը միայն օրենքով չի ավարտվում, այլ կառուցվում է նաև ենթաօրենսդրական կանոններով և գերատեսչական ցանկերով: Սկզբունք 12-ի տեսանկյունից հարցն այն է՝ արդյոք այդ կանոնները և ցանկերը հանրությանը հասանելի են: Այս մասով օրենքի 10-րդ հոդվածում կա կարևոր դրույթ՝ գերատեսչական ցանկերի հրապարակայնության մասին. «Գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը չեն գաղտնագրվում և ենթակա են հրապարակման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերտառությունը (անվանումը) ինքնին ... կարող է լինել պետական գաղտնիք»: Մինևույն ժամանակ, նույն դրույթը թողնում է բացառության հնարավորություն՝ վերնագրի մակարդակով, եթե վերնագիրն ինքնին կարող է բացահայտել գաղտնիք: Այդ բացառությունը կարող է արդարացված լինել, բայց նաև ստեղծում է գործնական ռիսկ, եթե այն կիրառվի չափազանց լայն:

Քանի որ պետական գաղտնիքի ցանկերը և գաղտնագրման կարգերը գործնականում ամրագրվում են ՀՀ կառավարության կողմից ընդունվող ենթաօրենսդրական ակտերով, դրանք իրենց բնույթով նորմատիվ իրավական ակտեր են և, որպես այդպիսին, ենթակա են ոչ միայն ներպետական համաձայնեցման, այլև հանրային քննարկման և հրապարակման ընդհանուր պահանջներին: Հետևաբար, խնդիրը հաճախ ոչ թե իրավական պահանջի

բացակայությունն է, այլ այն, որ հանրային մասնակցության փուլը չի ընկալվում որպես պարտադիր բաղադրիչ՝ «գաղտնիքի» թեմայի պատճառով այն դուրս թողնելով կամ ձևականացնելով: Այդ պայմաններում Սկզբունք 12-ի պահանջը կարևոր է հենց որպես ընթացակարգային երաշխիք, որպեսզի գաղտնագրման չափանիշները և ցանկերի կառուցվածքը ստանան արտաքին քննության հնարավորություն մինչև կիրառման սկիզբը: Հանրային մասնակցության կարգի պատշաճ կիրառումը կարող է նաև նվազեցնել գերգաղտնագրման ռիսկերը և բարձրացնել գաղտնագրման հիմքերի կանխատեսելիությունն ու համաչափությունը: Ուստի այս դեպքում առնվազն պետք է սրանք անցնեն հանրային քննարկում՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջները:¹⁹

Բացի այդ՝ «Պետական գաղտնիքի մասին» օրենքով սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունը դասակարգելու լիազորությունը տրված է լայն շրջանակի պաշտոնատար անձանց՝ առանց բավարար հակակշիռների, ինչը բարձրացնում է չարաշահման հավանականությունը: Ցվանեի սկզբունքների տրամաբանությամբ նման լրջության սահմանափակումը պետք է կապվի ոչ միայն լիազորության, այլ նաև հստակ անձնական պատասխանատվության և վերահսկելիության հետ: Հակառակ դեպքում «Ծառայողական օգտագործման համար» ռեժիմը կարող է կիրառվել ոչ թե անվտանգության իրական պահանջից, այլ վարչարարական հարմարությունից ելնելով:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 13. Տեղեկությունը գաղտնագրելու լիազորությունը

ա) Տեղեկությունը կարող են գաղտնագրել միայն օրենքով սահմանված կարգով լիազորված կամ հատուկ այդ նպատակով նշանակված պաշտոնատար անձինք: Այն դեպքում, երբ լիազորություն չունեցող որևէ պաշտոնյա գտնում է, որ տեղեկությունը ենթակա է գաղտնագրման, այդ տեղեկությունը կարող է գաղտնի համարվել կարճ և հստակ սահմանված ժամկետով՝ մինչև լիազորություն ունեցող պաշտոնատար անձի կողմից գաղտնագրման վերաբերյալ առաջարկության վերանայումը:

Նշում. Տեղեկությունը գաղտնագրելու լիազորությունները կարգավորող օրենսդրական դրույթների բացակայության դեպքում լավ գործելակերպ է համարվում, եթե այդ լիազորությունն առնվազն նշվում է համապատասխան կանոնակարգում:

բ) Հաշվետվողականությունն ապահովելու համար՝ տեղեկությունը գաղտնագրելու մասին որոշում կայացրած անձի անունը պետք է լինի հասանելի կամ նշված լինի համապատասխան փաստաթղթի վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են նման անձի անունը գաղտնի պահելու ծանրակշիռ հիմքեր:

¹⁹ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 21.03.2018, <https://www.arlis.am/hy/acts/218697/latest>

գ) Օրենքով սահմանված կարգով պաշտոնատար անձինք տեղեկությունը գաղտնագրելու բուն լիազորությունը պետք է փոխանցեն իրենց ենթակայության ներքո աշխատող ավագ պաշտոնյաներին, ինչն արդյունավետ է վարչական առումով:

Նշում. Լավ գործելակերպ է համարվում տեղեկություններ հրապարակել այն անձանց մասին, ովքեր ունեն տեղեկությունը գաղտնագրելու լիազորություն, և այն անձանց մասին, ում հասանելի է գաղտնագրված տեղեկությունը:

Սկզբունք 13-ը պահանջում է, որ գաղտնագրումը լինի ոչ թե «սովորույթով» կամ ընդհանուր հայեցողությամբ կատարվող քայլ, այլ՝ հստակ լիազորությամբ և հաշվետվողականությամբ պայմանավորված որոշում: Սա ենթադրում է երեք հիմնական տարր՝ 1) գաղտնագրելու իրավասությունը պետք է պատկանի միայն օրենքով լիազորված անձանց, 2) պետք է գոյություն ունենա ժամանակավոր գաղտնագրման կարճ մեխանիզմ՝ մինչև լիազորված անձի վերանայումը, և 3) յուրաքանչյուր որոշում պետք է թողնի պարզ հետք՝ ով է այն կայացրել:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքը գաղտնագրման լիազորությունը կապում է կառույցների ղեկավարների և հատուկ լիազորված պաշտոնատար անձանց հետ: Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասն ուղիղ նշում է, որ «Պետական մարմինների ղեկավարները ...

1. *հաստատում են իրենց կողմից տնօրինվող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը, ...*
2. *գաղտնագրեծում են իրենց կողմից գաղտնագրված (տնօրինվող) պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները»* (հոդված 7, մաս 4, կետ 1 և կետ 3):

Միաժամանակ, գաղտնագրումը կառուցված է «ցանկ-գործողություն» տրամաբանությամբ, որտեղ գաղտնագրվող տեղեկությունը պետք է համապատասխանի գործող ցանկին. «...ստացված (մշակված) տեղեկությունների գաղտնագրման համար հիմք է հանդիսանում այդ տեղեկությունների համապատասխանությունը տվյալ մարմիններում գործող՝ գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերին»: (հոդված 12, մաս 1): Այս մոտեցումը Սկզբունք 13-ի հիմնական պահանջին համահունչ է. գաղտնագրումը «հայեցողություն» չէ, այլ՝ լիազորություն և ընթացակարգ:

Սկզբունք 13-ի կարևոր մասը այն է, որ եթե տեղեկությունը ստացել կամ մշակել է պաշտոնատար անձ, բայց այն դեռևս ընդգրկված չէ ցանկում, կարող է կիրառվել միայն կարճաժամկետ ժամանակավոր գաղտնագրում՝ պարտադիր հետագա վերանայմամբ: «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը սահմանել է նմանատիպ մեխանիզմ. «...գործող ... ցանկում ընդգրկված չլինելու դեպքում ... պաշտոնատար անձինք ... պարտավոր են ապահովել այդ տեղեկությունների նախնական գաղտնագրումը ... և 10 աշխատանքային օրվա ընթացքում ... առաջարկություն ներկայացնել»: 12-րդ հոդվածն իր հերթին սահմանել է հստակ ժամկետում նշված որոշումը վերանայելու մեխանիզմ, ըստ որի՝ լիազոր անձինք «...պարտավոր են երկամսյա ժամկետում կազմակերպել ... փորձագիտական գնահատումը և դրա հիման վրա որոշում կայացնել ... կամ ... դրոշմագրերը հանելու վերաբերյալ: Նախնական գաղտնագրված տեղեկությունները հանդիսանում են

պետական գաղտնիք»: Սա Սկզբունք 13-ի «Ժամանակավոր ռեժիմը չդարձնելու մշտական» տրամաբանությանը լիովին համընկնող կառուցակարգ է, քանի որ կան և՛ արագ նախնական քայլ, և՛ վերանայման պարտադիր վերջնաժամկետ:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքի 7-րդ հոդվածը պետական մարմնի ղեկավարի լիազորությունը սահմանում է այնպես, որ պետական մարմնի ղեկավարները սահմանում են համակարգը (ցանկերը, պաշտոնների անվանացանկերը), և դրանով ստեղծվում է գործնական կիրառման շրջանակ. *«...սահմանում են պետական գաղտնիքին առնչվելու լիազորություններ ունեցող հանրային ծառայության պաշտոնների անվանացանկերը»*: Բացի այդ՝ «սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն» ռեժիմում ավելի հստակ է երևում, որ դասակարգումը կարող է կատարել ոչ միայն ղեկավարն անձամբ, այլ նաև փաստաթուղթը մշակող կամ հաստատող պաշտոնատար անձը՝ ղեկավարի սահմանած հիմքի շրջանակում. *«...տեղեկությունը սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունների շարքին դասում է տեղեկությունները մշակող (կատարող) կամ հաստատող (ստորագրելու իրավասություն ունեցող) պաշտոնատար անձը կամ համապատասխան մարմնի ղեկավարը»* (հոդված 31.2): Սա համապատասխանում է արդյունավետ պատվիրակման գաղափարին, քանի որ որոշումը կարող է ընդունվել գործառույթ իրականացնող պաշտոնյայի կողմից՝ ղեկավարման սահմանած կանոնների հիման վրա:

Սկզբունք 13-ը պահանջում է նաև, որ գաղտնագրման որոշումը թողնի անձնական պատասխանատվության հստակ հետք՝ փաստաթղթի վրա նշված լինի որոշում կայացնողը՝ բացառությամբ ծանրակշիռ դեպքերի: Ուսումնասիրված հոդվածներում «պետական գաղտնիքի» դրոշմագրի պարտադիր բաղադրիչների մեջ որոշում կայացնողի անունը նշելու պահանջ առկա չէ: Իսկ «ծառայողական օգտագործման համար» նշման դեպքում օրենքի 31-րդ հոդվածը պահանջում է նշել մարմնի անվանումը, հղումը հիմքին և վերջնաժամկետը, բայց ոչ՝ պարտադիր անունը. *«...լրացվում է ... պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ կազմակերպությունների անվանումը ... հղում ... համապատասխան կետին, սահմանափակման գործողության վերջնական ժամկետը և ... նշումը կատարելու ամսաթիվը»*: Այսպիսով՝ համակարգային հետքը (մարմինը, հիմքը, ժամկետը, ամսաթիվը) կա, բայց անձնական անվանական հետքը՝ որպես պարտադիր պահանջ, ուսումնասիրված դրույթներում հստակ ամրագրված չէ:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքի՝ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկատվության կարգավորումներում ընթացակարգային երաշխիքները թույլ են. կենտրոնը տեղափոխվում է ներքին «ցանկերի» և ենթաօրենսդրական կարգերի վրա, որոնք գործնականում կարող են փոխարինել օրենքով նախատեսվող չափանիշներին: Ցվանեի սկզբունքներին համահունչ՝ դասակարգումը պետք է ուղեկցվի պարտադիր հիմնավորմամբ, համաչափության գնահատմամբ և փաստաթղթավորված որոշմամբ: Առանց այդ նվազագույն պահանջների «ծառայողական» կարգավիճակը հեշտությամբ դառնում է ռեֆլեքսային արգելակ՝ հրապարակայնության դեմ:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 14. Տեղեկատվության առջև ծառայած ներքին մարտահրավերների մեղմացում

Հանրային մարմինների աշխատակիցները, այդ թվում՝ անվտանգության ոլորտին առնչվող անձինք, որոնք կարծում են, որ տեղեկությունը գաղտնագրվել է ոչ պատշաճ ձևով, կարող են վիճարկել տեղեկության գաղտնագրումը:

Նշում. Համարվում է, որ տեղեկության գաղտնագրումը վիճարկելու հարցում անվտանգության ոլորտի աշխատակիցներն ունեն հատուկ խրախուսման կարիք՝ հաշվի առնելով անվտանգության հարցերով զբաղվող հաստատություններում գործող գաղտնիության բարձր մշակույթը, այն հանգամանքը, որ շատ երկրներ չեն ստեղծել կամ չեն նշանակել անվտանգության ոլորտի աշխատակիցներից բողոքներ ընդունող անկախ մարմին, և անվտանգության ոլորտին առնչվող տեղեկությունը հրապարակելու համար հաճախ նշանակվում են ավելի մեծ տույժեր, քան այլ ոլորտի տեղեկությունն հրապարակելու պարագայում:

Սկզբունք 14-ը շեշտում է, որ գաղտնագրման սխալ կամ անհիմն կիրառումը պետք է հնարավոր լինի վիճարկել նաև համակարգի ներսից. հանրային մարմնի աշխատակիցը (նաև անվտանգության ոլորտում) պետք է ունենա անվտանգ և գործնական ուղի՝ բարձրացնելու հարցը, երբ կարծում է, որ տեղեկությունը սխալ է գաղտնագրվել:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքի 14-րդ հոդվածը նախատեսում է պարբերական վերանայում, որը գործնականում պետք է նվազեցնի «մշտական գաղտնագրման» և անհիմն պահպանման ռիսկերը. ըստ դրա՝ պաշտոնատար անձինք «...պարտավոր են ոչ ուշ, քան հինգ տարին մեկ անգամ վերանայել ... ընդգրկված տեղեկությունների հիմնավորվածությունը...»: Այս մեխանիզմը կարևոր է, բայց այն աշխատակցի անհատական վիճարկման իրավունք չէ. ավելի շուտ՝ պարտադիր վարչական վերանայում է, որը կարող է արդյունք տալ նաև աշխատակցի ներսից բարձրացրած խնդրի դեպքում, եթե մարմինը դա ներառի իր վերանայման գործընթացում:

Նմանատիպ «վերանայման» կարգ կա նաև այն դեպքում, երբ տեղեկությունը դեռ ցուցակում չէ, բայց մարմինը այն ժամանակավորապես գաղտնագրել է՝ պարտադիր փորձագիտական վերանայմամբ. ըստ դրա՝ մարմինները «...պարտավոր են ապահովել այդ տեղեկությունների նախնական գաղտնագրումը ... և 10 աշխատանքային օրվա ընթացքում ... առաջարկություններ կայացնել...», «...պարտավոր են երկամսյա ժամկետում կազմակերպել ... փորձագիտական գնահատումը ... կամ ... դրոշմագրերը հանելու վերաբերյալ» (հոդված 12): Սա նվազեցնում է այն ռիսկը, որ «ժամանակավոր գաղտնագրումը» դառնա մշտական՝ առանց վերահսկման:

Սկզբունք 14-ի տրամաբանությանը համահունչ է նաև «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 24-րդ հոդվածն այն մասով, որ գաղտնիության ռեժիմը ենթակա է արտաքին (միջգերատեսչական) ստուգումների. «...միջգերատեսչական վերահսկողությունը ... իրականացնում է լիազոր մարմինը՝ ստուգումների միջոցով», «Հանձնախմբի անդամներն իրավունք ունեն ծանոթանալու ... բոլոր փաստաթղթերին...»: Այս դրույթները կարող են գործել որպես գործնական միջոց՝ սխալ գաղտնագրման ռիսկերը հայտնաբերելու և պարտադրելու ուղղումներ: Սակայն օրենքի տրված հատվածներում չկա ուղիղ

ընթացակարգ, որով անվտանգության ոլորտի աշխատակիցը կարող է ինքնուրույն դիմել այդ վերահսկողությանը կամ պարտադրել վերանայում պաշտպանված կարգով:

Օրենսդրությունը նախատեսում է բողոքարկման/դատական պաշտպանության ընդհանուր ուղիներ, որոնք կարող են կիրառվել նաև գաղտնագրման շուրջ վեճերում, հատկապես՝ այն դեպքերում, երբ վիճարկվում են պաշտոնատար անձի որոշումները կամ գործողությունները: Օրինակ՝ «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Տեղեկության սեփականատերն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բողոքարկելու պաշտոնատար անձի գործողությունները»: Նույն տրամաբանությամբ, օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, տեղեկատվության հետ առնչվելու թույլտվության դադարեցման վերաբերյալ որոշման դեմ նույնպես նախատեսված է բողոքարկում. անձն «...իրավունք ունի բողոքարկելու այդ որոշումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով...»:

Իսկ տեղեկություն տրամադրելու մերժումների մասով՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 14-րդ հոդվածը տալիս է ընդհանուր դատական բողոքարկման ուղի. «Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել ... դատարան»: Թեև այս դատական ուղիները կարևոր միջոց են, դրանք հիմնականում կառուցված են արտաքին դիմողի (քաղաքացու) կամ որոշ հատուկ սուբյեկտի (օրինակ՝ տեղեկության սեփականատիրոջ) համար, և օրենքի տրված հատվածներում ուղիղ չի ամրագրված, որ անվտանգության ոլորտի աշխատակիցը կարող է առանց ռիսկի, ներքին կարգով և պաշտպանված մեխանիզմով վիճարկել հենց գաղտնագրման փաստը:

Այսպիսով՝ ՀՀ օրենսդրությունը ունի այնպիսի կառուցակարգեր, որոնք նվազեցնում են անհիմն գաղտնագրման հավանականությունը՝ պարտադիր վերանայում, ժամանակավոր գաղտնագրման պարտադիր փորձագիտական ստուգում, միջգերատեսչական վերահսկողություն և ընդհանուր բողոքարկման ուղիներ, սակայն Սկզբունք 14-ի առանցքային պահանջը՝ աշխատակցի համար հատուկ, անվտանգ և հստակ վիճարկման ուղի, օրենքների ներկայացված հատվածներում ուղիղ ձևով ամրագրված չէ:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ չի համապատասխանում:

Սկզբունք 15. Ազգային անվտանգությանն առնչվող տեղեկությունը պահելու, տնօրինելու և պահպանելու պարտականություն

ա) Հանրային մարմինները պարտավոր են միջազգային չափանիշներին համապատասխան պահել, տնօրինել և պահպանել տեղեկությունը: Տեղեկությունը պահելու, տնօրինելու և պահպանելու պարտավորությունից կարելի է ազատվել միայն օրենքով սահմանված կարգով:

բ) Տեղեկությունը պետք է պահել պատշաճ կերպով: Տեղեկությունը պահելու համակարգերը պետք է լինեն հետևողական, թափանցիկ (առանց օրենքի պահանջով գաղտնագրված տեղեկությունների բացահայտման) և համապարփակ, որպեսզի հասանելիության հատուկ պահանջի դեպքում գտնվի բոլոր անհրաժեշտ տեղեկությունը, անգամ՝ գաղտնի տեղեկությունը:

գ) Յուրաքանչյուր հանրային մարմին պետք է կազմի ու հրապարակի և կանոնավոր կարգով վերանայի ու թարմացնի իր մոտ պահվող գաղտնագրված տեղեկությունների մանրամասն և ճշգրիտ ցանկը՝ բացառությամբ այն բացառիկ փաստաթղթերի, եթե այդպիսիք առկա են, որոնց գոյության փաստը կարող է օրենքով սահմանված կարգով գաղտնի պահվել՝ Սկզբունք 19-ին համապատասխան:

Նշում. Լավ գործելակերպ է համարվում, եթե նման ցանկերը թարմացվում են տարեկան պարբերականությամբ:

Սկզբունք 15-ը պահանջում է, որ ազգային անվտանգությանն առնչվող տեղեկությունը ոչ միայն «գաղտնի պահվի», այլ նաև՝ պատշաճ ձևով հաշվառվի, պահպանվի և անհրաժեշտության դեպքում գտնվի ու տրամադրվի իրավաչափ կարգով: ՀՀ-ում այս պահանջը գործնականում ապահովվում է երեք իրավական շերտերի համադրությամբ՝ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքով՝ որպես ընդհանուր պահպանում/հաշվառում, «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով՝ որպես գաղտնի շրջանառության հատուկ ռեժիմ, և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով՝ որպես գտնելու, տրամադրելու և բողոքարկման ընթացակարգային շրջանակ:

«Արխիվային գործի մասին» օրենքը հենց կարգավորման առարկայով ամրագրում է, որ այն վերաբերում է փաստաթղթերի *«համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման» հարաբերություններին* (հոդված 1): Օրենքը նաև հստակեցնում է արխիվային փաստաթուղթը՝ որպես «նյութական կրիչի վրա գրանցված ... տեղեկություն» և արխիվային հավաքածուն՝ որպես *«վշտապես համալրվող ... փաստաթղթերի ... ամբողջություն ... ենթակա է վշտական պահպանության»*: Այս ձևակերպումները Սկզբունք 15-ի «պահպանման պարտականությունը» դարձնում են իրավական պարտադիր կանոն:

Սկզբունքի «անգամ՝ գաղտնի տեղեկությունը» գտնելու պահանջն ապահովվում է այն տրամաբանությամբ, որ փաստաթղթերը պետք է ունենան պահպանման վայր և կազմակերպված շրջանառություն. Օրինակ՝ արխիվային հավաքածուի փաստաթղթերի պահպանությունը սահմանվում է՝ *«վշտական պահպանություն՝ պետական արխիվներում» և «ժամանակավոր պահպանություն՝ ... [հանրային մարմինների] ... արխիվներում»* (հոդված 15, մաս 1): Բացի դրանից՝ օգտվողի մատչելիությունը կապվում է որոնողական գործիքների հետ. *«մատչելիությունն ապահովվում է տեղեկատու-որոնողական միջոցների ... ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակների կամ պատճենների տրամադրմամբ»* (հոդված 21, մաս 2): Սա կարևոր է Սկզբունք 15-ի իմաստով, որովհետև պարտականությունը չի սահմանափակվում «պահելով», այլ ներառում է նաև փաստաթուղթը գտնելու և իրավաչափ օգտագործելու գործունակ համակարգ ունենալը:

Սկզբունք 15-ը պահանջում է նաև, որ մարմինը ունենա իր մոտ պահվող գաղտնագրված նյութերի «ճշգրիտ ցանկ»՝ որոշ բացառություններով: «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքն

այս նպատակն ապահովում է հաշվառման և պետական հաշվառման կարգավորումներով՝ «... փաստաթղթերը ենթակա են պետական հաշվառման՝ անկախ ... պահպանության վայրից» (հոդված 16): Մատչելիության սահմանափակման մասով օրենքը հստակեցնում է, որ սահմանափակումը կարող է լինել պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների դեպքում, իսկ այդ սահմանափակումները «վերացվում են օրենքով սահմանված կարգով» (հոդված 22): Այս մոտեցումը համադրելի է Սկզբունք 15-ի պահանջին՝ պահպանել, բայց նաև չթողնել, որ սահմանափակումները դառնան մշտական և ինքնաշխատ:

Սակայն, քանի որ Սկզբունք 15-ը վերաբերում է հենց ազգային անվտանգության տեղեկությանը, այստեղ միայն արխիվային ընդհանուր կանոնները բավարար չեն: Պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանության և արխիվացման հարցերը ՀՀ «Պետական գաղտնիքի մասին» օրենքով կարգավորվում են որպես հատուկ իրավական ռեժիմ, որտեղ «պահպանումը» դիտվում է ոչ միայն որպես փաստաթղթերի ֆիզիկական կամ գործավարական պահում, այլ նաև որպես պաշտպանական միջոցառումների ամբողջություն՝ ուղղված գաղտնի տեղեկությունների հրապարակումը կամ կորուստը կանխելուն: Օրենքը հենց հասկացությունների մակարդակում տարբերակում և փոխկապակցում է «գաղտնիության ռեժիմը», «պետական գաղտնիքի պաշտպանությունը» և «պահպանությունը»՝ վերջինում ներառելով իրավական, կազմակերպչական, ինժեներատեխնիկական, ծրագրային, կրիպտոգրաֆիկական և այլ միջոցների համակարգված կիրառումը (հոդված 3, մաս 1, կետեր 9-11): Միաժամանակ, օրենքը սահմանում է, որ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները պահպանվում ու պաշտպանվում են պետության կողմից, իսկ դրանց պահպանության և պաշտպանության ապահովման պարտականությունը դրվում է այդպիսի տեղեկություններ տնօրինող կամ դրանց օգտագործմամբ աշխատանքներ կատարող մարմինների, կազմակերպությունների և իրավաբանական անձանց վրա, ընդ որում պատասխանատվությունը կրում են դրանց ղեկավարները (հոդված 18, մասեր 1-3): Բացի այդ՝ օրենքը պահանջում է, որ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների օգտագործմամբ ցանկացած գործունեություն թույլատրվի միայն անհրաժեշտ պահպանական և պաշտպանական միջոցների ապահովումից հետո, իսկ աշխատանքների համակարգումը վերապահվում է լիազոր մարմնին (հոդված 18, մասեր 4-5):

Օրենքը նախատեսում է, որ գաղտնագերծումից հետո պետական գաղտնիք պարունակած տեղեկությունները, ըստ անհրաժեշտության, տնօրինող պետական մարմնի կամ կազմակերպության ղեկավարի որոշմամբ կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության պետական արխիվի պահպանությանը (հոդված 15, մաս 3): Այս դրույթը կարևոր է, քանի որ այն ձևավորում է անցում պաշտպանական գաղտնի ռեժիմից դեպի ինստիտուցիոնալ պահպանություն՝ պետական արխիվային համակարգում: Միևնույն ժամանակ, օրենքը տարբերակում է արխիվացման և ոչնչացման դեպքերը. պահպանման ժամկետները լրացած տեղեկությունները, որոնք ենթակա չեն գաղտնագերծման կամ պետական արխիվ հանձնելու, ենթակա են ոչնչացման (հոդված 15, մաս 6):

Վերջապես, Սկզբունք 15-ի «հատուկ պահանջի դեպքում գտնել և տրամադրել» մասը գործնական իմաստ ստանում է այն ժամանակ, երբ կան դիմումի քննության, մերժման

հիմնավորման և բողոքարկման կանոններ: Դրանք ձևավորվում են «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի շրջանակում՝ որպես ընթացակարգային երաշխիք, որ տեղեկությունը պահելը չի ավարտվում «արխիվային պահոցի» մակարդակում, այլ կապվում է իրավաչափ մատչելիության մեխանիզմի հետ (տրամադրում, մասամբ տրամադրում, մերժում, բողոքարկում):

ՀՀ իրավակարգում Սկզբունք 15-ի հիմնական բովանդակությունն արտացոլված է պահպանման և հաշվառման ընդհանուր օրենսդրական հիմքերի, ազգային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ հատուկ պաշտպանության և հասանելիության ընթացակարգերի, ինչպես նաև տեղեկատվության ազատության կարգավորումների միջոցով: Մինևույն ժամանակ, թեև այս Սկզբունքում նման պահանջ առկա չէ, սակայն Ցվանեի սկզբունքների համակարգի տրամաբանությունից բխում է, որ ՀՀ օրենսդրության համատեքստում բացակայում է այն կարգավորումը, որը կհստակեցնէր, թե արդյոք այս կամ այն տվյալը գաղտնագերծելուց հետո պետք է արխիվացվի, հրապարակվի, թե ոչնչացվի: Այս բացը տալիս է լայն հայեցողական լիազորություն, և պետք է դրան համապատասխան անդրադարձ կատարվի:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 16. Տեղեկության գաղտնիության ժամկետները

ա) Տեղեկությունը կարող է գաղտնի պահվել ազգային անվտանգության հիմքով միայն այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ է ազգային անվտանգության օրինաչափ շահը պաշտպանելու համար: Այս սկզբունքի պահպանումն ապահովելու համար պետք է կանոնավոր կերպով վերանայել տեղեկությունը գաղտնի պահելու մասին որոշումները:

Նշում. Լավ գործելակերպ է համարվում, եթե օրենքով պահանջվում է նման որոշումները վերանայել առնվազն ամեն հինգ տարին մեկ: Որոշ երկրներում անհրաժեշտ է նման որոշումները վերանայել ավելի կարճ ժամանակահատվածներում:

բ) Տեղեկությունը գաղտնագրող պաշտոնյան պետք է նշի գաղտնագրման ամսաթիվը, պայմանները կամ գաղտնագերծման պայմանը:

Նշում. Լավ գործելակերպ է համարվում, եթե այդ ժամկետը կամ տեղեկության գաղտնագերծման պայմանները կամ դեպքերը ենթարկվում են պարբերական վերանայման:

գ) Ոչ մի տեղեկություն չի կարող գաղտնագրված մնալ անսահմանափակ ժամանակահատվածով: Ազգային անվտանգության հիմքով տեղեկության գաղտնագրման թույլատրելի առավելագույն ժամկետը պետք է սահմանվի օրենքով:

դ) Տեղեկությունը կարող է գաղտնի պահվել թույլատրելի վերջնաժամկետից երկար միայն բացառիկ հանգամանքներում՝ նման որոշում կայացնելու իրավունք ունեցող մեկ այլ պաշտոնյայի կողմից ընդունված նոր որոշման հիման վրա ևսահմանելով գաղտնիության պահպանման նոր ժամկետ:

Սկզբունք 16-ի եռությունն այն է, որ ազգային անվտանգության հիմքով գաղտնիությունը պետք է լինի ժամանակով սահմանափակ, պարբերաբար վերանայվող և չպետք է վերածվի անժամկետ արգելքի: Այս պահանջի առանցքային գործիքները երեքն են՝ 1) առավելագույն ժամկետների սահմանում, 2) պարտադիր վերանայում, 3) բացառիկ դեպքերում երկարաձգման խիստ կարգ:

ՀՀ իրավակարգում առավելագույն ժամկետների տրամաբանությունը արտահայտվում է «Պետական գաղտնիքի մասին» օրենքով. օրենքը սահմանում է, որ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիության ժամկետների առավելագույն շեմերը տարբեր են ըստ գաղտնիության աստիճանի՝ «քառասուն տարի», «երեսուն տարի», «քսան տարի»: Սա, որպես մոտեցում, համընկնում է Սկզբունք 16-ի պահանջին՝ օրենքը պետք է նախապես ամրագրի, որ գաղտնիությունը չի կարող լինել անսահմանափակ:

Սկզբունք 16 ա)-ն պահանջում է, որ գաղտնիությունը պահպանվի միայն «այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ է», և դրա համար պետք է լինի կանոնավոր վերանայում: ՀՀ օրենքն այս մասում նախատեսում է, որ գաղտնիության ժամկետը «վերանայման ենթակա է առնվազն հինգ տարին մեկ անգամ»: Այս դրույթը հենց այն նորմատիվ հենքն է, որով վերանայումը դարձված է պարտադիր, և դա համապատասխանում է Սկզբունք 16-ի հիմնական տրամաբանությանը:

Սկզբունք 16-ը թույլ է տալիս նաև վերջնաժամկետից հետո գաղտնի պահել միայն բացառիկ հանգամանքներում՝ նոր որոշմամբ և նոր վերջնաժամկետով: «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը նախատեսում է, որ գաղտնիության ժամկետը կարող է *«երկարաձգվել ... հինգ տարի ժամկետով»*: Այստեղ, սակայն, կարևոր գործնական հարց է առաջանում. եթե հինգ տարվա երկարաձգումը կարող է կրկնվել բազմակի անգամ առանց կուտակային վերջնական սահմանաչափի կամ «բացառիկության» ավելի խիստ չափանիշի, ապա համակարգը կարող է գործնականում մոտենալ անժամկետ երկարաձգումների շղթայի ռիսկին: Այս ռիսկը հենց այն կետն է, որի պատճառով համապատասխանությունը ավելի ճիշտ է գնահատել որպես մասնակի՝ չնայած առկա են և՛ վերանայման պահանջը, և՛ ժամկետային շեմերը:

Սկզբունք 16-ը պահանջում է, որ գաղտնագրող պաշտոնյան նշի գաղտնագրման ամսաթիվը, պայմանները կամ գաղտնագերծման պայմանը: «Պետական գաղտնիքի մասին» օրենքում ժամկետայնության ու վերանայման կանոնը հստակ է, սակայն Սկզբունք 16-ի տրամաբանությանը լիարժեք համապատասխանելու համար կարևոր է, որ գործնականում յուրաքանչյուր նյութի վրա լինի հստակ նշում՝ մինչև երբ կամ ինչ պայմանով է այն գաղտնի: Այս բաղադրիչը հաճախ ապահովվում է ոչ միայն ընդհանուր ժամկետներով, այլև փաստաթղթի վրա կիրառվող նշումներով և որոշման հիմնավորմամբ:

Միաժամանակ, գաղտնագերծումից հետո իրավական ակտերի հրապարակայնացման գաղափարը օրենքում արտացոլված է. օրինակ՝ նախատեսված է, որ *«գաղտնագերծման ենթակա իրավական ակտերը ... հրապարակվում են ... 10 աշխատանքային օրվա ընթացքում»*... (հոդված 12): Սա կարևոր է, քանի որ Սկզբունք 16-ը ժամկետայնությունը

կապում է նաև իրական հասանելիության հետ՝ ժամկետի ավարտը պետք է հանգեցնի հրապարակայնացման կամ առնվազն հասանելիության ընդլայնման:

«Արխիվային գործի մասին» օրենքը լրացնում է այս տրամաբանությունը՝ ցույց տալով, որ նույնիսկ արխիվում մատչելիությունը կարող է սահմանափակվել պետական գաղտնիք պարունակող նյութերի նկատմամբ, բայց նաև ամրագրված է, որ «պետական և օրենքով պահպանվող այլ գաղտնի տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթերի նկատմամբ մատչելիության սահմանափակումները վերացվում են օրենքով սահմանված կարգով» (հոդված 22, մաս 2): Սա համահունչ է Սկզբունք 16-ի նպատակին՝ ժամկետայնությունը պետք է ունենա գործնական հետևանք՝ սահմանափակման ավարտ/վերացում:

Սահմանափակ տարածման ծառայողական տեղեկության դեպքում սահմանվում է 5 տարվա սահմանափակում և մինչև 2 տարի երկարաձգում, բայց այս դեպքում նույնպես բացակայում է բավարար «կոշտ» առավելագույն քանակական շեմերի տրամաբանությունը, որը կանխելու է երկարաձգումը՝ որպես սովորական պրակտիկա: Ցվանեի սկզբունքներով սահմանափակումը պետք է լինի բացառիկ և ժամանակավոր, իսկ երկարաձգումը՝ խիստ հիմնավորված, վերահսկելի և ենթակա պարտադիր պարբերական վերանայման: Հակառակ դեպքում «ժամկետների առկայությունը» փաստացի չի ապահովում բացահայտում ստեղծելով երկարաժամկետ փակվածության ինտրոյա:

Այսպիսով՝ ՀՀ օրենսդրությունը ունի սահմանված առավելագույն ժամկետներ և կա պարտադիր վերանայման պահանջ՝ առնվազն հինգ տարին մեկ անգամ, սակայն խնդրահարույց է, որ երկարաձգման մեխանիզմը կարող է գործնականում ստեղծել անվերջ շարունակականության ռիսկ, եթե այն չի կապվում ավելի խիստ «բացառիկության» չափանիշի և/կամ կուտակային վերջնական սահմանաչափի հետ:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 17. Գաղտնագերծման ընթացակարգերը

ա) Ազգային օրենսդրությամբ պետք է սահմանվի կառավարության պարտավորությունը՝ համակարգելու, վերահսկելու և իրականացնելու պետության գաղտնագերծման գործողությունները, այդ թվում՝ գաղտնագերծման ուղեցույցն ամփոփելու և կանոնավոր կարգով թարմացնելու պարտավորությունը:

բ) Պետք է սահմանել առաջնային գաղտնագերծման ենթակա հանրային շահ հանդիսացող գաղտնագրված տեղեկությունը որոշելու կարգը: Եթե հանրային շահ հանդիսացող տեղեկությունը, այդ թվում՝ Սկզբունք 10-ում թվարկված կատեգորիաներում ներառված տեղեկությունը գաղտնագրվել է բացառիկ զգայուն լինելու համար, այն պետք է հնարավորինս արագ գաղտնագերծվի:

գ) Ազգային օրենսդրությամբ պետք է սահմանվի գաղտնագերծման միասնական (մեծ խմբաքանակներով և (կամ) ընտրովի սկզբունքով) կարգը:

դ) Ազգային օրենսդրությամբ պետք է սահմանվեն գաղտնագրված տեղեկության տարբեր կատեգորիաների ավտոմատ գաղտնագրծման կայուն ժամկետներ: Գաղտնագրծման հետ կապված ծանրաբեռնվածությունը նվազագույնի հասցնելու համար գաղտնագրված գրառումները պետք է գաղտնագրծվեն ինքնաբերաբար՝ հնարավորինս առանց վերանայման:

ե) Ազգային օրենսդրությամբ պետք է սահմանվի փաստաթղթերի գաղտնագրծում հայցելու հասանելի և հրապարակային ընթացակարգ:

զ) Գաղտնագրծված փաստաթղթերը, այդ թվում՝ դատարանների, հաշտարար դատարանների կամ այլ վերահսկողական մարմինների, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կամ բողոքարկման մարմինների կողմից գաղտնագրծված փաստաթղթերը պետք է հրապարակվեն նախաձեռնողական (պրոակտիվ) կերպով կամ որևէ այլ կերպ հասանելի դառնան հանրությանը (օրինակ՝ ազգային արխիվների կամ տեղեկատվության հասանելիության կամ այդ երկու հարցերով էլ օրենսդրությանը համապատասխանեցման միջոցով):

Նշում. Այս սկզբունքը որևէ կերպ չի սահմանափակում նախաբանի 15-րդ կետում նշված տեղեկության գաղտնագրման այլ հիմքերի մասին պայմանը:

Նշում. Լրացուցիչ լավ գործելակերպը ներառում է հետևյալը՝

- *գաղտնագրծման գործընթացներում նոր տեխնոլոգիաների կիրառման հարցի կանոնավոր վերանայում և*
- *կանոնավոր խորհրդակցություններ մասնագիտական փորձ ունեցող անձանց հետ գաղտնագրծման, այդ թվում՝ինչպես ավտոմատ կարգով, այնպես էլ մեծ խմբաբանակով գաղտնագրծման առավել ենթակա տեղեկատվության կատեգորիաները սահմանելու շուրջ:*

Սկզբունքը պահանջում է պետական մակարդակով գաղտնագրծման համակարգված կազմակերպում, առաջնահերթ հանրային շահի նյութերի արագ ընթացակարգ, միասնական (զանգվածային և ընտրովի) մոտեցումներ, ավտոմատ ժամկետայնություն, հասանելի հայցման ընթացակարգ և գաղտնագրծված նյութերի հասանելիություն/հրապարակում:

Օրենքը կառավարության վրա դնում է գաղտնագրծման կարգավորման հիմնական լծակները՝ ենթաօրենսդրական կարգերի միջոցով: Կառավարությունը «սահմանում է ... պահպանման ժամկետները երկարաձգելու և գաղտնագրծելու կարգը» և նաև «սահմանում է պահպանման ժամկետները լրացած պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները գաղտնագրծելու, պետական արխիվ հանձնելու, ինչպես նաև ... ոչնչացնելու կարգը...»: Սա Սկզբունք 17-ին համարժեք հիմք է պետական մակարդակով գործողությունների համակարգման, վերահսկման և իրականացման համար, թեև «ուղեցույց» բառը օրենքում որպես պարտադիր փաստաթուղթ չի ամրագրված:

Օրենքը սահմանում է գաղտնագրծման նյութական հիմքերը. «...գաղտնագրծման հիմքերն են՝ 1) ... միջազգային պարտավորությունները, 2) օբյեկտիվ հանգամանքների փոփոխությունը, որի հետևանքով ... պահպանությունը ... դառնում են ոչ նպատակահարմար» (հոդված 15): Բացի այդ՝ օրենքը թույլ է տալիս ժամկետից շուտ գաղտնագրծում «...կարող է կրճատվել, և ... ժամկետից շուտ կարող են գաղտնագրծվել

Կառավարության սահմանած կարգով» (հոդված 15): Սա Սկզբունք 17 բ-ի տրամաբանությանը մոտ է այնքանով, որքանով ստեղծում է ավելի վաղ գաղտնագերծելու իրավական ուղի (թեկուզ օրենքը առանձին «հանրային շահի առաջնահերթության» չափանիշ չի ձևակերպում հենց այս հոդվածում):

Սկզբունք 17-ը շեշտում է ինքնաբերաբար գաղտնագերծումը՝ հնարավորինս առանց անհատական վերանայման: ԶԶ-ում «ինքնաբերաբար» բառը օրենքում պարտադիր ձևով չի օգտագործվում, սակայն համակարգը կառուցված է վերջնաժամկետների տրամաբանությամբ և *«պահպանման ժամկետները լրացած ... տեղեկությունները ... գաղտնագերծելու ... կարգ»* սահմանելու կառավարության լիազորությամբ (հոդված 7): Նույն հոդվածով նախատեսվում է ոչ միայն գաղտնագերծում, այլ նաև հետագա ճակատագիրը՝ *«...գաղտնագերծելու, պետական արխիվ հանձնելու, ինչպես նաև ... ոչնչացնելու կարգը»*: Սակայն այն «ինքնաբերաբար՝ առանց վերանայման» ուղղակի պարտավորություն չի ձևակերպում. փոխարենը կա պարտադիր հնգամյա վերանայում (հոդված 14), որը կարող է նշանակել, որ համակարգը համադրում է ժամկետայնությունը ու պարբերական գնահատումը, այլ ոչ թե լիովին ավտոմատ գործարկումը:

Օրենքը հատուկ կարգավորում է իրավական ակտերի ոլորտը. *«Իրավական ակտերի գաղտնագերծման դեպքում գաղտնագերծվում են նաև դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարած իրավական ակտերը»* (հոդված 15), և առավել կարևոր՝ հրապարակման պարտավորությունը. *«Գաղտնագերծված տեղեկություններ պարունակող իրավական ակտերը հրապարակվում են ... գաղտնագերծումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում»* (հոդված 15):

Գաղտնագերծումից հետո տեղեկությունները կարող են անցնել արխիվային պահպանության՝ *«...ըստ անհրաժեշտության ... կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության պետական արխիվի պահպանությանը»* (հոդված 15): Այստեղ «կարող են» ձևակերպումը նշանակում է, որ արխիվ հանձնելը պարտադիր չէ բոլոր դեպքերում, այլ կախված է «անհրաժեշտությունից» և «ղեկավարի որոշումից»:

«Արխիվային գործի մասին» ԶԶ օրենքն, իր հերթին, տալիս է մատչելիության ընդհանուր սկզբունք՝ *«...իրավունք ունի ազատ որոնելու և ուսումնասիրության նպատակով ... ստանալու արխիվային փաստաթղթեր, բացառությամբ ... սահմանված դեպքերի»* (հոդված 21): Այսինքն՝ եթե գաղտնագերծված նյութը հանձնվում է արխիվ, այն ընկնում է արխիվային մատչելիության ընդհանուր կանոնների տակ:

Սկզբունք 17-ի համար կարևոր է, որ քաղաքացին ունենա պարզ ընթացակարգ՝ գաղտնագերծում խնդրելու կամ առնվազն փակ տեղեկություն պահանջելու և վիճարկելու: Այս հենքը տալիս է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը.

- *«...իրավունք ունի ... հարցմամբ դիմելու ... և ստանալու այդ տեղեկությունը»* (հոդված 6),
- մերժման դեպքում պարտադիր գրավոր հիմնավորում՝ *«...նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը»* (հոդված 11),

- և բողոքարկման իրավունք՝ «...կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան» (հոդված 11): Այս մեխանիզմը հենց «հայցման» ընթացակարգն է, որը գործնականում կարող է ծառայել նաև որպես «գաղտնազերծման պահանջի» ներկայացման ձև, հատկապես՝ այն դեպքերում, երբ տեղեկության փակ լինելը վիճարկվում է:

Այսպիսով՝ ՀՀ կարգավորումները տալիս են՝

- կառավարության կողմից գաղտնազերծման կարգի սահմանման հստակ լիազորություններ,
- գաղտնազերծման հիմքերի հստակ շարադրանք և ժամկետից շուտ գաղտնազերծման հնարավորություն,
- իրավական ակտերի գաղտնազերծումից հետո հրապարակման պարտադիր և հստակ ժամկետ,
- և տեղեկատվության հայցման ու բողոքարկման ընդհանուր ընթացակարգ:

Միաժամանակ, օրենքի դրույթներում «զանգվածային գաղտնազերծման» և «ինքնաբերաբար՝ առանց վերանայման գաղտնազերծման» պահանջները՝ որպես պարտադիր մեխանիզմներ, ուղղակի ձևակերպված չեն, իսկ գաղտնազերծումից հետո արխիվ հանձնելու հարցը ձևակերպված է որպես հնարավոր (ոչ միշտ պարտադիր) ընթացք՝ «կարող են հանձնվել ... պետական արխիվի պահպանությանը»:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Առաջարկություններ

- Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված յուրաքանչյուր գաղտնագրման որոշման համար սահմանել հիմնավորման չափանիշներ, որոնք կներառեն՝
 - հղում 8-րդ հոդվածի կոնկրետ կատեգորիային,
 - կանխվող վնասի լրջությունը և հավանականություն (առնվազն որակական սանդղակով),
 - «ինչու՞ հենց տվյալ գաղտնիության աստիճանը» հարցի պատասխանը,
 - «ինչու՞ հենց տվյալ ժամկետը կամ գաղտնազերծման պայմանը» հարցի պատասխանը:
- Սահմանել «պարբերություն առ պարբերություն» գաղտնագրման պահանջ՝ փաստաթղթում գաղտնի հատվածների նշագրմամբ, որպեսզի ոչ գաղտնի հատվածները հրապարակվելը դառնա օրինաչափություն, ոչ թե բացառություն:

- Նախատեսել վնասի հավանականության չափանիշի ամրագրում՝ «իրական և ճանաչելի ռիսկ» ձևակերպմամբ, որպեսզի գաղտնագրումը չհենվի միայն «կարող է վնասել» ընդհանուր բանաձևի վրա:
- Սահմանել գերատեսչական ցանկերի հրապարակայնության ավելի խիստ ստանդարտ. բացառությունը (երբ վերնագիրն ինքնին գաղտնիք է) դարձնել նեղ և հիմնավորված՝ «վերնագրի բացառություն» կիրառելու համար պարտադիր պատճառաբանությամբ և վերանայման ժամկետով:
- Սահմանել միասնական հանրային ռեեստր/կատալոգ, որտեղ հասանելի կլինեն գործող ընթացակարգերը, չափանիշները, և հրապարակելի մասով՝ ցանկերի ընդհանուր կառուցվածքը (առանց օպերատիվ մանրամասների):
- Սահմանել անվտանգ ներքին մեխանիզմ՝ օրենքով ամրագրելով աշխատակցի իրավունքը վիճարկելու գաղտնագրումը և բացառելով այդ առնչությամբ կարգապահական/քրեական ռիսկերը որպես լռեցման գործիք օգտագործելու հնարավորությունը:
- Սահմանել գաղտնագրծումից հետո տեղեկատվության հետագա կարգավիճակի և վարման վերաբերյալ հստակ կարգավորումներ, ներառյալ՝ արդյոք այն ենթակա է հրապարակման, պետական արխիվի պահպանությանը հանձնման, սահմանափակ հասանելիությամբ պահպանման կամ այլ ընթացակարգով տնօրինման:
- Սահմանել գաղտնի նյութերի ներպետական գույքագրման նվազագույն հրապարակելի ստանդարտներ, պահպանման և որոնելիության տեխնիկական ստանդարտներ:
- Սահմանել գաղտնագրման երկարաձգման «բացառիկության» չափանիշ՝ երկարաձգումը թույլատրելով միայն կոնկրետ փաստարկված «իրական և շարունակական ռիսկի» դեպքում:
- Սահմանել քանակական վերջնական շեմ երկարաձգումների համար, որպեսզի չձևավորվի փաստացի անժամկետ շղթա:
- Սահմանել ավտոմատ գաղտնագրծման մեխանիզմ՝ ժամկետի լրանալուց հետո երկարաձգման բացակայության դեպքում ավտոմատ գաղտնագրծելու տեղեկությունը:
- Սահմանել գաղտնագրծված նյութերի պարտադիր հանրայնացում ոչ միայն իրավական ակտերի, այլ նաև այլ կատեգորիաների համար՝ նվազագույնը ազգային արխիվում կամ հատուկ պորտալում հասանելիությամբ, և «հանձնվել արխիվ» ձևակերպումը դարձնել առավել պարտադիր՝ հստակ բացառություններով:

III-Բ. Տեղեկատվության հարցումները քննելու կանոններ

Սկզբունք 18. Անգամ գաղտնագրված տեղեկության հարցումները քննելու պարտականություն

Տեղեկության գաղտնագրված լինելու հանգամանքը վճռորոշ դեր չի խաղում այդ տեղեկության վերաբերյալ հարցմանը պատասխանելու գործում: Տեղեկությունը տնօրինող հանրային մարմինը պետք է նման հարցումները քննի այս Սկզբունքների համապատասխան:

Այս սկզբունքը պահանջում է, որ տեղեկության «գաղտնագրված լինելը» ինքնին չդառնա հարցումը քննելու կամ ձևականորեն մերժելու պատճառ: Հանրային մարմինը պարտավոր է հարցումը վարել իրավական ընթացակարգով՝ պարզելով, թե արդյոք տվյալ տեղեկության տրամադրումը ենթակա է սահմանափակման, և եթե սահմանափակման հիմքը վերաբերում է միայն մի մասի, տրամադրել մնացած մասը:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը հարցում ներկայացնելու իրավունքը ձևակերպում է ընդհանուր և առանց բացառությունների՝ ըստ տեղեկության տեսակի. *«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ... օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը»* (հոդված 6): Այս դրույթը նշանակում է, որ «գաղտնի» պիտակը չի կարող վերածվել գործընթացից դուրս մղող «ֆիլտրի». հարցումը պետք է ընդունվի և քննվի օրենքով սահմանված կարգով: Նույն օրենքն ամրագրում է, որ մերժումը հնարավոր է միայն իրավական հիմքերի առկայության դեպքում. *«Տեղեկության տրամադրումը մերժում է սույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում...»* (հոդված 11): Հետևաբար, «գաղտնագրված լինելը» ինքնին ոչ թե մերժման հիմք է, այլ առավելագույնը կարող է նշանակել, որ հնարավոր է կիրառելի լինի 8-րդ հոդվածի որևէ կոնկրետ հիմք (օրինակ՝ պետական գաղտնիք), որը պետք է նշվի և հիմնավորվի:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը պահանջում է ոչ թե պարզապես «մերժել», այլ իրավականորեն ձևակերպել մերժումը. *«...5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է ...՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը»* (հոդված 11): Սա գործնականում պարտադրում է բովանդակային գնահատում, որովհետև մերժման համար պետք է ընտրվի և կիրառվի կոնկրետ նորմ, այլ ոչ թե ընդհանուր «գաղտնի է» ձևակերպում:

Սկզբունք 18-ի առանցքային բաղադրիչներից է, որ եթե տեղեկության միայն մի հատվածն է սահմանափակման ենթակա, ապա հարցումը չի կարող ամբողջությամբ «մերժվել»: Այս պահանջը ՀՀ-ում ամրագրված է ուղղակի ձևով. *«Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ»* (հոդված 8): Այս դրույթը հենց այն իրավական մեխանիզմն է, որով «գաղտնագրման պիտակը» չի վերածվում ամբողջ փաստաթղթի ավտոմատ մերժման. մարմինը պարտավոր է սահմանափակման ենթակա տեղեկությունը տարանջատել մատչելի հատվածից և դիմումատուին տրամադրել վերջինը:

Սկզբունքի տրամաբանության համար կարևոր է, որ «պետական գաղտնիք» հղումն ինքնին չկիրառվի կամայականորեն: «Պետական գաղտնիքի մասին» օրենքը սահմանում է ոչ միայն՝ ինչը կարող է գաղտնի լինել, այլ նաև ինչն է արգելվում գաղտնագրել: Այսինքն՝ համաձայն Սկզբունքի՝ նույնիսկ եթե մարմինը պնդում է, որ նյութը «գաղտնի» է, հարցումը քննարկելիս պետք է ստուգվի՝ արդյոք տվյալ տեղեկությունը առհասարակ կարող էր օրինականորեն գաղտնագրվել:

Բացի այդ՝ գաղտնագրման գործընթացը օրենքով կապվում է օրինականության և հիմնավորվածության չափանիշների հետ, ինչը ենթադրում է, որ «գաղտնի» պիտակը պետք է լինի իրավաչափ և հիմնավորված, այսինքն՝ ստուգելի: Այս պատճառով հարցումը չի կարող չքննվել միայն պիտակի առկայության պատճառով:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված մոտեցումը, ըստ որի՝ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունները «սահմանափակման ամբողջ ժամկետի ընթացքում հրապարակման ենթակա չեն», իր բնույթով իմպերատիվ է և ձևակերպված արգելքի տրամաբանությամբ: Այս ձևակերպումը սահմանափակումը դարձնում է ինքնաբավ հիմք՝ առանց պահանջելու, որ յուրաքանչյուր կոնկրետ հարցման դեպքում մարմինը նորից գնահատի՝ արդյոք տվյալ տեղեկության տրամադրումն առաջացնում է իրական և ճանաչելի վնաս, և արդյոք այդ վնասը գերակայում է հրապարակման հանրային շահի նկատմամբ: Ցվանեի մոդելում «չի հրապարակվում» հասկացությունը չի նույնացվում «չի տրամադրվում երբեք» մոտեցման հետ, և տեղեկության գաղտնագրված լինելու փաստն ինքնին չի փակում հարցման քննությունը, այլ միայն նշանակում է, որ մարմինը պետք է անցնի նյութական թեստերի միջով և գրավոր, կոնկրետ պատճառաբանությամբ ցույց տա չտրամադրելու անհրաժեշտությունը՝ վնասի բնույթի, հավանականության և ծավալի նկարագրությամբ: Յետևաբար անգամ ծառայողական սահմանափակումը չի ազատում իրավասու մարմինն այն պարտականությունից, որ կոնկրետ հարցման կոնկրետ փաստերի հիման վրա հիմնավորի, թե ինչու տվյալ տեղեկությունը չի կարող տրամադրվել ամբողջությամբ կամ մասամբ, և ինչու հնարավոր չէ վնասը նվազեցնել այլ միջոցներով:

Բացի այդ՝ «հրապարակման ենթակա չեն» ձևակերպումը գործնականում խրախուսում է «ամբողջ փաստաթուղթը փակելու» մշակույթը, որովհետև իրավակիրառման համար ավելի պարզ է մեկ արգելքի վրա հղում անելը, քան բովանդակային տարանջատում կատարելը: Ցվանեի մոտեցմամբ բացառությունները վերաբերում են կոնկրետ տեղեկությանը, ոչ թե ամբողջ փաստաթղթին, ուստի խառը փաստաթղթերի դեպքում պետք է կիրառվի մասնակի տրամադրման տրամաբանությունը՝ առանձնացնելով և տրամադրելով այն հատվածները, որոնք վնաս չեն պատճառում սահմանափակելով միայն այն հատվածները, որոնց մասով վնասի շեմը իրականում հիմնավորվում է: Այդպիսի տարանջատման պարտադիր սկզբունքը առկա կարգավորումներում ուղղակիորեն չի երևում, իսկ չոր արգելքի ֆոնին այն նույնիսկ հետին պլան է մղվում: Արդյունքում սահմանափակ տարածման ծառայողական տեղեկության ռեժիմը կարող է վերածվել ոչ թե նեղ և ժամանակավոր պաշտպանիչ միջոցի, այլ ընդհանուր գործիքակազմի քաղաքական և տնտեսական «անհարմար» տեղեկատվությունը հանրային վերահսկողությունից դուրս պահելու համար, ինչը Ցվանեի տրամաբանության հետ համատեղելի չէ:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 19. Տեղեկության առկայությունը հաստատելու կամ հերքելու պարտականություն

ա) Տեղեկատվության հարցում ստանալուց հետո հանրային մարմինը պետք է հաստատի կամ հերքի պահանջվող տեղեկությունը տնօրինելու փաստը:

բ) Եթե օրենսդրությամբ թույլատրվում է, որ բացառիկ հանգամանքներում որոշակի տեղեկության բուն առկայության կամ բացակայության փաստը կարող է գաղտնագրվել Սկզբունք 3-ին համապատասխան, ապա տվյալ հարցմանն ի պատասխան տեղեկության առկայությունը հաստատելու կամ հերքելու մերժումը պետք է հիմնված լինի այնպիսի ապացույցի վրա, որը կհաստատի, որ նման տեղեկության առկայության հաստատումը կամ հերքումն ինքնին կարող է վտանգ ներկայացնել ազգային օրենսդրության կամ կանոնակարգի համապատասխան նման բացառիկ վերաբերմունք պահանջող տեղեկության որոշակի կատեգորայի համար:

Սկզբունք 19-ը պահանջում է, որ հարցում ստանալուց հետո հանրային մարմինը, որպես ընդհանուր կանոն, հաստատի, թե արդյոք ունի պահանջվող տեղեկությունը: Բացառությունը հնարավոր է միայն բացառիկ դեպքերում, երբ նույնիսկ տեղեկության առկայությունը կամ բացակայությունը պարզ ասելը կարող է վնասել հանրային շահին:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը հարցումների քննությունը կապում է այն հարցի հետ, թե արդյոք տեղեկությունը տվյալ տնօրինողի մոտ առկա է: Եթե այն չկա, մարմինը պարտավոր է այդ մասին գրավոր հայտնել դիմողին. *«Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա ... պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին...»* (հոդված 9): Նույն տրամաբանությամբ՝ եթե տնօրինողը ունի տեղեկության միայն մի մասը, պարտավոր է նշել դա և տրամադրել իր մոտ եղած մասը. *«Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի...»* (հոդված 9): Այս երկու կանոնները միասին արտացոլում են Սկզբունք 19 ա)-ի հիմնական բովանդակությունը. հանրային մարմինը չի կարող «լռել» տեղեկության առկայության հարցի մասին և պետք է հստակ արձագանքի՝ ունի, չունի կամ ունի մասնակի:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը ուղղակիորեն չի նախատեսում «տեղեկության առկայությունը հաստատելու կամ հերքելու մերժման» հատուկ ռեժիմ: Ինչպես նշվեց վերևում, այն պարտադրում է տեղեկացնել, երբ տեղեկությունը չկա: Միաժամանակ, օրենքի կարգավորումներով, տեղեկության տրամադրումը կարող է մերժվել, եթե տեղեկությունը պարունակում է, օրինակ՝ պետական գաղտնիք: Սակայն սա վերաբերում է բովանդակության տրամադրմանը, ոչ թե անպայման տեղեկության «գոյության փաստի» մերժմանը:

Այստեղ կարևոր է նաև «Պետական գաղտնիքի մասին» օրենքի «հրապարակում» հասկացությունը. «հրապարակում» է համարվում գաղտնի տեղեկությունը «*ցանկացած ձևով մատչելի դարձնելը ... թույլտվություն ... չունեցող անձանց*» (հոդված 3): Եթե կոնկրետ իրավիճակում տեղեկության գոյության պարզ հաստատումը գործնականում հանգեցնում է գաղտնի տեղեկության մատչելի դարձնելուն (օրինակ՝ ազդարարելով օպերատիվ-հետախուզական կոնկրետ միջոցի կամ գործողության առկայությունը), ապա հնարավոր է, որ մարմինը փորձի տրամադրել առավել զուսպ պատասխան՝ որպես գաղտնիության ռեժիմի պաշտպանություն: Բայց նման մոտեցումը պետք է դիտարկել որպես բացառիկ և կիրառելի միայն այն դեպքերում, երբ գոյության փաստը ինքնին նույնացվում է գաղտնի տեղեկության «բացահայտման» հետ և չի հակասում 9-րդ հոդվածի պարտադիր կանոններին: Տրված օրենքների տեքստում այդպիսի բացառությունը հստակ ձևակերպված չէ, հետևաբար այն պետք է գնահատվի որպես ոչ լիովին կարգավորված դաշտ:

Եթե մարմինը որևէ կերպ մերժում է (լինի դա բովանդակության տրամադրում, թե այլ ընթացակարգային գործողություն), «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը պահանջում է գրավոր պատասխան՝ իրավական հիմքով. մարմինը «...*գրավոր հայտնում է ...՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը*» (հոդված 11): Այս պահանջը վերաբերելի է նաև այն տրամաբանությամբ, որ եթե կիրառվում է «ոչ հաստատել-ոչ հերքել» մոտեցումը, այն պետք է ներկայացվի որպես իրավական դիրքորոշում՝ նորմի հղումով և բողոքարկման կարգով, այլ ոչ թե որպես անորոշ ու լուռ մերժում:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ ՀՀ կարգավորումներում առկա է բաց. Սկզբունք 19-ում ներկայացված նեղ բացառության դեպքում (երբ գոյության փաստն ինքնին կարող է վնասել ազգային անվտանգությանը) օրենքով հստակ և ուղղակի ձևով չի սահմանվում առանձին ընթացակարգային ռեժիմ, և գործնականում դրա հնարավոր կիրառելիությունը մնում է անորոշ:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 20. Մերժման պատճառները գրավոր ներկայացնելու պարտականություն

ա) Տեղեկատվության հարցումն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում հանրային մարմինը պետք է հարցումներին պատասխանելու համար օրենքով սահմանված ժամկետում գրավոր ներկայացնի մերժման հստակ պատճառները՝ Սկզբունքներ 3-ին և 9-ին համապատասխան:

Նշում. Հարցման պատասխանը ներկայացնելու ժամկետներն օրենքով սահմանելու պահանջը ներկայացված է Սկզբունք 25-ում:

բ) Հանրային մարմինը հարցման հեղինակին պետք է նաև բավարար տվյալներ տրամադրի տեղեկության տրամադրումն արգելած և այդ գործընթացը հաստատած պաշտոնյայի (պաշտոնյաների) մասին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման տեղեկության տրամադրումն ինքնին կբացահայտի գաղտնի տեղեկություն, և ներկայացնի բողոքարկման եղանակները, որոնց միջոցով հնարավոր կլինի պարզել, թե որքանով է հանրային մարմինը գործել օրենքին համապատասխան:

Սկզբունք 20-ը պահանջում է, որ տեղեկության տրամադրումն ամբողջությամբ կամ մասնակի մերժելու դեպքում տեղեկատվությունն տնօրինողը օրենքով սահմանված ժամկետում ներկայացնի գրավոր, հստակ և իրավական առումով ստուգելի հիմնավորում, ինչպես նաև տեղեկացնի բողոքարկման արդյունավետ միջոցների մասին: ՀՀ առնչվող օրենքներն այս պահանջը հիմնականում ապահովում են, բայց որոշ բաղադրիչներ թողնում են գործնական կարգավորման մակարդակում:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է, որ գրավոր հարցման պատասխանները տրվում են հստակ ժամկետներում՝ հիմնականում 5 օր, իսկ լրացուցիչ աշխատանքի դեպքում՝ մինչև 30 օր՝ պարտադիր ծանուցմամբ.

- «...դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում»,
- «եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք ... 30-օրյա ժամկետում, որի մասին ... 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է ...՝ նշելով հետաձգման պատճառները...»:

Մերժման դեպքում նույն օրենքը հատուկ պահանջ է դնում գրավոր ձևի, ժամկետի և հիմնավորման մասով. «Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվությունն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը» (հոդված 11): Այս դրույթը Սկզբունք 20-ի առանցքն է. մերժումը պետք է լինի գրավոր, ժամկետային և հղում անի իրավական հիմքին:

Մերժման իրավական հիմքերը «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածում նախանշված են, հատկապես՝ գաղտնիքների և սահմանափակ շրջանառության դեպքում: Սկզբունք 20-ի տեսանկյունից «օրենքի համապատասխան նորմը» (հոդված 11) գործնականում նշանակում է, որ մերժման գրության մեջ պետք է նշվի ոչ թե ընդհանուր «գաղտնի է» ձևակերպում, այլ գոնե՝

- մերժման օրենսդրական հիմքը,
- և, երբ կիրառելի է, «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 8-րդ հոդվածի կարգավորումները, թե տվյալ տեղեկությունը ինչ կարգի պաշտպանվող ոլորտի մեջ է տեղավորվում (օրինակ՝ պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ոլորտները):

«Պետական գաղտնիքի մասին» օրենքը սահմանում է, որ պետական գաղտնիք են այն տեղեկությունները, որոնց տարածումը կարող է վնաս հասցնել ազգային անվտանգությանը

կամ շահերին. «...այն տեղեկություններն են ... որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին» (հոդված 3): Սա մերժման հիմնավորման «բովանդակային առանցքն» է. մերժումը պետք է հավաստի, որ հայցվող տեղեկությունը վերաբերում է 8-րդ հոդվածով պաշտպանվող ոլորտին, և դրա բացահայտումն ունի վնասի ռիսկեր՝ առանց բուն գաղտնի բովանդակությունը բացելու:

Սկզբունք 20-ի «բողոքարկման միջոցների» պահանջը ՀՀ կարգավորմամբ հստակ ամրագրված է. «Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան» (հոդված 11): Մերժման գրությունում պարտադիր է նշել բողոքարկման կարգը:

Սկզբունք 20-ը պահանջում է, որ դիմողին տրվի բավարար տեղեկություն նաև՝

- տեղեկության հրապարակման արգելքի մասին,
- և այդ արգելքը հաստատած պաշտոնյայի (պաշտոնյաների) մասին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա կբացահայտի գաղտնի տեղեկություն:

Առնչվող օրենքներում ուղղակի պարտադրանք չկա մերժման նամակում նշելու, թե կոնկրետ ով է հաստատել գաղտնագրման/սահմանափակման որոշումը կամ դրոշմագիրը: Այս նորմերը ցույց են տալիս, որ գաղտնիության ռեժիմում առկա է լիազորությունների կոնկրետ հասցեատեր, բայց Սկզբունք 20-ի պահանջած «մերժման մեջ պաշտոնյայի մասին տեղեկություն տալու» պարտականությունը օրենքով նույնքան հստակ ձևակերպված չէ, որքան՝ մերժման հիմքի և բողոքարկման կարգի պարտականությունը:

Ոլորտային փորձագետների հետ զրույցների ընթացքում արձանագրվել է, որ գործնականում հանրային մարմինները հաճախ հարցումներին պատասխանելիս պարզապես նշում են, որ տեղեկությունը «ենթակա չէ տրամադրման՝ հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը», սակայն չեն նշում, թե այդ հոդվածի որ հիմքով տեղեկությունը ենթակա չէ տրամադրման: Սա հետագայում առաջացնում է բարդություններ դատական բողոքարկումների ընթացքում. թեև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն, այս փաստի ապացուցման բեռը կրում է հանրային մարմինը, սակայն հարցում իրականացնող անձն ամեն դեպքում իր հայցի փաստական և իրավական հիմքերում պետք է փաստացի կրի որոշակի ապացուցման պարտականություն առնվազն հայցի ընդունելիության շեմը հաղթահարելու համար:

Ոլորտի փորձագետների հետ կատարված հարցազրույցների ընթացքում ի հայտ են եկել նաև պրակտիկ խնդիրներ այն մասին, որ երբեմն հանրային մարմինը, թեև փաստացի չի մերժում տեղեկության տրամադրումը, սակայն պատասխանում նշում է միայն, որ պահանջվող տեղեկությունը արդեն իսկ որևէ պաշտոնատար անձ իր հանրային ելույթում հայտնել է (երբեմն տրամադրվում են նաև համացանցում ելույթի հղումները և տեսագրության ժամանակային հատվածը): Թեև այս պրակտիկան ՀՀ օրենսդրությանը չի հակասում, սակայն հակասում է միջազգային ընդունված սկզբունքներին: Հաշվի առնելով նաև գործնականում վկայակոչված դեպքերը՝ կարելի է արձանագրել, որ այս Սկզբունքի կիրարկումը բավարար ամբողջական չէ և ենթակա է բարելավման:

Պրակտիկայից վկայակոչված մեկ այլ խնդիր վերաբերում է «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի²⁰ կարգավորումներին: Մասնավորապես, տվյալ օրենքի 13-րդ հոդվածը թույլ է տալիս քաղաքացիություն ստանալու դիմումը մերժել «պետական և հասարակական անվտանգության» լայն ու գնահատողական հիմքերով՝ միաժամանակ, նախատեսելով, որ մերժումը կարող է չհիմնավորվել: Այս նորմը պրակտիկայում հնարավորություն է տալիս ԱԼԾ-ին բացասական եզրակացությունները դարձնել փաստացի չստուգելի՝ առանց նվազագույն հիմնավորման, ինչը թուլացնում է դատական վերահսկողությունն ու արդյունավետ պաշտպանության իրավունքը: Արդյունքում «անվտանգության» հիմնավորմամբ ձևավորվում է պատասխանատվությունից խուսափելու միջավայր, երբ նույն գործերով դատարանում գործի քննության ընթացքում ԱԼԾ-ի կողմից որոշումների փոփոխումը ևս ակնարկում է սկզբնապես չհիմնավորված մոտեցման խնդիրը:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 21. Պակասող տեղեկությունը վերականգնելու կամ վերստեղծելու պարտավորություն

ա) Այն դեպքերում, երբ հանրային մարմինը չի կարողանում գտնել հարցմամբ պահանջվող տեղեկությունը, մինչդեռ նման տեղեկություն պարունակող գրառումները պետք է պահպանված, հավաքագրված կամ պատրաստված լինեին, հանրային մարմինը պետք է ողջամիտ ջանքեր գործադրի վերականգնելու կամ վերստեղծելու պակասող տեղեկությունը հարցումը ներկայացրած անձին այն փոխանցելու նպատակով:

Նշում. Այս Սկզբունքը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ տեղեկությունը չի կարող գտնվել ցանկացած պատճառով, օրինակ՝ առհասարակ չհավաքագրվելու, ոչնչացված լինելու կամ հետազոծի անհասանելության հետևանքով:

բ) Հանրային մարմնի ներկայացուցիչը պետք է պարտավորեցվի երդմամբ, ողջամիտ և օրենքով սահմանված ժամկետում ներկայացնել տեղեկությունը վերականգնելու կամ վերստեղծելու համար ձեռնարկած բոլոր գործողությունները՝ այնպես, որ դրանք ենթակա լինեն հնարավոր դատական վերանայման:

Նշում. Այն դեպքերում, երբ օրենքով պահպանման ենթակա տեղեկությունը չի գտնվում, այդ հարցով պետք է դիմել ոստիկանությանը կամ վարչական մարմիններին, որպեսզի կատարվի քննություն: Քննության արդյունքները պետք է հրապարակվեն:

գ) Տեղեկությունը վերականգնելու կամ վերստեղծելու պարտականությունը հատկապես մեծ է հետևյալ դեպքերում՝ i) երբ տեղեկությունը վերաբերում է մարդու իրավունքների ենթադրաբար կոպիտ կամ համակարգված խախտումներին և (կամ) ii) մարդու իրավունքների ծավալուն խախտումներով բնութագրվող կառավարման ձևից ժողովրդավարական կառավարման ձևի անցնելու ժամանակ:

²⁰ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը, 06.11.1995, <https://www.arlis.am/hy/acts/218433/latest>

Սկզբունք 21-ը պահանջում է, որ եթե հարցմամբ պահանջվող տեղեկությունը չի գտնվում, բայց այն պետք է գոյություն ունենար (պահպանման, հաշվառման կամ պատրաստման պարտադիր ռեժիմի ներքո), ապա մարմինը պարտավոր է գործադրել ողջամիտ ջանքեր այն վերականգնելու կամ վերստեղծելու համար, և այդ ջանքերը դարձնել ստուգելի (հնարավոր դատական վերահսկողության համար): Առնչվող երկու օրենքներում այս պահանջը ամբողջությամբ չի ձևակերպվում որպես ինքնուրույն պարտավորություն, բայց կան մի քանի դրույթներ, որոնք մասամբ մոտեցնում են համակարգը այս Սկզբունքին:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը տեղեկատվություն տնօրինողին պարտավորեցնում է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների կազմակերպված վարումը և պահպանումը. *«Տեղատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է ... իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը»* (հոդված 12): Սա սկզբունքի «պետք է գոյություն ունենար» չափանիշի իրավական հիմքն է. եթե տվյալը օրենքով ենթակա էր գրանցման/պահպանման, ապա դրա բացակայությունը, որպես կանոն, խոսում է պարտականության թերակատարման մասին, այլ ոչ թե բավարար հիմք է պարզապես «առկա չէ» հիմնավորմամբ մերժում տրամադրելու համար:

Օրենքը նախատեսում է, թե ինչ անել, եթե մարմինը փաստացի չի տնօրինում պահանջվող տեղեկությունը. *«Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը ... ապա նա ... 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում ... տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը»*: Բացի այդ՝ օրենքը սահմանում է, որ մարմինը *«... չունի ... բոլոր տվյալները, ապա ... տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում ... նշում է նաև ... այն ... տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի ... մյուս տվյալները»* (հոդված 9): Այս կարգավորումը համապատասխանում է Սկզբունք 21-ի մի հատվածին՝ դիմողին չթողնել անորոշության մեջ, և հնարավորության դեպքում ուղղորդել այլ տնօրինողի: Սակայն այստեղ չկա ուղիղ պահանջ այն մասին, որ եթե տվյալը պետք է գոյություն ունենար, ապա մարմինը պարտադիր պետք է փորձի այն վերականգնել կամ վերստեղծել:

Օրենքը նաև ամրագրում է բովանդակային պարտականություն՝ *«...տեղեկություն փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն»* (հոդված 12): Այսինքն՝ եթե վիճակագրություն չի վարվել կամ տվյալը չի ձևակերպվել որպես պատրաստ տեղեկություն, գործող տեքստով դժվար է պնդել, որ մարմինը պարտավոր է նոր տեղեկություն «ստեղծել» միայն հարցման հիմքով: Միաժամանակ, եթե տվյալն իրականում առկա է եղել՝ որպես պահման ենթակա գրառում, բայց չի գտնվում, ապա 12-րդ հոդվածով պահպանման պարտականությունը տրամաբանորեն ենթադրում է փնտրման և վերականգնման կազմակերպված քայլեր, թեկուզ օրենքը դա բառացի չի անվանում «վերստեղծում»:

Պակասող (պահպանման ենթակա) տեղեկության դեպքում օրենքը նախատեսում է պատասխանատվության ընդհանուր հիմք. «...տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն» (հոդված 14):

«Պետական գաղտնիքի մասին» օրենքը գաղտնի տեղեկությունների հետ կապված գործընթացները ներառում է նաև «արխիվացում» և «ոչնչացում» գործողությունների շարքում. «...պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելը ... կապված է ... պահպանման, պաշտպանության, ... գաղտնազերծման, արխիվացման, ոչնչացման ... գործողություններ կատարելու հետ» (հոդված 3):

Բացի այդ՝ կառավարությունը սահմանում է ընթացակարգեր, ներառյալ՝

- «...պահպանման ժամկետները լրացած պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները գաղտնազերծելու, պետական արխիվ հանձնելու, ինչպես նաև ... ոչնչացնելու կարգը» (հոդված 7),
- «...գաղտնազերծումից հետո ... կարող են հանձնվել Հայաստանի Հանրապետության պետական արխիվի պահպանությանը» (հոդված 15):

Այս նորմերն ուժեղացնում են պահպանման տրամաբանությունը, բայց դրանք ուղղակիորեն չեն սահմանում, որ հարցման դեպքում մարմինը պարտավոր է վերականգնել/վերստեղծել կորած գաղտնի տեղեկությունը կամ ներկայացնել որոնման քայլերի արձանագրություն:

Ոլորտի փորձագետները հարցազրույցների ընթացքում նշել են, որ հաճախ պետական համապատասխան մարմինները մերժում են տեղեկության տրամադրումը՝ նշելով, որ պահանջվող տվյալների վերաբերյալ վիճակագրություն չի վարվում: Սա խնդրահարույց պրակտիկա է, քանի որ տվյալների ձեռքի տակ լինելու դեպքում հանրային մարմինը, նույնիսկ եթե չի վարել տվյալների խմբավորում, կարող է սեղմ ժամկետներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով հավաքել անհրաժեշտ տվյալները, խմբավորել և դրանք տրամադրել դիմումատուներին:

Այսպիսով՝ ՀՀ օրենսդրության մեջ կա հստակ պարտավորություն տեղեկությունները գրանցելու, դասակարգելու և պահելու, կա պարտադիր ընթացակարգ, եթե մարմինը չունի տեղեկությունը՝ գրավոր պատասխան և հնարավորության դեպքում ուղղորդում է դեպի այլ տնօրինող/արխիվ, ինչպես նաև կա ընդհանուր պատասխանատվության հիմք օրենքի պահանջների խախտման համար: Այդուհանդերձ, օրենսդրությամբ չկա ուղիղ, մանրամասն ձևակերպված պարտավորություն՝ ա) «պակասող, բայց գոյություն ունենալու ենթակա» տեղեկությունը վերականգնելու կամ վերստեղծելու, բ) որոնման/վերականգնման քայլերը պարտադիր կարգով արձանագրելու և դրանք դատական վերահսկողությանը ներկայացնելու ձևաչափով ապահովելու համար:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 22. Փաստաթղթերից հատվածներ հրապարակելու պարտականություն

Տեղեկություն հրապարակելու պարտավորության բացառությունները վերաբերում են միայն որոշակի տեղեկության, այլ ոչ թե ամբողջական փաստաթղթերի կամ այլ գրառումների: Գաղտնի կարող են պահվել միայն որոշակի տեղեկություններ, որոնց մատչելիության սահմանափակումը հիմնավորված է («բացառված տեղեկություն»): Այն դեպքերում, երբ որևէ փաստաթուղթ պարունակում է ինչպես բացառված, այնպես էլ ոչ բացառված տեղեկություններ, հանրային մարմինները պարտավոր են առանձնացնել և հրապարակել չբացառված տեղեկությունները:

Սկզբունք 22-ը պահանջում է, որ հասանելիության սահմանափակման բացառությունները վերաբերեն կոնկրետ տեղեկությանը, ոչ թե ամբողջ փաստաթղթին. եթե փաստաթուղթը պարունակում է և՛ սահմանափակման ենթակա, և՛ հրապարակելի տվյալներ, ապա հանրային մարմինը պարտավոր է առանձնացնել և տրամադրել հրապարակելի մասը՝ միայն այն հատվածների հնարավոր սահմանափակմամբ, որոնց գաղտնագրումը հիմնավորված է:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքն այդ Սկզբունքը ձևակերպում է ուղիղ՝ որպես պարտադիր ընթացակարգ. *«Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ»* (հոդված 8): Սա Սկզբունք 22-ի հիմնական «իրավական առանցքն» է. մերժումը թույլատրելի է միայն այն հատվածների մասով, որոնք ընկնում են սահմանափակման հիմքերի տակ, իսկ մնացածը պետք է տրամադրվի:

Նույն օրենքում սահմանափակման հիմքերը թվարկված են. «մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝ ...», օրինակ՝ պետական գաղտնիք, ծառայողական սահմանափակ տարածման տեղեկություն, անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության խախտում չէ և այլն: Կարևոր է, որ ձևակերպումը վերաբերում է պահանջվող տեղեկությանը և դրա բովանդակությանը, ոչ թե փաստաթղթի «ամբողջական» կարգավիճակին: Այս տրամաբանությունը համադրվում է նաև «Պետական գաղտնիքի մասին» օրենքի հասկացության հետ, ըստ որի գաղտնագրումը «...պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների տարածման նկատմամբ սահմանափակումների կիրառում»-ն է: Այսինքն՝ սահմանափակումն ուղղված է տեղեկության տարածմանը, և սկզբունքորեն հնարավոր է տվյալ փաստաթղթում սահմանափակել միայն այն տեղեկությունը, որը իրականում պահանջում է պաշտպանություն:

Սկզբունքի կիրառումը ուժեղանում է նաև այն արգելքներով, որոնք սահմանում են, թե ինչ տեղեկություններ չեն կարող փակվել՝ նույնիսկ ազգային անվտանգության հիմնավորումներով: «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 9-րդ հոդվածն արգելում է պետական գաղտնիքի շարքին դասել, օրինակ՝

- *«...մարդկանց անվտանգությանը և առողջությանն սպառնացող արտակարգ դեպքերի ... դրանց հետևանքների մասին տեղեկությունները»*,
- *«...տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության ... քննազավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները»:*

Սա գործնականում նշանակում է, որ փաստաթղթում նույնիսկ առկա գաղտնի տեղեկության կողքին գտնվող որոշ տվյալներ կարող են լինել պարտադիր բաց՝ ըստ օրենքի նյութական արգելքների:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ ամբողջությամբ:

Սկզբունք 23. Չտրամադրվող տեղեկությունը նկարագրելու պարտականություն

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում այն տնօրինող հանրային մարմինը պետք է հնարավորինս հստակ նկարագրի այդ տեղեկությունը: Հանրային մարմինը պետք է առնվազն հայտնի նման տեղեկության ծավալը, օրինակ՝ էջերի քանակի հաշվարկով:

Սկզբունք 23-ը պահանջում է, որ տեղեկության տրամադրումը մերժելու (ամբողջությամբ կամ մասնակի) դեպքում հանրային մարմինը, առանց գաղտնի բովանդակությունը բացահայտելու, հնարավորինս հստակ նկարագրի չտրամադրված տեղեկությունը՝ գոնե դրա ծավալը (օրինակ՝ էջերի քանակով), իսկ հնարավորության դեպքում՝ նաև տեսակը և ընդհանուր շրջանակը: Նպատակը երկուսն է՝ ա) ստեղծել ստուգելի «հետք» մերժման համար և բ) ապահովել բողոքարկման արդյունավետություն, որպեսզի անկախ վերանայող մարմինը կամ դատարանը կարողանա գնահատել սահմանափակման համաչափությունը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, թեև պարտադրում է մերժման գրավոր պատասխանում նշել իրավական հիմքը և բողոքարկման կարգը (հոդված 11) և պարտադրում է տրամադրել չգաղտնագրված մասը (հոդված 8), այն ուղղակիորեն չի պահանջում, որ մերժման դեպքում մարմինը ներկայացնի չտրամադրված տեղեկության ծավալի հաշվարկ կամ նկարագրություն (էջերի քանակ, բաժինների շրջանակ, փաստաթղթերի տեսակների թվարկում):

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 24. Տեղեկությունը առկա ձևաչափերով տրամադրելու պարտականություն

Հանրային մարմինները պետք է հնարավորության սահմաններում տեղեկությունը տրամադրեն հարցում ներկայացրած անձի նախընտրած ձևաչափով:

Նշում. Սա ներառում է օրինակ՝ այն, որ հանրային մարմինները պարտավոր են պատշաճ միջոցներ ձեռնարկել տեղեկությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափերով և տեխնոլոգիաներով ճիշտ ժամանակին և առանց հավելյալ վճարի տրամադրելու համար՝ ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող մասին կոնվենցիային համապատասխան:

Սկզբունք 24-ը պահանջում է, որ հանրային մարմինները, հնարավորության սահմաններում, տեղեկությունը տրամադրեն հարցում ներկայացրած անձի նախընտրած ձևաչափով, որպեսզի տեղեկատվության մատչելիությունն իրական լինի, ոչ թե ձևական: Սա ներառում է նաև այն մոտեցումը, որ մատչելիության ապահովումը չպետք է վերածվի հավելյալ ֆինանսական բեռի հարցում ներկայացնողի համար:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը հստակ կարգավորում է հարցման պատասխանի նյութական կրիչը. *«Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով»* (հոդված 9): Սա սկզբունքի հիմնական պահանջին համապատասխանող նորմ է, քանի որ իրավական պարտավորություն է ստեղծում հետևել հարցում ներկայացնողի ընտրությանը (օրինակ՝ տպագիր, էլեկտրոնային և այլն): Միաժամանակ, օրենքը նախատեսում է գործնական ելք այն դեպքերի համար, երբ կրիչը նշված չէ կամ անհնար է պարզել. *«Եթե նյութական կրիչը նշված չէ, և դա անհնար է պարզել ... ապա ... պատասխանը տրվում է ... առավել ընդունելի նյութական կրիչով»* (հոդված 9): Այս լուծումը պաշտպանում է վարչարարական գործնականությունը, բայց նաև ցույց է տալիս, որ «նախընտրության» իրացումն ամբողջապես կախված է նրանից՝ արդյոք հարցումը հստակ ձևակերպում է պահանջվող ձևաչափը:

Սկզբունք 24-ի կարևոր բաղադրիչներից մեկը, հնարավորության դեպքում, հավելյալ ծախսերի նվազեցումն է, հատկապես այն իրավիճակներում, երբ տեղեկության էլեկտրոնային տրամադրումը տեխնիկապես հնարավոր է: Օրենքն այստեղ ունի ուղիղ խթան. *«Տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում ... տեղեկությունն էլեկտրոնային փոստով ... տրամադրելիս»* (հոդված 10): Այս նորմը գործնականորեն խրախուսում է էլեկտրոնային (և հաճախ ավելի մատչելի) տրամադրումը՝ առանց դիմողի վրա լրացուցիչ ֆինանսական բեռ դնելու:

Սկզբունքի «մատչելի ձևաչափեր» բաղադրիչը ներառում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված ձևաչափեր: Սակայն օրենսդրության մեջ չկա հստակ դրույթ, որը պարտադրի տեղեկությունը տրամադրել հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ հարմարեցված ձևաչափերով:

Այսպիսով ՀՀ օրենսդրությունը պարտադրում է պատասխան տալ հարցման մեջ նշված նյութական կրիչով, ինչը Սկզբունք 24-ի «նախընտրած ձևաչափ» պահանջի հիմնական պայմանն է, խրախուսում է էլեկտրոնային տրամադրումը՝ վճարի գանձումից ազատելով, սակայն առկա չէ հստակ կարգավորում հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկության մատչելի ձևաչափերով տրամադրման պարտադիր ապահովման վերաբերյալ: Մասնավորապես, օրենքով ուղղակիորեն չեն ամրագրվում այնպիսի պահանջներ, ինչպիսիք են՝ տեսողության խանգարում ունեցող անձանց համար բրայլյան տարբերակով, Էկրանի ընթերցիչ ծրագրերով ընթեռնելի թվային ձևաչափով, խոշորացված տառաչափով կամ ձայնային տարբերակով տրամադրումը, լսողության խանգարում ունեցող անձանց համար ուղեկցող տեքստային/սուբտիտրային ձևաչափերի ապահովումը, ինչպես նաև ճանաչողական կամ այլ առանձնահատկություններ ունեցող անձանց համար պարզեցված և հասկանալի ներկայացման միջոցների կիրառումը: Այս բացի պատճառով «նախընտրած ձևաչափի» իրավունքը գործնականում կարող է չիրացվել հավասարապես բոլոր դիմողների

համար, եթե տեղեկություն տնօրինողի վրա հստակորեն դրված չէ մատչելի հարմարեցումներ ապահովելու պարտականություն: Բացի այդ՝ Սկզբունք 24-ի «նախընտրած ձևաչափ» պահանջը վերաբերում է ոչ միայն կրիչին, այլ նաև տեղեկատվության տեխնիկական որակին. օրինակ՝ տվյալների տրամադրումը պետք է հնարավորինս լինի որոնելի և վերամշակելի թվային ձևաչափով, այդ թվում՝ մեքենաընթացների, որպեսզի տեղեկատվությունը հնարավոր լինի ոչ միայն դիտել, այլ նաև ավտոմատ մշակել և համադրել այլ տվյալների հետ: Այս համատեքստում խնդրահարույց է, երբ մարմինները սահմանափակվում են միայն սքանավորված պատկերներով կամ տեխնիկապես «փակ» ֆայլերով, որոնք ձևականորեն էլեկտրոնային են, բայց չեն ապահովում տեղեկատվության իրական օգտագործելիություն և վերօգտագործելիություն:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 25. Տեղեկատվության հարցումներին պատասխանելու ժամկետները

ա) Հարցումներին, այդ թվում՝ գործի ելույթան, ներքին վերահսկողության, անկախ մարմնի որոշման, այդպիսի որոշման առկայության դեպքում, և դատական վերահսկողության վերաբերյալ, պատասխանելու ժամկետները պետք է սահմանվեն օրենքով և պետք է լինեն հնարավորինս կարճ:

Նշում. Լավագույն գործելակերպ է համարվում, եթե տեղեկատվության մասին օրենքներով սահմանված պահանջներին համապատասխան՝ հարցումներին հիմնավոր պատասխան ներկայացնելու համար սահմանվի առավելագույնը 20 աշխատանքային օր: Այն դեպքերում, երբ տեղեկատվության հարցումներին պատասխանելու վերջնաժամկետն օրենքով սահմանված չէ, հարցումներին պատասխանելու առավելագույն ժամկետը չպետք է գերազանցի 30 օրը: Հայցվող տեղեկության ծավալից և փաստաթղթերի բարդությունից ու զգայունությունից աստիճանից կախված՝ օրենքով կարող են սահմանվել տարբեր ժամկետներ:

բ) Այն դեպքերում, երբ առկա է տեղեկությունը հրատապ տրամադրելու ակնհայտ անհրաժեշտություն, օրինակ՝ երբ տվյալ տեղեկությունն անհրաժեշտ է անձի կյանքը կամ ազատությունը պահպանելու համար, պետք է կիրառվեն կարճ ժամկետներ:

Սկզբունք 25-ը պահանջում է, որ տեղեկատվության հարցումներին պատասխանելու ժամկետները սահմանվեն օրենքով և լինեն հնարավորինս կարճ, իսկ հրատապ դեպքերում գործեն ավելի արագ ընթացակարգեր: Ժամկետային կարգավորումը հիմնականում ամրագրված է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը սահմանում է գրավոր հարցումների պատասխանների հստակ ժամկետային ռեժիմ՝

- եթե պահանջվող տեղեկությունը չի հրապարակված, ապա «*դրա պատճենը ... տրվում է ... 5-օրյա ժամկետում*» (հոդված 9),
- եթե տեղեկությունը հրապարակված է, ապա հրապարակման վայրի/միջոցի մասին տեղեկությունը «*տրվում է ... 5-օրյա ժամկետում*» (հոդված 9),

- եթե տեղեկությունը տրամադրելու համար «անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք», ապա տրամադրումը կատարվում է «30-օրյա ժամկետում», իսկ հետաձգման մասին «5-օրյա ժամկետում ... գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով ... վերջնական ժամկետը» (հոդված 9):

Սա սկզբունքի «ժամկետները պետք է սահմանվեն օրենքով» պահանջի համարժեք իրականացում է, քանի որ սահմանված են թե՛ հիմնական, թե՛ բարդության դեպքում երկարաձգվող վերջնաժամկետներ, ինչպես նաև առկա է միջանկյալ տեղեկացման պարտականություն:

Սկզբունքի տրամաբանության մեջ ժամկետները կարևոր են նաև այն դեպքերում, երբ մարմինը չի կարող տրամադրել տեղեկություն՝ որովհետև այն չունի կամ լիազոր չէ: Օրենքը պահանջում է այդ մասին գրավոր տեղեկացնել «... 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում ... տրամադրել նաև ... արխիվի ... գտնվելու վայրը» (հոդված 9): Այս նորմը ժամկետային կարգավորում է տալիս նաև «ուղղորդման» պարտականությանը, ինչը նվազեցնում է ձգձգման ռիսկը:

Սկզբունքը 25-ը պահանջում է կարճ ժամկետներ, երբ կա ակնհայտ հրատապություն (կյանք/ազատություն, հանրային անվտանգության ռիսկ և այլն): ՀՀ օրենսդրությամբ չի սահմանվում այդպիսի ժամկետ, սակայն օրենքը նախատեսում է մի կարևոր մեխանիզմ՝ վտանգը կանխելու նպատակով տեղեկատվության անհապաղ հրապարակում. «Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է ... այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել ... անվտանգությանը ... առողջությանը ... սպառնացող վտանգը» (հոդված 7): Այսինքն՝ հրատապության տրամաբանությունը օրենսդրորեն արտահայտվում է ոչ այնքան «հարցմանը պատասխանելու արագացված ժամկետով», որքան նախաձեռնողական անհապաղ հրապարակման պարտականությամբ՝ երբ տեղեկության հրապարակումը կանխարգելիչ նշանակություն ունի:

Բանավոր հարցումների մասով նույնպես կա արագ արձագանքի մոտեցում. «Բանավոր հարցման պատասխանը տրվում է ... անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում» (հոդված 9):

«Պետական գաղտնիքի մասին» օրենքը հիմնականում սահմանում է գաղտնիության պահպանման ժամկետները և պարբերական վերանայումը: Բայց այն չի սահմանում քաղաքացիների/անձանց հարցումներին պատասխանելու առանձին ընթացակարգային օրացույցային ժամկետներ: Ուստի հարցումների պատասխանների ժամկետների հիմնական ռեժիմը այնուամենայնիվ բխում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից:

Այսպիսով՝ ՀՀ օրենսդրությունը պարզ ու պարտադիր ժամկետներ է սահմանում գրավոր հարցումների համար (5 օր կամ մինչև 30 օր՝ լրացուցիչ աշխատանքի դեպքում, միջանկյալ 5-օրյա ծանուցմամբ), սահմանվում է տեղեկության բացակայության կամ լիազորության բացակայության մասին 5-օրյա ժամկետում գրավոր պատասխան տրամադրելու, ինչպես նաև հնարավորության դեպքում տեղեկատվությունը տնօրինողին ուղղորդելու պարտականություն, հրատապության դեպքում սահմանվում է «անհապաղ հրապարակման»

պարտականություն վտանգի կանխման նպատակով, սակայն առանձին արագացված ժամկետներ չեն սահմանվում հենց հարցումների պատասխանների համար:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 26. Տեղեկությունը չտրամադրելու մասին որոշումը վերանայելու իրավունք

ա) Տեղեկատվություն հարցում ներկայացրած անձն իրավունք ունի տեղեկությունը տրամադրելու մերժման կամ հարցման հետ կապված խնդիրներով դիմել անկախ մարմնի՝ արագ և ոչ մեծ վճարով վերանայելու համար:

Նշում. Մերժումը ենթադրում է նաև անուղղակի կամ լուռ մերժում: Անկախ մարմնի կողմից քննության ենթակա հարցերի շարքին են դասվում՝ վճարները, ժամանակացույցները և ձևաչափը:

բ) Անկախ մարմինը պետք է ունենա արդյունավետ վերանայման համար անհրաժեշտ կարողություն և ռեսուրսները, այդ թվում՝ նրան պետք է լիարժեքորեն հասանելի լինեն բոլոր անհրաժեշտ, անգամ՝ գաղտնագրված, տեղեկությունները:

գ) Անձը պետք է իրավունք ունենա դիմելու իրավասու դատարան կամ հաշտարար դատարան՝ բոլոր համապատասխան հարցերի անկախ և արդյունավետ վերանայում իրականացնելու հարցով:

դ) Եթե դատարանը վճռում է, որ տեղեկությունը չտրամադրելու որոշումը հիմնավորված է, այն պետք է իրապարակի դրա փաստարկված պատճառները և իր իրավական վերլուծությունը՝ գրավոր՝ բացառությամբ բացառիկ հանգամանքների, և Սկզբունք 3-ին համապատասխան:

Սկզբունք 26-ը պահանջում է, որ հարցվող տեղեկությունը չտրամադրելու (այդ թվում՝ լուռ կամ անուղղակի) որոշումը ենթակա լինի արագ, մատչելի և արդյունավետ վերանայման՝ նախընտրելի է՝ անկախ մարմնի կողմից, և վերջնական՝ դատարանի կողմից:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը ուղղակիորեն նախատեսում է մերժման բողոքարկելիությունը. *«Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան»* (հոդված 11): Սա հաստատում է վերանայման իրավունքի առկայությունը՝ վարչական և դատական ուղիներով: Սակայն, Սկզբունք 26-ի «անկախ մարմնի» պահանջը տվյալ նորմում ինստիտուցիոնալ առումով չի մանրամասնվում. օրենքը պարզապես նշում է «լիազորված պետական կառավարման մարմին», առանց դրա անկախության, լիազորությունների ծավալի, ընթացակարգային ժամկետների և վճարների հստակեցման:

Վերանայման արդյունավետության նախապայմանն այն է, որ մերժումը լինի գրավոր, իրավական հիմքով և բողոքարկման կարգի մատնանշմամբ. օրենքը սա պարտադիր է դարձնում 11-րդ հոդվածում. *«...տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման*

կարգը»: Այս պահանջը սկզբունքային է, որովհետև առանց նորմատիվ հիմքի և բողոքարկման ուղու մատնանշման վերանայումը դառնում է ձևական:

Սկզբունք 26-ը պահանջում է, որ անկախ վերանայող մարմինը ունենա լիարժեք հասանելիություն նաև գաղտնի նյութերին, որպեսզի կարողանա իրականացնել բովանդակային վերահսկողություն: «Պետական գաղտնիքի մասին» օրենքը սահմանում է, որ պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին *«կարող են ծանոթանալ միայն ... թույլտվություն ունեցող անձինք ... թույլտվությամբ»* (հոդված 23):

Այս կառուցվածքի ներքո անկախ վերանայող մարմնի «լիարժեք հասանելիությունը գաղտնի նյութերին» չի կարող ինքնաբերաբար ենթադրվել. օրենսդրության մեջ չկա ուղիղ նորմ, որը սահմանում է, որ բողոքը քննող վարչական մարմինը կամ դատարանից բացի որևէ վերահսկող սուբյեկտ իրավունք ունի ծանոթանալու գաղտնի տեղեկություններին՝ դրանց վերանայման նպատակով: Արդյունքում, Սկզբունք 26-ի պահանջը ներկայանում է որպես ինստիտուցիոնալ և նորմատիվ բաց:

Սկզբունք 26-ն ամրագրում է նաև դատարան դիմելու իրավունքը: ՀՀ օրենսդրությամբ դա ամրագրված է նաև «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով:

Փորձագետների հետ քննարկումները հավաստում են, որ հարցումների մերժումների բողոքարկումներն արդյունավետ չեն: Մասնավորապես, եթե բողոքը ներկայացվում է ըստ վերադասության, ապա մեծամասամբ բողոքները մերժվում են: Դատական բողոքարկման դեպքում վարչական դատարան ներկայացված բողոքների քննությունը տևում է ամիսներ, հաճախ նաև տարիներ, որից հետո, եթե նույնիսկ ստացվում է բավարարված վճիռ, ապա ստացված տեղեկությունն արդեն ակտուալ չի լինում:

Այս Սկզբունքին համահունչ, թերևս լավագույն լուծումը կլիներ նախ և առաջ միասնական անկախ մարմնի ստեղծումը, որը կկարողանար քննել հանրային մարմինների դեմ բողոքները: Այդպիսի փորձ առկա էր հարևան Վրաստանում, որտեղ մինչև 2019 թվականը գործում էր Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը, որը վերահսկում էր ոչ միայն անձնական տվյալների ոլորտը, այլ նաև, ի թիվս այլնի, քննում էր հանրային մարմինների կողմից տեղեկատվության ստացման վերաբերյալ հարցումներին առնչվող բողոքները:

Այսպիսի մոտեցումը մինչ օրս բարեհաջող գործում է նաև Սլովենիայում,²¹ Մեծ Բրիտանիայում,²² Հունգարիայում,²³ Կանադայում²⁴ և այլն:

Հաշվի առնելով, որ ներկայում ՀՀ կառավարությունն իրականացնում է ԵՄ-Հայաստան վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը, որի 3.4.3 կետով սահմանված է անձնական տվյալների պաշտպանության անկախ վերահսկող մարմնի ստեղծում, թերևս նպատակահարմար կլիներ այդ մարմնին վերապահել նաև քննարկվող լիազորությունը:

²¹ Republika Slovenija Informacijski pooblaščenec, Deseta obletnica Splošne uredbe o varstvu podatkov in letno poročilo EDPB za leto 2025, 29.04.2026, <https://www.ip-rs.si/>

²² UK Information Commissioner's Office, <https://ico.org.uk>

²³ Hungarian National Authority for Data Protection and Freedom of Information, <https://www.naih.hu>

²⁴ Information Commissioner of Canada, <https://www.oic-ci.gc.ca>

Ինչ վերաբերում է դատական գործերի քննության արդյունավետությանն ու ողջամիտ ժամկետներին, ապա այս դեպքում լավագույն լուծումը Վարչական դատավարության օրենսգրքով հատուկ վարույթի կամ առնվազն հատուկ ժամկետների սահմանումն է, որը

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Առաջարկություններ

- Օրենսդրորեն ամրագրել տեղեկատվությունը չհաստատելու կամ չհերքելու բացառիկ ռեժիմը՝ հստակ սահմանելով, թե որ դեպքերում նույնիսկ տեղեկության գոյության/բացակայության հաստատումը կարող է վնաս պատճառել (օրինակ՝ օպերատիվ միջոցներ, հետախուզական աղբյուր/մեթոդ), և որ այս ռեժիմը կիրառելի է միայն խիստ նեղ կատեգորիաների համար:
- Սահմանել « ոչ հաստատել- ոչ հերքել» ռեժիմի կիրառման պարտադիր հիմնավորման ստանդարտ՝ պահանջելով, որ մարմինը գրավոր ցույց տա՝ ինչու է տեղեկության գոյության փաստի պարզ հաստատումը/հերքումը ինքնին վնաս առաջացնում (առանց բովանդակությունը բացելու):
- Հստակեցնել մասնակի տրամադրման պարտավորությունը, եթե հարցման որոշ հատվածների առկայությունը վտանգ չի ստեղծում, ապա հաստատել/հերքել առնվազն այդ հատվածի շրջանակը:
- Սահմանել տեղեկատվության մերժումների «բովանդակային» հիմնավորման նվազագույն պարտադիր տարրեր օրենքով կամ կառավարության որոշմամբ սահմանվող կարգով ամրագրել, որ մերժման գրությունը պետք է ներառի ոչ միայն իրավական հղում, այլ նաև՝
 - կիրառված սահմանափակման կոնկրետ հիմքը (օրինակ՝ 8-րդ հոդվածի կոնկրետ ենթակետ),
 - «ինչու՞ «մասամբ տրամադրումը» հնարավոր չէ» հարցի պատասխան (եթե ամբողջությամբ է մերժվում),
 - վնասի ընդհանուր նկարագրություն՝ առանց գաղտնիքի բացահայտման:
- «Պետք է գոյություն ունենար» թեստի ամրագրում. օրենքով սահմանել, որ եթե տվյալ ենթակա էր պահպանման/գրանցման, ապա «առկա չէ» պատասխանը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարմինը ցույց է տալիս իր կողմից իրականացված որոնման քայլերը և պատճառը, թե ինչու վերականգնումը հնարավոր չէր:
- Դատական վերահսկողության համար սահմանել ընթացակարգ, որի շնորհիվ հնարավոր կլինի ստուգել տեղեկության բացակայության պատճառն ու հիմքը, ոչ թե միայն բավարարվել «առկա չէ» ձևակերպումով:
- Մարդու իրավունքների ծանր/համակարգային խախտումների վերաբերյալ հարցումների համար սահմանել ուժեղացված պարտավորություն՝ վերականգնելու և

վերստեղծելու տեղեկությունը, ինչպես նաև պարտադիր հաղորդում՝ իրավապահ/վերահսկող մարմին, երբ պահպանման պարտադիր տվյալը չի գտնվում:

- Տեղեկատվության տրամադրումը մերժելուն զուգահեռ նախատեսել «չտրամադրված կյուբի» պարտադիր նկարագրության սահմանում՝ էջերի թիվ, փաստաթղթերի քանակ, գաղտնագրման ժամանակահատված, փաստաթղթերի տեսակ (օրինակ՝ զեկույց/հրաման/գրություն), և, հնարավորության դեպքում, թեմատիկ ընդհանուր վերնագիր՝ առանց գաղտնիքը բացելու:
- Տեղեկությունը մասամբ տրամադրելու դեպքում պահանջել նշում, թե քանի էջ/պարբերություն է փակվել և ինչ հիմքով (այսինքն՝ նշել 8-րդ հոդվածի կոնկրետ կետը)՝ բարձրացնելու բողոքարկման արդյունավետությունը:
- Սահմանել ստանդարտ ձևաչափ բոլոր մարմինների համար՝ միատեսակ պատասխաններով՝ նվազեցնելու կամայականությունը և «հոդված 8-ի» ընդհանուր հղումով սահմանափակվելու պրակտիկան:
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսել մատչելի ձևաչափերի պարտադիր ապահովում:
- Սահմանել հրատապ հարցումների ցանկ և դրանց պատասխանելու հատուկ արագացված ժամկետներ:
- Ստեղծել անկախ վերանայող մարմին կամ լիազորել այլ առնչվող մարմին (մասնավորապես՝ անձնական տվյալների պաշտպանության նպատակով ստեղծվելիք անկախ վերահսկող կառույցին)՝ քննել տեղեկատվության ազատության վերաբերյալ բողոքները՝ հստակ ժամկետներով և նվազագույն/գրոյական վճարով:
- Վերանայման մարմնի համար սահմանել տվյալների փակ հասանելիություն. եթե հանրային նկարագրությունը չի կարող բավարար լինել, սահմանել, որ անկախ վերանայող մարմինը ստանա ավելի մանրամասն նկարագրություն՝ փակ կարգով:
- Տեղեկատվության տրամադրման մերժման վերաբերյալ հարուցված հայցերով քննվող գործերով վարչական դատավարության օրենսգրքում նախատեսել հատուկ սեղմ ժամկետներ կամ առանձին վարույթ, որպեսզի դատական պաշտպանությունը չկորցնի արդիականությունը:
- Սահմանել դատարանի որոշումների հրապարակայնության ստանդարտներ. պետական մարմնի կողմից տեղեկատվության մերժումը հիմնավորված համարելու դեպքում դատարանը պարտադիր պետք է հրապարակելի մասով ներկայացնի փաստական հիմքերի շարադրանքը և իրավական վերլուծությունը՝ բացառությամբ նեղ շրջանակի ու հիմնավորված դեպքերի, և կիրառի փակ հավելվածներ, որտեղ անհրաժեշտ է պաշտպանել գաղտնիությունը:

IV. Ազգային անվտանգության և տեղեկատվության ազատության դատավարական հարցերը

Սկզբունք 27. Ընդհանուր դատական վերահսկողության սկզբունք

ա) Ազգային անվտանգության մասին վկայակոչումը չի կարող հիմք ծառայել օրենքով սահմանված կարգով ստեղծված իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդար դատաքննության հիմնարար իրավունքը խաթարելու համար:

բ) Այն դեպքերում, երբ հանրային մարմինը փորձում է դատաքննության ընթացքում որևէ տեղեկություն գաղտնի պահել ազգային անվտանգության հիմքով, դատարանը պետք է լիազորված լինի քննելու այդ տեղեկությունը՝ որոշելու, թե արդյոք այն կարելի է չիրապարակել: Դատարանը չպետք է պարզապես մերժի առարկությունը՝ առանց ուսումնասիրելու տեղեկությունը:

Նշում. Սկզբունք 4-ի դ) կետին համապատասխան՝ դատարանը չպետք է հիմք ընդունի անկողմնագրերը կամ գրավոր ցուցմունքները, որոնցով պարզապես նշվում է գաղտնիության անհրաժեշտությունը, և չի ներկայացվում նման պնդման փաստական հիմքը:

գ) Դատարանը պետք է ապահովի, որպեսզի տեղեկատվության հարցում ներկայացրած անձը կարողանա հնարավորինս մանրազնին ուսումնասիրել և վիճարկել կառավարության կողմից տեղեկությունը չտրամադրելու համար ներկայացրած հիմքերը:

դ) Դատարանը պետք է որոշի հանրային մարմնի ներկայացրած հիմքի օրինականությունն ու պատշաճությունը և կարող է հարկադրել տրամադրել տեղեկությունը, կամ դրա մասնակի կամ ամբողջական չբացահայտման դեպքում՝ կարգադրել համապատասխան միջոցներ, այդ թվում՝ քրեական վարույթում մեղադրանքների հանումը:

ե) Դատարանը պետք է ինքնուրույն որոշի, թե արդյոք հանրային մարմինը տեղեկությունը չիրապարակելու հիմքով վկայակոչել է պատշաճ կերպով: Տեղեկության գաղտնի լինելու փաստը չպետք է լինի որոշիչ տեղեկությունը չհայտնելու պահանջի համար: Նմանապես, դատարանը պետք է Սկզբունք 3-ով սահմանված չափանիշներին համապատասխան գնահատի հանրային մարմինների կողմից վկայակոչված վնասի բնույթն ու հավանականությունը և հանրային շահի առարկա լինելու առումով տեղեկության հրապարակման նշանակությունը:

Սկզբունք 27-ում սահմանվում են դատական վերահսկողության ինստիտուտի հիմնական ուղեկիշները: Համաձայն դրանց՝ ազգային անվտանգությանը հղում անելը չի կարող գործել որպես ընդհանրական պատրվակ՝ սահմանափակելու արդար դատաքննության իրավունքը, իսկ դատարանը պետք է պահպանի իրական վերահսկողական դերը ազգային անվտանգության հիմքով տեղեկության չիրապարակման պահանջների նկատմամբ: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում նախատեսում է դատական վերանայման իրավունք՝ առանց բացառություն սահմանելու այն դեպքերի համար, երբ մերժման հիմքում ազգային անվտանգությունն է. «Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան» (հոդված 11): Այս դրույթը ցույց է տալիս, որ ազգային անվտանգության հղումն ինքնին չի վերացնում դատարան դիմելու իրավունքը, ինչը համահունչ է Սկզբունք 27-ի ընդհանուր տրամաբանությանը:

Սկզբունք 27-ի բ) կետի առանցքային պահանջն այն է, որ եթե հանրային մարմինը դատավարության ընթացքում պնդում է տեղեկության գաղտնիության անհրաժեշտությունը ազգային անվտանգության հիմքով, դատարանը պետք է լիազորված լինի քննելու հենց այդ տեղեկությունը որոշելու համար, թե արդյոք այն կարող է չիրապարակվել: Այս պահանջը վերաբերում է ոչ թե դիմող անձի հասանելիությանը, այլ հենց դատարանի՝ ինքնուրույն վերահսկողական գործառույթի իրականացման հնարավորությանը: Սակայն առնչվող օրենքներում դատարանի այդպիսի «ուղղակի հասանելիության» մասին հատուկ և հստակ նորմ առկա չէ: Ընդհակառակը, «Պետական գաղտնիքի մասին» օրենքը սահմանում է ընդհանուր կանոն, ըստ որի՝ պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին կարող են ծանոթանալ միայն համապատասխան թույլտվություն ունեցող անձինք և համապատասխան թույլտվությամբ (հոդված 23): Այս ձևակերպումը ինքնին չի պարզաբանում, թե դատական վերահսկողության դեպքում ինչ ընթացակարգով է դատարանը ստանում և ուսումնասիրում վիճարկվող գաղտնի տեղեկությունը՝ չիրապարակման հիմքի հիմնավորվածությունը ստուգելու համար: Յետևաբար, Սկզբունք 27-ի բ) կետի տեսանկյունից առկա է ընթացակարգի հստակեցման կարիք:

Սկզբունք 27-ի գ) կետը վերաբերում է այլ հարցի՝ դատարանը պետք է ապահովի, որպեսզի տեղեկության հարցում ներկայացրած անձը կարողանա հնարավորինս մանրագլին ուսումնասիրել և վիճարկել կառավարության կողմից ներկայացված չիրապարակման հիմքերը: Այս պահանջը կենտրոնանում է դիմողի պրոցեսուալ իրավունքների վրա՝ բավարար պատճառաբանություն ստանալու, հակափաստարկ ներկայացնելու և արդյունավետորեն մասնակցելու դատական քննությանը: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը այս մասով ապահովում է նվազագույն երաշխիք, քանի որ պարտադրում է մերժման մասին գրավոր պատասխանով նշել մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը) և բողոքարկման կարգը (հոդված 11): Սա կարևոր նախապայման է վիճարկման համար: Սակայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ հատուկ մեխանիզմ, որը կապահովի, որ դատավարության ընթացքում դիմողը ստանա բավարար չափով ոչ գաղտնի պատճառաբանություն կամ այլ դատավարական միջոցներ չիրապարակման հիմքերը բովանդակային վիճարկելու համար: Այս առումով Սկզբունք 27-ի գ) կետի պահանջը ամբողջությամբ չի ապահովվում:

Սկզբունք 27-ի դ) և ե) կետերը պահանջում են, որ դատարանը գնահատի հանրային մարմնի ներկայացրած հիմքի օրինականությունն ու պատշաճությունը, և «գաղտնի» պիտակը ինքնին չդառնա վճռորոշ հանգամանք: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի շրջանակում դատարան դիմելու իրավունքն առկա է, իսկ մերժման պատճառաբանությունը պետք է հղում անի օրենքի նորմին (հոդված 11): Բացի այդ՝ օրենքը նախատեսում է մասնակի տրամադրման պարտականություն, երբ պահանջվող տեղեկության միայն մի մասն է ենթակա սահմանափակման (հոդված 8), ինչը համահունչ է Սկզբունք 27-ի մասնակի բացահայտման տրամաբանությանը: Միևնույն ժամանակ, առնչվող օրենքների տեքստերում դատարանի համար հատուկ ձևակերպված չեն այնպիսի գնահատման չափանիշներ, ինչպիսիք են՝ վկայակոչված վնասի բնույթի և հավանականության կառուցակարգված գնահատումը կամ հանրային շահի կշռման հստակ չափորոշիչները: Այս պատճառով դատական վերահսկողությունը նորմատիվ մակարդակում առկա է, սակայն Սկզբունք 27-ի պահանջած խորությամբ դատական ստուգման չափանիշները բավարար չափով չեն հստակեցվում:

Այսպիսով՝ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված է տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում դատարան դիմելու իրավունքը, ինչպես նաև մերժման հիմքի նշման և մասնակի տրամադրման պարտականությունը, ինչը համահունչ է Սկզբունք 27-ի մի շարք տարրերին: Սակայն, օրենքներով բավարար հստակությամբ ամրագրված չեն 1) դատարանի կողմից վիճարկվող գաղտնի տեղեկությանը անմիջականորեն ծանոթանալու հատուկ ընթացակարգը և 2) դիմողի կողմից չիրապարակման հիմքերի արդյունավետ վիճարկման համար անհրաժեշտ ընթացակարգային երաշխիքները:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 28. Դատաքննության հանրամատչելիությունը

ա) Ազգային անվտանգության վկայակոչումը չի կարող արդարացնել դատաքննության հանրամատչելիության հիմնարար իրավունքի խախտումը:

բ) Դատարանի վճիռները, որոնցում ներկայացվում են դատարանի բոլոր կարգադրությունները և էական բացահայտումները, ապացույցները և իրավական հիմնավորումները, պետք է հրապարակվեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ 18 տարին չլրացած երեխաների շահերից այլ բան է բխում:

Նշում. Միջազգային իրավունքով չի թույլատրվում ազգային անվտանգության հիմքով որևէ շեղում դատավճիռը հրապարակելու պարտավորությունից: Անչափահասների գործերով դատաքննության արձանագրությունները հրապարակման ենթակա չեն: Երեխաների մասնակցությամբ դատական վարույթի արձանագրություններից, որպես կանոն, հանվում են 18 տարին չլրացած երեխաների անունները և նրանց անձը նույնականացնող այլ տեղեկությունները:

գ) Հանրության՝ արդարադատության մատչելիության իրավունքը ենթադրում է i) դատարանի հիմնավորման, ii) գործերի առկայության և դատավարության ընթացքի մասին տեղեկատվության, iii) դատարան ներկայացված գրավոր փաստարկների, iv) դատական լսումների և դատավարությունների և v) վերջնական դատավճռի հիմքը կազմող դատաքննության ընթացքում պարզված ապացույցների հանրամատչելիությունը կարճ ժամկետներում՝ բացառությամբ այն դեպքերի, եթե այդ իրավունքից շեղումը հիմնավորվում է այս Սկզբունքներին համապատասխան:

Նշում. Արդար դատաքննության իրավունքի պահանջները կարգավորող միջազգային իրավունքը դատարաններին թույլատրում է ժողովրդավարական պետությունում ազգային անվտանգության, ինչպես նաև բարոյականության, հասարակական կարգի պահպանման, դատավարության կողմերի մասնավոր կյանքի շահերի պաշտպանության կամ արդարադատության խափանումը կանխելու նկատառումներով արգելել ամբողջ հանրության կամ հանրության մի մասի ներկայությունը դատալսմանը՝ պայմանով, որ նման սահմանափակումները բոլոր դեպքերում անհրաժեշտ են և համաչափ:

դ) Հանրությունը պետք է հնարավորություն ունենա վիճարկելու հանրային մարմնի ցանկացած պնդում առ այն, որ դատաքննության հանրամատչելիության սահմանափակումը խիստ անհրաժեշտ է ազգային անվտանգության նկատառումներով:

ե) Այն դեպքերում, երբ դատարանը որոշում է դատաքննության հանրամատչելիության սահմանափակման հիմնավորված լինելու հարցը, այն պետք է հրապարակավ ներկայացնի փաստերի վրա հիմնված հատուկ հիմնավորում և իր կատարած գրավոր իրավական վերլուծությունը՝ բացառությամբ Սկզբունք 3-ով սահմանված բացառիկ դեպքերի:

Նշում. Այս Սկզբունքով չի նախատեսվում փոփոխել նախնական դատական ընթացակարգերը կարգավորող պետության գործող օրենքը, որին հանրությունը որպես կանոն հասանելիություն չունի: Այն վերաբերում է միայն դեպքերին, որտեղ սովորաբար դատաքննությունը կլիներ հանրության համար մատչելի, և դրա մատչելիությունը մերժելու փորձը հիմնավորվում է ազգային անվտանգության նկատառումներով: Հանրության՝ դատաքննության և դատաքննության կյուրթերի մատչելիության իրավունքը պայմանավորված է դրա հասանելիության կարևորությամբ՝ խթանելու i) դատավարության փաստացի և ընկալվող արդարությունը և անկողմնակալությունը, ii) դատավարության կողմերի պատշաճ և ավելի ազնիվ վարքագիծը և iii) հանրության մեկնաբանությունների հավելյալ ճշգրտությունը:

Դատական գործընթացների հրապարակայնությունը Հայաստանի իրավակարգում օրինական և գործնական կանխադրույթ է. նիստերը դռնբաց են, իսկ դատական ատյանում վարույթը եզրափակող դատական ակտերը հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքում (ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ հոդված): Հրապարակայնությունից շեղումը թույլատրելի է միայն դատարանի պատճառաբանված որոշմամբ և բացառիկ հիմքերով՝ մասնավոր կյանքի, ներառյալ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակներով (Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված, Դատական օրենսգրքի 11-րդ հոդված, Քրեական դատավարության օրենսգրքի 267-րդ հոդված, Վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդված): Ազգային անվտանգության վկայակոչումն ինքնին չի կարող դռնփակ դարձնել դատաքննությունը. դատարանը նախ գնահատում է մեղմ միջոցների հնարավորությունը (գործի քննության մի մասը դռնփակ դարձնել) և միայն դրանց անբավարարության դեպքում է անցնում ամբողջական դռնփակ ռեժիմի: Դռնփակություն սահմանելու հարցը նույնպես քննարկվում է դռնփակ: Այնուամենայնիվ նույնիսկ դռնփակ վարույթում քննվող գործերի դեպքում դատական իշխանության կայքում հրապարակվում է առնվազն եզրափակիչ դատական ակտի եզրափակիչ մասը, եթե այն օրենքով պաշտպանվող գաղտնիք չի: Այս կարգավորումը գործում է բոլոր դատավարական նորմերում:

Մինևույն ժամանակ, Դատական օրենսգիրքը պարտադրում է ապանձնավորել անձնական/հատուկ կատեգորիայի տվյալները և անչափահասների վերաբերյալ տվյալները: Միջազգային ստանդարտը համահունչ է այս ռեժիմին. դատարանի հիմնավորումների, գործերի և ընթացքի տեղեկատվության, գրավոր փաստարկների, լսումների և ապացույցների հանրային հասանելիությունը պետք է ապահովվի «կարճ ժամկետներում»,՝ բացառությամբ օրինական ու համաչափ սահմանափակումների:

Ինչպես Դատական օրենսգիրքը, այնպես էլ դատավարական մյուս օրենքները նշում են, որ դռնփակության մասին միջնորդությունները քննվում են դռնփակ: Սակայն հստակ կարգավորված չէ, թե քննությունից հետո կայացվող որոշումը պետք է հրապարակվի դռնփակ ռեժիմով, թե՛ դռնբաց: Պրակտիկայում այս որոշումները հրապարակվում են

դռնփակ ռեժիմով և հասարակական վերահսկողության տեսանկյունից պարզ չի լինում, թե դատավարության այս կամ այն փուլն ինչ հիմնավորմամբ է անցկացվում դռնփակ ռեժիմով: Կարծում ենք նպատակահարմար և արդյունավետ կլիներ դռնփակ անցկացնելու որոշումները եզրափակիչ դատական ակտերի եզրափակիչ հատվածների նման նույնպես հրապարակել դռնբաց ռեժիմով՝ հնարավորինս պահպանելով դռնփակության հիմքերի գաղտնիությունը:

Այս հարցի կապակցությամբ ոլորտային փորձագետների կողմից հատկապես խնդրահարույց է դիտարկվում քրեական գործերով մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքի ընտրության վերաբերյալ դատական նիստերի պրակտիկան: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ *խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու հարցի քննության դատական նիստը դռնփակ է: Դատարանը կարող է կողմի միջնորդությամբ դատական նիստից առաջ կամ դրա ընթացքում որոշում կայացնել դատական նիստը դռնբաց անցկացնելու մասին:* Սակայն, ըստ փորձագետների, դատարանների կողմից կալանքի նիստերը դռնբաց անցկացնելու միջնորդությունները ճշող մեծամասնությամբ մերժվում են, իսկ վարույթն իրականացնող մարմինները մշտապես առարկում են այդ միջնորդությունների դեմ: Այս խնդիրը հատկապես սրվում է հանրային հնչեղություն ունեցող գործերով, երբ որևէ գործի շրջանակում քրեական հետապնդման մարմինը, ընդհուպ ղեկավարի մակարդակով, կարող է լրատվական կամ պաշտոնական աղբյուրով հայտնել նախաքննական տեղեկատվության մեծ մասը, սակայն կալանքի նիստերն այնուամենայնիվ անցկացվեն դռնփակ ռեժիմով: Այսինքն՝ առկա է ոչ միանշանակ պրակտիկա, ինչը կարող է կարգավորվել օրենսդրական մակարդակում հստակություն մտցնելով:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 29. Տեղեկատվության հասանելիությունը քրեական դատավարության կողմերի համար

ա) Դատարանը չի կարող ազգային անվտանգության հիմքով արգելել ամբաստանյալին մասնակցել իր գործով դատաքննությանը:

բ) Դատարանը ոչ մի դեպքում չի կարող մեղադրական դատավճիռ կայացնել մեղադրյալի նկատմամբ կամ ազատագրել նրան այնպիսի ապացույցների հիման վրա, որոնք նա հնարավորություն չի ունեցել ուսումնասիրել և հերքել:

գ) Արդարադատության նկատառումներով հանրային մարմինը պետք է ամբաստանյալին և նրա դատապաշտպանին ներկայացնի նրան առաջադրված մեղադրանքները և արդար դատաքննությունն ապահովելու համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները՝ անկախ նրանից, թե այդ տեղեկությունները գաղտնի են, թե ոչ՝ Սկզբունքներ 3-6-ին, 10-ին, 27-ին և 28-ին համապատասխան՝ ի թիվս այլոց հաշվի առնելով հանրային շահը:

դ) Եթե հանրային մարմինը հրաժարվում է հայտնել արդար դատաքննությունն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկությունները, դատարանը պետք է կասեցնի կամ մերժի մեղադրանքը:

Նշում. Գաղտնիությունը վկայակոչելիս հանրային մարմինները չպետք է օգտագործեն տեղեկությունները ինչպես իրենց է ձեռնտու, թեպետև կարող են որոշել գաղտնի պահել տեղեկությունը և պատասխանատվություն կրել դրա հետևանքների համար:

Նշում. Սկզբունքներ 29-ը և 30-ն ընդգրկված են տեղեկատվության հանրամատչելիությանը վերաբերող Սկզբունքներում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական քննությունը և դրա շրջանակում տեղեկության բացահայտումները հաճախ կարևոր դեր են խաղում տեղեկության հրապարակայնացման հարցում:

Սկզբունք 29-ը պահանջում է, որ ազգային անվտանգության կամ գաղտնիության հիմքով սահմանափակումները չխաթարեն պաշտպանության կողմի մասնակցությունը դատաքննությանը և ապացույցների ուսումնասիրման և վիճարկման իրավունքը, իսկ դատարանը չկառուցի մեղադրական դատավճիռ այնպիսի ապացույցների վրա, որոնք հետազոտելու իրական հնարավորություն պաշտպանական կողմը չի ունեցել :

Այս պահանջը Զրեական դատավարության օրենսգրքում համակարգային կերպով արտացոլվում է կողմերի հավասարության և մրցակցության (հոդված 21) ու պատշաճ ապացուցման (հոդված 22) ընդհանուր սկզբունքներում՝ որոնք գործնականում սահմանում են «գաղտնիության» թույլատրելիության սահմանները:

Սկզբունք 29-ի «չի կարելի արգելել ամբաստանյալին մասնակցել դատաքննությանը» պահանջը տեղավորվում է Զրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի կարգավորումներում.

- Դատարանում վարույթն իրականացվում է *«կողմերի հավասարության և մրցակցության հիման վրա»:*
- *«Դատարանն ապահովում է դատական նիստին կողմերի մասնակցության իրավունքը»:*
- Դատարանը պարտավոր է ստեղծել պայմաններ *«բոլոր ապացույցները ներկայացնելու և համակողմանի հետազոտելու համար»:*
- Կողմերն ունեն *«իրենց դիրքորոշումը ներկայացնելու և պաշտպանելու հավասար հնարավորություններ»*, և *«դատական ակտի հիմքում կարող են դրվել միայն այնպիսի ապացույցներ, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ»:*

Այսինքն՝ եթե պետությունը փորձում է գաղտնիության պատրվակով սահմանափակել պաշտպանության կողմի համար ապացույցի մատչելիությունը, դա թույլատրելի է միայն այնքանով, որքանով պահպանվում են Զրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված «հավասար պայմանները» և «համակողմանի հետազոտման» հնարավորությունը: Այլ կերպ՝ գաղտնիության միջոցը կարող է լինել ընթացակարգային (օրինակ՝ դնսփակ հետազոտում), բայց չի կարող լինել այնպիսին, որ պաշտպանությանը զրկի իր դիրքորոշումը արդյունավետ ներկայացնելու հնարավորությունից:

Սկզբունք 29-ի առանցքային արգելքը, համաձայն որի՝ մեղադրական դատավճիռը չպետք է հիմնվի «չուսումնասիրված և չվիճարկված» ապացույցների վրա, ներպետական օրենսդրությամբ ամրագրված է Քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածում.

- Ցանկացած նշանակություն ունեցող հանգամանք *«պետք է հաստատվի պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ»:*
- Եզրափակիչ դատավարական ակտը *«պետք է հիմնվի հետազոտված ապացույցների ազատ և բարեխիղճ գնահատման վրա»:*
- Մեղադրական դատավճիռի հիմքում դրվող յուրաքանչյուր հանգամանք պետք է ապացուցված լինի այնպես, որ *«բացառի ... ցանկացած հիմնավոր կասկած»*, իսկ դատավճիռ կայացնելիս պետք է հաշվի առնվի *«անհրաժեշտ և հնարավոր ապացույցների բացակայությունը»:*
- Մեղավորության հետևությունը *«չի կարող հիմնվել ենթադրությունների վրա»* և պետք է հաստատվի *«վերաբերելի, թույլատրելի, հավաստի ապացույցների ամբողջությամբ»:*
- Առավել ուղղակի սկզբունք 29-ի հետ կապված է այն դրույթը, որ *«Մեղադրյալի դատապարտումը ... չի կարող միայն կամ առավելապես հիմնվել այնպիսի անձի ցուցմունքի վրա, որի հակընդդեմ հարցման հնարավորություն ... չի ունեցել»:*

Այսինքն՝ եթե գաղտնիության պատճառաբանությամբ պաշտպանության կողմի համար չի ապահովվում ապացույցի արդյունավետ հետազոտում և վիճարկում, ապա այդ ապացույցը չի կարող դառնալ դատավճիռի միակ կամ հիմնական հիմք և ընդհանրապես դատավճիռը պետք է կառուցվի միայն «հետազոտված ապացույցների» վրա (հոդված 22):

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ ամբողջությամբ:

Սկզբունք 30. Տեղեկատվության հասանելիությունը քաղաքացիական դատավարության կողմերի համար

ա) Քաղաքացիական գործի դատաքննության շրջանակներում տեղեկություն չհայտնելու մասին հանրային մարմինների բոլոր հայտարարությունները պետք է դիտարկվեն Սկզբունքներ 3-6-ով, 10-ով, 27-ով և 28-ով նախատեսված դրույթներին համահունչ՝ նաև հաշվի առնելով հանրային շահը:

բ) Մարդու իրավունքների խախտումներից տուժած անձինք ունեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից օգտվելու և փոխհատուցում ստանալու իրավունք, այդ թվում՝ նման խախտումները հրապարակելու իրավունք: Հանրային մարմինները չպետք է այդ իրավունքի իրացումը խոչընդոտող ձևով գաղտնի պահեն նրանց պահանջների համար էական նշանակություն ունեցող տեղեկությունը:

գ) Հանրությունը նաև իրավունք ունի ստանալու տեղեկություն մարդու իրավունքների կոպիտ խախտումների և միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների վերաբերյալ:

Սկզբունք 30-ի տրամաբանությունը քաղաքացիական դատավարությունում նախ և առաջ նյութականանում է մրցակցության և կողմերի հավասարության կանոնով. կողմերն են ձևավորում իրենց դատավարական մարտավարությունը, յուրաքանչյուրը պարտավոր է ապացուցել իր վկայակոչած փաստերը, իսկ դատարանը՝ պահպանելով անաչառությունը, ստեղծում է ապացույցների ներկայացման և համակողմանի հետազոտման անհրաժեշտ պայմաններ, նաև, կողմի միջնորդությամբ, աջակցում է ապացույցներ ձեռք բերելու հարցում:

Այս շրջանակում վճռորոշ է հետևյալ սահմանափակումը. դատական ակտի հիմքում կարող են դրվել միայն այնպիսի ապացույցներ, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ: Ուստի, եթե հանրային մարմինը քաղաքացիական գործով էական նշանակություն ունեցող տեղեկությունը չի բացահայտում վկայակոչելով դրա «գաղտնիությունը», ինչի հետևանքով հակառակ կողմը չի կարողանում բավարար չափով ծանոթանալ և վիճարկել դրա բովանդակային նշանակությունը, ապա դա հակասում է կողմերի մրցակցության/հավասարության սկզբունքի էությանը և վտանգում է դատական ակտի ապացուցողական հիմքերի «պատշաճությունը»:

Սկզբունք 30-ը ուղղակիորեն սահմանում է, որ քաղաքացիական գործով տեղեկություն չհայտնելու բոլոր հայտարարությունները գնահատվեն Ցվանեի Սկզբունքներ 3-6-ի և 10-ի տրամաբանությամբ, այսինքն՝

- սահմանափակման թուլատրելի հիմքերի նույնականացման,
- իրական և ճանաչելի վնասի հավանականության/լրջության գնահատման,
- համաչափություն և նվազագույն սահմանափակող միջոցների,
- հանրային շահի գնահատման տրամաբանությամբ, հատկապես՝ Սկզբունք 10-ով «գերակա հանրային շահ» շրջանակում (մարդու իրավունքներ, հանրային առողջություն/շրջակա միջավայր, բյուջե/վերահսկողություն և այլն):

Սկզբունք 30-ի առանցքային միտքն այն է, որ արդյունավետ դատական պաշտպանությունը և հանրության՝ տեղեկացված լինելու իրավունքը չպետք է տապալվեն գաղտնիության վկայակոչմամբ: Սկզբունքի տրամաբանությամբ՝ մարդու իրավունքների խախտման/փոխհատուցման քաղաքացիական վեճերում հանրային մարմին՝ տեղեկությունը «չհայտնելու» դիրքորոշումը պետք է անցնի ավելի խիստ ֆիլտր՝ i) արդյոք տվյալը առհասարակ կարող էր գաղտնագրվել, ii) արդյոք տվյալ գործով անհրաժեշտ չէ նվազագույն սահմանափակմամբ բացահայտում, iii) արդյոք առանց այդ տեղեկության կողմերի հավասարությունը և փաստարկների լիարժեք հետազոտումը փաստացի խաթարվում է:

Այսպիսով՝ քաղաքացիական դատավարությունը տալիս է մրցակցության հավասար պայմանների և դնփակ քննության գործիքակազմ, որը թույլ է տալիս գաղտնիության պաշտպանությունը տեղափոխել դատական վերահսկողության դաշտ և կանխել «չստուգված» ապացույցների վրա հիմնվելը:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ ամբողջությամբ:

Առաջարկություններ

- Օրենսդրորեն ամրագրել, որ ազգային անվտանգության/պետական գաղտնիքի վկայակոչման դեպքում դատարանը իրավունք ունի ամբողջությամբ ուսումնասիրելու հենց վիճարկվող նյութը փակ նիստում:
- Ամրագրել, որ դիմող կողմը պետք է ստանա նվազագույն «ոչ գաղտնի» բացատրություն՝ ինչու է մերժվում/սահմանափակվում տեղեկատվությունը, որպեսզի կարողանա արդյունավետ հակափաստարկ ներկայացնել:
- Սահմանել, որ դատաքննությունը դռնփակ դարձնելու որոշումը պետք է հրապարակվի առնվազն այն չափով, որ երևա սահմանափակման հիմքի տեսակը, նպատակը և համաչափության հիմնական տրամաբանությունը՝ առանց գաղտնի տեղեկություն բացահայտելու:
- Ամրագրել, որ դատարանը նախ պարտավոր է դիտարկել մասամբ դռնփակ վարելու, ապանձնավորման, նյութերի սահմանափակ հասանելիության կամ ժամանակավոր սահմանափակման հնարավորությունները, և միայն հետո՝ ամբողջական դռնփակությունը:

V. Անվտանգության ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններ

Սկզբունք 31. Անկախ վերահսկող մարմինների հիմնում

Պետությունները պետք է հիմնեն, եթե դեռևս չեն հիմնել, անկախ վերահսկող մարմիններ, որոնք կոչված են վերահսկելու անվտանգության ոլորտում գործող հաստատությունները, այդ թվում՝ դրանց գործունեությունը, կանոնակարգերը, քաղաքականությունը, ֆինանսները և կառավարումը. նման վերահսկող մարմինները պետք է լինեն ինստիտուցիոնալ, գործնական և ֆինանսական առումով անկախ իրենց կողմից վերահսկման ենթակա մարմիններից:

Այս սկզբունքը պահանջում է, որ պետությունը ունենա անկախ վերահսկող մարմիններ, որոնք կանոնավոր կերպով վերահսկում են անվտանգության ոլորտի հաստատությունները՝ ոչ միայն առանձին գործողություններ, այլ նաև գործունեությունը, կանոնակարգերը, քաղաքականությունը, ֆինանսները և կառավարումը: Անկախությունը պետք է լինի երեք շերտով՝ ինստիտուցիոնալ, գործառնական և ֆինանսական՝ վերահսկվող մարմիններից անկախ լինելու իմաստով:

«Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածն ամրագրում է վերահսկողության երկու առանցք՝ գերատեսչական և միջգերատեսչական վերահսկողություն: Դրանք կառուցված են գործադիր համակարգի ներսում, վերահսկվող մարմիններից ոչ անկախ: Նույն հոդվածով՝

- գաղտնիության ռեժիմի ապահովման նպատակով «սահմանվում է միջգերատեսչական և գերատեսչական վերահսկողություն»,
- միջգերատեսչական վերահսկողությունն իրականացնում է լիազոր մարմինը՝ «ստուգումների միջոցով»,
- գերատեսչական վերահսկողությունն իրականացնում են այն հանրային մարմինները, որոնք ունեն պետական գաղտնիք տնօրինելու լիազորություններ և «պարտավոր են վերահսկել գաղտնիության ռեժիմի ապահովման արդյունավետությունը»,
- լիազոր մարմնի համակարգմամբ է իրականացվում նաև գաղտնիության պահպանության և պաշտպանության աշխատանքների «համակարգումը»:

Այս կառուցվածքը կարևոր է անվտանգային ռեժիմի պահպանության համար, բայց չի բավարարում «անկախ վերահսկող մարմնի» պահանջը, քանի որ վերահսկողության առանցքային դերակատարը («լիազոր մարմին») նույն անվտանգության համակարգի բաղադրիչ է, ոչ թե դրանից ինստիտուցիոնալորեն անկախ սուբյեկտ:

Ինստիտուցիոնալ անկախություն. Գործող կարգավորումներում անվտանգության ոլորտի ներքին վերահսկողությունը կենտրոնացված է գործադիր համակարգի լիազոր մարմնի՝ Ազգային անվտանգության ծառայության և նույն համակարգի գերատեսչությունների վրա: Սա ներքին վերահսկողություն է, ոչ թե վերահսկվող մարմիններից կառուցվածքային առումով անկախ ինստիտուտ:

Գործառնական անկախություն և լիարժեք հասանելիություն. Սկզբունք 31-ի իմաստով վերահսկող մարմինը պետք է ունենա գործառնական կարողություն՝ իրական հասանելիություն անվտանգային նյութերին, որպեսզի վերահսկողությունն ունենա բովանդակային արժեք: «Պետական գաղտնիքի մասին» օրենքը ստուգումների տրամաբանությամբ լիազորություններ տալիս է ստուգող հանձնախմբերին՝ «ծանոթանալու ... բոլոր փաստաթղթերին» (հոդված 24, մաս 6): Բայց դա վերաբերում է լիազոր մարմնի և գերատեսչությունների հանձնախմբերին, ոչ թե վերահսկվող կառույցներից անկախ սուբյեկտի:

Ֆինանսական անկախություն. ՀՀ օրենսդրությամբ ֆինանսական անկախության հատուկ երաշխիք անկախ վերահսկողի համար չի ամրագրվում: Ըստ այդմ՝ Սկզբունք 31-ի տվյալ պահանջը չի ապահովվում:

Թեև ՀՀ-ում առկա են մարմիններ, որոնք ունեն մանդատ անվտանգային համակարգի կանոնակարգերի, քաղաքականությունների, ֆինանսների և կառավարման շարունակական դիտարկման համար, ինչպիսիք են Ազգային ժողովի ոլորտային մշտական հանձնաժողովները, Հաշվեքննիչ պալատը, Պետական վերահսկողական ծառայությունը, Մարդու իրավունքների պաշտպանը, սակայն անկախ մարմնի կազմավորումը պետք է դարձնել օրակարգային: Այդպիսի մարմնի արդյունավետության և դրանով լուծվող էական որոշ խնդիրների մասին խոսվել է արդեն սույն հետազոտության Սկզբունք 26-ի վերլուծության հատվածում:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ չի համապատասխանում:

Սկզբունք 32. Լիարժեք հասանելիություն լիազորություններն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությանը

ա) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինների համար պետք է օրենքով երաշխավորված կարգով հասանելի լինեն իրենց լիազորությունները կատարելու համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները: Այս հասանելիությունը՝ անկախ տվյալ տեղեկության գաղտնագրման աստիճանից կամ խորհրդապահական բնույթից, չպետք է սահմանափակվի՝ պայմանով, որ կպահպանվեն անվտանգային ողջամիտ պահանջները:

բ) Տեղեկությունը, որը պետք է հասանելի լինի վերահսկողություն իրականացնող մարմիններին, ի թիվս այլոց ներառում է հետևյալը.

i) անվտանգության ոլորտի հանրային մարմինների տրամադրության տակ առկա բոլոր գրառումները, տեխնոլոգիաները և համակարգերը՝ անկախ դրանց ձևից կամ միջոցից և այն հանգամանքից, թե արդյոք դրանք մշակվել են տվյալ հանրային մարմնի կողմից, թե ոչ.

ii) վայրեր, շենք շինություններ և

iii) այլ անձանց մոտ առկա այն տեղեկությունները, որոնք վերահսկողություն իրականացնող մարմինների կարծիքով առնչվում են իրենց վերահսկողական գործառնություններին:

գ) հանրային մարմինների աշխատակիցների՝ գաղտնիություն պահպանելու որևէ պարտավորություն չի կարող խոչընդոտել նրանց վերահսկողություն իրականացնող մարմիններին տեղեկություն տրամադրելու գործում: Նման դեպքերում տեղեկատվության տրամադրումը չպետք է համարվի որևէ օրենքի կամ նման պարտավորություններ նախատեսող որևէ պայմանագրի խախտում:

Ինչպես նշվեց վերևում՝ ԶԶ-ում առկա չէ Սկզբունքների իմաստով անկախ վերահսկող մարմին, սակայն որոշ մարմիններ այս կամ այն չափով ունեն անվտանգության կամ պաշտպանության ոլորտում տեղեկատվության հասանելիության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորություններ: Ուստի այս հատվածում Սկզբունքների համապատասխանությունը կփորձենք վերլուծել այդ մարմինների օրինակով՝ այնքանով, որքանով դրանք վերաբերելի են վերջիններին:

Սկզբունք 32-ը պահանջում է, որ անվտանգության ոլորտը վերահսկող անկախ մարմինները օրենքով երաշխավորված կարգով ունենան իրենց մանդատն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր տեղեկություններին լիարժեք հասանելիություն՝ անկախ գաղտնագրման աստիճանից կամ խորհրդապահական բնույթից, պայմանով որ պահպանվում են անվտանգության ողջամիտ պահանջները: Սա ներառում է ոչ միայն փաստաթղթերը, այլ նաև համակարգերը, շենքերը/տարածքները և վերահսկողության համար կարևոր տեղեկություն ունեցող անձանցից ստացվող տվյալները:

ԶԶ Ազգային ժողով. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը²⁵ պատգամավորի համար սահմանում է տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունքը, սակայն, միաժամանակ, սահմանում է բացառություն. պատգամավորի կողմից տեղեկությանը ծանոթանալու իրավունքը չի տարածվում այն

²⁵ «Ազգային ժողովի կանոնակարգ» ԶԶ սահմանադրական օրենք, 16.12.2016, <https://www.arlis.am/hy/acts/223080/latest>

տեղեկությունների վրա, որոնք պարունակում են պետական կամ ծառայողական գաղտնիք, կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք: Նույն հոդվածը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը նաև ամրագրում են պատգամավորական հարցման ընթացակարգային պարտավորություն՝ համապատասխան մարմնի կողմից սահմանված ժամկետում գրավոր պատասխան տրամադրելու պահանջով: Թեև սա ուժեղացնում է հաշվետվողականությունը, «պետական/ծառայողական գաղտնիքի» բացառությունը գործնականում կարող է նեղացնել Սկզբունք 32-ով ամրագրված լիարժեք հասանելիությունը, հատկապես՝ անվտանգության ոլորտի արդյունավետ մշտադիտարկման տեսանկյունից: Բացի այդ՝ «Պետական գաղտնիքի մասին» օրենքը գաղտնի տեղեկություններին առնչվելու համար կառուցում է թույլտվությունների և հասանելիության ռեժիմ՝ սահմանելով, որ գաղտնի տեղեկություններին կարող են ծանոթանալ միայն համապատասխան թույլտվություն ունեցող անձինք՝ նաև տնօրինող մարմնի ղեկավարի (կամ լիազորած անձի) թույլտվությամբ (օրենքի համապատասխան կարգավորում): Այս մոտեցումն, ըստ էության, ուժեղացնում է գաղտնիության ռեժիմի պաշտպանությունը և վերահսկող մարմինների համար կարող է ստեղծել լրացուցիչ խոչընդոտներ, երբ վերահսկողական լիազորությունը փաստացի կախվածության մեջ է դրվում թույլտվություն տրամադրող այն համակարգից, որը ենթակա է վերահսկողության:

Ազգային ժողովի կողմից վերահսկողական լիազորությունների լավագույն օրինակներին կարելի է հանդիպել միջազգային փորձի ուսումնասիրության դեպքում: Մասնավորապես, այն ցույց է տալիս, որ որոշակի արժեքից բարձր ռազմական գնումները, անկախ նրանից գնման առարկան սպառազինություն է, թե որևէ այլ բան, հաստատվում են տվյալ երկրի խորհրդարանի կամ ոլորտային հանձնաժողովի կողմից (օրինակ՝ Գերմանիա,²⁶ Նորվեգիա,²⁷ Դանիա,²⁸ Նիդերլանդներ²⁹): Սա ռազմական բյուջեների և գնումների նկատմամբ հանրային հսկողության լրացուցիչ մեխանիզմ է, ինչը շատ կարևոր է հատկապես խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում:

Հաշվեքննիչ պալատ. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի³⁰ 31-րդ հոդվածը ավելի հստակ է ձևակերպում աուդիտի գործառույթի համար անհրաժեշտ տեղեկությունների հասանելիությունը: Մասնավորապես, հաշվեքննողը կարող է պահանջել էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային շտեմարաններին հասանելիություն, փաստաթղթեր և դրանց վավերացված պատճեններ, ստանալ բանավոր և գրավոր պարզաբանումներ, մուտք գործել օբյեկտի տարածքներ, ինչպես նաև պահանջել, որ օբյեկտը երրորդ անձից ձեռք բերի և պալատ ներկայացնի անհրաժեշտ փաստաթղթեր կամ տեղեկություն:

Պետական վերահսկողական ծառայություն. «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի³¹ տրամաբանությամբ ծառայությունը վարչապետին ենթակա մարմին է և,

²⁶ Federal Ministry of Defence, Die 25-Millionen-Euro-Vorlagen, 08.04.2026, <https://www.bmvg.de/de/beschaffung-25-millionen-euro-vorlagen> (դիտված 13.04.2026):

²⁷ Roadmap for expanding production capacity in the defence industry, <https://shorturl.at/3EYLB> (դիտված 13.04.2026):

²⁸ Danish Ministry of Defence, Parliamentary and legislative material, https://www.fmn.dk/da/ministeriet/forsvarsministeren/folketings-og-lovstof?utm_source=chatgpt.com (դիտված 13.04.2026):

²⁹ Netherlands Court of Audit, The Defence Materiel Process (DMP), <https://shorturl.at/kvWsQ> (դիտված 13.04.2026):

³⁰ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, խմբ. 22.05.2024, <https://www.arlis.am/hy/acts/193805/latest>

³¹ «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենք, խմբ. 29.05.2025, <https://www.arlis.am/hy/acts/208787/latest>

հետևաբար, ինստիտուցիոնալ առումով գործադիր իշխանության մաս է: Այս պատճառով «անկախությունը» այստեղ պետք է գնահատել ոչ թե որպես գործադիրից անկախ լինելու պահանջ, այլ որպես վերահսկվող օբյեկտների նկատմամբ գործառույթային ինքնուրույնության և հասանելիության երաշխիքների առկայություն: Այդ տեսանկյունից օրենքը ծառայությանը վերապահում է վերահսկվող օբյեկտներում առկա թղթային և էլեկտրոնային շտեմարաններին ու համակարգերին անհատույց և ազատ հասանելիություն ստանալու, ինչպես նաև տեղեկություններ պահանջելու իրավասություն՝ ներառյալ պետական կամ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկությունները՝ այլ օրենքներով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ: Միաժամանակ, տեղեկատվական համակարգերին և տվյալների շտեմարաններին հասանելիության կարգը սահմանվում է վարչապետի կողմից, ինչը ցույց է տալիս, որ գործառույթային մուտքի իրականացումը մեծապես պայմանավորված է գործադիրի ներսում ձևավորվող ընթացակարգային կարգավորումներով: Այնպես, Սկզբունք 32-ի համատեքստում կարևորվում է այն պահանջը, որ նման կարգերը լինեն կանխատեսելի, համաչափ և կիրառելի բոլոր վերահսկվող մարմինների նկատմամբ՝ բացառությունների սահմանները հստակեցնելով օրենքով, ոչ թե միայն ենթաօրենսդրական մակարդակով:

Մարդու իրավունքների պաշտպան. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքը հանրային մարմինների վրա դնում է համագործակցության և տեղեկություն տրամադրելու ուղղակի պարտականություն. մասնավորապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են ՄԻՊ-ին տրամադրել իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ նյութերը, փաստաթղթերը, տվյալները, պարզաբանումները և ապահովել անհրաժեշտ աջակցություն՝ օրենքով սահմանված ձևով: Այս կառուցվածքը համապատասխանում է Սկզբունք 32-ի տրամաբանությանը, քանի որ իրավական մակարդակում ձևակերպվում է վերահսկող սուբյեկտի՝ տեղեկություն ստանալու մանդատը (վերահսկողության նպատակով): Միաժամանակ, անկախության բաղադրիչի համար կարևոր է ֆինանսական հիմքը. նույն օրենքը նախատեսում է, որ ՄԻՊ-ի գործունեության ֆինանսավորումն իրականացվում է պետությունից՝ որպես առանձին տող, և այն ամեն հաջորդ տարում չի կարող պակաս լինել, քան նախորդ տարում: Սա ևս դիտարկվում է ֆինանսական ինքնավարության նվազագույն երաշխիք:

Այսպիսով՝ ԱԺ պատգամավորների ու հանձնաժողովների մասով կան ընթացակարգային լծակներ (հարցում-պատասխան), սակայն պետական/ծառայողական գաղտնիքի բացառությունը սահմանադրական օրենքում ձևակերպված է այնպես, որ լիարժեք վերահսկողական հասանելիությունը կարող է մնալ սահմանափակ, եթե չի լրացվում հատուկ «վերահսկողական մուտքի» ռեժիմով: Թե՛ Հաշվեքննիչ պալատի, թե՛ Պետական վերահսկողական ծառայության իրավակարգավորումները հաստատում են, որ վերահսկողության արդյունավետ իրականացումը կախված է գործառույթային անհրաժեշտությամբ տեղեկատվության հասանելիության երաշխիքներից՝ ներառյալ շտեմարաններ, փաստաթղթեր և պարզաբանումներ ստանալու իրավունքը: Միաժամանակ, երկու դեպքում էլ գաղտնի տեղեկատվության հասանելիությունը կապվում է հատուկ կարգերի հետ, իսկ հատկապես վերահսկողական ծառայության համար այդ կարգերի մեծ մասը ձևավորվում է գործադիրի ներսում: Սկզբունք 32-ի տրամաբանությամբ առանցքային

Է, որ այդ հատուկ կարգերը լինեն կանխատեսելի, միասնական և բավարար չափով օրենքով ամրագրված, որպեսզի վերահսկողության մուտքը չդառնա հայեցողությունից կախված և չթուլացնի վերահսկողության արդյունքայնությունը: Մինևույն ժամանակ, «Պետական գաղտնիքի մասին» օրենքի թույլտվությունների տրամաբանությունը պահանջում է լրացուցիչ հստակեցում, որպեսզի վերահսկող մարմինների մանդատը գործի ոչ թե «թույլտվության հայեցողության», այլ օրենքով երաշխավորված հասանելիության թույլտվության կանխավարկածով՝ անվտանգության ողջամիտ պահանջների պահպանմամբ: ՄԻՊ-ի մասով առկա է ուժեղ նորմատիվ հիմք՝ «տրամադրելու պարտականությամբ» և աջակցությամբ, որը սկզբունքորեն կարող է ապահովել լիարժեք հասանելիություն վերահսկողության համար անհրաժեշտ տեղեկություններին:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 33. Տեղեկությունների հասանելիությունն ապահովելու համար անհրաժեշտ լիազորություններ, ռեսուրսներ և ընթացակարգեր

ա) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է ունենան համապատասխան իրավական լիազորություններ, որպեսզի կարողանան ձեռք բերել և մեկնաբանել ցանկացած տեղեկություն, որն անհրաժեշտ են համարում իրենց լիազորություններն իրականացնելու համար:

i) Նրանք իրենց լիազորությունների շրջանակում պետք է ունենան առնվազն հետևյալ իրավունքները. իշխանության գործադիր ճյուղի ներկա և նախկին պաշտոնյաներին, հանրային մարմինների աշխատակիցներին և կապալառուներին հարցաքննելու իրավունք, համապատասխան գրառումները պահանջելու և ուսումնասիրելու իրավունք և շենք-շինությունները զննելու իրավունք:

ii) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է նաև լիազորված լինեն այդ անձանց դատարան կանչելու և այդ գրառումները դատարան ներկայացնելու և երդմամբ կամ հանդիսավոր հայտարարությամբ հաստատված ցուցմունք ստանալու այն անձանցից, որոնք, նրանց կարծիքով, ունեն իրենց լիազորություններն իրագործելու համար անհրաժեշտ տեղեկությունները՝ անհրաժեշտության դեպքում լիարժեքորեն համագործակցելով իրավապահ մարմինների հետ:

բ) Տեղեկությունը տնօրինելիս և ցուցմունք ստանալիս վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է հաշվի առնեն, ի թիվս այլոց, մասնավոր կյանքի անձեռնմխելիության մասին համապատասխան օրենքները, ինչպես նաև ինքնամեղադրական ցուցմունք կորզելուց՝ իրավական պաշտպանության միջոցները և օրենքի պատշաճ կիրառման հետ կապված պահանջները:

գ) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինների համար պետք է հասանելի լինեն անհրաժեշտ ֆինանսական, տեխնոլոգիական և մարդկային ռեսուրսները, որոնք հնարավորություն են տալիս նրանց բացահայտել, ձեռքբերել և վերլուծել իրենց լիազորություններն արդյունավետորեն կատարելու համար անհրաժեշտ տեղեկությունները:

դ) Անվտանգության ոլորտի հանրային մարմինները պետք է օրենքով պարտավորված լինեն, ըստ անհրաժեշտության, օժանդակել վերահսկողություն իրականացնող անկախ մարմիններին իրենց լիազորությունները կատարելու համար անհրաժեշտ տեղեկություններ ձեռքբերելու և մեկնաբանելու գործում:

ե) Անվտանգության ոլորտի հանրային մարմինները պետք է օրենքով պարտավորված լինեն նախաձեռնողական կարգով և ճիշտ ժամանակին վերահսկողություն իրականացնող անկախ մարմինների համար բացահայտել որոշ կատեգորիաների տեղեկություններ, որոնք, վերահսկողների կարծիքով, անհրաժեշտ են իրենց լիազորություններն իրականացնելու համար: Նման տեղեկություններն, ի թիվս այլոց, ներառում են օրենքի և մարդու իրավունքների պաշտպանության չափանիշների հնարավոր խախտումները:

Սկզբունք 33-ի (լիազորություններ, ռեսուրսներ, ընթացակարգեր) պահանջը ՀՀ-ում կարելի է գնահատել հիմնականում ԱԺ-ի, Պետական վերահսկողական ծառայության, Հաշվեքննիչ պալատի և ՄԻՊ-ի վերահսկողական գործիքների (մշտական հանձնաժողովներ/քննիչ հանձնաժողով) իրավական մանդատների համադրությամբ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքների, «Հաշվեքննիչ պալատի մասին» և «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքների հիման վրա:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 12-րդ և 17-րդ հոդվածներով սահմանվում են մշտական և ժամանակավոր հանձնաժողովների կողմից տեղեկություններ ստանալու իրավունքը և կարգը, մասնավորապես՝

- ԱԺ մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովների հարցումները պարտադիր պատասխան տրամադրելու պահանջ են ձևավորում փաստաթղթերը/սյուլթերը տնօրինող սուբյեկտների համար:
- ԱԺ մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովը կարող է ուղարկել հարցումներ, իսկ հասցեատերը պարտավոր է սահմանված ժամկետում տրամադրել «պահանջվող տեղեկությունը, փաստաթղթերը և սյուլթերը»:
- Քննիչ հանձնաժողովի պարագայում՝ ապահովվում է նաև գաղտնի սյուլթերի հասանելիություն (օրենքով սահմանված ընթացակարգով):
- Քննիչ հանձնաժողովին տրամադրվում են նաև պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ՝ «օրենքով սահմանված կարգով», և հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն դրանց ծանոթանալ նաև տեղում (պահպանելով ռեժիմը):

ԱԺ հանձնաժողովների համար Ազգային ժողովի կանոնակարգը նույնպես սահմանում է հանձնաժողովի հարցումներին պատասխանելու պարտականություն:

Սկզբունքում մատնանշված «կանչ դատարան», «երդմամբ ցուցմունք» տիպի կոշտ հարկադրական գործիքները քննարկվող ակտում՝ որպես ստանդարտ լիազորություն, առկա չեն. հետևաբար, այստեղ կա ինստիտուցիոնալ բաց կամ լրացուցիչ կարգավորման կարիք:

Աժ հանձնաժողովների ֆինանսական և ռեսուրսային ապահովումը ընդհանուր առմամբ բխում է Ազգային ժողովի ինստիտուցիոնալ կարողություններից և բյուջետային շրջանակից: Սակայն Սկզբունք 33-ի դիտակետից խնդիրը ոչ միայն «ռեսուրսի առկայություն» է, այլ նաև դրա նպատակային հասանելիությունն ու գործառույթային ճկունությունը. պաշտպանության և անվտանգության ոլորտում վերահսկողության համար հաճախ պահանջվում են բարձր մասնագիտացված կարողություններ, որոնք չեն ձևավորվում սովորական վարչական ռեսուրսներով: Խոսքը վերաբերում է, օրինակ, տեխնիկական, կիբեռանվտանգության, կրիպտոգրաֆիկ լուծումների, հետախուզական տեխնոլոգիաների և տվյալների համակարգերի գնահատմանն ու աուդիտին, որտեղ արդյունավետ վերահսկողությունն իր բնույթով ենթադրում է արտաքին կամ առանձին ներգրավվող փորձագիտական աջակցություն, ինչպես նաև արագ ու կանխատեսելի ֆինանսական մեխանիզմներ:

Թեև Աժ մշտական հանձնաժողովներում գործում են քաղաքացիական ծառայող փորձագետներ և խորհրդատուներ, նրանց գործառույթները հաճախ կենտրոնացած են իրավաքաղաքական վերլուծության, օրենսդրական նախագծերի մշակման և ընդհանուր ոլորտային գնահատումների վրա: Նեղ տեխնիկական հմտությունները, հատկապես անվտանգության զգայուն ենթակառուցվածքների կամ հատուկ տեխնոլոգիաների գնահատման մասով, միշտ չէ, որ բավարար են կամ հասանելի շարունակական ռեժիմով: Արդյունքում, վերահսկողության խորությունը կարող է կախված դառնալ գործադիր կամ վերահսկվող մարմինների մեկնաբանություններից և «պատրաստի» տեղեկատվությունից, ինչը թուլացնում է անկախ և ապացուցահեն վերահսկողության հնարավորությունը:

Այս համատեքստում Սկզբունք 33-ին առավել համահունչ կլինի, որ Աժ ոլորտային հանձնաժողովները ունենան ա) մասնագիտացված փորձագետների ներգրավման հաստատուն և պարզ ընթացակարգ, բ) համապատասխան ֆինանսական հատկացումների օպերատիվ օգտագործման ճկունություն, և գ) անհրաժեշտության դեպքում երկարաժամկետ խորհրդատվական/փորձագիտական կարողությունների ձևավորման հնարավորություն, որպեսզի վերահսկողությունը չսահմանափակվի ընդհանուր քաղաքական կամ իրավական դիտարկումներով, այլ ընդգրկի նաև տեխնիկական և օպերացիոն մակարդակի գնահատումներ:

«Հաշվեթևիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 35-37-րդ հոդվածներով սահմանվում են վերահսկողության օբյեկտի հետ հարաբերությունները և կայուն գործունության երաշխիքները:

- Օրենքը սահմանում է ոչ միայն հաշվեթևնողի պահանջների պարտադիր լինելը, այլև հաշվեթևության օբյեկտի կոնկրետ պարտականությունները՝ տեղեկություններ տրամադրել, ապահովել հաշվեթևության գործընթացի կազմակերպական պայմանները և չխոչընդոտել հաշվեթևությանը:
- Այսպիսով՝ վերահսկողության գործիքակազմը կառուցվում է ոչ միայն «տեղեկություն պահանջելու» իրավունքի, այլ նաև վերահսկվող մարմնի ակտիվ համագործակցության պարտականության վրա, ինչը ուժեղացնում է վերահսկողության գործնական արդյունավետությունը:

- Ֆինանսական անկախության մասով օրենքը նախատեսում է, որ Հաշվեթևի պալատի գործառույթների իրականացման համար պետք է ապահովվի գործունեության նպատակի կատարումը երաշխավորող ֆինանսավորում:
- Պալատի բյուջետային հայտի վերաբերյալ կառավարության առարկությունների դեպքում այն, այնուամենայնիվ, ներկայացվում է Ազգային ժողով՝ անփոփոխ, ինչը ստեղծում է ֆինանսավորման հարցի խորհրդարանական վերահսկողության լրացուցիչ շերտ և նվազեցնում գործադիր ազդեցության ռիսկը:
- Օրենքով նախատեսված պահուստային ֆոնդի մեխանիզմը և վարձատրության մրցունակության ապահովման մոտեցումները նպաստում են ինստիտուցիոնալ կայունությանը և մասնագիտական կարողությունների պահպանմանը:

Սկզբունք 33-ի տեսանկյունից այս մոդելը ցույց է տալիս, որ վերահսկողության արդյունավետությունը պահանջում է ոչ միայն մուտքի և պահանջման լիազորություններ, այլ նաև ֆինանսական ինքնուրույնության նվազագույն երաշխիքներ, որպեսզի վերահսկող մարմինը չկախվի ընթացիկ վարչարարական կամ քաղաքական առաջնահերթություններից:

«Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածներով սահմանվում են տվյալ ծառայության իրավասությունները և տեղեկատվության հասանելիության հիմքերը:

- Օրենքում վերահսկողության գործիքակազմը հիմնականում կառուցվում է վերահսկող մարմնի՝ տեղեկություններին և նյութերին հասանելիության, դրանք պահանջելու և սահմանված ժամկետներում ստանալու լիազորությունների շուրջ:
- Այս մոտեցումը փաստացի ձևավորում է վերահսկվող մարմինների «գործընկերային պարտականության» ռեժիմ՝ վերահսկողության գործընթացում համագործակցելու, պահանջված տեղեկությունները տրամադրելու և ստուգման իրականացմանը չխոչընդոտելու տրամաբանությամբ:

Սկզբունք 33-ի համատեքստում սա կարևոր է, քանի որ լիազորությունների արդյունավետ իրականացումը կախված է ոչ միայն վերահսկող մարմնի ձևական մանդատից, այլ նաև վերահսկվող սուբյեկտների վրա դրված կատարման պարտադիր բնույթ ունեցող ընթացակարգային պարտականություններից:

Մինևույն ժամանակ, ներկայացված կարգավորումների շրջանակում վերահսկողության արդյունավետությունը շարունակում է մեծապես հիմնվել «հարցում → տրամադրում» մոդելի վրա, և առանձին հարկադրական գործիքների (օրինակ՝ ընդհանուր կիրառելի կոշտ պարտադրման մեխանիզմների) ամբողջական փաթեթը հստակ արտահայտված չէ որպես համընդհանուր կանոն:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի մի շարք հոդվածներ կարգավորում են Պաշտպանի համար տեղեկատվության հասանելիության հետ կապված հարցերը:

- Կանխարգելման ազգային մեխանիզմի մոդուլում գործնականում ամրագրված է «հարցաքննությանը մոտ» լիազորություն՝ ցանկացած համապատասխան անձի հետ առանձնազրույցներ, ինչպես նաև փաստաթղթերի ամբողջ ծավալով հասանելիություն և պատճեններ (հոդված 28):
- Ընդհանուր մանդատի մասով՝ օրենքը հստակ ամրագրում է տեղեկություններ/սյուժեր/փաստաթղթեր պահանջելու և դրանց չտրամադրելու համար պատասխանատվության տրամաբանությունը (հոդված 9):
- Պաշտպանի պահանջած սյուժերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները սահմանված ժամկետներում չտրամադրելը առաջացնում է վարչական պատասխանատվություն, ինչը փաստացի ուժեղացնում է պահանջի կատարման պարտադիր բնույթը (հոդվածներ 9 և 10):
- Պաշտպանը (կամ հատուկ լիազորված անձը) կարող է ծանոթանալ նման տեղեկություններին «օրենքով սահմանված կարգով»: Սա իրավական հիմք է, բայց նաև ենթադրում է ընթացակարգային ռեժիմ/սահմանափակումներ, որոնք կարող են ազդել լիարժեքության վրա (հոդված 24):
- Պաշտպանն ունի ազատությունից զրկման վայրեր (կանխարգելման ազգային մեխանիզմ) այցելության և փաստաթղթերի լիարժեք ծանոթացման ու պատճենների ստացման լիազորություններ (հոդված 28):

ՄԻՊ-ին փաստաթղթերի/տեղեկությունների չտրամադրումը հանգեցնում է պատասխանատվության, այսինքն՝ օրենսդրորեն առկա է «օժանդակելու» պարտավորության կիրառելի լծակ: ՄԻՊ-ի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից, և բյուջետային նախագծում նախատեսվում է ՄԻՊ-ի առանձին տող, ինչը միտված է ինստիտուցիոնալ անկախությանն ու կանխատեսելի ռեսուրսայնությանը: Արդյունքում, ՄԻՊ-ն ունի համեմատաբար ուժեղ գործիքներ:

Պետք է նշել, որ վերահսկողություն իրականացնող մարմիններին նախաձեռնողական (proactive) տեղեկացումները ՀՀ իրավական ակտերում հստակ, համակարգային պարտավորության տեսքով ակնհայտ չեն ամրագրվում. առկա են հիմնականում «հարցում→պատասխան» մոդելներ (ՄԻՊ/հանձնաժողով) և քննիչ հանձնաժողովի շրջանակում հատուկ ռեժիմ:

Ամփոփելով կարելի է ասել, որ վերահսկողական մարմինների համար Սկզբունք 33-ին առնչվող լիազորությունների հիմքն, ընդհանուր առմամբ, առկա է: Մինևույն ժամանակ, գաղտնի սյուժերի հասանելիությունը հաճախ պայմանավորված է «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված «օրենքով սահմանված կարգով» բաց հղումով: Հարկադրական լիազորությունների (օրինակ՝ երդմամբ ցուցմունք, պարտադիր ներկայություն/ծանուցման) ամբողջական փաթեթը այս իրավական ակտերում հստակ չի երևում որպես ընդհանուր կանոն: Մասնագիտացված աշխատակիցների ներուժը, հատկապես անվտանգության համակարգերի խորքային վերահսկողության և վերլուծության իրականացման տեսանկյունից, բավարար չէ և կարիք ունի հետագա զարգացման:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 34. Անկախ վերահսկող մարմինների գործունեության թափանցիկությունը

Ա. Տեղեկատվության մատչելիությունը կարգավորող օրենքների կիրառելիությունը

Հանրային մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվության մատչելիության իրավունքի իրացումը կարգավորող օրենքները պետք է կիրառվեն նաև անվտանգության ոլորտը վերահսկող մարմինների նկատմամբ:

Բ. Հաշվետվողականություն

1) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է օրենքով պարտավորված լինեն պարբերաբար պատրաստել և հրապարակել հաշվետվություններ: Այդ հաշվետվությունները պետք է ներառեն առնվազն տեղեկություններ վերահսկողություն իրականացնող տվյալ մարմնի մասին, այդ թվում՝ դրա լիազորությունները, կառուցվածքը, բյուջեն, գործողությունները և կատարողականը:

Նշում. Այդ հաշվետվությունները պետք է տեղեկություններ պարունակեն նաև անվտանգության ոլորտում գործող այնպիսի հաստատությունների լիազորությունների, կառուցվածքի, բյուջեի և ընդհանուր գործունեության մասին, որոնք ինքնուրույն նման տեղեկություններ չեն հրապարակում:

2) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է ներկայացնեն նաև թեմատիկ և հատուկ դեպքերով ուսումնասիրությունների վերաբերյալ իրենց հաշվետվությունների հրապարակային տարբերակները և տրամադրեն հնարավորինս շատ տեղեկություններ հանրային շահի, այդ թվում՝ Սկզբունք 10-ում թվարկված ոլորտների վերաբերյալ:

3) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմիններն իրենց հրապարակային հաշվետվություններում պետք է հարգեն բոլոր շահագրգիռ անձանց իրավունքները, այդ թվում՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

4) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է իրենց կողմից վերահսկողության ենթակա հաստատություններին հնարավորություն տան պատշաճ ժամկետում վերանայել հրապարակման ենթակա բոլոր հաշվետվությունները, որպեսզի նրանք կարողանան արտահայտել իրենց մտահոգությունները գաղտնի համարվող որևէ նյութ նման հաշվետվության մեջ ներառելու առնչությամբ: Նյութը հրապարակելու մասին վերջնական որոշումը կայացնում է վերահսկողություն իրականացնող մարմինը:

Գ. Տարածումը և հասանելիությունը

1) Վերահսկողություն իրականացնող մարմինների գործունեության իրավական հիմքը, այդ թվում՝ լիազորությունները և իրավասությունը, պետք է հասանելի և դյուրամատչելի լինեն հանրության համար:

2) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է մշակեն մեխանիզմներ և ստեղծեն հնարավորություններ ոչ գրաճանաչ, ազգային փոքրամասնությունների լեզուներով խոսող կամ տեսողության կամ լսողության խանգարումներ ունեցող անձանց համար, որպեսզի վերջիններիս հասանելի լինի տվյալ մարմինների աշխատանքի մասին տեղեկությունը:

3) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է ապահովեն մի շարք հանրամատչելի մեխանիզմներ, որոնց միջոցով հանրությունը, այդ թվում՝ հեռավոր բնակավայրերում գտնվող անձինք, կարողանան հեշտությամբ կապ հաստատել նրանց հետ, իսկ բողոքարկման դեպքում՝ նրանց պետք է աջակցություն ցուցաբերվի բողոքների կազմման ու արտահայտած մտահոգությունների արձանագրման հարցում:

4) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է ունենան այնպիսի արդյունավետ մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր լինի գաղտնի պահել բողոքները և դրանք ներկայացնող անձանց անունները:

Սկզբունք 34-ը վերաբերում է վերահսկող անկախ մարմինների թափանցիկությանը՝ միաժամանակ, ընդունելով, որ այդ մարմինները կարող են աշխատել նաև գաղտնի կյուբերի հետ, ուստի պետք է կառուցեն «հանրայնացում՝ առանց վնասի» գործիքներ: Ընդ որում, Սկզբունքը պահանջում է ոչ միայն հրապարակել, այլև դարձնել հասանելի՝

- իրավական հիմքերը (լիազորություններ/իրավասություն)՝ մատչելի ձևով,
- հատուկ լուծումներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց, փոքրամասնությունների լեզուներով օգտվողների, հեռավոր վայրերում գտնվողների համար:

Միաժամանակ, Սկզբունք 34-ի թափանցիկության բաղադրիչը օրենսդրության մեջ ավելի ընդհանրական ձևակերպումներ ունի և կախված է ենթաօրենսդրական կարգավորումներից կամ պրակտիկայից:

ԱԺ-ին վերաբերելի կարգավորումների տրամաբանության մեջ թափանցիկության հիմնական «գործիքներից» մեկն է օրակարգի/կյուբերի օպերատիվ հրապարակումը. օրինակ՝ նիստի օրակարգը և նախագծերը պաշտոնական կայքում տեղադրվում են սահմանված կարճ ժամկետում (օրինակ՝ 24 ժամում): Սա համապատասխանում է Սկզբունքի այն պահանջին, որ վերահսկող մարմինների գործունեության «տեսանելիությունն» ապահովվի «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով նախատեսված ընթացակարգերով:

«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում հաշվետվողականությունը կառուցված է մի քանի մակարդակով՝ հաշվեքննության արդյունքները ամփոփվում են հաշվետվություններով և եզրակացություններով, որոնք սահմանված կարգով ներկայացվում են Ազգային ժողովին, իսկ պալատը նաև տարեկան հաղորդմամբ ապահովում է ինստիտուցիոնալ հանրային հաշվետվություն (հոդված 25 և 30): Բացի այդ՝ առանձին մեխանիզմ է նախատեսվում հետագա հսկողության համար (հոդված 29)՝ առաջարկությունների կատարման վերաբերյալ միջոցառումների ծրագիր և դրա ընթացքի մասին տեղեկություն պահանջելու միջոցով, ինչը վերահսկողությունը դարձնում է ոչ միայն «բացահայտող», այլ նաև՝ «կատարողական»:

«Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքով հաշվետվության տրամաբանությունը կառուցվում է նրա շուրջ, որ ուսումնասիրությունների և մշտադիտարկումների արդյունքները ամփոփվում են տեղեկանքով և զեկուցվում/ներկայացվում են վարչապետին (հոդված 6)՝ հնարավոր դարձնելով հետագա հանձնարարականներ և դրանց կատարման վերահսկում: Սկզբունք 34-ի տեսանկյունից սա

կարևոր է, քանի որ ցույց է տալիս՝ մուտքի և լիազորությունների մեխանիզմները պետք է կապվեն արդյունքների ֆիքսման, ներկայացման և հետևանքների կանխատեսելի շղթայի հետ՝ ապահովելով վերահսկողության համակարգային ազդեցությունը, ոչ թե միայն փաստահավաքի մակարդակում մնալը:

«Մարդու իրավունքների պաշտպանի» ՀՀ սահմանադրական օրենքը (հոդված 3 և 31) սահմանում է հետևյալ կարգավորումները՝

- Օրենքով ամրագրված է հրապարակայնության/թափանցիկության սկզբունքը՝ որպես Պաշտպանի գործունեության հիմք:
- Օրենքը նախատեսում է, որ Պաշտպանի պաշտոնական կայքում հրապարակվում են որոշակի տեղեկություններ, այդ թվում՝ տարեկան հաղորդման հրապարակման շրջանակում:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է ամփոփել, որ թեև ՀՀ օրենսդրության մեջ կան թափանցիկության, հրապարակման և տեղեկատվության հասանելիության ընդհանուր օրենսդրական հիմքեր, սակայն առկա չէ դրանց հասանելիության ներառական միասնական գործիքակազմը:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 35. Անվտանգության ոլորտը վերահսկող մարմինների կողմից տնօրինվող տեղեկությունը պաշտպանելու միջոցներ

ա) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է օրենքով պարտավորված լինեն ձեռնարկել իրենց կողմից տնօրինվող տեղեկությունը պաշտպանելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները:

բ) Օրենսդիր մարմինները պետք է լիազորված լինեն՝ որոշելու, թե արդյոք i) օրենսդրական վերահսկողության իրականացնող հանձնաժողովների անդամները և ii) օրենսդիր իշխանություն չներկայացնող անկախ վերահսկողական մարմինների ղեկավարները և աշխատակիցները պետք է նախքան իրենց նշանակումն անցնեն անվտանգության ստուգում:

գ) Անհրաժեշտության դեպքում անվտանգության ստուգումը պետք է կատարվի՝ i) նախատեսված ժամանակին, ii) սահմանված սկզբունքներին համապատասխան, iii) քաղաքական կողմնակալությունից կամ դրդապատճառներից անկախ և iv) հնարավորության դեպքում՝ այնպիսի հանրային մարմնի կողմից, որը ենթակա չէ վերահսկողության այն կազմակերպության կողմից, որի անդամները կամ աշխատակիցներն անցնում են անվտանգության ստուգում:

դ) VI և VII մասերում ներկայացված Սկզբունքներին համապատասխան՝ վերահսկողություն իրականացնող անկախ մարմինների անդամները կամ աշխատակիցները, որոնք տվյալ մարմնի սովորական հաշվետվության մեխանիզմների շրջանակից դուրս բացահայտում են գաղտնագրված կամ խորհրդապահական այլ տեղեկություններ, ենթարկվում են համապատասխանաբար՝ վարչական, քաղաքացիական կամ քրեական պատասխանատվության:

Սկզբունք 35-ը պահանջում է, որ անվտանգության ոլորտը վերահսկող անկախ մարմինները օրենսդրորեն պարտավորված լինեն իրենց մոտ եղած տեղեկությունը պաշտպանել, իսկ (անհրաժեշտության դեպքում) սահմանվի անվտանգության ստուգում, ստուգման քաղաքականապես չեզոք ու համաչափ ռեժիմ՝ գաղտնագրված նյութերի հետ աշխատողների համար, և որ գաղտնագրված տեղեկություն հրապարակողները ենթարկվեն իրավական պատասխանատվության՝ համապատասխան երաշխիքներով:

ա) Պետական գաղտնիք պարունակող տեղեկություն. «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքն ամրագրում է ընդհանուր պարտավորություն՝ պետական գաղտնիքին պատահականորեն կամ չնախատեսված կարգով առնչվելու դեպքում չիրապարակել տեղեկությունը և դրա մասին հայտնել լիազոր մարմին/ոստիկանությանը, իսկ նշված պահանջի խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

բ) «Ծառայողական օգտագործման համար» (սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն). Նույն օրենքով «Ծառայողական օգտագործման համար» նշումով տեղեկության հրապարակումը/տարածումը թույլատրելի չէ՝ առանց իրավասու պաշտոնատար անձի թույլտվության, և խախտման համար նախատեսվում է կարգապահական պատասխանատվություն:

գ) ԱԺ-ի/ԱԺ հանձնաժողովների փակ ռեժիմ. «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքը նախատեսում է դռնփակ նիստի հնարավորությունը և դրա որոշման ընդունման կարգը (նիստի ռեժիմի վերահսկելի պրոցեդուրա), ինչը գործիք է գաղտնագրված/զգայուն տեղեկության հրապարակային արտահոսքը կանխելու համար:

Անվտանգության ստուգման տրամաբանությունը հիմնականում կարգավորվում է պետական գաղտնիքին առնչվելու թույլտվության ռեժիմի հետ՝ ստուգողական միջոցառումների և պարտավորագրերի ստորագրման միջոցով: Սակայն խորհրդարանական վերահսկողության մասով կա նաև հակակշիռ. պատգամավորն ունի տեղեկություններ ստանալու իրավունք, բայց բացառությամբ այն պետական գաղտնիքի, որի հետ ծանոթանալու լիազորություն չունի: Այսինքն՝ օրենսդրական մակարդակում «մուտքի» հարցը ճանաչված է, բայց միատեսակ և հատուկ «անվտանգային անցագրերի» ռեժիմը հենց վերահսկողության դերակատարների համար (հանձնաժողովների աշխատակազմ, ներգրավվող խորհրդատուներ/փորձագետներ, երբեմն նաև պատգամավորներ՝ ըստ նյութի) հավասարեցված է այլ գերատեսչությունների աշխատակիցներին տրամադրվող թույլտվություններին:

դ) ՄԻՊ-ի գործառնության գաղտնիություն. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով ամրագրվում է, որ ՄԻՊ-ը չի հրապարակում ստացված դիմումները և դրանց քննության ընթացքում ձեռք բերված նյութերը՝ առանց դիմողի գրավոր համաձայնության (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), և նաև նախատեսվում է հատուկ պաշտպանություն/սահմանափակում՝ ՄԻՊ-ին այդ նյութերի վերաբերյալ հարցաքննելու/պահանջ ներկայացնելու համատեքստում: Սա գործնականում ձևավորում է տեղեկատվության պաշտպանության իրավական «բազիս» հենց վերահսկող մարմնի ներսում:

«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում այս սկզբունքի պահանջներն արտահայտվում են երկու մակարդակով՝ ա) գաղտնի տեղեկատվությանը ծանոթանալու թույլատրելիությունը կապվում է օրենքով սահմանված կարգի հետ, և բ) սահմանվում է պատասխանատվություն նման տվյալների հրապարակման կամ ոչ նպատակային օգտագործման համար (հոդված 31 և 36):

«Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքում ևս տեղեկությունների հավաքագրումն ու մշակումը պայմանավորվում է անձնական տվյալների պաշտպանության պահանջներով և այլ օրենքներով սահմանված առանձնահատկություններով՝ միաժամանակ, ամրագրելով, որ լիազորությունների իրականացումը խոչընդոտելը առաջացնում է պատասխանատվություն, ինչը Սկզբունք 35-ի համատեքստում լրացնում է վերահսկողության իրավական երաշխիքների բաղադրիչը:

Պետական գաղտնիքի պահանջների խախտումը բերում է օրենքով նախատեսված պատասխանատվության: Նման մոտեցում կա նաև «ծառայողական օգտագործման համար» ռեժիմով տեղեկությունների դեպքում. այդպիսի տեղեկության հրապարակման կամ շրջանառության կանոնների խախտման համար առնվազն կարգապահական պատասխանատվություն է նախատեսվում: Իսկ պատասխանատվության կոնկրետ տեսակներն ու այն արարքները, որոնց համար պատասխանատվություն է առաջանում, ավելի մանրամասն կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով և Քրեական օրենսգրքով:

Թեև, ընդհանուր առմամբ, Սկզբունքն արտացոլված է ՀՀ իրավական համակարգում, սակայն միայն այն փաստը, որ պետական համապատասխան մարմինների աշխատակիցները, ինչպես նաև պատգամավորները ընտրողաբար են ստանում հասանելիություն կազմակերպված տվյալներին, ունի որոշակի խնդրահարույց տարրեր:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 36. Օրենսդիր մարմնի՝ տեղեկությունները հրապարակելու իրավազորությունը

Օրենսդիր մարմինը պետք է լիազորված լինի հրապարակելու ցանկացած տեղեկություն, այդ թվում՝ գործադիր ճյուղի մարմինների կողմից ազգային անվտանգության հիմքով գաղտնի համարվող տեղեկություն, եթե իր սահմանած ընթացակարգերին համապատասխան ճիշտ է համարում նման տեղեկության հրապարակումը:

Սկզբունք 36-ը պահանջում է, որ օրենսդիր մարմինը իր սահմանած ընթացակարգերով կարողանա հրապարակել նաև գործադիր կողմից ազգային անվտանգության հիմքով գաղտնագրված տեղեկություն, եթե դա ճիշտ է համարում:

Ազգային ժողովի կանոնակարգը պատգամավորին տալիս է տեղեկություն ստանալու լայն գործիքակազմ, սակայն պետական գաղտնիք պարունակող տվյալների մասով սահմանում է

սահմանափակում՝ այն տրամաբանությամբ, որ նման տեղեկությունները հասանելի են միայն իրավական կարգով թույլատրելի շրջանակում: Կանոնակարգում հրապարակայնությունը ամրագրված է որպես ընդհանուր ուղղություն, բայց, մինևույն ժամանակ, ամրագրվում է, որ հրապարակման ենթակա ակտերի/սյուբերի մասով բացառվում են պետական կամ այլ գաղտնիք պարունակող դեպքերը: Այսինքն՝ Կանոնակարգի տեքստում ինքնին կա «հրապարակել, բայց ոչ գաղտնիքը» տրամաբանություն, որը սահմանափակում է «ցանկացած տեղեկություն հրապարակելու» ընդհանուր լիազորության գաղափարը:

Կանոնակարգը նախատեսում է դռնփակ քննարկումների/սխտերի ինստիտուտ, որի տրամաբանությունը հենց այն է, որ որոշ սյուբեր կարող են քննարկվել՝ առանց հանրային հասանելիության կամ լիարժեք հրապարակայնացման: Սա կարևոր է Սկզբունք 36-ի տեսանկյունից, քանի որ ցույց է տալիս, որ ԱԺ-ն ունի ընթացակարգային գործիք գաղտնի բաղադրիչը կառավարելու դռնփակ ձևաչափով, սակայն դա դեռ չի նշանակում «գաղտնագրված տեղեկությունը հրապարակելու» լիազորության հաստատում:

Սկզբունք 36-ի եռությունն այն է, որ օրենսդիրը հնարավորություն ունենա ոչ միայն ստանալու և քննարկելու համապատասխան տեղեկությունը, այլ նաև կարողանա հրապարակել այն, եթե իր ընթացակարգերով այդպես է որոշել, անգամ եթե գործադիրը այն գաղտնագրել է ազգային անվտանգության հիմքով: ԱԺ կանոնակարգում, ավելի շուտ, ամրագրված է հակառակ կառուցվածքը.

- հրապարակայնությունը ընդհանուր կանոն է, բայց
- պետական (կամ այլ) գաղտնիք պարունակող սյուբերը դուրս են մնում հրապարակման սովորական ռեժիմից,
- իսկ դռնփակ ընթացակարգերը ծառայում են ոչ թե «գաղտնիքը հրապարակելու», այլ «քննարկելու՝ չհրապարակելով» տրամաբանությանը:

Այստեղից հետևում է, որ Կանոնակարգով հստակ և անմիջական ձևակերպմամբ չի ամրագրվում այնպիսի լիազորություն, որով ԱԺ-ն կարող է, իր ընթացակարգով, հրապարակել գործադիրի կողմից «պետական գաղտնիք» որակված տեղեկությունը՝ պարզապես «ճիշտ համարելու» հիմքով: Մինչդեռ, ԱԺ կանոնակարգը կառուցում է հրապարակայնության ռեժիմ՝ գաղտնիքի բացառությամբ: Այս ինդիքին, թերևս, անհրաժեշտ է անդրադառնալ նախատեսվող սահմանադրական բարեփոխումների շրջանակում:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ չի համապատասխանում:

Առաջարկություններ

- Սահմանել մասնագիտացված անկախ վերահսկող մարմին անվտանգության ոլորտի համար՝ առանձին օրենքով ամրագրելով ինստիտուցիոնալ անկախությունը (նշանակման/ազատման կարգ, մանդատ, հաշվետվողականություն), գործառնական անկախությունը (ստուգումների պլանավորում, գործի նախաձեռնություն) և ֆինանսական անկախությունը (բյուջետային առանձին տող, նվազագույն շեմ/կայունություն):

- Նոր անկախ վերահսկող մարմինը նախագծել այնպես, որ այն չկրկնի ԱԺ/ՄԻՊ/Պետական վերահսկողական ծառայության/Հաշվեքննիչ պալատի ընդհանուր մանդատները, այլ փակի «անվտանգային վերահսկողության» ինստիտուցիոնալ բացը՝ իրավունքի ապահովման և հանրային հաշվետվողականության տրամաբանությամբ:
- Օրենքով երաշխավորել վերահսկողների՝ գաղտնի տվյալներին հասանելիության իրավունքը:
- Ամրագրել, որ պետական ծառայողի/աշխատակցի գաղտնիության պարտավորությունը չի կարող որպես հիմնավորում ծառայել վերահսկողին տեղեկություն չտրամադրելու համար, և նման տրամադրումը չի դիտվում որպես իրավախախտում, եթե կատարվում է վերահսկողական գործառույթների շրջանակներում՝ օրենքով սահմանված ընթացակարգով:
- Երաշխավորել վերահսկող մարմինների լիարժեք հասանելիություն համակարգերին և տարածքներին՝ օրենքով ամրագրելով, որ վերահսկող մարմինները կարող են ստուգել ոչ միայն թղթային փաստաթղթեր, այլ նաև SS համակարգեր, կապի միջոցներ, ինչպես նաև համապատասխան վայրեր/շենքեր՝ իրենց ոլորտներում վերահսկողության նպատակով (անվտանգության միջոցներով):
- Այն դեպքերում, երբ տեղեկատվության հասանելիությունը պահանջում է թույլտվություն, սահմանել, որ դա վերահսկող մարմին տրամադրվում է ոչ թե տեղեկությունը տիրապետող մարմնի հայեցողությամբ, այլ օրենքով սահմանված հիմքերով:
- Օրենսդրորեն ամրագրել փաստաթղթերի պարտադիր ներկայացման, և անհրաժեշտության դեպքում՝ ցուցմունք/պարզաբանումների ստացման ձևաչափ (այդ թվում՝ պատասխանատվությամբ), որպեսզի վերահսկողությունը չմնա «կամավոր համագործակցության» մակարդակում և ապահովվի վերահսկողության արդյունավետությունը:
- Վերահսկող մարմիններն ապահովել մասնագիտացված ռեսուրսներով՝ ամրագրելով տեխնիկական/թվային փորձաքննության կարողություն (կիբերանվտանգություն, տվյալների վերլուծություն, կրիպտո, գնումների աուդիտ), ներառյալ՝ արտաքին փորձագետների ներգրավման ճկուն մեխանիզմ գաղտնիության ռեժիմով:
- Օրենքով սահմանել, որ որոշակի կատեգորիայի դեպքերի (օրինակ՝ մարդու իրավունքների հնարավոր խախտումներ, ուժի կիրառման միջադեպեր, զանգվածային տվյալների մշակում, արտահոսքեր) մասին անվտանգության ոլորտում պատասխանատու մարմինները պարտավոր են ինքնուրույն և ժամանակին տեղեկացնել վերահսկողներին:
- Օրենքով ամրագրել, որ անվտանգության մարմինները պարտավոր են աջակցել վերահսկողին տեղեկությունը «ձեռք բերելու և մեկնաբանելու» գործում (տեխնիկական ընթերցումներ, տվյալների արտահանում, բացատրություններ), այլ ոչ միայն հանձնել նյութը՝ առանց գործնական օգտագործելիության:

- Օրենքով սահմանել վերահսկող մարմինների՝ հաշվետվություններ ներկայացնելու պահանջը և դրանցում պարտադիր ներառվող տեղեկությունների նվազագույն ցանկը:
- Վերահսկող մարմնի համար սահմանել պարտադիր նվազագույն պահանջներ՝ հասանելիության կառավարում, աշխատակիցների ռեժիմ, թվային անվտանգություն, արտահոսքի արձագանքման կարգ, որպեսզի վերահսկող մարմնի մոտ կուտակված նյութերը չդառնան խոցելի:
- Ամրագրել վերահսկող մարմնի աշխատակիցների և ղեկավար կազմի անվտանգության ստուգման չափորոշիչները:
- Սահմանել, որ որոշ արժեքից բարձր կամ որոշ ռիսկայնության մակարդակի գաղտնի գնումները ենթակա լինեն նախնական կամ հետագա խորհրդարանական փակ վերահսկողության (օրինակ՝ համապատասխան հանձնաժողովի հատուկ կարգով քննության):
- Աժ-ի համար օրենսդրորեն սահմանել հատուկ ընթացակարգ՝ պատգամավորների կողմից ընդունված որոշման հիման վրա հանրային կարևորություն ներկայացնող գաղտնագրված տեղեկությունը հրապարակելու համար:
- Սահմանել հրապարակման չափորոշիչներ՝ օրենքով ամրագրելով, որ տեղեկությունը կարող է Աժ կողմից հրապարակվել, երբ առկա է գերակա հանրային շահ, վնասը բավարար չի հիմնավորվում կամ նվազեցվում է հրապարակման ենթակա տեղեկությունների խմբագրմամբ, հրապարակումը անհրաժեշտ է օրինականության/հաշվետվողականության ապահովման համար (հատկապես՝ մարդու իրավունքների խախտումների, կոռուպցիոն ռիսկերի, հանրային մեծ վնասի դեպքերում):

VI. Հանրային մարմինների աշխատակիցների կողմից հանրային շահ ներկայացնող տեղեկությունների բացահայտումը

Սկզբունք 37. Իրավախախտումների կատեգորիաները

Հանրային մարմինների կողմից, անկախ գաղտնագրման հանգամանքից, այնպիսի տեղեկությունների բացահայտումը, որոնք վերաբերում են ստորև նշված կատեգորիաներին պատկանող իրավախախտումներին, պետք է համարվի «պաշտպանվող բացահայտում» (protected disclosure), եթե այն համապատասխանում է Սկզբունքներ 38-40-ում ներկայացված պայմաններին: «Պաշտպանվող բացահայտումը» կարող է վերաբերել արդեն կատարված, ներկայումս կատարվող կամ ապագայում հավանաբար կատարվելիք իրավախախտումների մասին տեղեկություններին:

- ա) քրեական հանցագործություններ,
- բ) մարդու իրավունքների խախտումներ,
- գ) միջազգային մարդասիրական իրավունքի խախտումներ,
- դ) կոռուպցիա (կաշառակերություն),
- ե) հանրային առողջությանը և անվտանգությանը սպառնացող վտանգ,
- զ) շրջակա միջավայրին սպառնացող վտանգ,
- է) պաշտոնական դիրքի չարաշահում,
- ը) դատական սխալներ,
- թ) ռեսուրսների սխալ կառավարում կամ վատնում,
- ժ) պատիժ՝ վերը թվարկված կատեգորիաներից որևէ մեկին դասվող իրավախախտումների մասին տեղեկություններ բացահայտելու համար, և
- ի) վերը թվարկված կատեգորիաներին պատկանող որևէ տեղեկություն դիտավորյալ թաքցնելը:

Սկզբունք 37-ը վերաբերում է այն դեպքերին, երբ հանրային մարմնից «դուրս է գալիս» տեղեկություն՝ բարձր հանրային շահի վերաբերող իրավախախտումների մասին, և այդպիսի հրապարակումը պետք է դիտվի որպես «պաշտպանվող բացահայտում» (protected disclosure), որ որոշ պայմանների պահպանման դեպքում չի առաջացնում իրավական պատասխանատվություն: Սկզբունքի կարևոր առանձնահատկությունն այն է, որ այս պաշտպանությունը կապվում է ոչ միայն տեղեկության բովանդակության հետ, այլ նաև այն հանգամանքի հետ, որ տեղեկությունը կարող է վերաբերել արդեն կատարված, ընթացիկ կամ հավանական ապագա իրավախախտումներին: Ընդ որում, սկզբունքը հատուկ ընդգծում է, որ խոսքը կարող է լինել նաև այնպիսի տեղեկությունների մասին, որոնք գաղտնագրված են՝ պայմանով, որ պահպանված են Սկզբունքներ 38–40-ում նախատեսված պահանջները:

Այսպիսով՝ Սկզբունք 37-ի հիմքում ընկած է հետևյալ գաղափարը. գաղտնի լինելու հանգամանքը ինքնին չպետք է ավտոմատ բացառի հանրային բարձր շահ ունեցող որոշ բացահայտումների պաշտպանությունը: Սակայն այս գաղափարը տարբեր իրավակարգերում կարող է արտահայտվել տարբեր մեխանիզմներով, օրինակ՝ ընդհանուր «իմունիտետով», կամ ավելի նեղ՝ հատուկ ընթացակարգով պաշտպանվող հաղորդման միջոցով:

ՀՀ օրենսդրության մեջ Սկզբունք 37-ի գաղափարին ամենամոտը «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներն են, որոնցով նախատեսվում է հանրային շահին ուղղված վնասների կամ դրանց սպառնալիքների մասին հաղորդումների ներկայացման և ազդարարող անձանց պաշտպանության համակարգ: Այս օրենքի կարևոր առանձնահատկությունն այն է, որ ազդարարման առարկան ձևակերպված է բավական լայն: Այն ներառում է ոչ միայն կոռուպցիոն դեպքերը, շահերի բախումը, անհամատեղելիությունը, վարքագծի կանոնների խախտումները կամ հայտարարագրման հետ կապված հարցերը, այլ նաև «հանրային շահերին ուղղված այլ վնաս կամ դրանց սպառնալիք» կատեգորիան: Այս լայն ձևակերպումը գործնականում կարող է ներառել Սկզբունք 37-ում նշված մի շարք իրավախախտումների խմբեր, օրինակ՝ ռեսուրսների վատնումը, հանրային առողջությանն ու անվտանգությանը սպառնացող իրավիճակները, ինչպես նաև շրջակա միջավայրին սպառնացող վնասները: Օրենքը նաև նախատեսում է հաղորդման տարբեր ուղիներ՝ ներքին, արտաքին, և որոշ պայմանների դեպքում՝ հանրությանը ազդարարում: Սա կարևոր է, որովհետև Սկզբունք 37-ում «բացահայտումը» չի սահմանափակվում միայն մեկ ձևով, իսկ

ՀՀ իրավակարգում այդ բազմազանությունը ձևակերպվում է ինստիտուցիոնալ և ընթացակարգային տեսքով:

Առավել նշանակալի նորմը, որը մոտեցնում է ՀՀ կարգավորումները Սկզբունք 37-ին, ազդարարի պաշտպանության մասին դրույթն է. ազդարարը չի կարող ենթարկվել պատասխանատվության ազդարարման համար, եթե նրա արարքը չի պարունակում հանցակազմ: Սա, ըստ էության, ձևավորում է պաշտպանված հաղորդման ռեժիմ: Մինևույն ժամանակ, այդ պաշտպանությունը բացարձակ չէ և կապված է որոշ պայմանների հետ, մասնավորապես՝ բարեխղճության չափանիշի, ողջամիտ հիմքերի, տեղեկության ճշմարտացիության նկատմամբ համոզմունքի և նախնական ստուգման ողջամիտ ջանքերի: Այս մոտեցումը կառուցվածքով համահունչ է Սկզբունք 37-ի տրամաբանությանը, քանի որ վերջինս ևս պաշտպանությունը կապում է լրացուցիչ պայմանների հետ (Սկզբունքներ 38–40): Այնուամենայնիվ, այստեղ կարևոր տարբերություն կա. ՀՀ օրենսդրությունը Սկզբունք 37-ի գաղափարը հիմնականում տեղայնացնում է ոչ թե որպես ընդհանուր «անպատժելի բացահայտում», այլ որպես պաշտպանված հաղորդում հատուկ ընթացակարգով (ներքին/արտաքին/հանրային ազդարարում), որն ուղեկցվում է ժամկետներով, գաղտնիության և անանունության երաշխիքներով:

Սկզբունք 37-ը ՀՀ իրավակարգի հետ համադրելու տեսանկյունից ամենաբարդ խնդիրը վերաբերում է պետական գաղտնիքին: Եթե սկզբունքը թույլ է տալիս քննարկել «գաղտնի լինելու հանգամանքից անկախ» պաշտպանվող բացահայտման հնարավորությունը, ապա «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը կառուցված է հակառակ՝ գաղտնի տեղեկությունների պահպանության և չտարածման պարտականության տրամաբանությամբ: Այս օրենքում պետական գաղտնիքի «տարածում» հասկացությունը ներառում է նաև հրապարակումը, իսկ գաղտնիության ռեժիմը ներկայացվում է որպես միջոցառումների ամբողջություն, որի նպատակը հրապարակման և կորուստի կանխումն է: Այսինքն՝ այստեղ օրենսդրական ճարտարապետությունը միտված է ոչ թե բացահայտումների պաշտպանությանը, այլ գաղտնիության ռեժիմի պահպանմանը:

Ավելին, օրենքը հատուկ պարտականություն է սահմանում նաև այն դեպքերի համար, երբ անձը պետական գաղտնիք պարունակող տեղեկության հետ առնչվում է պատահաբար. այդ դեպքում նա պարտավոր է տեղեկությունը չհրապարակել և դրա մասին հայտնել լիազոր մարմնին կամ ոստիկանությանը: Այս նորմը կառուցվածքային առումով հակադիր է Սկզբունք 37-ի այն լայն թեզին, ըստ որի՝ որոշ դեպքերում նույնիսկ գաղտնագրված տեղեկության բացահայտումը կարող է պաշտպանված լինել: Միաժամանակ, նույն օրենքում կա կարևոր հակակշիռ. այն արգելում է պետական գաղտնիքի շարքին դասել որոշ բարձր հանրային կարևորության տեղեկություններ, այդ թվում՝ մարդկանց անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների և դրանց հետևանքների մասին տեղեկությունները, ինչպես նաև տնտեսության ընդհանուր վիճակը, առողջապահության, շրջակա միջավայրի և մի շարք այլ ոլորտների իրական վիճակը ներկայացնող տվյալները: Այս սահմանափակումները կարևոր են Սկզբունք 37-ի (հատկապես՝ հանրային առողջության, անվտանգության և շրջակա միջավայրի վտանգների) տրամաբանության տեսանկյունից, քանի որ նվազեցնում են այն հավանականությունը, որ նման տեղեկությունները սկզբունքորեն կհայտնվեն պետական գաղտնիքի ռեժիմի ներքո:

Այսպիսով՝ ԶԶ-ում պետական գաղտնիքի ռեժիմը ինքնին չի ստեղծում «պաշտպանվող բացահայտման» ինստիտուտ, բայց որոշ բարձր հանրային կարևորության տեղեկությունների գաղտնագրման արգելքի միջոցով մասամբ նվազեցնում է նույն խնդրի սրությունը:

Սկզբունք 37-ի տեսանկյունից «Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքը գործում է այլ հարթության վրա: Այն չի կարգավորում ազդարարների պաշտպանությունը և չի ստեղծում «պաշտպանվող բացահայտում» ինստիտուտ, բայց կարևոր է նրանով, որ պետական մարմիններին թույլ չի տալիս բարձր հանրային շահ ունեցող տեղեկությունները պարզապես «լռությամբ փակել»: Այս օրենքի տրամաբանությամբ տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը պետք է լինեն սահմանափակ և իրավաչափ, մերժումը պետք է հիմնավորվի օրենքով, և եթե պահանջվող տեղեկության միայն մի մասն է ենթակա սահմանափակման, ապա պետք է տրամադրվի մնացած մասը (մասնակի տրամադրում): Այդ իմաստով Օրենքը ստեղծում է լրացուցիչ երաշխիքային շերտ, որպեսզի հանրային շահի տեսանկյունից կարևոր տեղեկությունները ամբողջությամբ դուրս չմնան հանրային վերահսկողությունից, նույնիսկ եթե դրանց որոշ հատվածներ իրավաչափորեն սահմանափակվում են: Ուստի, եթե «Ազդարարման համակարգի մասին» օրենքը Սկզբունք 37-ի տրամաբանությանը մոտենում է պաշտպանվող հաղորդման միջոցով, ապա «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը նույն տրամաբանությանը մոտենում է մատչելիության, հիմնավորված մերժման և մասնակի բացահայտման մեխանիզմներով:

Ընդհանուր առմամբ, ԶԶ օրենսդրությունը Սկզբունք 37-ին համապատասխանում է այն մասով, որը վերաբերում է հանրային շահին ուղղված վնասներին կամ դրանց սպառնալիքներին (մասնավորապես՝ կոռուպցիա, ռեսուրսների վատնում, հանրային առողջություն և անվտանգություն, շրջակա միջավայր): Այս հատվածը հարաբերականորեն լավ է արտացոլված «Ազդարարման համակարգի մասին» օրենքով, որը նախատեսում է հաղորդման տարբեր ուղիներ և պատասխանատվությունից պաշտպանության տրամաբանություն՝ պայմանավորված ազդարարի բարեխղճությամբ և սահմանված այլ պահանջներով: Սակայն առկա է թերի համապատասխանություն Սկզբունք 37-ի այն թեզին, ըստ որի՝ «գաղտնի լինելու հանգամանքից անկախ» որոշ բացահայտումներ կարող են լինել պատասխանատվություն չառաջացնող:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 38. Իրավախախտումների մասին տեղեկության բացահայտումների հիմքերը, դրդապատճառները և ապացույցները

ա) Իրավախախտումների մասին տեղեկությունը բացահայտող հանրային մարմինների աշխատակիցները, Սկզբունք 41-ի համաձայն, պետք է օրենքով պաշտպանված լինեն պատժից՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ տեղեկությունը գաղտնագրված է, թե այլ առումով խորհրդապահական բնույթի՝ պայմանով, որ այն բացահայտելու պահին

i) իրավախախտման մասին վկայող տեղեկությունը բացահայտած անձը ողջամիտ հիմքեր է ունեցել կարծելու, որ տվյալ տեղեկությունը դասվում է Սկզբունք 37-ով նշված կատեգորիաներից որևէ մեկին, և

ii) տեղեկության բացահայտումը կատարվում է Սկզբունքներ 38-40-ում նախատեսված պայմաններին համապատասխան:

բ) «Պաշտպանվող բացահայտման» պարագայում դրդապատճառը նշանակություն չունի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ապացուցվում է, որ դիտավորյալ բացահայտվել են ոչ ճիշտ տեղեկություններ:

գ) «Պաշտպանվող բացահայտում» անող անձը պարտավոր չէ ներկայացնել որևէ օժանդակող փաստարկ կամ կրել տվյալ տեղեկության հետ կապված ապացույց ներկայացնելու պարտավորությունը:

Սկզբունք 38-ը «իրավական պատասխանատվություն չառաջացնող» բացահայտման պաշտպանությունը պայմանավորում է երեք առանցքով՝ 1) ողջամիտ հիմքեր, 2) ընթացակարգային համապատասխանություն, 3) դրդապատճառի ոչ կարևոր լինելը (բացառությամբ դիտավորյալ կեղծիքի) և հավելում է, որ ապացույց ներկայացնելու բեռը չպետք է դրվի բացահայտողի վրա:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն ազդարարը չի կարող ենթարկվել որևէ պատասխանատվության ազդարարման համար՝ բացառությամբ եթե արարքը պարունակում է հանցակազմ (հոդված 10, մաս 3.3), ինչը համահունչ է Սկզբունք 38-ի ընդհանուր նպատակին՝ ապահովելու «պատժից պաշտպանությունը» ազդարարման արարքի համար: Միաժամանակ, «Պետական գաղտնիքի մասին» օրենքը հաստատում է չիրապարակելու պարտավորություն՝ նաև տեղեկատվությունը պատահական իմանալու դեպքում (հոդված 28, մաս 1), ինչը ցույց է տալիս, որ «գաղտնիքի» պարագայում անվտանգ ճանապարհը պետք է լինի ոչ թե հանրային իրապարակումը, այլ իրավաչափ ալիքներով հաղորդումը: Այդ տրամաբանության գործնական լուծումը տալիս է հենց «Ազդարարման համակարգի մասին» օրենքը, քանի որ այն նախատեսում է հաղորդման իրավաչափ ուղիներ (ներքին, արտաքին, իսկ որոշ պայմաններում՝ նաև հանրությանը), ինչպես նաև ազդարարի պաշտպանության երաշխիքներ՝ պայմանավորված օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ: Այս մեխանիզմի շնորհիվ հանրային շահ ունեցող խախտումների մասին տեղեկությունը կարող է փոխանցվել իրավասու հասցեատերերին՝ առանց «Պետական գաղտնիքի մասին» օրենքով արգելված ազատ/ինքնակամ տարածման ձևի, այսինքն՝ հանրային շահի բացահայտման նպատակը փորձ է արվում իրացնել ոչ թե գաղտնիության ռեժիմը անտեսելով, այլ իրավաչափ հաղորդման ընթացակարգով:

Կարծում ենք, որ Սկզբունք 38-ի «անկախ գաղտնիությունից» թեզը ՀՀ-ում իրագործելի է հիմնականում այն չափով, որքանով բացահայտումն արվում է որպես ազդարարում՝ սահմանված ընթացակարգով և բարեխղճությամբ:

Սկզբունք 38-ի «ողջամիտ հիմքեր» չափանիշը ՀՀ օրենսդրությամբ գրեթե բառացիորեն ներդրված է «բարեխղճության» սահմանմամբ: «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ազդարարը համարվում է բարեխղճորեն գործող, եթե ազդարարելու պահին ունի կասկածի ողջամիտ հիմքեր, իր համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է, և եթե նախքան ազդարարումը իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունն ու ամբողջականությունը (հոդված 13): Ընթացակարգային համապատասխանությունը ՀՀ-ում արտահայտվում է ազդարարման տեսակների և վարույթի պարտադիր քայլերով՝ հաղորդման հաշվառում, վարույթի հարուցում, գաղտնիության ապահովում, իսկության ստուգում, անհրաժեշտության դեպքում՝ դատախազությանը անհապաղ հաղորդում: Այսինքն՝ Սկզբունք 38-ի «պայմանների պահպանումը» ՀՀ-ում կյուրականացվում է ոչ թե ազդարարի ապացույցների փաթեթով, այլ համապատասխան կարգով հաղորդելու և բարեխղճության շեմը պահելու միջոցով:

Դրդապատճառը ոչ էական լինելու հիմքը համահունչ է ազդարարման օրենքի կառուցվածքին, որտեղ հիմնական ռիսկը «մոտիվացիան» չէ, այլ անբարեխղճությունը/կեղծ տեղեկությունը: «Ազդարարման համակարգի մասին» օրենքն ունի ազդարարին պաշտպանությունից զրկելու տրամաբանություն, եթե ազդարարը գործել է անբարեխղճորեն: «Անբարեխղճորեն» գործելը ներառում է, ի թիվս այլոց, այլ անձի վնաս պատճառելու նպատակով դիտավորությամբ կեղծ տեղեկություններ հաղորդելը (հոդված 13): Սա գործնականում նույնն է, ինչ Սկզբունք 38-ի բացառությունը՝ դիտավորությամբ կեղծիքը: Այսպիսով՝ ՀՀ օրենսդրությամբ շարժառիթը ինքնին իրավաչափության չափանիշ չէ. չափանիշն է՝ բարեխղճությունը և կեղծիքի բացակայությունը:

Սկզբունք 38-ը սահմանում է, որ բացահայտողը պարտավոր չէ լրացուցիչ փաստարկներ ներկայացնել և չպետք է կրի ապացուցման բեռը: ՀՀ-ում սա մասնակիորեն է ապահովվում: Ազդարարման վարույթում մարմինը պարտավոր է ձեռնարկել միջոցներ հաղորդման իսկությունն ստուգելու նպատակով (հոդված 6, 7, 9.2): Սակայն նույն օրենքը «բարեխղճության» շրջանակում ազդարարից ակնկալում է, որ նա իր հնարավորությունների սահմաններում նախնական ստուգման քայլեր ձեռնարկած լինի (հոդված 13): Գտնում ենք, որ անբարեխղճության կամ դիտավորությամբ կեղծ լինելու հանգամանքը պետք է ապացուցի իրավասու մարմինը, իսկ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված «ողջամիտ հիմքի» գնահատումը պետք է կատարվի ազդարարման պահին հասանելի տեղեկությունների հիման վրա:

Այսպիսով՝ ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է Սկզբունք 38-ին այն մասով, որ կա պատասխանատվությունից պաշտպանության հիմք, կա «ողջամիտ հիմքերի» և բարեխղճության շեմ, և կա դիտավորությամբ կեղծիքի բացառություն/պաշտպանության դադարեցում: Սակայն, Սկզբունք 38-ի հիման վրա, թեև ստուգումը դրված է մարմնի վրա, օրենքը ազդարարից պահանջում է նվազագույն նախնական աշխատանք, ուստի «ապացույցի բեռը ամբողջովին զրոյացնելու» պահանջը լիարժեքորեն չի արտացոլվում:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 39. Ներքին կամ վերահսկող մարմիններին «պաշտպանվող բացահայտում» անելու և դրանց արձագանքելու ընթացակարգերը

Ա. Ներքին բացահայտումներ

Հանրային մարմինները պետք է օրենքով պարտավորված լինեն սահմանել «պաշտպանվող բացահայտում» անելու ներքին ընթացակարգեր և նշանակել նման տեղեկությունը ստացող անձանց:

Բ. Անկախ վերահսկող մարմիններին արվող բացահայտումներ

1) Պետությունները պետք է նաև ստեղծեն կամ նշանակեն «պաշտպանվող բացահայտումները» ստացող և քննող անկախ մարմիններ: Նման մարմինները պետք է լինեն ինստիտուցիոնալ և գործառնական տեսանկյունից անկախ անվտանգության ոլորտից և բոլոր այլ, այդ թվում՝ գործադիր ճյուղի մարմիններից, որոնցից կարող են հայտնել տեղեկությունները:

2) Հանրային մարմինների աշխատակիցները պետք է լիազորված լինեն «պաշտպանվող բացահայտումներ» անելու վերահսկողություն իրականացնող անկախ մարմիններին կամ նման հարցերը քննելու իրավասություն ունեցող որևէ այլ մարմնի՝ առանց պարտադրված լինելու այդ տեղեկությունը նախապես հայտնել ներքին կարգով:

3) Օրենքը վերահսկողություն իրականացնող անկախ մարմինների համար պետք է երաշխավորի բոլոր անհրաժեշտ տեղեկությունների հասանելիությունը և այդ հասանելիությունն ապահովելու համար՝ անհրաժեշտ քննչական լիազորությունները: Նման լիազորությունների շարքում պետք է լինի նաև համապատասխան անձանց դատարան կանչելու կամ համապատասխան փաստաթղթեր դատարան ներկայացնելու լիազորությունը և երդմամբ կամ հանդիսավոր հայտարարությամբ հաստատված ցուցմունք պահանջելու լիազորությունը:

Գ. Բացահայտումները ստացող ներքին մարմինների և վերահսկողություն իրականացնող անկախ մարմինների պարտավորությունները

Եթե որևէ մեկը Սկզբունք 37-ին համապատասխան «պաշտպանվող բացահայտում» է անում ներքին մարմին կամ վերահսկողություն իրականացնող անկախ մարմին, այդ մարմինը պարտավոր է.

1) քննել ենթադրյալ իրավախախտումը և արագ միջոցներ ձեռնարկել օրենքով սահմանված ժամանակահատվածում խնդիրները կարգավորելու համար կամ տեղեկությունը հայտնած անձի հետ խորհրդակցելուց հետո այն փոխանցել նման խնդիրները քննելու լիազորություն և իրավասություն ունեցող հանրային մարմնին,

2) պաշտպանել գաղտնի մնալու ցանկություն ունեցող հանրային մարմնի աշխատակիցների անհատական տվյալները. անանուն տեղեկությունը պետք է հաշվի առնել՝ ըստ էության,

3) գաղտնի պահել բացահայտված տեղեկությունը և դրա բացահայտման փաստը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կատարված իրավախախտումը վերացնելու համար տեղեկությունն անհրաժեշտ է հայտնել այլ մարմնի ևս, և

4) տեղեկությունը հայտնած անձին ծանուցել քննության ընթացքի և ավարտի մասին, ինչպես նաև հնարավորության սահմաններում՝ ձեռնարկված միջոցների կամ ներկայացված առաջարկությունների մասին:

Սկզբունք 39-ը պահանջում է՝ ներքին անվտանգ ուղիներ անկախ արտաքին ընդունող/քննող մարմիններ, ստացող մարմինների հստակ պարտավորություններ (քննում, գաղտնիություն, փոխանցում, հետադարձ կապ):

Ներքին ընթացակարգերը և ընդունող անձանց նշանակումը ՀՀ-ում հիմնականում լուծված է «Ազդարարման համակարգի մասին» օրենքով: Օրենքը սահմանում է ներքին ազդարարում (ուղիղ ղեկավարին/վերադասին/վերահսկող այլ անձին կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին)՝ որպես օրինական ուղի: Կառավարությունը սահմանում է հաղորդումների հաշվառման/ձևակերպման օրինակելի ձևերը և պաշտպանության միջոցների ընթացակարգը, իսկ յուրաքանչյուր իրավասու մարմին կարող է ինքնուրույն հաստատել իր ներքին կարգը և պարտավոր է այն հրապարակել (կայքէջում կամ տեսանելի վայրում). սա հենց այն «ներքին ընթացակարգերի» պարտադրումն է, որ պահանջում է Սկզբունք 39-ը: Ներքին հաղորդումը ստացած ոչ իրավասու անձը պարտավոր է այն անհապաղ փոխանցել իրավասու ղեկավարին/լիազորած անձին՝ ապահովելով, որ հաղորդումը «չկորչի» համակարգում:

«Ազդարարման համակարգի մասին» օրենքը սահմանում է արտաքին ազդարարման ընթացակարգը և միասնական էլեկտրոնային հարթակի կառուցվածքը՝ մի շարք ստացող սուբյեկտներով (իրավասու մարմիններ, հարթակին հասանելիություն ունեցող Գլխավոր դատախազություն, որոշ դեպքերում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներգրավում՝ վերահասցեագրմամբ): Սա բավարարում է «արտաքին ստացող մարմինների» գաղափարը:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը ճանաչում է արտաքին ազդարարումը՝ իրավասու մարմնին ուղիղ հաղորդմամբ, առանց նախապայմանի, որ անձը նախևառաջ անցնի ներքին ընթացակարգով: Ավելին, կա նաև անանուն ազդարարում միասնական էլեկտրոնային հարթակով՝ անանունության երաշխիքով (IP հասցեի ծածկագրում): Սա ուժեղ միջոց է հատկապես այն դեպքերի համար, երբ ներքին կամ արտաքին ազդարարման ռիսկերը բարձր են:

«Ազդարարման համակարգի մասին» օրենքը ստացող մարմնին պարտավորեցնում է ստուգել հաղորդման իսկությունը, անհրաժեշտության դեպքում՝ անհապաղ հայտնել դատախազությանը, և ապահովել վարույթի գաղտնիությունը: Սակայն Սկզբունք 39-ում նշված դատական կանչի/երդմամբ ցուցմունքի տիպի հատուկ լիազորությունները ՀՀ օրենսդրությամբ ուղիղ ձևակերպված չեն որպես «վերահսկող մարմնի» պարտադիր գործիքակազմ: Օրենքը տալիս է վարույթի ընթացակարգային, բայց ոչ պարտադիր՝ «քննչական լիազորությունների ամբողջ փաթեթ» հենց ազդարարման ստացող մարմնի համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ազդարարված տեղեկատվության մեջ առկա է քրեական հանցակազմի տարր:

Ազդարարումը ստացող մարմնի պարտականությունները օրենքով բավական կոնկրետ են ձևակերպված, հատկապես՝ ժամկետների, գաղտնիության և հետադարձ կապի մասով (հոդվածներ 6, 7 և 9.2): Մասնավորապես, դրանք են՝

1. Քննել և արագ միջոցներ ձեռնարկել/փոխանցել իրավասու մարմին.

- հաղորդումը հաշվառվում է շատ կարճ ժամկետում (ոչ ուշ, քան 1 աշխատանքային օր),
- վարույթը հարուցվում է հաշվառումից հետո կարճ ժամկետում (օրինակ՝ 3 աշխատանքային օր)՝ հիմքերի առկայության դեպքում,
- եթե ստացման հասցեատերը ոչ իրավասու է՝ հաղորդումը վերահասցեագրվում է (3 օրում՝ ծանուցմամբ),
- եթե իսկության ստուգմամբ երևում են հանցագործության հատկանիշներ՝ կա անհապաղ հաղորդում դատախազությանը:

2. Անձնական տվյալների գաղտնիություն/անանուն հաղորդումների էական գնահատում.

- օրենքը պարտադրում է ապահովել ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը և վարույթի գաղտնիությունը,
- անանուն հաղորդումների համար նախատեսված է հատուկ կարգավորում՝ միաժամանակ, ապահովելով հաղորդման ընդունում/քննում և անանունության պահպանում:

3. Գաղտնի պահել բացահայտված տեղեկությունը և բացահայտման փաստը.

- վարույթի գաղտնիության պարտականությունը հենց սա է նյութականացնում, իսկ պետական գաղտնիքի ռեժիմը հավելյալ «կոշտացնող» շերտ է, եթե հաղորդման նյութը պարունակում է պետական գաղտնիքի տարրեր:

4. Յետադարձ կապ՝ ընթացքի/ավարտի և միջոցների մասին.

- օրենքը տալիս է ազդարարին վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկություններ ստանալու իրավունք՝ ազդարարի պահանջով,
- վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է, իսկ արդյունքով ընդունված ակտի մասին ազդարարին ծանուցում է ուղարկվում սահմանված կարճ ժամկետում (օրինակ՝ 3 օր):

Ընդհանուր առմամբ, ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է Սկզբունք 39-ին, բայց որոշ առանցքային բաղադրիչներով՝ մասնակի: Մասնավորապես, այն համապատասխանում է ներքին ընթացակարգերի կարգավորման մեխանիզմի, ազդարարումների ընդունման-քննման սեղմ ժամկետների, գաղտնիության, անանունության, վերահասցեագրման, հետադարձ կապի ապահովման տեսանկյունից: Սակայն ուսումնասիրված օրենքներով ստացող մարմինների «քննչական լիազորությունների» ամբողջ փաթեթը (կանչ/երդմամբ ցուցմունք/պարտադիր ներկայացում) այս մակարդակով չի ամրագրվում հենց ազդարարման կառուցակարգում:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 40. Հրապարակային բացահայտում անող անձանց պաշտպանությունը

Սկզբունք 37-ով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ տեղեկությունները հրապարակային բացահայտող անձինք, Սկզբունք 41-ի համաձայն, պետք է օրենքով պաշտպանված լինեն պատժից, եթե բացահայտումները համապատասխանում են հետևյալ չափանիշներին՝

ա) 1) անձը նույն կամ, ըստ էության, նման տեղեկությունները հայտնել է ներքին կարգով և (կամ) վերահսկողություն իրականացնող անկախ մարմին, և ii) այն հանրային մարմինը, ում հայտնել են տեղեկությունը, մերժել է քննել կամ կիրառելի միջազգային չափորոշիչներին համապատասխան արդյունավետորեն չի քննել հայտնած տեղեկությունը, կամ ii) անձը ողջամիտ և օրենքով սահմանված ժամկետում ողջամիտ և պատշաճ արդյունք չի ստացել,

ԿԱՄ

2) անձը ողջամիտ հիմքերով հավատացած էր, որ առկա է նշանակալի վտանգ, որ ներքին կարգով և (կամ) վերահսկողություն իրականացնող անկախ մարմին տեղեկություն հայտնելու դեպքում բացահայտումը կարող է հանգեցնել ապացույցների ոչնչացման կամ թաքցման, վկայի վրա ներգործման կամ տվյալ անձի կամ որևէ երրորդ անձի նկատմամբ հաշվեհարդարի,

ԿԱՄ

3) գոյություն չունեի որևէ ներքին հանրային մարմին կամ վերահսկողություն իրականացնող անկախ մարմին, որին կարելի լիներ հայտնել տեղեկությունը,

ԿԱՄ

4) հրապարակվող տեղեկությունը վերաբերել է որևէ գործողության կամ բացթողման, որը լուրջ և անմիջական վտանգ է ներկայացրել մարդկանց կյանքի, առողջության և անվտանգության կամ շրջակա միջավայրի համար:

ԵՎ

բ) Տեղեկություն հայտնած անձը հրապարակել է միայն իրավախախտումը բացահայտելու համար ողջամտորեն անհրաժեշտ տեղեկությունը:

Նշում. Եթե իրավախախտման մասին տեղեկությունը հայտնելու ընթացքում անձը բացահայտի նաև տվյալ իրավախախտումն ապացուցելուն չառնչվող փաստաթղթեր, նա այնուամենայնիվ, պետք է պաշտպանված լինի պատժից՝ բացառությամբ այն դեպքերի, եթե այդ փաստաթղթերի բացահայտումից առաջացած վնասն ավելի մեծ է, քան բացահայտվող տեղեկության հանրային շահը:

ԵՎ

գ) Տեղեկություն հայտնած անձը ողջամտորեն կարծել է, որ տեղեկության բացահայտման հետ կապված հանրային շահը գերակայում է այդ տեղեկության հրապարակման հետևանքով հանրային շահին հասցվող վնասի նկատմամբ:

Նշում. «Ողջամտորեն կարծել» արտահայտության ստուգումը օբյեկտիվ և սուբյեկտիվ խառը բնույթի թեստ է: Անձը պետք է իսկապես ունենա տվյալ կարծիքը (սուբյեկտիվ կողմ), և նրա կողմից նման արարը պետք է լինի ողջամիտ (օբյեկտիվ կողմ): Եթե անձի կարծիքի ողջամտությունը վիճարկվում է, նա կարող է ստիպված լինել պաշտպանելու այն, և ի վերջո, տվյալ թեստի բավարարման, և ըստ այդմ, բացահայտման համար պատժից պաշտպանվածության հարցը որոշում է անկախ դատարանը կամ հաշտարար դատարանը:

Սկզբունք 40-ը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը Սկզբունք 37-ով նախատեսված իրավախախտումների մասին տեղեկությունը հրապարակայնացնում է (public disclosure), և պահանջում է, որ որոշակի պայմանների պահպանման դեպքում այդ անձը պաշտպանված լինի պատժից: Այս սկզբունքի տրամաբանությունը այն է, որ հրապարակային բացահայտումը դիտվում է ոչ թե որպես առաջին և անսահմանափակ միջոց, այլ որպես իրավաչափ և պաշտպանվող քայլ, եթե պահպանված են, միաժամանակ, մի քանի շեմեր՝

- հրապարակայնացման նախապայմանները (օրինակ՝ ներքին/անկախ մարմին դիմելն ու արդյունք չստանալը, կամ նման ակիբների անարդյունավետ/վտանգավոր լինելը),
- բացահայտվող տեղեկության ծավալի ողջամիտ սահմանափակումը (միայն այն, ինչ անհրաժեշտ է իրավախախտումը բացահայտելու համար), և
- հանրային շահի գերակայության վերաբերյալ անձի ողջամիտ համոզմունքը:

Այսպիսով՝ Սկզբունք 40-ը պաշտպանում է ոչ թե «ցանկացած հրապարակում», այլ պայմանավորված և համաչափ հրապարակային բացահայտումը:

ՀՀ «Ազդարարման համակարգի մասին» օրենքը Սկզբունք 40-ի նմանությամբ կառուցում է ազդարարման աստիճանակարգային մոդել՝ տարբերակելով

- ներքին ազդարարումը,
- արտաքին ազդարարումը,
- և հանրությանը ազդարարումը:

Այս կառուցվածքը սկզբունքորեն համահունչ է Սկզբունք 40-ի հիմնական գաղափարին, քանի որ այն նույնպես ենթադրում է, որ հրապարակայնացումը (հանրությանը ազդարարումը) սովորաբար դիտվում է ավելի ուշ փուլում՝ այն դեպքերում, երբ այլ ուղիները չեն գործել կամ արդյունք չեն տվել: Մասնավորապես, օրենքը թույլ է տալիս հանրությանը ազդարարում, երբ ազդարարման մյուս տեսակներով հաղորդումը օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում համապատասխան ընթացք չի ստացել:

Այս առումով ՀՀ օրենսդրությունը ձևավորում է հրապարակային բացահայտման պայմանական իրավաչափության մոդել՝ այն կապելով նախորդ փուլերի արդյունքի (կամ անարդյունավետության) հետ: Դա համահունչ է Սկզբունք 40-ի այն տրամաբանությանը, որ հրապարակումը պետք է լինի ոչ թե ավտոմատ, այլ հիմնավորված հաջորդ քայլ:

Մինևնույն ժամանակ, կարծում ենք, որ հանրության ազդարարումը կապել ներքին կամ արտաքին ազդարարում արած լինելու հանգամանքով խնդրահարույց է և անձի վրա դնում

Է ավելորդ պարտականություն և սահմանափակում: Սկզբունք 40-ը հենց այս տեղում նախատեսում է նաև բացառություններ:

Սկզբունք 40-ը հատուկ նախատեսում է իրավիճակներ, երբ անձը կարող է շրջանցել ներքին/արտաքին ալիքները, եթե ողջամիտ հիմքերով կարծում է, որ այդ ուղիներով հաղորդումը կարող է հանգեցնել, օրինակ՝

- ապացույցների ոչնչացման կամ թաքցման,
- վկաների վրա ազդեցության,
- կամ տվյալ անձի/երրորդ անձանց նկատմամբ հաշվեհարդարի:

ՀՀ «Ազդարարման համակարգի մասին» օրենքում այս բացառությունները նույն մանրամասնությամբ և ուղիղ ձևակերպմամբ ամրագրված չեն որպես հանրությանը անմիջապես ազդարարելու ինքնուրույն հիմքեր: Այսինքն՝ Սկզբունք 40-ի տրամաբանությամբ «վտանգի դեպքում փուլային համակարգը շրջանցելու» նորմը ՀՀ օրենքում նույն հստակությամբ չի կառուցակարգվում:

Սակայն օրենքը նախատեսում է մի շարք մեխանիզմներ, որոնք գործնականում մեղմում են այդ ռիսկերի մի մասը և անձին տալիս են ավելի անվտանգ հաղորդման հնարավորություններ՝ առանց անմիջական հանրայնացման.

- անանուն ազդարարում (մասնավորապես՝ միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով՝ անանունության երաշխիքներով),
- վնասակար գործողություններից պաշտպանության մեխանիզմներ (ազդարարի պաշտպանության իրավունք, վնասակար գործողությունների արգելք և պաշտպանության միջոցներ):

Այսպիսով՝ ՀՀ մոտեցումը տվյալ հատվածում կառուցված է ոչ թե «ռիսկ կա, հետևաբար անմիջապես հրապարակայնացնել», այլ ավելի շուտ՝ «ռիսկ կա, հետևաբար օգտվել պաշտպանված/անվտանգ հաղորդման ալիքներից» տրամաբանությամբ: Սա որոշ չափով պաշտպանում է անձին, բայց լիովին չի համընկնում Սկզբունք 40-ի բացառությունների կառուցվածքին:

Սկզբունք 40-ի կարևոր շեմերից մեկն այն է, որ հրապարակող անձը պետք է բացահայտի միայն այն տեղեկությունը, որը ողջամտորեն անհրաժեշտ է իրավախախտումը բացահայտելու համար: Սա համաչափության և նվազագույն միջամտության գաղափարն է. հատկապես կարևոր, երբ խոսքը զգայուն տեղեկությունների մասին է: ՀՀ «Ազդարարման համակարգի մասին» օրենքը, թեև մանրամասն կարգավորում է ազդարարի պաշտպանության, գաղտնիության, անձնական տվյալների չբացահայտման և վարույթի որոշ գաղտնիության հարցերը, ուղղակի և առանձին թեստի ձևով չի ամրագրում «հրապարակման նվազագույն անհրաժեշտ ծավալ» չափանիշը՝ որպես պարտադիր նախապայման: Այս իմաստով ՀՀ կարգավորումը առավելապես կենտրոնանում է

- ազդարարի պաշտպանության,
- հաղորդման գաղտնիության,

- և ընթացակարգային ապահովության վրա, քան հենց հրապարակվող բովանդակության ծավալի համաչափության հատուկ գնահատման վրա:

Սա չի նշանակում, որ նման մոտեցումը բացակայում է ամբողջությամբ, բայց նշանակում է, որ Սկզբունք 40-ի այս կոնկրետ տարրը ՀՀ օրենսդրության մեջ նույն աստիճանի հստակությամբ ձևակերպված չէ:

Սկզբունք 40-ի էությունն այն է, որ եթե անձը բավարարել է սկզբունքով նախատեսված շեմերը, ապա նա չպետք է պատժվի հրապարակային բացահայտման համար: ՀՀ «Ազդարարման համակարգի մասին» օրենքը այս գաղափարին մոտ դրույթ ունի՝ ազդարարը չի կարող ենթարկվել պատասխանատվության ազդարարման համար (բացառությամբ հանցակազմ պարունակող արարքի), և հավելյալ պաշտպանում է ազդարարին այնպիսի պայմանագրային դրույթներից, որոնք կփորձեն զրկել նրան ազդարարելու իրավունքից: Սա կարևոր և սկզբունքորեն ուժեղ պաշտպանական հիմք է: Սակայն, մինևույն ժամանակ, ՀՀ «Պետական գաղտնիքի մասին» օրենքը կառուցված է այլ տրամաբանությամբ՝ հիմնված պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակումը կանխելու և չտարածման պարտականություն ապահովելու վրա: Այդ օրենքը պահանջների խախտման դեպքում նախատեսում է պատասխանատվության ընդհանուր հիմք, իսկ պետական գաղտնիք պարունակող տեղեկության հետ առնչվելու դեպքում, նույնիսկ պատահական իմացության պարագայում, նախատեսում է չհրապարակելու պարտականություն և իրավասու մարմնին տեղեկացնելու պահանջ:

Արդյունքում, այս երկու ռեժիմների հատման կետում ՀՀ իրավակարգում գործնականում ձևավորվում է հետևյալ մոտեցումը՝

- առավել անվտանգ և իրավաչափ ճանապարհը հանրային շահ ունեցող խախտումների մասին տեղեկություն փոխանցելու համար ազդարարումն է (սախ՝ ներքին/արտաքին, իսկ որոշ պայմաններում՝ հանրությանը),
- հանրությանը ազդարարումը նույնպես կարող է պաշտպանված լինել որպես ազդարարման տեսակ, եթե պահպանված են օրենքով նախատեսված ընթացակարգային և ժամկետային պայմանները,
- բայց դա չի նշանակում, որ ցանկացած բովանդակությամբ հրապարակայնացում ինքնաբերաբար դառնում է «պատժից ազատ», հատկապես՝ այն դեպքերում, երբ հրապարակված տեղեկությունը կարող է ընկնել պետական գաղտնիքի խախտման դաշտ:

Այսինքն՝ ՀՀ համակարգում «պատժից պաշտպանությունը» իրականում գործում է առավելապես ազդարարման իրավաչափ ընթացակարգի ներսում, և դրա կիրառելիությունը զգալիորեն կախված է նրանից՝

- ինչ եղանակով է կատարվել բացահայտումը,
- պահպանվել են արդյոք ազդարարման օրենքով նախատեսված պայմանները,
- և ինչ բնույթի տեղեկություն է հրապարակվել (այդ թվում՝ կա պետական գաղտնիքի ռեժիմի հետ բախում):

Ընդհանուր առմամբ, ՀՀ օրենսդրությունը Սկզբունք 40-ին մասնակիորեն համապատասխանում է այն ճանաչում է ազդարարման փուլային/աստիճանակարգային տրամաբանությունը, նախատեսում է ազդարարի պատասխանատվությունից պաշտպանության կարևոր երաշխիքներ և ստեղծում է պաշտպանված հաղորդման ալիքներ, ներառյալ որոշ դեպքերում՝ հանրությանը ազդարարումը:

Միաժամանակ, Սկզբունք 40-ի մի շարք առանցքային տարրեր ՀՀ օրենսդրությամբ ամբողջությամբ և նույն հստակությամբ արտացոլված չեն, մասնավորապես՝

- ներքին/արտաքին ալիքները շրջանցելու բացառությունների ուղիղ և ամբողջական ձևակերպումը (ապացույցների ոչնչացման, վկաների վրա ազդեցության, հաշվեհարդարի ռիսկի դեպքերում),
- հրապարակվող տեղեկության «նվազագույն անհրաժեշտ ծավալի» հատուկ թեստը,
- և պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակային բացահայտման պարագայում «պատժից պաշտպանության» և գաղտնիության ռեժիմի հարաբերակցության ավելի հստակ սահմանումը:

Հետևաբար, Սկզբունք 40-ի «հրապարակային բացահայտման համար պատժից պաշտպանության» մոդելը ՀՀ-ում գործում է սահմանափակ և պայմանական ձևով, և հիմնականում՝ ազդարարման ընթացակարգային շրջանակի ներսում:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 41. Իրավախախտման մասին տեղեկությունը բացահայտելու համար հաշվեհարդարից պաշտպանված լինելը

Ա. «Պաշտպանվող բացահայտումների» դեպքում՝ քաղաքացիական և քրեական պատասխանատվությունից պաշտպանվածությունը

Սկզբունքներ 37-40-ին համապատասխան բացահայտում արած անձը չպետք է ենթարկվի.

1) քրեական վարույթի, այդ թվում՝ քրեական հետապնդման գաղտնագրված կամ այլ առումով խորհրդապահական տեղեկությունը հայտնելու համար կամ 2) քաղաքացիական հաշվեհարդարի՝ գաղտնագրված կամ այլ առումով խորհրդապահական տեղեկությունը բացահայտելու առնչությամբ, այդ թվում՝ վնասի փոխհատուցման պահանջով և զրպարտության գործով:

Բ. Հաշվեհարդարի այլ տեսակների կիրառման արգելքը

1) Օրենքով պետք է արգելվի Սկզբունքներ 37-40-ին համապատասխան տեղեկություն բացահայտած կամ նման տեղեկություն բացահայտելու մեջ կասկածվող անձի նկատմամբ պատժի կիրառումը:

2) Արգելվում է կիրառել, ի թիվս այլոց, հետևյալ հաշվեհարդարների տեսակները՝

ա) Վարչական տույժեր կամ պատժամիջոցներ, ի թիվս այլոց՝ գրավոր նկատողություն, պատժողական քննություն, պաշտոնի իջեցում, պարտականությունների փոխանցում կամ վերաբաշխում, պաշտոնական առաջխաղացման չիրականացում, աշխատանքից ազատում, ցանկացած գործողություններ, որոնք կարող են կամ նպատակաուղղված են վնաս հասցնելու անձի հեղինակությանը, կամ գաղտնի տեղեկատվության հասանելիության իրավունքի կասեցում կամ չեղարկում,

բ) վնաս կամ ոտնձգություն ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը,

գ) վերը նշված միջոցներից որևէ մեկի կիրառման սպառնալիքները:

3) Տեղեկությունը բացահայտած անձից բացի նաև այլ անձանց նկատմամբ ձեռնարկված գործողությունը որոշ դեպքերում կարող է համարվել արգելված հաշվեհարդարի կիրառում:

4. Հաշվեհարդարի կիրառման դեպքերի քննությունը վերահսկողություն իրականացնող անկախ մարմինների և դատական մարմինների կողմից

1) Յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա վերահսկողություն իրականացնող անկախ մարմին և (կամ) դատական մարմիններին հաղորդել «պաշտպանվող բացահայտումների» պատճառով հաշվեհարդարի ենթարկվելու կամ նման սպառնալիքի մասին:

2) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պարտավոր են քննել պատժի կամ դրա սպառնալիքի մասին հաղորդումները: Այդ մարմինները պետք է նաև հնարավորություն ունենան քննություն կատարել պատժի մասին հաղորդման բացակայության դեպքերում:

3) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է ունենան լիազորություններ և ռեսուրսներ՝ պատժի կիրառման բոլոր դեպքերն արդյունավետորեն քննելու համար, այդ թվում՝ անձանց դատարան կանչելու ու դատարան փաստաթղթեր պահանջելու և երդմամբ կամ հանդիսավոր հայտարարությամբ հաստատված ցուցմունք ստանալու իրավասություն:

4) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է ամեն ջանք գործադրեն՝ ապահովելու պատժի կիրառման մասին հայտարարությունների առնչությամբ դատաքննության արդար լինելը և համապատասխանությունը պատշաճ դատաքննության չափանիշներին:

5) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է լիազորված լինեն համապատասխան հանրային մարմիններից պահանջելու ձեռնարկել իրավիճակի մեղմացմանը կամ նախկին իրավիճակի վերականգնմանն ուղղված միջոցներ, ի թիվս այլոց՝ իրավունքների վերականգնում, վերաբաշխում և (կամ) դատական ծախսերի կամ ողջամտորեն սահմանված այլ ծախսերի վճարում, աշխատած ժամանակի համար հետադարձ վճարում և հարակից հատուցումներ, ճանապարհածախս և (կամ) վնասների փոխհատուցում:

6) Վերահսկողություն իրականացնող անկախ մարմինները պետք է նաև լիազորված լինեն արգելելու հանրային մարմիններին պատժիչ միջոցներ ձեռնարկել:

7) Այդ մարմինները պետք է պատժի կիրառման մասին հաղորդումների մասով իրենց քննությունն ավարտեն ողջամիտ և օրենքով սահմանված ժամկետներում:

8) Այդ մարմինները պետք է համապատասխան անձանց տեղեկացնեն առնվազն քննության ավարտի և հնարավորության դեպքում՝ ձեռնարկված միջոցառումների կամ առաջարկությունների մասին:

9) Անձինք կարող են սան դատական կարգով բողոքարկել վերահսկողություն իրականացնող անկախ մարմնի այն որոշումը, ըստ որի՝ տեղեկության բացահայտմանն ի պատասխան ձեռնարկված գործողությունները պատիժ չեն հանդիսանում, կամ իրավիճակը մեղմացնելու կամ խախտված իրավունքները վերականգնելու համար նախատեսված միջոցները:

Դ. Ապացուցման բեռը

Եթե հանրային մարմինը որևէ գործողություն է ձեռնարկում որևէ մեկի դեմ, հանրային մարմինն է պարտավոր ապացուցել, որ այդ գործողությունը տեղեկատվության բացահայտման հետ որևէ կապ չունի:

Ե. Իրավունքները և իրավական պաշտպանության միջոցները զիջելու անհնարինությունը

Սկզբունքներ 37-40-ով նախատեսված իրավունքները և իրավական պաշտպանության միջոցները չի կարելի զիջել կամ սահմանափակել որևէ համաձայնությամբ, քաղաքականությամբ, աշխատանքային հարաբերությունների ձևով կամ պայմաններով: Այս իրավունքները և իրավական պաշտպանության միջոցները զիջելու կամ դրանք սահմանափակելու ցանկացած փորձ պետք է համարվի անվավեր:

Սկզբունք 41-ը պահանջում է, որ Սկզբունքներ 37-40-ին համապատասխան իրավախախտումների մասին տեղեկություն հայտնող անձը պաշտպանված լինի i) քրեական և քաղաքացիական պատասխանատվությունից, ii) վարչական/կարգապահական ու այլ «հակազդեցությունից», և ունենա iii) արդյունավետ բողոքարկման/իրավունքի վերականգնման մեխանիզմներ՝ ապացուցման բեռը տեղափոխելով/դնելով պետության վրա:

«Ազդարարման համակարգի մասին» օրենքը սահմանում է կարևոր մի սկզբունք. ազդարարը չի կարող ենթարկվել պատասխանատվության ազդարարման համար՝ բացառությամբ եթե նրա արարքը պարունակում է հանցակազմ: Այստեղ սահմանափակող հակակշիռը գալիս է «Պետական գաղտնիքի մասին» օրենքից, որը կառուցված է պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակումը կանխելու և խախտման համար պատասխանատվություն նախատեսելու տրամաբանությամբ: Այսինքն՝ ազդարարման պաշտպանությունը ՀՀ-ում ամբողջությամբ չի «չեզոքացնում» պետական գաղտնիքի ռեժիմի խախտման համար սահմանված պատասխանատվության բոլոր տեսակները. պաշտպանության մակարդակը կախված է՝

- արդյո՞ք տեղեկությունը հաղորդվել է ազդարարման օրինական ընթացակարգերով,
- արդյո՞ք հրապարակումը (հանրությանը ազդարարումը) ընկնում է օրենքով սահմանված թույլատրելի շրջանակի մեջ,
- և արդյո՞ք բացահայտումը չի անցնում այն սահմանը, որից այն կողմ արարքը գնահատվում է որպես հանցանք:

Այսինքն՝ քրեական/քաղաքացիական պատասխանատվությունից լիարժեք պաշտպանվածությունն ամբողջական չէ. կա ընդհանուր պաշտպանություն, բայց պահպանվում է «հանցակազմի» բացառությունը և պետական գաղտնիքի ռեժիմի ուժեղ հակակշիռը:

Սկզբունք 41-ը պահանջում է արգելել վարչական/կարգապահական և այլ վնասակար միջոցների կիրառումը (գրավոր նկատողություն, պաշտոնի իջեցում, ազատում, հեղինակությանը վնաս, հասանելիության կասեցում և այլն), ինչպես նաև ֆիզիկական/հոգեկան վնասը կամ սպառնալիքները: Այստեղ «Ազդարարման համակարգի մասին» օրենքն ուղղակի սահմանում է «վնասակար գործողություն» հասկացությունը շատ լայն՝ ներառելով աշխատանքից ազատում, պաշտոնի իջեցում, ծանրաբեռնում, անհարկի միջամտություն, ֆինանսական վիճակի վատթարացում, կարգապահական վարույթ և այլն: Օրենքը ազդարարին տալիս է վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք, և պարտավորեցնում է իրավասու մարմինն միջոցներ ձեռնարկել պատասխանատվության ապահովելու համար: Ամրագրված է, որ ազդարարը չի կարող ենթարկվել պատասխանատվության ազդարարման համար՝ բացառությամբ երբ արարքը պարունակում է հանցանքի հատկանիշներ (այս դրույթը նաև հակազդեցության դեմ «սկզբունքային արգելք» է): Ավելին, ցանկացած պայմանագիր/դրույթ, որը միտված է ազդարարին պաշտպանության երաշխիքներից զրկելուն կամ վերջինիս իրավունքները սահմանափակելուն, առ ոչինչ է:

Սկզբունք 41-ը պահանջում է, որ անձը կարողանա դիմել անկախ վերահսկող մարմնի կամ դատարանի, լինի քննություն, լինեն վերականգնողական միջոցներ և արգելանքներ պատժիչ գործողությունների նկատմամբ: «Ազդարարման համակարգի մասին» օրենքն ամրագրում է դատական պաշտպանության ուղիղ իրավունքը վնասակար գործողությունների դեպքում և նախատեսում է, որ գործողության իրավաչափությունն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Օրենքը նաև նախատեսում է, որ ազդարարը կարող է ստանալ գաղտնի խորհրդատվություն և իրավաբանական աջակցություն ՄԻՊ-ից:

Ապացուցման բեռի մասով ՀՀ օրենսդրությունը մեծամասամբ համապատասխանում է քննարկվող սկզբունքին. «Ազդարարման համակարգի մասին» օրենքը հստակ ձևակերպում է, որ եթե ազդարարի նկատմամբ ձեռնարկվել է վնասակար գործողություն, դրա իրավաչափությունն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Սա մոտ է Սկզբունք 41-ի պահանջին. պետական/գործատու մարմինը պետք է ցույց տա, որ գործողությունը կապ չունի ազդարարման հետ:

«Ազդարարման համակարգի մասին» օրենքում առկա է վնասակար գործողությունների լայն սահմանում, պաշտպանություն/դատական պաշտպանություն, ապացուցման բեռի տեղափոխում և իրավունքներից հրաժարման անհնարինություն: Սակայն մնում է «հանցակազմի» բացառությունը և պետական գաղտնիքի ռեժիմի ուժեղ հակակշիռը, ինչպես նաև անկախ մարմնի կողմից (Մարդու իրավունքների պաշտպան) վերականգնման լիազորությունների թերի լինելը:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 42. «Պաշտպանվող բացահայտումների» խրախուսումը և օժանդակումը

Պետությունները պետք է խրախուսեն պետական պաշտոնյաների կողմից «պաշտպանվող բացահայտումները»: Այդ նպատակով պետությունները պետք է պահանջեն, որպեսզի բոլոր հանրային մարմինները հրապարակեն Սկզբունքներ 37-42-ի կիրառումն ապահովող ուղեցույցներ:

Նշում. Այդ ուղեցույցները պետք է ապահովեն առնվազն հետևյալը՝ 1) խորհրդատվություն իրավախախտումները բացահայտելու իրավունքների և (կամ) պարտավորությունների վերաբերյալ, 2) տեղեկության տեսակները, որոնք ենթակա են բացահայտման կամ կարող են բացահայտվել, 3) նման տեսակի տեղեկությունը բացահայտելու համար պահանջվող ընթացակարգերը, և 4) օրենքով նախատեսված պաշտպանությունը:

Սկզբունք 42-ը պահանջում է ոչ միայն «պաշտպանել» իրավախախտումների մասին հաղորդողներին (37-41), այլ նաև կառավարելի կերպով խթանել և դյուրինացնել հաղորդումը՝ պարտադրելով, որ բոլոր հանրային մարմիններն ունենան և հրապարակեն պարզ, գործնական ուղեցույցներ, որոնք նվազագույնը ներառում են՝ 1) իրավունքներ/պարտավորություններ, 2) հաղորդման ենթակա տեղեկատվության տեսակներ, 3) ընթացակարգեր/ալիքներ, 4) օրենքով նախատեսված պաշտպանություն:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքն ամրագրում է ազդարարման տեսակները (ներքին, արտաքին, հանրությանը): Կառավարությունը սահմանում է ներքին/արտաքին ազդարարման հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև պաշտպանական միջոցների ընթացակարգը (այսինքն՝ տալիս է «մինիմում ստանդարտ», որը կարող է դառնալ միասնական ուղեցույցի կորիզը): Յուրաքանչյուր իրավասու մարմին կարող է ունենալ իր ներքին ակտը, և եթե այն ընդունում է, պարտավոր է այն տեղադրել կայքէջում, իսկ կայքէջ չլինելու դեպքում՝ տեսանելի վայրում (այստեղ արդեն կա ուղեցույց/գործընթաց հրապարակայնացնելու ուղղակի պարտավորություն): Օրենքը սահմանում է կարճ ժամկետներ (հաշվառում՝ 1 աշխատանքային օր, վարույթ՝ 3 աշխատանքային օր, առավելագույն ժամկետ՝ 30 օր) և պարտավորեցնում է ապահովել վարույթի գաղտնիությունը ու ազդարարին տրամադրել ընթացքի վերաբերյալ տեղեկություններ՝ ըստ պահանջի. սա ուղեցույցներում պետք է արտահայտվի որպես ծառայության մակարդակի պարզ չափորոշիչներ:

Այսպիսով՝ օրենքը տալիս է ընթացակարգային կմախք և նույնիսկ պարտադրում է ներքին կանոնների հրապարակում, բայց դա դեռևս չի նշանակում, որ յուրաքանչյուր մարմին իրականում ունի միատեսակ, հասկանալի, ուսուցողական ուղեցույց՝ 37-42 սկզբունքների ամբողջ ծավալով:

Օրենսդրության մեջ կան դրույթներ, որոնք վերաբերում են ուղեցույցների տրամաբանությանը, բայց դրանք լիարժեք համակարգ չեն կազմում, դրա համար էլ համապատասխանությունը մասնակի է: Այս պահին հստակ սահմանված չէ, թե ինչ նվազագույն բովանդակություն պետք է պարտադիր ունենա նման ուղեցույցը (ինչ իրավունքներ ու պարտավորություններ կան, ինչ դեպքերում կարելի է ազդարարել, ինչ քայլերով պետք է դա անել, և ինչ պաշտպանություն է տրվում): Նույնպես բավարար ձևով չեն

երևում այն գործիքները, որոնք պետք է մարդկանց խրախուսեն օգտվել համակարգից և հասկանալի դարձնեն դրա կիրառումը: Բացի այդ՝ առանձնապես զգայուն է պետական գաղտնիքի հետ առնչվող դեպքերի հարցը. օրենսդրությունը հստակ չի բացատրում, թե ինչպես պետք է անձը ճիշտ ուղղորդվի, որպեսզի և՛ գաղտնի տեղեկություն չհրապարակի, և՛ իր հաղորդումը արդյունավետ և պաշտպանված ձևով հասցնի համապատասխան մարմին: Այսպիսով՝ օրենսդրության համապատասխանության հիմքը ապահովում է հիմնականում «Ազդարարման համակարգի մասին» օրենքը՝ ներքին ակտերի սահմանման և հրապարակման պահանջով, ընթացակարգերի և ժամկետների ամրագրմամբ, գաղտնիության ու պաշտպանության տրամաբանությամբ: Սակայն օրենսդրությամբ չի երաշխավորվում, որ բոլոր մարմինները կունենան միասնական բովանդակային ստանդարտներով ուղեցույցներ, և չի կառուցվում խթանման/ուսուցման պարտադիր համակարգ, հատկապես՝ «պետական գաղտնիքի» ռիսկային դաշտի համար:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 43. Հանրային շահի պաշտպանության հիմքով հանրային մարմինների աշխատակիցների պաշտպանությունը

ա) Այն դեպքերում, երբ սույն Սկզբունքներով չպաշտպանվող բացահայտումների համար հանրային մարմինների աշխատակիցները ենթարկվում են քրեական կամ քաղաքացիական պատասխանատվության կամ վարչական տույժի, օրենքով պետք է նախատեսվի հանրային շահի պաշտպանություն, եթե տվյալ տեղեկությունը բացահայտելու հանրային շահը գերակայում է այն բացահայտելու հանրային շահի նկատմամբ:

Նշում. Այս Սկզբունքը վերաբերում է այն տեղեկությունների բացահայտմանը, որոնք դեռևս պաշտպանված չեն այն պատճառով, որ նման տեղեկություններն ընդգրկված չեն Սկզբունք 37-ով նախատեսված կատեգորիաներում, կամ այն պատճառով, որ այդ տեղեկություններն ընդգրկված են Սկզբունք 37-ով նախատեսված կատեգորիաներից որևէ մեկում, սակայն չեն բացահայտվել Սկզբունքներ 38-40-ով նախատեսված կարգով:

բ) Տեղեկության հրապարակման և չհրապարակման նկատմամբ հանրային շահի գերակայությունը պարզելիս դատախազությունը և դատական մարմինները պետք է հաշվի առնեն հետևյալ հանգամանքները՝

- i) արդյոք բացահայտման ծավալը ողջամտորեն անհրաժեշտ էր ներկայացնելու հանրային շահ ներկայացնող տեղեկությունը,
- ii) տեղեկությունը բացահայտելու հետևանքով հանրային շահին պատճառվելիք վնասի չափը և ռիսկը,
- iii) արդյոք անձը ողջամիտ հիմքեր է ունեցել կարծելու, որ տեղեկության բացահայտումը կծառայի հանրային շահին,
- iv) արդյոք անձը փորձել է «պաշտպանվող բացահայտում» անել ներքին ընթացակարգերով և (կամ) հայտնել այն վերահսկողություն իրականացնող անկախ մարմին և (կամ) հանրությանը՝ Սկզբունքներ 38-40-ով սահմանված կարգով, և

v) տեղեկության հրապարակումն արդարացնող բացառիկ հանգամանքների առկայությունը:

Նշում. Տեղեկության չթույլատրված բացահայտման համար քրեական պատժամիջոցներ նախատեսող ցանկացած օրենք պետք է համապատասխանի Սկզբունք 46-ի բ) կետին: Այս Սկզբունքով չի նախատեսվում սահմանափակել հանրային մարմինների աշխատակիցներին արդեն իսկ հասանելի ազատ արտահայտվելու իրավունքը կամ Սկզբունքներ 37-42-ի կամ 46-ի սկզբունքներով նախատեսված պաշտպանության միջոցները:

Սկզբունք 43-ը նախատեսում է «պահեստային» պաշտպանական շերտ. եթե աշխատակիցը տեղեկություն է հրապարակել այնպիսի ձևով կամ այնպիսի բովանդակությամբ, որը չի ընկնում Սկզբունքներ 37-42-ի պաշտպանված դաշտի մեջ (օրինակ՝ չի վերաբերում Սկզբունք 37-ի կատեգորիաներին կամ վերաբերում է, բայց չի պահպանվել Սկզբունքներ 38-40-ի ընթացակարգը), ապա պատասխանատվությունից ազատման/մեղմացման հիմք կարող է լինել հանրային շահի գերակայությունը՝ վնաս-շահ հարաբերակցությամբ:

«Ազդարարման համակարգի մասին» օրենքը կառուցում է պաշտպանություն՝ ընթացակարգային ճիշտ հաղորդման համար (ներքին/արտաքին/միասնական հարթակ, որոշ դեպքերում՝ հանրությանը) և նախատեսում է ազդարարի պաշտպանության փաթեթ (գաղտնիություն, վնասակար գործողություններից պաշտպանություն և այլն): Այդուհանդերձ, Սկզբունք 43-ը վերաբերում է հենց այն իրավիճակներին, երբ անձը դուրս է եկել այս պաշտպանված «ռեժիմից» կամ չի տեղավորվել դրա մեջ:

Այս օրենքում կա կարևոր մոտեցում, որը համահունչ է Սկզբունք 43-ին՝

- բարեխղճության չափանիշը (ազդարարն ունի «կասկածի ողջամիտ հիմքեր», համոզված է տեղեկության ճշմարտացի լինելու վրա, իր հնարավորությունների սահմաններում փորձել է ստուգել այն) և
- անբարեխղճության բացառումը (դիտավորությամբ կեղծ տեղեկություններ, ապօրինի եղանակով ձեռքբերում և այլն):

Սրանք փաստացի տալիս են Սկզբունքի տրամաբանությանը մոտ «ողջամիտ հիմքերի» չափորոշիչ, բայց միայն ազդարարման օրենքի շրջանակում գործող դեպքերի համար: Երբ անձը այդ շրջանակից դուրս է, օրենքը՝ որպես «ընդհանուր հանրային շահի պաշտպանություն», դա ուղիղ չի ձևակերպում: Բացի այդ՝ ազդարարի կողմից տվյալները իր հնարավորությունների սահմաններում ստուգելու պահանջը նույնպես մեկ քայլ հետ է Սկզբունքների պահանջից, ուստի այս սկզբունքին ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է մասնակի:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Առաջարկություններ

- Ընդլայնել ազդարարման առարկայի ցանկը՝ օրենսդրորեն քարտեզագրելով Սկզբունք 37-ի կատեգորիաները, մասնավորապես՝ մարդու իրավունքների խախտումներ, դատական սխալներ, պաշտոնեական դիրքի չարաշահում, ապացույցների թաքցում, որպեսզի «հանրային շահերին ուղղված այլ վնաս» ձևակերպումը չմնա հայեցողական:
- Սահմանել որպես «պետական գաղտնիք չդասելու» արգելքների կիրառման վերահսկելիություն (հոդված 9-ի տրամաբանությամբ)՝ նախատեսելով հատուկ ընթացակարգ, որով ազդարարման շրջանակում հնարավոր է ստուգել՝ արդյոք տվյալը իրավաչափ է որպես գաղտնի դասակարգվել, թե՛ ոչ (առանց հանրային բացահայտման):
- Սահմանել հաղորդում ներկայացնելու առավելագույն անվտանգ մեխանիզմներ բարձր ռիսկի դեպքերի համար, երբ խոսքը վերաբերում է անվտանգության ոլորտի խախտումներին, համակարգային կոռուպցիային կամ մարդու իրավունքների ծանր խախտումներին՝ նախատեսելով, օրինակ, անկախ ստացող սուբյեկտով հատուկ ապահովված արտաքին հաղորդման ուղի:
- Ազդարարի բարեխղճության շեմը դարձնել կանխատեսելի՝ սահմանելով նվազագույն չափանիշների ոչ սպառիչ ցանկ, որպեսզի «բարեխղճության» գնահատումը չդառնա հետադարձ պատժիչ գործիք:
- Ապացուցման բեռի տեղափոխում պետության վրա՝ օրենսդրորեն ամրագրելով, որ պաշտպանությունից զրկելու հիմքերը (անբարեխղճություն, դիտավորյալ կեղծիք) պետք է ապացուցի պետությունը/պատասխանող մարմինը, իսկ ազդարարից պահանջվող «նախնական ջանասիրությունը» (ազդարարի կողմից տեղեկությունների ստուգմանն ուղղված գործողությունները) հանել օրենսդրությունից:
- Հստակեցնել, որ անձի շարժառիթները չեն կարող հիմք լինել պաշտպանությունից զրկելու համար, եթե պահպանվել է ընթացակարգը և չկա դիտավորյալ կեղծ տեղեկություն:
- Ազդարարման դեպքը քննած մարմնի վրա դնել պարտականություն, որով ազդարարին պետք է տրամադրվի ոչ միայն հաղորդման հիման վրա վարույթ չհարուցելու կամ վարույթն ավարտելու որոշումը, այլ նաև՝ ոչ գաղտնի հիմնավորում՝ ինչ քայլեր են արվել, ինչու է որոշվել չարունակել/փոխանցել, և ինչ բողոքարկման ուղի կա:
- Սահմանել հանրությանը ազդարարելու անկախ հիմքեր՝ առանց կախվածության մեջ դնելու այդ քայլը նախապես ներքին կամ արտաքին ազդարարում արած լինելու հանգամանքից:
- Ներդնել «հանրային տարբերակ և փակ հավելված» տրամաբանություն, երբ հանրայնացումը կարևոր է, բայց կոնկրետ դետալները կարող են վնասել անվտանգությանը:

- Օրենսդրորեն ամրագրել, որ եթե հաղորդումը կատարվել է բարեխղճորեն, ապա քրեական/քաղաքացիական պատասխանատվության կիրառումը պետք է լինի բացառիկ և խիստ հիմնավորված (հակառակ դեպքում՝ պաշտպանությունն անիրական կլինի):
- Ապահովել, որ ոչ միայն դատարանը, այլ նաև իրավասու անկախ մարմինը (օրինակ՝ ՄԻՊ-ը) կարողանա պարտադրել վերականգնում/հատուցում/արգելանքներ՝ կարճ ժամկետներում:
- Ապացուցման բեռի կանոնը տարածել հակազդեցության բոլոր ձևերի վրա՝ հստակ ամրագրելով, որ եթե ազդարարումից հետո անձի նկատմամբ կիրառվել է անբարենպաստ միջոց (ոչ միայն կարգապահական տույժ, այլ նաև հեղինակազրկում, գործառույթների վերաբաշխում, պաշտոնեական/աշխատանքային հասանելիության սահմանափակում կամ կասեցում, մեկուսացում, գնահատման վատթարացում և այլ «փափուկ» հակազդեցություններ), ապա գործատուն կամ համապատասխան հանրային մարմինը պարտավոր է ապացուցել, որ տվյալ միջոցը չի եղել ազդարարման հետևանք և ունեցել է անկախ, օբյեկտիվ ու իրավաչափ հիմք:
- Օրենքով սահմանել, որ յուրաքանչյուր մարմնի կողմից հրապարակվող ուղեցույցը պարտադիր ներառի՝ իրավունքներ/պարտավորություններ, հաղորդման ենթակա տեսակներ՝ համապատասխան օրինակներով, ներքին/արտաքին/հանրությանը ազդարարելու եղանակներ և ժամկետներ, գաղտնի տեղեկության հետ առնչվելու կարգ, պաշտպանության միջոցներ և որոշումների բողոքարկման ընթացակարգ:
- Կազմակերպել պարտադիր ու պարբերական վերապատրաստումներ և իրազեկման բարձրացմանն ուղղված արշավներ հանրային մարմիններում ղեկավարների և ազդարարման հարցերով պատասխանատուների համար,՝ որպեսզի ուղեցույցները չդառնան ձևական փաստաթուղթ:

VII. Տեղեկության բացահայտումը պատժելու կամ զսպելու միջոցների սահմանափակումներ

Սկզբունք 44. Տեղեկատվության գծով պատասխանատուների կողմից տեղեկությունը բարեխղճորեն և ողջամտորեն բացահայտելու համար պատժամիջոցների կիրառումից պաշտպանությունը

Հանրության ներկայացուցիչներից ստացված տեղեկատվության հարցումներին պատասխանելու պարտավորություն ունեցող անձինք չպետք է պատժի ենթարկվեն տեղեկություն հայտնելու համար, եթե ողջամտորեն և բարեխղճորեն հավաստացած են եղել, որ նման տեղեկությունը կարող է հրապարակվել օրենքին համապատասխան:

Սկզբունք 44-ը պահանջում է, որ տեղեկատվության հարցումներին պատասխանող պաշտոնատար անձը չպատժվի, եթե նա բարեխղճորեն և ողջամտորեն կարծում էր, որ տվյալ տեղեկությունը կարող է հրապարակվել օրենքի սահմաններում:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձը գործում է իրավական պարտականության շրջանակում՝ պատասխանելով հարցումներին և, անհրաժեշտության դեպքում, առանձնացնելով ու տրամադրելով հրապարակելի մասը: Եթե նա այդ պարտականությունը կատարում է պատշաճ ընթացակարգով և իրավական հիմնավորումներով, ապա «օրինականության շրջանակում գործող անձի» պաշտպանությունը Սկզբունք 44-ն է: «Պետական գաղտնիքի մասին» օրենքի տրամաբանությամբ, եթե հրապարակվածը իրականում պետական գաղտնիք է, ապա պատժամիջոցի կիրառման ռիսկը բարձր է: Այդ պատճառով անձի պաշտպանությունը գործնականում կախված է նրանից՝ արդյոք պաշտոնյան ողջամտորեն գնահատել է, որ տվյալը պետական գաղտնիք չէ, կամ ապահովել է մեղմ տարբերակ (մասնակի տրամադրում, ծածկում, անսնունսացում), որպեսզի գաղտնի բաղադրիչը չբացահայտվի:

Թեև օրենսդրությունը պաշտոնատար անձի համար երաշխավորում է որոշակի պաշտպանություն՝ պատշաճ ընթացակարգի, իրավական հիմնավորման և գաղտնի բաղադրիչի չբացահայտման (մասնակի տրամադրում/սնացում) միջոցով, սակայն բարեխղճության/ողջամիտ սխալի «անպատժելիության» հստակ, տեքստային երաշխիք այս ուղղակի ձևով ամրագրված չէ:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 45. Տեղեկությունը ոչնչացնելու կամ տեղեկության տրամադրումը մերժելու համար նախատեսված պատժամիջոցներ

ա) Հանրային մարմինների աշխատակիցները, որոնք ոչնչացնում կամ կեղծում են տեղեկությունը հանրության համար անհասանելի դարձնելու նպատակով, պետք է ենթարկվեն պատժի:

բ) Եթե դատարանը կամ որևէ այլ անկախ հանրային մարմին կարգադրել է բացահայտել տեղեկությունը, բայց այն չի բացահայտվել ողջամիտ ժամկետում, տեղեկությունը չբացահայտելու համար պատասխանատու պաշտոնատար անձը և (կամ) հանրային մարմինը պետք է ենթարկվեն համապատասխան պատժամիջոցների՝ բացառությամբ օրենքով սահմանված կարգով բողոքարկման դեպքերի:

Սկզբունք 45-ը պահանջում է տարբերակել՝

- օրինական ոչնչացումը (օրինակ՝ պահպանման ժամկետների լրացումից հետո՝ սահմանված կարգով), և
- ապօրինի ոչնչացում/կեղծումը, երբ նպատակն է խոչընդոտել վերահսկողությանը կամ հանրային հաշվետվողականությանը:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքի կարգավորումները հստակ ցույց են տալիս, որ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների ոչնչացումը թույլատրելի է միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, իսկ այդ պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն: Յետևաբար, ինդիքը ոչ թե ոչնչացումն է որպես այդպիսին, այլ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների ապօրինի ոչնչացումը, այդ թվում՝ առանց իրավական հիմքի, սահմանված ընթացակարգի խախտմամբ կամ դիտավորյալ կեղծմամբ ուղեկցվող ոչնչացումը:

Սկզբունքը պահանջում է, որ եթե կա իրավաչափ պարտադրանք (դատարան կամ անկախ վերանայող), ապա չկատարելը պետք է ինքնուրույն պատասխանատվության հիմք լինի՝ բացառությամբ բողոքարկման օրինական ընթացակարգի: Ավելին, դատավարական օրենսգրքերը նախատեսում են նաև դատական ակտերի հարկադիր կատարման վերաբերյալ կարգավորումներ:

Սկզբունք 45-ը լիարժեք իրականացնելու համար ցանկալի է, որ օրենքներում (կամ դրանց կիրարկմանն ուղղված պարտադիր բնույթ ունեցող կարգերում) լինեն՝

- ապօրինի ոչնչացման/կեղծման հստակ որակում (նպատակ՝ անհասանելի դարձնել/խոչընդոտել),
- և դատական/անկախ մարմնի ակտերի կատարման անձնական պատասխանատվության կանխատեսելի ռեժիմ (ինչը բարձրացնում է կատարողականությունը, այլ ոչ թե սահմանափակվում՝ միայն «ընդհանուր պատասխանատվությանը» հղումով կատարելով):

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 46. Հանրային մարմինների աշխատակիցների կողմից տեղեկություն բացահայտելու համար կիրառվող քրեական պատժամիջոցների սահմանափակումները

ա) Հանրային մարմինների աշխատակիցների կողմից տեղեկատվության, անգամ VI մասով չպաշտպանված տեղեկության բացահայտումը քրեական պատասխանատվություն չի առաջացնում, թեպետև կարող են կիրառվել վարչական պատժամիջոցներ, ինչպես օրինակ՝ անվտանգության ոլորտի տեղեկության հասանելիության իրավունքից զրկելը կամ անգամ աշխատանքից ազատելը:

բ) Եթե օրենքով, այնուամենայնիվ, քրեական պատասխանատվություն է նախատեսվում՝ առանց համապատասխան լիազորության տեղեկությունը հանրությանը կամ առանձին անձանց հայտնելու համար, ապա պետք է կիրառվեն հետևյալ պայմանները՝

i) Քրեական պատիժ կարող է նշանակվել միայն օրենքով հստակ նախատեսված նեղ կատեգորիայի պատկանող տեղեկությունը բացահայտելու համար:

Նշում. Եթե ազգային օրենսդրությամբ նախատեսված են տեղեկության այնպիսի կատեգորիաներ, որոնց բացահայտումն առաջացնում է քրեական պատասխանատվություն, այդ տեղեկությունները պետք է նման լինեն ազգային անվտանգության համար առանձնահատուկ և ազդեցություն ունեցող տեղեկության հետևյալ տեսակներին՝ տեխնոլոգիական տեղեկություններ միջուկային զենքի մասին, հետախուզական աղբյուրներ, ծածկագրեր և մեթոդներ, դիվանագիտական ծածկագրեր, գաղտնի գործակալների ինքնություն և մտավոր սեփականություն, որտեղ կառավարությունն ունի սեփականության իրավունքի շահ, և որի բացահայտումը կարող է վնաս հասցնել ազգային անվտանգությանը:

ii) Տեղեկատվության բացահայտումը պետք է ենթադրի նշանակալի վնասի իրական և ճանաչելի վտանգ:

iii) Օրենքով նախատեսված և կիրառվող բոլոր քրեական պատժամիջոցները պետք է համաչափ լինեն պատճառված վնասին, և

iv) անձը պետք է կարողանա Սկզբունք 43-ով նախատեսված կարգով ներկայացնել հանրային շահի պաշտպանությունը:

Սկզբունք 46-ը պահանջում է, որ տեղեկություն հրապարակելու համար քրեական պատասխանատվության դաշտը լինի նեղացված, վնասի «իրական և ճանաչելի» շեմով, համաչափ պատժաչափերով, և հասանելի լինի հանրային շահի պաշտպանությունը Սկզբունք 43-ի տրամաբանությամբ:

Քրեական օրենսգրքի 427-րդ հոդվածը պետական գաղտնիք պարունակող տեղեկության հրապարակումը դիտարկում է որպես քրեորեն պատժելի արարք այն անձանց կողմից, որոնք ծառայողական կամ այլ իրավական հիմքով ունեցել են այդ տեղեկությանը ծանոթանալու իրավունք: Այս կարգավորման կարևոր առանձնահատկությունն այն է, որ պատասխանատվության առաջացման համար պարտադիր չէ առանձին ապացուցել արդեն իսկ վրա հասած կոնկրետ վնասը. այսինքն՝ արարքի քրեաիրավական գնահատման հիմքում դրվում է հենց գաղտնի տեղեկության հրապարակման փաստը: Վնասի չափը կամ ծանր հետևանքը որպես տարբերակիչ չափանիշ ի հայտ է գալիս հոդվածի 2-րդ մասում՝ որպես առավել ծանր դեպք (օրինակ՝ առանձնապես խոշոր վնաս կամ այլ ծանր հետևանք), որը հանգեցնում է ավելի խիստ քրեական պատասխանատվության: Սա ամբողջությամբ չի համընկնում Սկզբունք 46-ի տրամաբանությանը: Սկզբունքը պահանջում է վնասի շեմ որպես հիմնական չափանիշ, մինչդեռ 427-րդ հոդվածի 1-ին մասը նման շեմ չի պահանջում:

Քրեական օրենսգրքի 428-րդ հոդվածը վերաբերում է անզգուշությամբ հրապարակմանը: Այստեղ արդեն կա վնասի պայման: Պատասխանատվությունը պայմանավորված է «խոշոր չափի գույքային կամ այլ էական վնասով»: Այս մոտեցումը ավելի համահունչ է Սկզբունք 46-ի պահանջին, քանի որ վնասը դառնում է հանցակազմի տարր: Սակայն այստեղ խնդիրը մնում է այն, որ վնասի շեմը պարտադիր է միայն անզգուշության դեպքում, ոչ թե դիտավորության դեպքում:

Քրեական օրենսգրքի 429-րդ հոդվածը քրեականացնում է պետական գաղտնիք պարունակող փաստաթղթի կամ տվյալների ապօրինի ոչնչացումը կամ վնասումը՝ կորուստ

առաջացնելու դեպքում: Քրեական օրենսգրքի 430-րդ հոդվածը վերաբերում է դրանց հետ վարվելու կանոնների խախտմանը, եթե դրա հետևանքով նույնպես կա կորուստ: Այս հոդվածները համապատասխանում են պատժելիության տրամաբանությանը, երբ խոսքը վերաբերում է գաղտնի կյուրերի պահպանությանը: Բայց դրանք կարող են գործնականում օգտագործվել նաև որպես հակազդեցության գործիք ազդարարի կամ տեղեկություն բացահայտողի նկատմամբ: Այդ ռիսկը պետք է չեզոքացվի պաշտպանական մեխանիզմներով:

Ընդհանուր առմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումները պետական գաղտնիքի պաշտպանության մասով ձևավորում են պատասխանատվության գործուն շրջանակ, սակայն Սկզբունք 46-ի տեսանկյունից համապատասխանությունը մասնակի է, քանի որ հատկապես դիտավորյալ հրապարակման դեպքում (ՔՕ 427-րդ հոդված) քրեական պատասխանատվությունը չի կապվում վնասի «իրական և ճանաչելի» շեմի պարտադիր ապացուցման հետ: Միաժամանակ, անզգուշությամբ հրապարակման (ՔՕ 428) և գաղտնի կյուրերի պահպանության/կորստի հետ կապված հանցակազմերում (ՔՕ 429–430) վնասի տարրի ավելի հստակ ներկայությունը որոշ չափով մոտեցնում է կարգավորումը Սկզբունք 46-ի տրամաբանությանը, բայց չի լուծում հանրային շահի պաշտպանության և հակազդեցությունների ռիսկերի խնդիրը:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ մասնակի:

Սկզբունք 47. Հանրային մարմինների աշխատակից չհանդիսացող անձանց պաշտպանությունը գաղտնի տեղեկություն տնօրինելու և տարածելու համար նախատեսված պատժամիջոցներից

ա) Հանրային ծառայող չհանդիսացող անձը չի կարող պատժվել գաղտնագրված տեղեկություն ստանալու, այն տնօրինելու կամ բացահայտելու համար:

բ) Հանրային ծառայող չհանդիսացող անձին չի կարող մեղադրանք առաջադրվել նման տեղեկություն որոնելու և այն ձեռքբերելու փաստի հիմքով դավադրություն կամ այլ հանցագործություններ կատարելու համար:

Նշում. Այս Սկզբունքով նախատեսվում է կանխել քրեական հետապնդումը տեղեկություն ձեռքբերելու կամ վերարտադրելու համար: Այնուամենայնիվ, այս Սկզբունքը նպատակ չունի խոչընդոտելու անձի հետապնդումը այլ հանցագործությունների, օրինակ՝ տեղեկություն որոնելու կամ ձեռքբերելու ընթացքում կատարված կողոպուտի կամ շանտաժի համար:

Նշում. Երրորդ անձանց կողմից տեղեկության բացահայտումը կարևոր ուղղիչ գործոն է տեղեկության համատարած գերզաղտնագրման իրավիճակում:

Սկզբունք 47-ը պահանջում է, որ հանրային ծառայող չհանդիսացող անձը (քաղաքացի, լրագրող, ՀԿ, հետազոտող) չհետապնդվի միայն այն պատճառով, որ գաղտնի տեղեկություն է որոնել, ձեռք բերել, պահել կամ հրապարակել: Պատասխանատվությունը կարող է

առաջանալ միայն այն դեպքում, երբ տեղեկությունը ձեռք բերելու կամ տարածելու ընթացքում կատարվել է այլ ինքնուրույն հանցանք (օրինակ՝ գողություն, շորթում, բռնություն)։ այսինքն՝ պատիժը պետք է կապվի այդ արարքների, ոչ թե «գաղտնի տեղեկության հետ աշխատելու փաստի» հետ։

Քրեական օրենսգրքի 426-րդ հոդվածը քրեականացնում է պետական գաղտնիք պարունակող տեղեկության հրապարակումը այն անձի կողմից, ով այդ տեղեկությունը ձեռք է բերել հափշտակությամբ, սպառնալիքով, բռնությամբ, խաբեությամբ կամ այլ ապօրինի եղանակով։ Սա փաստացի նշանակում է՝ արտաքին անձի դեպքում պատիժը կառուցված է ոչ միայն «ապօրինի ձեռքբերման եղանակների», այլ նաև հրապարակման արարքի վրա։ Քրեական օրենսգրքի 427-րդ հոդվածը վերաբերում է այն դեպքին, երբ տեղեկությունը հրապարակում է այն անձը, որը ծանոթանալու իրավունք ուներ։ Քրեական օրենսգրքի 428-րդ հոդվածը կարգավորում է նույնատիպ արարքը՝ անզգուշությամբ հրապարակման դեպքում՝ վնասի շեմերով։

Սկզբունք 47-ը նպատակ ունի բացառել «գաղտնի տեղեկության հրապարակման» պատճառով Սկզբունքին վերաբերելի սուբյեկտների քրեական հետապնդումը, եթե բացակայում են այլ հանցակազմերը։ Կարծում ենք, որ այս մասով ՀՀ քրեական օրենսդրությունը բխում է Սկզբունք 47-ից։

Սա արտացոլված է նաև «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում, ըստ որի՝ օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող տեղեկության տարածման համար լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվության ենթակա չէ, եթե այդ տեղեկությունը նա ձեռք չի բերել օրենքով արգելված եղանակով, կամ ակնհայտ չի եղել, որ դա օրենքով սահմանված կարգով գաղտնիք է համարվել։ Եթե լրատվական գործունեություն իրականացնողը տարածել է այնպիսի տեղեկություն, որի՝ օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվելն ակնհայտ է եղել, սակայն այդ տեղեկատվության տարածումը բխել է հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, ապա նա պատասխանատվության ենթակա չէ։

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ ամբողջությամբ։

Սկզբունք 48. Աղբյուրների պաշտպանությունը

Հանրային ծառայող չհանդիսացող որևէ անձի չի կարելի պարտադրել առանց համապատասխան լիազորության հանրությանը կամ մամուլին տեղեկություն բացահայտելու գործի քննության ընթացքում հայտնի դարձնել տեղեկության գաղտնի աղբյուրը կամ չիրապարակված նյութերը։

Նշում. Այս Սկզբունքը կիրառելի է միայն այն գործերի քննության համար, որոնք վերաբերում են տեղեկությունն առանց համապատասխան լիազորության բացահայտելուն, այլ ոչ թե այլ հանցագործությունների քննությանը։

Սկզբունք 48-ը պահանջում է, որ «չարտոնված» բացահայտման գործերով (այսինքն՝ այն դեպքերում, երբ քննվում է տեղեկության արտահոսքը) պետական ծառայող չհանդիսացող անձից չպահանջվի բացահայտել աղբյուրը կամ չիրապարակված նյութերը: Բացառությունները պետք է լինեն խիստ նեղ և հիմնավորված դատական չափանիշներով, քանի որ աղբյուրի պաշտպանությունը գործնական նախապայման է հանրային վերահսկողության և խոսքի ազատության համար:

«Ազդարարման համակարգի մասին» օրենքը փաստացի կառուցում է աղբյուրի (ազդարարի) պաշտպանություն՝ երեք կարևոր մեխանիզմով:

- Անձնական տվյալների գաղտնիություն. իրավասու մարմինները պարտավոր են ապահովել ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը ներքին և արտաքին ազդարարման ընթացակարգերում (հոդված 6, մաս 3, կետ 7 և հոդված 7, մաս 3, կետ 7):
- Հանրությանը ազդարարում և ՉԼՄ պարտավորություն. երբ ազդարարումը կատարվում է հանրությանը ՉԼՄ-ով, ՉԼՄ-ները պարտավոր են չբացահայտել ազդարարի անձնական տվյալները, եթե չկա օրենքով նախատեսված հիմքեր կամ գրավոր համաձայնություն (հոդված 9.2):
- Անանուն հաղորդումների պաշտպանություն. անանուն հաղորդման դեպքում իրավասու մարմիններին արգելվում է քայլեր ձեռնարկել ազդարարի ինքնությունը բացահայտելու ուղղությամբ (հոդված 11):

Այս մոտեցումը համապատասխանում է Սկզբունք 48-ի «աղբյուրի չբացահայտման» հիմնական գաղափարին:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ ամբողջությամբ:

Սկզբունք 49. Տեղեկության հրապարակման նախնական արգելք

ա) Ազգային անվտանգության շահերի պաշտպանության հիմքով տեղեկության հրապարակման վրա արգելանք դնելն արգելված է:

Նշում. Տեղեկության հրապարակման նախնական արգելքը հանդիսանում է դատական կամ այլ հանրային մարմնի կողմից ընդունված կարգադրություն, որով արգելվում է հրապարակել հանրային ծառայող չհանդիսացող որևէ անձի ձեռքում հայտնված որևէ նյութ:

բ) Եթե տեղեկությունն, ընդհանուր առմամբ, հասանելի է դարձել հանրությանը՝ անկախ միջոցներից, օրինական, թե անօրինական, այդ տեղեկատվության՝ հանրային տիրույթում առկա ձևով հետագա հրապարակումը դադարեցնելու ուղղությամբ գործադրվող բոլոր ջանքերը ենթադրաբար անօգուտ են:

Նշում. «Ընդհանուր առմամբ հասանելի» հասկացությունը նշանակում է, որ տեղեկությունը բավականին լայն տարածում է ստացել, և գործնականում որևէ միջոցներ գոյություն չունեն, որոնց միջոցով հնարավոր կլիներ գաղտնի պահել այն:

Սկզբունք 49-ի էությունը վերաբերում է «նախնական արգելքին (prior restraint)» և «հանրային տիրույթում հայտնված տեղեկատվության հետագա վերահսկման անարդյունավետության կանխավարկածին»: Այն պահանջում է, որ պետությունը, որպես կանոն, չկիրառի հրապարակման արգելքներ երրորդ անձանց (թաղաքացիներ, լրատվամիջոցներ) նկատմամբ միայն այն հիմքով, որ նյութը «անվտանգային» է կամ «գաղտնի»:

ՀՀ օրենսդրության վերաբերելի 2 ակտերն այս մասով համահունչ են Սկզբունք 49-ի կարգավորումներին:

- «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի տրամաբանությունը կառուցված է պահանջվող տեղեկությունը պատճառաբանված մերժելու սկզբունքի հիման վրա:
- «Պետական գաղտնիքի մասին» օրենքը պարտավորություն է սահմանում գաղտնիքը կրող պետական համակարգի ներսում սահմանելու գաղտնի տեղեկությունների ցանկը:

Այս դրույթը գործնական-իրավական դիտարկում է. եթե տեղեկությունը արդեն լայն շրջանառության մեջ է, ապա այն գաղտնի ռեժիմի «հետ բերելն» ու հետագա տարածումը ամբողջությամբ արգելելը սովորաբար անարդյունավետ է և հաճախ նաև՝ անհամաչափ:

ՀՀ համատեքստում հատկապես կարևոր է, որ ՉԼՍ մասին օրենքի 9-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվությունից ազատման տրամաբանություն, երբ գաղտնի տեղեկատվության տարածումը չի եղել օրենքով արգելված եղանակով, կամ երբ անգամ «ակնհայտ գաղտնիք» լինելու պարագայում տարածումն իրականացվել է հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությունից: Սա հենց այն գաղափարն է, որ երբ նյութն արդեն հանրային դաշտում է, կենտրոնը տեղափոխվում է ոչ թե «լռեցման», այլ՝ վնասի նվազեցման, պաշտոնական արձագանքի և սկզբնաղբյուրում խախտման պատասխանատվության վրա:

Ընդհանուր առմամբ, այս կարգավորումները Սկզբունք 49-ի տրամաբանությանը հիմնականում համահունչ են, քանի որ շեշտը դրվում է ոչ թե հրապարակման նախնական արգելքի, այլ պատճառաբանված մերժման, պետական համակարգի ներսում գաղտնիության ռեժիմի կազմակերպման և հետագա պատասխանատվության վրա: Հատկապես կարևոր է, որ «ՉԼՍ մասին» օրենքի 9-րդ հոդվածը որոշ դեպքերում պաշտպանում է հանրային շահից բխող հրապարակումը, ինչն ուժեղացնում է նախնական արգելքից խուսափելու մոտեցումը:

Օրենսդրության համապատասխանությունը վերաբերելի սկզբունքին՝ ամբողջությամբ:

Առաջարկություններ

- Օրենքով սահմանել «բարեխիղճ սխալի» պաշտպանություն տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձանց համար. եթե նրանք պահպանել են օրենքով նախատեսված ընթացակարգերը և ողջամիտ գնահատմամբ որոշում են կայացրել տեղեկատվությունը տրամադրելու վերաբերյալ, ապա չպետք է պատժվեն միայն այն պատճառով, որ գործի քննության արդյունքում դատարանը կամ այլ իրավասու մարմին այլ եզրակացության է հանգել:

- Օրենքում հստակ նշել, որ տեղեկությունը ոչնչացնելը կամ կեղծելը պետք է ավելի խիստ գնահատվի, եթե դա արվում է հատուկ նպատակով, այն է՝ մարդկանց տեղեկություն ստանալու կամ դատարան դիմելու իրավունքը խոչընդոտելու, վերահսկողությունը բացառելու համար:
- Օրենքում սահմանել, որ քրեական պատասխանատվությունը կիրառելի է այնպիսի տեղեկատվության բացահայտման համար, որի բացահայտումը բնույթով և բովանդակությամբ հատուկ ծանր ազդեցություն ունի ազգային անվտանգության վրա (օրինակ՝ աղբյուրներ/մեթոդներ, կողեր, գործակալների ինքնություն և նման նեղ շրջանակ)՝ բացառելով լայն, անկանխատեսելի մեկնաբանությունը (այլապես քրեական դաշտը չափազանց լայն է և չի համապատասխանում սկզբունքի տրամաբանությանը):
- Օրենքում հստակ սահմանել, որ քրեական պատասխանատվություն պետք է առաջանա միայն այն դեպքում, երբ հրապարակումը իրականում ստեղծել է լուրջ ու ճանաչելի վնասի վտանգ. այս պահանջը պետք է գործի ոչ միայն որպես «ավելի ծանր դեպքի» հիմք, այլ նաև դիտավորյալ հրապարակման հիմնական դեպքերի համար:
- Օրենսդրորեն սահմանել, որ տեղեկության հրապարակման նախնական արգելքը չի կարող կիրառվել ազգային անվտանգության ընդհանուր հղումով:
- Սահմանել, որ եթե տեղեկությունն արդեն լայնորեն տարածվել է, ապա դրա հետագա տարածումը արգելելու փորձերը պետք է շատ ավելի խիստ ստուգվեն, իսկ պետության հիմնական քայլերը պետք է լինեն վնասը նվազեցնելը, պաշտոնական պարզաբանում տալը և պարզել, թե սկզբում որտեղից է արտահոսքը եղել, ոչ թե կենտրոնանալ արդեն հանրային դաշտում տարածումը «լռեցնելու» վրա:
- Սահմանել պարզ և կանխատեսելի անձնական պատասխանատվություն այն պաշտոնատար անձանց համար, ովքեր չեն կատարում դատարանի կամ անկախ մարմնի որոշումները, որպեսզի այդ որոշումները գործնականում էլ կատարվեն, ոչ թե մասն միայն «ընդհանուր պատասխանատվության» մասին հղումների մակարդակով:

VIII. Եզրափակիչ սկզբունք

Սկզբունք 50. Այս սկզբունքների և այլ ստանդարտների հարաբերությունը

Այս Սկզբունքների որևէ դրույթ չպետք է մեկնաբանվի որպես միջազգային, տարածաշրջանային կամ ազգային օրենքներով կամ չափանիշներով ճանաչված՝ տեղեկության մատչելիության իրավունքի սահմանափակում կամ նվազեցում կամ որպես ազգային կամ միջազգային իրավունքի այնպիսի դրույթի սահմանափակում կամ նվազեցում, որով նախատեսված է առավել մեծ պաշտպանություն հանրային մարմինների աշխատակիցների և այլոց կողմից տեղեկությունը բացահայտելու համար:

Սկզբունք 50-ը սահմանում է Ցվանեի սկզբունքների կիրառման «մեկնաբանության սահմանը»: Այն նպատակ ունի կանխել, որ փաստաթուղթը դառնա տեղեկություն ստանալու կամ տեղեկություն բացահայտելու իրավունքները նվազեցնելու հիմք: Սկզբունքը հաստատում է, որ այստեղ շարադրված պահանջները պետք է ընկալվեն որպես նվազագույն պաշտպանական շեմ: Դրանք չեն կարող գործել որպես պատճառ՝ ավելի բարձր երաշխիքները թուլացնելու համար, եթե այդ երաշխիքները ճանաչված են միջազգային, տարածաշրջանային կամ ազգային իրավական համակարգերում:

Սկզբունք 50-ի առաջին շեշտադրումը վերաբերում է տեղեկություն ստանալու իրավունքին: Եթե որևէ իրավական նորմ ավելի լայն իրավունք է տալիս, ապա այս սկզբունքներին հղումով չի կարելի սահմանափակել այդ իրավունքը կամ նվազեցնել դրա բովանդակությունը: Այս մոտեցումը կարևոր է հատկապես ազգային անվտանգության թեմաներով գործերում, որտեղ հաճախ փորձ է արվում ընդհանուր ձևակերպումներն օգտագործել որպես համընդհանուր արդարացում տեղեկությունը չտրամադրելու կամ գաղտնագրելու համար: Սկզբունք 50-ը հակադրում է դրան «ոչ նսեմացման» տրամաբանություն: Այսինքն՝ այստեղ շարադրվածը չի կարող դառնալ իրավունքի հետընթացի գործիք:

Երկրորդ շեշտադրումը վերաբերում է տեղեկությունը բացահայտող անձանց պաշտպանությանը: Սկզբունքը պահպանում է այն նորմերի ուժը, որոնք նախատեսում են ավելի մեծ պաշտպանություն հանրային մարմինների աշխատակիցների կամ այլ անձանց համար: Սա համադրվելով ՀՀ «Ազդարարման համակարգի մասին» օրենքի հետ՝ նշանակում է հետևյալը. եթե ներպետական կարգավորումը տալիս է պաշտպանության կոնկրետ երաշխիքներ ազդարարի համար, ապա այս սկզբունքների կիրառումը չի կարող այդ երաշխիքները նեղացնել:

Քանի որ Ցվանեի վերջին՝ Սկզբունք 50-ը, ավելի շատ Սկզբունքների համար ամփոփիչ բնույթ է կրում և չի վերաբերում ներպետական օրենսդրությանը, ուստի այս մասով մեր կողմից համապատասխանության գնահատում չի արվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտությունը ցույց է տալիս, որ անվտանգությանն առնչվող տեղեկատվության հարցերով ՀՀ օրենսդրական կարգավորումներում առկա են եական բացեր: Այսպես, Ցվանեի սկզբունքներից միայն 7-ն են լիովին բավարարվում, 3-ը բոլորովին չեն ապահովվում, իսկ մնացածը համապատասխանում են միայն մասնակիորեն (տե՛ս Հավելվածը):

Ստորև ներկայացվում են մի շարք առաջարկություններ, որոնք միտված են կատարելագործելու օրենսդրությունը՝ աջակցելու ժողովրդավարական կառավարմանը, թափանցիկության և հանրային վերահսկողության երաշխիքների ամրապնդմանը Հայաստանում:

Ընդհանուր սկզբունքներ

1. Օրենսդրորեն հստակեցնել, որ մասնավոր անվտանգության/ պահնորդական կազմակերպությունները (հատկապես՝ հանրային նշանակության օբյեկտների պահպանում, պետական միջոցառումների անվտանգություն, ենթակառուցվածքների պաշտպանություն իրականացնողները) հանդիսանում են տեղեկություն տրամադրելու պարտավորություն ունեցող սուբյեկտներ՝ ոչ միայն «հանրային նշանակության կազմակերպության» ընդհանուր կատեգորիայով, այլ ուղղակի նորմով: Այսպիսի կազմակերպությունների համար սահմանել նվազագույն հրապարակման/հաշվետվության պարտադիր փաթեթ մարդու իրավունքների վրա հնարավոր ազդեցություն ունեցող գործունեության մասով (օրինակ՝ ուժի կիրառման քաղաքականություն, բողոքների վարույթ, միջադեպերի ընդհանուր վիճակագրություն)՝ գաղտնիության օրինական սահմանները պահպանելով:
2. «Ազգային անվտանգության» հիմքով սահմանափակումների կիրառման համար մշակել չափորոշիչներ, որոնք կապահովեն, որ ազգային անվտանգության հիմքով մերժումները չինեն չարդարացված կերպով լայն և անորոշ հիմնավորումներ պարունակող:
3. «Պետական գաղտնիքի մասին» օրենքի սկզբունքների (օրինականություն, հիմնավորվածություն, արդիականություն, համաչափություն) կիրառումը ուժեղացնելու համար ներդնել պարտադիր հիմնավորման/փաստարկման ստանդարտ՝ մերժման/գաղտնագրման ակտում պահանջելով կոնկրետացնել, թե որ «օրինաչափ շահն» է պաշտպանվում և ինչու է սովյալ տեղեկության տրամադրումը վնասաբեր, այլ ոչ թե սահմանափակվել՝ միայն ընդհանուր ոլորտներին հղում անելով:
4. «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում ամրագրել ընդհանուր կանոն՝ ազգային անվտանգության հիմքով մերժման դեպքում պարտադիր կիրառելու «իրական և ճանաչելի վնասի ռիսկ» չափանիշը և հանրային շահի կշռման/գերակայության պահանջը (ոչ միայն ոլորտային արգելքները), որպեսզի դատարանների վերահսկողությունը լինի միատեսակ և բովանդակային:
5. Մշակել մեթոդաբանություն հանրային մարմինների համար՝ վնասի գնահատման, համաչափության, և «նվազագույն սահմանափակման միջոցի» ընտրության վերաբերյալ:
6. Տեղեկությունների մերժման գրավոր ակտում սահմանել նվազագույն հիմնավորման պահանջ, թե ինչու չի կիրառվում այլ՝ ավելի մեղմ սահմանափակում:
7. Ներդնել պահանջ, որ «ազգային անվտանգության» հիմքով մերժման դեպքում մարմինը պարտադիր նշի՝ որ փաստերով է հիմնավորում վնասի ռիսկը (նույնիսկ եթե որոշ փաստեր չիրապարակվեն դատական/վերահսկողական մարմինն ներկայացնելու համար):
8. Օրենսդրորեն հստակ ամրագրել, որ վերահսկողություն իրականացնող բոլոր հանրային մարմինները, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող

հաստատությունները և բողոքարկման մարմինները (ներառյալ՝ դատարանները) իրենց գործառույթների իրականացման համար ունեն ազգային անվտանգության վերաբերյալ ամբողջական տեղեկությունը հասանելիություն՝ անկախ դրա գաղտնիության աստիճանից՝ միաժամանակ, պահպանելով օրինական կարգով գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության ապահովման պարտականությունը:

9. Սահմանել տեղեկատվության կառավարման միասնական գործնական չափորոշիչներ և նվազագույն պարտադիր պահանջներ (գրանցում, դասակարգում, պահպանում, թվայնացում, որոնելի ցուցակների վարում, պարբերական հրապարակման ձևաչափեր)՝ դրանք ուղեկցելով համապատասխան ֆինանսական, տեխնիկական և մարդկային ռեսուրսների պարտադիր ապահովմամբ:
10. Արտակարգ դրության և ռազմական դրության պայմաններում տեղեկատվական ռեժիմի վերաբերյալ նախատեսել առավել հստակ և միասնական ընթացակարգային կարգավորում, որը կսահմանի հանրության համար կենսական տեղեկությունների պարտադիր հրապարակման նվազագույն շրջանակն ու ժամկետները, տեղեկատվական սահմանափակումների կիրառման «խիստ անհրաժեշտության» չափանիշները, ինչպես նաև խտրականության արգելքի ուղիղ և հստակ կիրառելիությունը:
11. Օրենսդրական մակարդակում ամրագրել «հանրային շահի գերակայության» ընդհանուր կանոնը՝ սահմանելով, որ որոշակի կատեգորիաների դեպքում (օրինակ՝ մարդու իրավունքների խախտումներ, կոռուպցիա, հանրային առողջության/շրջակա միջավայրի ռիսկեր) տեղեկության չտրամադրումը կամ գաղտնագրումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ հիմնավորվում է կոնկրետ և իրական վնասի բարձր հավանականությունը:
12. Ներդնել պարտադիր կիրառվող «վնաս-հանրային շահ» համեմատական թեստ և սահմանել դրա ընթացակարգային պահանջները (պատճառաբանության նվազագույն բովանդակություն, մասնակի տրամադրման առաջնայնություն, վերանայման ժամկետներ), որպեսզի հանրային մարմինների հայեցողությունը չդառնա չիրապարակման կանխադրված մոտեցում և յուրաքանչյուր դեպքով ապահովվի հրապարակման հանրային նշանակության պատշաճ գնահատում:

Ազգային անվտանգության հիմքով չբացահայտվող տեղեկություն և հրապարակման ենթակա տեղեկություն

13. Օրենսդրորեն ամրագրել «գերակա հանրային շահի» ընդհանուր կանոն ազգային անվտանգությանը հղումով մերժումների համար՝ հատուկ շեշտադրելով, որ տեղեկության որոշ ենթախմբերի դեպքում արգելք չի կարող հիմնավոր լինել (օրինակ՝ մարդու իրավունքների խախտումների փաստական տվյալներ, խոշտանգումների/կյանքից զրկման դեպքերի փաստական հանգամանքներ՝ նվազագույն անհրաժեշտությամբ ապանձնավորման ռեժիմով):

14. Տեղեկությունների կոնկրետ ենթախմբերի համար, հատկապես՝ անվտանգության ոլորտին առնչվող, ներդնել տեղեկությունների նախաձեռնողական հրապարակման պարտադիր ցուցակ՝
- բյուջեի հիմնական տողեր/գլխավոր ծախսային ուղղություններ,
 - ներքին հաշվետվողականության/վերահսկողության կառուցակարգեր,
 - օպերատիվ հետախուզական գործողությունների թույլտվությունների տարեկան վիճակագրություն (թույլտվությունների թիվ, տեսակներ, մերժումներ/խախտումներ՝ առանց օպերատիվ մանրամասների),
 - ազատագրված վայրերի մասին նվազագույն տեղեկություն և անազատության մեջ մահվան դեպքերի վերաբերյալ հանրային հաշվետվության նվազագույն ստանդարտ:
15. Սահմանել «մասնակի տրամադրման/խմբագրման» պարտադիր մեխանիզմ, այդ թվում՝ ցանկերի մասնակի հրապարակում, երբ տվյալ փաստաթղթում կան թե՛ գերակշռող կանխավարկածով կամ գերակա շահով պայմանավորված հրապարակելի, թե՛ օպերատիվ-զգայուն, օրինաչափորեն գաղտնագրման ենթակա մասեր:
16. Հանքարդյունաբերող, բնական ռեսուրսներ օգտագործող և շրջակա միջավայրին վնաս հասցնող այլ կազմակերպությունների համար օրենքով ընդլայնել «հանրային նշանակության կազմակերպության» շրջանակը կամ ստեղծել առանձին կատեգորիա՝ «շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունեցող սուբյեկտներ», որպեսզի շրջակա միջավայրի, հանրային առողջության և անվտանգության ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը կախված չլինի միայն մասնավոր շահերին կատարվող հղումներից, այլ ունենա հստակ հանրային գերակայություն:
17. «Գնումների մասին» օրենքում վերանայել պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում ներառվող ապրանքների/ծառայությունների շրջանակը, որպեսզի գաղտնի ռեժիմը կիրառվի միայն այն դեպքերում, երբ հրապարակումը իրապես կարող է վնասել ազգային անվտանգությանը:
18. Օրենսդրությամբ սահմանել չափանիշներ, թե ռազմական/անվտանգային գնումների որ տվյալներն են գաղտնի, և որոնք՝ ոչ:
19. Նախատեսել երաշխիքներ, որ սովորական կենցաղային/սպասարկման բնույթի գնումները (օրինակ՝ սնունդ, առօրյա պարագաներ, ընդհանուր տեխնիկական սպասարկման ոչ զգայուն մաս) ավտոմատ կերպով չներառվեն գաղտնի գնումների ռեժիմում միայն այն պատճառով, որ դրանք կապված են անվտանգության մարմնի կամ հատուկ պահպանության ենթակա անձանց սպասարկման հետ:
20. Նույնիսկ գաղտնի գնումների համար սահմանել պարտադիր նվազագույն բացահայտման փաթեթ, օրինակ՝ տարեկան ընդհանուր ծավալը, ծախսերի հիմնական կատեգորիաները, գաղտնի գնման դեպքերի քանակը, պայմանագրերի կատարման/ավարտման ընդհանուր վիճակագրությունը:

Տեղեկության գաղտնագրման և գաղտնազերծման կանոնները

21. Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված յուրաքանչյուր գաղտնագրման որոշման համար սահմանել հիմնավորման չափանիշներ, որոնք կներառեն՝
 - հղում 8-րդ հոդվածի կոնկրետ կատեգորիային,
 - կանխվող վնասի լրջությունը և հավանականություն (առնվազն որակական սանդղակով),
 - «ինչու՞ հենց տվյալ գաղտնիության աստիճանը» հարցի պատասխանը,
 - «ինչու՞ հենց տվյալ ժամկետը կամ գաղտնազերծման պայմանը» հարցի պատասխանը:
22. Սահմանել «պարբերություն առ պարբերություն» գաղտնագրման պահանջ՝ փաստաթղթում գաղտնի հատվածների նշագրմամբ, որպեսզի ոչ գաղտնի հատվածները հրապարակելը դառնա օրինաչափություն, ոչ թե բացառություն:
23. Նախատեսել վնասի հավանականության չափանիշի ամրագրում՝ «իրական և ճանաչելի ռիսկ» ձևակերպմամբ, որպեսզի գաղտնագրումը չհենվի միայն «կարող է վնասել» ընդհանուր բանաձևի վրա:
24. Սահմանել գերատեսչական ցանկերի հրապարակայնության ավելի խիստ ստանդարտ. բացառությունը (երբ վերնագիրն ինքնին գաղտնիք է) դարձնել նեղ և հիմնավորված՝ «վերնագրի բացառություն» կիրառելու համար պարտադիր պատճառաբանությամբ և վերանայման ժամկետով:
25. Սահմանել միասնական հանրային ռեեստր/կատալոգ, որտեղ հասանելի կլինեն գործող ընթացակարգերը, չափանիշները, և հրապարակելի մասով՝ ցանկերի ընդհանուր կառուցվածքը (առանց օպերատիվ մանրամասների):
26. Սահմանել անվտանգ ներքին մեխանիզմ՝ օրենքով ամրագրելով աշխատակցի իրավունքը վիճարկելու գաղտնագրումը և բացառելով այդ առնչությամբ կարգապահական/քրեական ռիսկերը որպես լռեցման գործիք օգտագործելու հնարավորությունը:
27. Սահմանել գաղտնազերծումից հետո տեղեկատվության հետագա կարգավիճակի և վարման վերաբերյալ հստակ կարգավորումներ, ներառյալ՝ արդյոք այն ենթակա է հրապարակման, պետական արխիվի պահպանությանը հանձնման, սահմանափակ հասանելիությամբ պահպանման կամ այլ ընթացակարգով տնօրինման:
28. Սահմանել գաղտնի նյութերի ներպետական գույքագրման նվազագույն հրապարակելի ստանդարտներ, պահպանման և որոնելիության տեխնիկական ստանդարտներ:
29. Սահմանել գաղտնագրման երկարաձգման «բացառիկության» չափանիշ՝ երկարաձգումը թույլատրելով միայն կոնկրետ փաստարկված «իրական և շարունակական ռիսկի» դեպքում:

30. Սահմանել քանակական վերջնական շեմ երկարաձգումների համար, որպեսզի չձևավորվի փաստացի անժամկետ շղթա:
31. Սահմանել ավտոմատ գաղտնազերծման մեխանիզմ՝ ժամկետի լրանալուց հետո երկարաձգման բացակայության դեպքում ավտոմատ գաղտնազերծելու տեղեկությունը:
32. Սահմանել գաղտնազերծված նյութերի պարտադիր հանրայնացում ոչ միայն իրավական ակտերի, այլ նաև այլ կատեգորիաների համար՝ նվազագույնը ազգային արխիվում կամ հատուկ պորտալում հասանելիությամբ, և «հանձնվել արխիվ» ձևակերպումը դարձնել առավել պարտադիր՝ հստակ բացառություններով:

Տեղեկատվության հարցումները քննելու կանոնները

33. Օրենսդրորեն ամրագրել տեղեկատվությունը չհաստատելու կամ չհերքելու բացառիկ ռեժիմը՝ հստակ սահմանելով, թե որ դեպքերում նույնիսկ տեղեկության գոյության/բացակայության հաստատումը կարող է վնաս պատճառել (օրինակ՝ օպերատիվ միջոցներ, հետախուզական աղբյուր/մեթոդ), և որ այս ռեժիմը կիրառելի է միայն խիստ նեղ կատեգորիաների համար:
34. Սահմանել « ոչ հաստատել- ոչ հերքել» ռեժիմի կիրառման պարտադիր հիմնավորման ստանդարտ՝ պահանջելով, որ մարմինը գրավոր ցույց տա՝ ինչու է տեղեկության գոյության փաստի պարզ հաստատումը/հերքումը ինքնին վնաս առաջացնում (առանց բովանդակությունը բացելու):
35. Հստակեցնել մասնակի տրամադրման պարտավորությունը, եթե հարցման որոշ հատվածների առկայությունը վտանգ չի ստեղծում, ապա հաստատել/հերքել առնվազն այդ հատվածի շրջանակը:
36. Սահմանել տեղեկատվության մերժումների «բովանդակային» հիմնավորման նվազագույն պարտադիր տարրեր օրենքով կամ կառավարության որոշմամբ սահմանվող կարգով ամրագրել, որ մերժման գրությունը պետք է ներառի ոչ միայն իրավական հղում, այլ նաև՝
 - կիրառված սահմանափակման կոնկրետ հիմքը (օրինակ՝ 8-րդ հոդվածի կոնկրետ ենթակետ),
 - «ինչու՞ «մասամբ տրամադրումը» հնարավոր չէ» հարցի պատասխան (եթե ամբողջությամբ է մերժվում),
 - վնասի ընդհանուր նկարագրություն՝ առանց գաղտնիքի բացահայտման:
37. «Պետք է գոյություն ունենար» թեստի ամրագրում. օրենքով սահմանել, որ եթե տվյալ ենթակա էր պահպանման/գրանցման, ապա «առկա չէ» պատասխանը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարմինը ցույց է տալիս իր կողմից իրականացված որոնման քայլերը և պատճառը, թե ինչու վերականգնումը հնարավոր չէր:

38. Դատական վերահսկողության համար սահմանել ընթացակարգ, որի շնորհիվ հնարավոր կլինի ստուգել տեղեկության բացակայության պատճառն ու հիմքը, ոչ թե միայն բավարարվել «առկա չէ» ձևակերպումով:
39. Մարդու իրավունքների ծանր/համակարգային խախտումների վերաբերյալ հարցումների համար սահմանել ուժեղացված պարտավորություն՝ վերականգնելու և վերստեղծելու տեղեկությունը, ինչպես նաև պարտադիր հաղորդում՝ իրավապահ/վերահսկող մարմին, երբ պահպանման պարտադիր տվյալը չի գտնվում:
40. Տեղեկատվության տրամադրումը մերժելուն զուգահեռ նախատեսել «չտրամադրված նյութի» պարտադիր նկարագրության սահմանում՝ էջերի թիվ, փաստաթղթերի քանակ, գաղտնագրման ժամանակահատված, փաստաթղթերի տեսակ (օրինակ՝ զեկույց/հրաման/գրություն), և, հնարավորության դեպքում, թեմատիկ ընդհանուր վերնագիր՝ առանց գաղտնիքը բացելու:
41. Տեղեկությունը մասամբ տրամադրելու դեպքում պահանջել նշում, թե քանի էջ/պարբերություն է փակվել և ինչ հիմքով (այսինքն՝ նշել 8-րդ հոդվածի կոնկրետ կետը)՝ բարձրացնելու բողոքարկման արդյունավետությունը:
42. Սահմանել ստանդարտ ձևաչափ բոլոր մարմինների համար՝ միատեսակ պատասխաններով՝ նվազեցնելու կամայականությունը և «հոդված 8-ի» ընդհանուր հղումով սահմանափակվելու պրակտիկան:
43. Հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսել մատչելի ձևաչափերի պարտադիր ապահովում:
44. Սահմանել հրատապ հարցումների ցանկ և դրանց պատասխանելու հատուկ արագացված ժամկետներ:
45. Ստեղծել անկախ վերանայող մարմին կամ լիազորել այլ առնչվող մարմնի (մասնավորապես՝ անձնական տվյալների պաշտպանության նպատակով ստեղծվելիք անկախ վերահսկող կառույցին)՝ քննել տեղեկատվության ազատության վերաբերյալ բողոքները՝ հստակ ժամկետներով և նվազագույն/զրոյական վճարով:
46. Վերանայման մարմնի համար սահմանել տվյալների փակ հասանելիություն. եթե հանրային նկարագրությունը չի կարող բավարար լինել, սահմանել, որ անկախ վերանայող մարմինը ստանա ավելի մանրամասն նկարագրություն՝ փակ կարգով:
47. Տեղեկատվության տրամադրման մերժման վերաբերյալ հարուցված հայցերով քննվող գործերով վարչական դատավարության օրենսգրքում նախատեսել հատուկ սեղմ ժամկետներ կամ առանձին վարույթ, որպեսզի դատական պաշտպանությունը չկորցնի արդիականությունը:
48. Սահմանել դատարանի որոշումների հրապարակայնության ստանդարտներ. պետական մարմնի կողմից տեղեկատվության մերժումը հիմնավորված համարելու դեպքում դատարանը պարտադիր պետք է հրապարակելի մասով ներկայացնի

փաստական հիմքերի շարադրանքը և իրավական վերլուծությունը՝ բացառությամբ նեղ շրջանակի ու հիմնավորված դեպքերի, և կիրառի փակ հավելվածներ, որտեղ անհրաժեշտ է պաշտպանել գաղտնիությունը:

Ազգային անվտանգության և տեղեկատվության ազատության դատավարական հարցերը

49. Օրենսդրորեն ամրագրել, որ ազգային անվտանգության/պետական գաղտնիքի վկայակոչման դեպքում դատարանը իրավունք ունի ամբողջությամբ ուսումնասիրելու հենց վիճարկվող նյութը փակ նիստում:
50. Ամրագրել, որ դիմող կողմը պետք է ստանա նվազագույն «ոչ գաղտնի» բացատրություն՝ ինչու է մերժվում/սահմանափակվում տեղեկատվությունը, որպեսզի կարողանա արդյունավետ հակափաստարկ ներկայացնել:
51. Սահմանել, որ դատաքննությունը դռնփակ դարձնելու որոշումը պետք է հրապարակվի առնվազն այն չափով, որ երևա սահմանափակման հիմքի տեսակը, նպատակը և համաչափության հիմնական տրամաբանությունը՝ առանց գաղտնի տեղեկություն բացահայտելու:
52. Ամրագրել, որ դատարանը նախ պարտավոր է դիտարկել մասամբ դռնփակ վարելու, ապանձնավորման, նյութերի սահմանափակ հասանելիության կամ ժամանակավոր սահմանափակման հնարավորությունները, և միայն հետո՝ ամբողջական դռնփակությունը:

Անվտանգության ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները

53. Սահմանել մասնագիտացված անկախ վերահսկող մարմին անվտանգության ոլորտի համար՝ առանձին օրենքով ամրագրելով ինստիտուցիոնալ անկախությունը (նշանակման/ազատման կարգ, մանդատ, հաշվետվողականություն), գործառնական անկախությունը (ստուգումների պլանավորում, գործի նախաձեռնություն) և ֆինանսական անկախությունը (բյուջետային առանձին տող, նվազագույն շեմ/կայունություն):
54. Նոր անկախ վերահսկող մարմինը նախագծել այնպես, որ այն չկրկնի ԱԺ/ՄԻՊ/Պետական վերահսկողական ծառայության/Յաշվեթննիչ պալատի ընդհանուր մանդատները, այլ փակի «անվտանգային վերահսկողության» ինստիտուցիոնալ բացը՝ իրավունքի ապահովման և հանրային հաշվետվողականության տրամաբանությամբ:
55. Օրենքով երաշխավորել վերահսկողների՝ գաղտնի տվյալներին հասանելիության իրավունքը:
56. Ամրագրել, որ պետական ծառայողի/աշխատակցի գաղտնիության պարտավորությունը չի կարող որպես հիմնավորում ծառայել վերահսկողին տեղեկություն չտրամադրելու համար, և նման տրամադրումը չի դիտվում որպես իրավախախտում, եթե կատարվում է վերահսկողական գործառույթների շրջանակներում՝ օրենքով սահմանված ընթացակարգով:

57. Երաշխավորել վերահսկող մարմինների լիարժեք հասանելիություն համակարգերին և տարածքներին՝ օրենքով ամրագրելով, որ վերահսկող մարմինները կարող են ստուգել ոչ միայն թղթային փաստաթղթեր, այլ նաև SS համակարգեր, կապի միջոցներ, ինչպես նաև համապատասխան վայրեր/շենքեր՝ իրենց ոլորտներում վերահսկողության նպատակով (անվտանգության միջոցներով):
58. Այն դեպքերում, երբ տեղեկատվության հասանելիությունը պահանջում է թույլտվություն, սահմանել, որ դա վերահսկող մարմին տրամադրվում է ոչ թե տեղեկությունը տիրապետող մարմնի հայեցողությամբ, այլ օրենքով սահմանված հիմքերով:
59. Օրենսդրորեն ամրագրել փաստաթղթերի պարտադիր ներկայացման, և անհրաժեշտության դեպքում՝ ցուցմունք/պարզաբանումների ստացման ձևաչափ (այդ թվում՝ պատասխանատվությամբ), որպեսզի վերահսկողությունը չմնա «կամավոր համագործակցության» մակարդակում և ապահովվի վերահսկողության արդյունավետությունը:
60. Վերահսկող մարմիններն ապահովել մասնագիտացված ռեսուրսներով՝ ամրագրելով տեխնիկական/թվային փորձաքննության կարողություն (կիբերանվտանգություն, տվյալների վերլուծություն, կրիպտո, գնումների աուդիտ), ներառյալ՝ արտաքին փորձագետների ներգրավման ճկուն մեխանիզմ՝ գաղտնիության ռեժիմով:
61. Օրենքով սահմանել, որ որոշակի կատեգորիայի դեպքերի (օրինակ՝ մարդու իրավունքների հնարավոր խախտումներ, ուժի կիրառման միջադեպեր, զանգվածային տվյալների մշակում, արտահոսքեր) մասին անվտանգության ոլորտում պատասխանատու մարմինները պարտավոր են ինքնուրույն և ժամանակին տեղեկացնել վերահսկողներին:
62. Օրենքով ամրագրել, որ անվտանգության մարմինները պարտավոր են աջակցել վերահսկողին տեղեկությունը «ձեռք բերելու և մեկնաբանելու» գործում (տեխնիկական ընթերցումներ, տվյալների արտահանում, բացատրություններ), այլ ոչ միայն հանձնել նյութը՝ առանց գործնական օգտագործելիության:
63. Օրենքով սահմանել վերահսկող մարմինների՝ հաշվետվություններ ներկայացնելու պահանջը և դրանցում պարտադիր ներառվող տեղեկությունների նվազագույն ցանկը:
64. Վերահսկող մարմնի համար սահմանել պարտադիր նվազագույն պահանջներ՝ հասանելիության կառավարում, աշխատակիցների ռեժիմ, թվային անվտանգություն, արտահոսքի արձագանքման կարգ, որպեսզի վերահսկող մարմնի մոտ կուտակված նյութերը չդառնան խոցելի:
65. Ամրագրել վերահսկող մարմնի աշխատակիցների և ղեկավար կազմի անվտանգության ստուգման չափորոշիչները:
66. Սահմանել, որ որոշ արժեքից բարձր կամ որոշ ռիսկայնության մակարդակի գաղտնի գնումները ենթակա լինեն նախնական կամ հետագա խորհրդարանական փակ

վերահսկողության (օրինակ՝ համապատասխան հանձնաժողովի հատուկ կարգով քննության):

67. ԱԺ-ի համար օրենսդրորեն սահմանել հատուկ ընթացակարգ՝ պատգամավորների կողմից ընդունված որոշման հիման վրա հանրային կարևորություն ներկայացնող գաղտնագրված տեղեկությունը հրապարակելու համար:
68. Սահմանել հրապարակման չափորոշիչներ՝ օրենքով ամրագրելով, որ տեղեկությունը կարող է ԱԺ կողմից հրապարակվել, երբ առկա է գերակա հանրային շահ, վնասը բավարար չի հիմնավորվում կամ նվազեցվում է հրապարակման ենթակա տեղեկությունների խմբագրմամբ, հրապարակումը անհրաժեշտ է օրինականության/հաշվետվողականության ապահովման համար (հատկապես՝ մարդու իրավունքների խախտումների, կոռուպցիոն ռիսկերի, հանրային մեծ վնասի դեպքերում):

Հանրային մարմինների աշխատակիցների կողմից հանրային շահ ներկայացնող տեղեկությունների բացահայտումը

69. Ընդլայնել ազդարարման առարկայի ցանկը՝ օրենսդրորեն քարտեզագրելով Սկզբունք 37-ի կատեգորիաները, մասնավորապես՝ մարդու իրավունքների խախտումներ, դատական սխալներ, պաշտոնեական դիրքի չարաշահում, ապացույցների թաքցում, որպեսզի «հանրային շահերին ուղղված այլ վնաս» ձևակերպումը չմնա հայեցողական:
70. Սահմանել որպես «պետական գաղտնիք չդասելու» արգելքների կիրառման վերահսկելիություն (հողված 9-ի տրամաբանությամբ)՝ նախատեսելով հատուկ ընթացակարգ, որով ազդարարման շրջանակում հնարավոր է ստուգել՝ արդյոք տվյալը իրավաչափ է որպես գաղտնի դասակարգվել, թե՛ ոչ (առանց հանրային բացահայտման):
71. Սահմանել հաղորդում ներկայացնելու առավելագույն անվտանգ մեխանիզմներ բարձր ռիսկի դեպքերի համար, երբ խոսքը վերաբերում է անվտանգության ոլորտի խախտումներին, համակարգային կոռուպցիային կամ մարդու իրավունքների ծանր խախտումներին՝ նախատեսելով, օրինակ, անկախ ստացող սուբյեկտով հատուկ ապահովված արտաքին հաղորդման ուղի:
72. Ազդարարի բարեխղճության շեմը դարձնել կանխատեսելի՝ սահմանելով նվազագույն չափանիշների ոչ սպառնիչ ցանկ, որպեսզի «բարեխղճության» գնահատումը չդառնա հետադարձ պատժիչ գործիք:
73. Ապացուցման բեռի տեղափոխում պետության վրա՝ օրենսդրորեն ամրագրելով, որ պաշտպանությունից զրկելու հիմքերը (անբարեխղճություն, դիտավորյալ կեղծիք) պետք է ապացուցի պետությունը/պատասխանող մարմինը, իսկ ազդարարից պահանջվող «նախնական ջանասիրությունը» (ազդարարի կողմից տեղեկությունների ստուգմանն ուղղված գործողությունները) հանել օրենսդրությունից:

74. Հստակեցնել, որ անձի շարժառիթները չեն կարող հիմք լինել պաշտպանությունից զրկելու համար, եթե պահպանվել է ընթացակարգը և չկա դիտավորյալ կեղծ տեղեկություն:
75. Ազդարարման դեպքը քննած մարմնի վրա դնել պարտականություն, որով ազդարարին պետք է տրամադրվի ոչ միայն հաղորդման հիման վրա վարույթ չհարուցելու կամ վարույթն ավարտելու որոշումը, այլ նաև՝ ոչ գաղտնի հիմնավորում՝ ինչ քայլեր են արվել, ինչու է որոշվել չհարուսակել/փոխանցել, և ինչ բողոքարկման ուղի կա:
76. Սահմանել հանրությանը ազդարարելու անկախ հիմքեր՝ առանց կախվածության մեջ դնելու այդ քայլը նախապես ներքին կամ արտաքին ազդարարում արած լինելու հանգամանքից:
77. Ներդնել «հանրային տարբերակ և փակ հավելված» տրամաբանություն, երբ հանրայնացումը կարևոր է, բայց կոնկրետ դետալները կարող են վնասել անվտանգությանը:
78. Օրենսդրորեն ամրագրել, որ եթե հաղորդումը կատարվել է բարեխղճորեն, ապա քրեական/քաղաքացիական պատասխանատվության կիրառումը պետք է լինի բացառիկ և խիստ հիմնավորված (հակառակ դեպքում՝ պաշտպանությունն անիրական կլինի):
79. Ապահովել, որ ոչ միայն դատարանը, այլ նաև իրավասու անկախ մարմինը (օրինակ՝ ՄԻՊ-ը) կարողանա պարտադրել վերականգնում/հատուցում/արգելանքներ՝ կարճ ժամկետներում:
80. Ապացուցման բեռի կանոնը տարածել հակազդեցության բոլոր ձևերի վրա՝ հստակ ամրագրելով, որ եթե ազդարարումից հետո անձի նկատմամբ կիրառվել է անբարենպաստ միջոց (ոչ միայն կարգապահական տույժ, այլ նաև հեղինակագրկում, գործառույթների վերաբաշխում, պաշտոնեական/աշխատանքային հասանելիության սահմանափակում կամ կասեցում, մեկուսացում, գնահատման վատթարացում և այլ «փափուկ» հակազդեցություններ), ապա գործատուն կամ համապատասխան հանրային մարմինը պարտավոր է ապացուցել, որ տվյալ միջոցը չի եղել ազդարարման հետևանք և ունեցել է անկախ, օբյեկտիվ ու իրավաչափ հիմք:
81. Օրենքով սահմանել, որ յուրաքանչյուր մարմնի կողմից հրապարակվող ուղեցույցը պարտադիր ներառի՝ իրավունքներ/պարտավորություններ, հաղորդման ենթակա տեսակներ՝ համապատասխան օրինակներով, ներքին/արտաքին/հանրությանը ազդարարելու եղանակներ և ժամկետներ, գաղտնի տեղեկության հետ առնչվելու կարգ, պաշտպանության միջոցներ և որոշումների բողոքարկման ընթացակարգ:
82. Կազմակերպել պարտադիր ու պարբերական վերապատրաստումներ և իրազեկման բարձրացմանն ուղղված արշավներ հանրային մարմիններում ղեկավարների և ազդարարման հարցերով պատասխանատուների համար,՝ որպեսզի ուղեցույցները չդառնան ձևական փաստաթուղթ:

Տեղեկության բացահայտումը պատժելու կամ զսպելու միջոցների սահմանափակումներ

83. Օրենքով սահմանել «բարեխիղճ սխալի» պաշտպանություն տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձանց համար. եթե նրանք պահպանել են օրենքով նախատեսված ընթացակարգերը և ողջամիտ գնահատմամբ որոշում են կայացրել տեղեկատվությունը տրամադրելու վերաբերյալ, ապա չպետք է պատժվեն միայն այն պատճառով, որ գործի քննության արդյունքում դատարանը կամ այլ իրավասու մարմին այլ եզրակացության է հանգել:
84. Օրենքում հստակ նշել, որ տեղեկությունը ոչնչացնելը կամ կեղծելը պետք է ավելի խիստ գնահատվի, եթե դա արվում է հատուկ նպատակով, այն է՝ մարդկանց տեղեկություն ստանալու կամ դատարան դիմելու իրավունքը խոչընդոտելու, վերահսկողությունը բացառելու համար:
85. Օրենքում սահմանել, որ քրեական պատասխանատվությունը կիրառելի է այնպիսի տեղեկատվության բացահայտման համար, որի բացահայտումը բնույթով և բովանդակությամբ հատուկ ծանր ազդեցություն ունի ազգային անվտանգության վրա (օրինակ՝ աղբյուրներ/մեթոդներ, կողեր, գործակալների ինքնություն և նման նեղ շրջանակ)՝ բացառելով լայն, անկանխատեսելի մեկնաբանությունը (այլապես քրեական դաշտը չափազանց լայն է և չի համապատասխանում սկզբունքի տրամաբանությանը):
86. Օրենքում հստակ սահմանել, որ քրեական պատասխանատվություն պետք է առաջանա միայն այն դեպքում, երբ հրապարակումը իրականում ստեղծել է լուրջ ու ճանաչելի վնասի վտանգ. այս պահանջը պետք է գործի ոչ միայն որպես «ավելի ծանր դեպքի» հիմք, այլ նաև դիտավորյալ հրապարակման հիմնական դեպքերի համար:
87. Օրենսդրորեն սահմանել, որ տեղեկության հրապարակման նախնական արգելքը չի կարող կիրառվել ազգային անվտանգության ընդհանուր հղումով:
88. Սահմանել, որ եթե տեղեկությունն արդեն լայնորեն տարածվել է, ապա դրա հետագա տարածումը արգելելու փորձերը պետք է շատ ավելի խիստ ստուգվեն, իսկ պետության հիմնական քայլերը պետք է լինեն վնասը նվազեցնելը, պաշտոնական պարզաբանում տալը և պարզել, թե սկզբում որտեղից է արտահոսքը եղել, ոչ թե կենտրոնանալ արդեն հանրային դաշտում տարածումը «լռեցնելու» վրա:
89. Սահմանել պարզ և կանխատեսելի անձնական պատասխանատվություն այն պաշտոնատար անձանց համար, ովքեր չեն կատարում դատարանի կամ անկախ մարմնի որոշումները, որպեսզի այդ որոշումները գործնականում էլ կատարվեն, ոչ թե մնան միայն «ընդհանուր պատասխանատվության» մասին հղումների մակարդակում:

ՀԱՎԵԼՎԱԾ. ՀՀ օրենսդրության Ցվանեի սկզբունքներին համապատասխանության աղյուսակ

Հ/Հ	Բովանդակություն	Համապատ.
Ընդհանուր սկզբունքներ		
1	Տեղեկատվություն ստանալու իրավունք	0.5
2	Սկզբունքների կիրարկումը	0.5
3	Տեղեկություն ստանալու իրավունքը ազգային անվտանգության հիմքով սահմանափակելու պահանջները	0.5
4	Հանրային մարմինների կողմից՝ տեղեկատվության ցանկացած սահմանափակման օրինաչափությունը ապահովելու բեռը	0.5
5	Որևէ հանրային մարմին ազատված չէ տեղեկություն տրամադրելու պահանջից	1
6	Տեղեկատվության հասանելիությունը վերահսկող մարմինների համար	0.5
7	Ռեսուրսներ	0.5
8	Արտակարգ իրավիճակներ	0.5
Ազգային անվտանգության հիմքով չբացահայտվող տեղեկություն և հրապարակման ենթակա տեղեկություն		
9	Տեղեկություն, որի չիրապարակելն օրինաչափ է	0.5
10	Տեղեկությունների կատեգորիաներ, որոնց բացահայտումը բխում է դրա օգտին գերակշռող կանխավարկածից կամ գերակա հանրային շահից	0.5
Տեղեկության գաղտնագրման և գաղտնագերծման կանոններ		
11	Տեղեկությունը գաղտնագրելու պատճառները նշելու պարտականություն	0.5
12	Տեղեկության գաղտնագրման կանոնների մատչելիությունը հանրությանը	0.5
13	Տեղեկությունը գաղտնագրելու լիազորությունը	0.5
14	Տեղեկատվության առջև ծառայած ներքին մարտահրավերների մեղմացում	0
15	Ազգային անվտանգությանն առնչվող տեղեկությունը պահելու, տնօրինելու և պահպանելու պարտականություն	0.5
16	Տեղեկության գաղտնիության ժամկետները	0.5
17	Գաղտնագերծման ընթացակարգերը	0.5
Տեղեկատվության հարցումները քննելու կանոններ		
18	Անգամ գաղտնագրված տեղեկության հարցումները քննելու պարտականություն	0.5
19	Տեղեկության առկայությունը հաստատելու համ հերքելու պարտականություն	0.5
20	Մերժման պատճառները գրավոր ներկայացնելու պարտականություն	0.5
21	Պակասող տեղեկատվությունը վերականգնելու կամ վերստեղծելու պարտավորություն	0.5
22	Փաստաթղթերից հատվածներ հրապարակելու պարտականություն	1
23	Չտրամադրվող տեղեկությունը նկարագրելու պարտականություն	0.5
24	Տեղեկատվությունը առկա ձեւաչափերով տրամադրելու պարտականություն	0.5
25	Տեղեկատվության հարցումներին պատասխանելու ժամկետները	0.5

26	Տեղեկությունը չտրամադրելու մասին որոշումը վերանայելու իրավունք	0.5
Ազգային անվտանգության և տեղեկատվության ազատության դատավարական հարցերը		
27	Ընդհանուր դատական վերահսկողության սկզբունք	0.5
28	Դատաքննության հանրամատչելիությունը	0.5
29	Տեղեկատվության հասանելիությունը քրեական դատավարության կողմերի համար	1
30	Տեղեկատվության հասանելիությունը քաղաքացիական դատավարության կողմերի համար	1
Անվտանգության ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններ		
31	Անկախ վերահսկող մարմինների հիմնում	0
32	Լիարժեք հասանելիություն լիազորություններն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությանը	0.5
33	Տեղեկությունների հասանելիությունն ապահովելու համար անհրաժեշտ լիազորություններ, ռեսուրսներ և ընթացակարգեր	0.5
34	Անկախ վերահսկող մարմինների գործունեության թափանցիկությունը	0.5
35	Անվտանգության ոլորտը վերահսկող մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվությունը պաշտպանելու միջոցներ	0.5
36	Օրենսդիր մարմնի՝ տեղեկություններ հրապարակելու լիազորությունը	0
Չանրային մարմինների աշխատակիցների կողմից հանրային շահ ներկայացնող տեղեկությունների բացահայտումը		
37	Իրավախախտումների կատեգորիաները	0.5
38	Իրավախախտումների մասին տեղեկատվության բացահայտման հիմքերը, դրդապատճառները և ապացույցները	0.5
39	Ներքին կամ վերահսկող մարմիններին «պաշտպանվող բացահայտում» անելու և դրանց արձագանքելու ընթացակարգերը	0.5
40	Չրապարակային բացահայտում անող անձանց պաշտպանությունը	0.5
41	Իրավախախտումների մասին տեղեկատվություն հայտնելու համար հաշվեհարդարից պաշտպանված լինելը	0.5
42	«Պաշտպանվող բացահայտումների» խրախուսումը և օժանդակումը	0.5
43	Չանրային շահի պաշտպանության հիմքով հանրային մարմինների աշխատակիցների պաշտպանությունը	0.5
Տեղեկության բացահայտումը պատժելու կամ զսպելու միջոցների սահմանափակումներ		
44	Տեղեկատվության գծով պատասխանատուների կողմից տեղեկությունը բարեխղճորեն և ողջամտորեն բացահայտելու համար պատժամիջոցների կիրառումից պաշտպանությունը	0.5
45	Տեղեկությունը ոչնչացնելու կամ տեղեկության տրամադրումը մերժելու համար նախատեսված պատժամիջոցներ	0.5
46	Չանրային մարմինների աշխատակիցների կողմից տեղեկություն բացահայտելու համար կիրառվող քրեական պատժամիջոցների սահմանափակումները	0.5
47	Չանրային մարմինների աշխատակից չհանդիսացող անձանց պաշտպանությունը գաղտնի տեղեկություն տնօրինելու և տարածելու համար նախատեսված պատժամիջոցներից	1
48	Աղբյուրների պաշտպանությունը	1
49	Տեղեկատվության հրապարակման նախնական արգելք	1
Եզրափակիչ սկզբունք		
50	Այս սկզբունքների և այլ ստանդարտների հարաբերությունը	

ՀՀ իրավական ակտեր

1. ՀՀ սահմանադրություն, 05.07.1995 թ. (06.12.2015 թ. փոփոխություններով)
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021 թ.
3. ՀՀ քրեական օրենսգիրք, 05.05.2021 թ.
4. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 16.12.2016 թ.
5. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, 16.12.2016 թ.
6. Հանրային տեղեկությունների մասին» ՀՀ օրենք, 04.12.2025 թ.
7. «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, 01.03.2023 թ.
8. «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018 թ.
9. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 21.03.2018 թ.
10. «Հաշվեթևիչ պալատի մասին» ՀՀ օրենք, 16.01.2018 թ.
11. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենք, 16.12.2016 թ.
12. «Գնումների մասին» ՀՀ օրենք, 16.12.2016 թ.
13. «Տեղեկատվության ազատության մասին» 2003 թվականի ՀՀ օրենք, 23.09.2003 թ.
14. «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենք, 28.12.2001 թ.
15. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենք, 06.11.1995 թ.
16. ՀՀ Կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «Ըստ գերատեսչական պատկանելության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 53-Ն որոշում

Չեկույցներ, հոդվածներ

17. Իրավունքի պաշտպանության և զարգացման հիմնադրամ, Տեղեկատվության ազատության անչվող խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, 2020, <https://ldpf.am/uploads/files/c6e6d078c1c6e6d948c317374cdade30.pdf>
18. Ֆակտոր, Չոհերի թիվը՝ պլյուս մի նուստվ. պատերազմից 5 տարի անց զոհված անձանց ցանկը հրապարակված է, 07.11.2025թ., <https://factor.am/949884.html>

Միջազգային իրավական ակտեր, փաստաթղթեր, կայքեր

19. Միավորված ազգերի կազմակերպության «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 1948 թ.
20. Միավորված ազգերի կազմակերպության «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, 1966 թ.
21. Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա, 1950 թ.
22. American Association for the International Commission of Jurists, The Siracusa Principles on the Limitation and Derogation Provisions in the International Covenant on Civil and Political Rights, Siracusa, 1985, <https://www.icj.org/wp-content/uploads/1984/07/Siracusa-principles-ICCPR-legal-submission-1985-eng.pdf>

23. Article 19, The Johannesburg Principles on National Security, Freedom of Expression and Access to Information, Johannesburg, 2018, <https://www.article19.org/wp-content/uploads/2018/02/joburg-principles.pdf>
24. Hungarian National Authority for Data Protection and Freedom of Information, <https://www.naih.hu>
25. Information Commissioner of Canada, <https://www.oic-ci.gc.ca>
26. Lillich, Richard B. , The American Journal of International Law, The Paris Minimum Standards of Human Rights Norms in a State of Emergency, Paris, 1984, <https://www.jstor.org/stable/2201848>
27. Open Society Justice Initiative, The Global Principles on National Security and the Right to Information (Tshwane Principles), Tshwane, 2013, <https://whistleblowingnetwork.org/WIN/media/pdfs/National-security-INT-2013-global-principles-national-security.pdf>
28. Republika Slovenija Informacijski pooblaščenec, Deseta obletnica Splošne uredbe o varstvu podatkov in letno poročilo EDPB za leto 2025, 29.04.2026, <https://www.ip-rs.si>
29. Transparency International Defence and Security, Unlocking Access: Balancing National Security and Transparency in Defence, London, 2024, <https://transparency.am/hy/publication/pdf/380/11581>
30. UK Information Commissioner's Office, <https://ico.org.uk>